Ավետարանի սկզբունքները

Նրանք պետք է գիտելիք ստանան իրենց Քավիչի մասին և նրա վարդապետության բոլոր կետերի վերաբերյալ, որպեսզի կարողանան մոտենալ Նրան և փրկվել:

1 Նեփի 15.14

Ավետարանի սկզբունքները

Հրատարակվել է
ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ ԵԿԵՂԵՑՈՒ կողմից
Սոլթ Լեյք Սիթի, Յուտա

Այս գրքի վերաբերյալ ձեր դիտողությունները և առաջարկությունները հաշվի կառնվեն: Խնդրում ենք ուղարկել դրանք հետևյալ հասցեով՝ Curriculum Development, 50 East North Temple Street, Salt Lake City, Utah 84150-0024. Էլ-փոստ՝ *cur-development@ldschurch.org* Գրեք ձեր անունը, հասցեն, ծուխը և ցիցը: Անպայման նշեք գրքի վերնագիրը: Այնուհետև, ներկայացրեք ձեր դիտողությունները և առաջարկություններն այս գրքի ուժեղ կողմերի և բարելավման կարիք ունեցող մասերի վերաբերյալ:

© 2008 by Intellectual Reserve, Inc.
Բոլոր իրավունքները պաշտպանված են:
Տպագրված է Ամերիկայի Միացյալ Նահանգներում
Անգլերենի հաստատումը. 5/07:

Բովանդակություն

Ներածություն 1

Գլուխ 1 Մեր Երկնային Հայրը 5

Գլուխ 2 Մեր Երկնային ընտանիքը 9

Գլուխ 3 Հիսուս Քրիստոս՝ մեր ընտրյալ Ղեկավար և Փրկիչ 13

Գլուխ 4 Ընտրելու ազատություն 17

Գլուխ 5 Արարում 23

Գլուխ 6 Ադամի և Եվայի անկումը 27

Գլուխ 7 Սուրբ Հոգի 31

Գլուխ 8 Աղոթել մեր Երկնային Հորը 35

Գլուխ 9 Աստծո մարգարեները 39

Գլուխ 10 Սուրբ գրություններ 45

Գլուխ 11 Քրիստոսի կյանքը 51

Գլուխ 12 Քավություն 59

Գլուխ 13 Քահանայություն 67

Գլուխ 14 Քահանայության կազմակերպությունը 73

Գլուխ 15 Տիրոջ ուխտյալ ժողովուրդ 81

Գլուխ 16 Հիսուս Քրիստոսի Եկեղեցին հին ժամանակներում 87

Գլուխ 17 Հիսուս Քրիստոսի Եկեղեցին այսօր 95

Գլուխ 18 Հավատք առ Հիսուս Քրիստոս 101

Գլուխ 19 Ապաշխարություն 107

Գլուխ 20 Մկրտություն 115

Գլուխ 21 Սուրբ Հոգու պարգևը 121

Գլուխ 22 Հոգու պարգևները ... 125
Գլուխ 23 Հաղորդություն ... 133
Գլուխ 24 Հանգստության օրը ... 139
Գլուխ 25 Ծոմապահություն ... 145
Գլուխ 26 Զոհաբերություն ... 149
Գլուխ 27 Աշխատանք և անձնական պատասխանատվություն ... 155
Գլուխ 28 Ծառայություն ... 161
Գլուխ 29 Առողջության Տիրոջ օրենքը ... 167
Գլուխ 30 Գթություն ... 173
Գլուխ 31 Ազնվություն ... 179
Գլուխ 32 Տասանորդ և նվիրատվություններ ... 185
Գլուխ 33 Միսիոներական աշխատանք ... 189
Գլուխ 34 Զարգացնենք մեր տաղանդները ... 197
Գլուխ 35 Հնազանդություն ... 201
Գլուխ 36 Ընտանիքը կարող է հավերժական լինել ... 207
Գլուխ 37 Ընտանեկան պատասխանատվություններ ... 213
Գլուխ 38 Հավերժական ամուսնություն ... 219
Գլուխ 39 Մաքրաբարոյության օրենքը ... 225
Գլուխ 40 Տաճարային աշխատանք և ընտանեկան պատմություն ... 233
Գլուխ 41 Հետմահկանացու հոգևոր աշխարհ ... 241
Գլուխ 42 Իսրայելի Տան հավաքումը ... 245
Գլուխ 43 Երկրորդ Գալստյան նշանները ... 251
Գլուխ 44 Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը ... 257
Գլուխ 45 Հազարամյակ ... 263
Գլուխ 46 Վերջին Դատաստան ... 269
Գլուխ 47 Վեհացում ... 275
Նկարների ցանկ ... 281
Ցուցիչ ... 283

Ներածություն

Ուսումնական ուղեցույց և ուսուցչի ձեռնարկ

Ավետարանի սկզբունքները գրվել է որպես անձնական ուսումնական ուղեցույց և ուսուցչի ձեռնարկ: Եթե ուսումնասիրեք այն փնտրելով Տիրոջ Հոգին, դուք կարող եք աճել Հայր Աստծո, Հիսուս Քրիստոսի և Նրա Քավության, ավետարանի վերականգնման մասին ձեր հասկացողության և վկայության մեջ:

Դուք կարող եք գտնել կյանքի վերաբերյալ հարցերի պատասխանները, վստահություն ձեռք կբերեք ձեր նպատակի և արժանավորության հանդեպ, և հավատով կդիմակայեք անձնական ու ընտանեկան դժվարություններին:

Եկեղեցում և տանը ուսուցանելու հրահանգներ

Ուսուցիչ լինելը մեծ պատասխանատվություն է, որը ներառում է մյուսներին ամրապնդելու բազմաթիվ հնարավորություններ, հավաստիանալով, որ նրանք «սնուցվում են Աստծո բարի խոսքով» (Մորոնի 6.4): Դուք արդյունավետորեն կուսուցանեք, եթե հետևեք ստորև տրված սկզբունքներին.

- Սիրեք նրանց, ում ուսուցանում եք:
- Հոգով ուսուցանեք:
- Ուսուցանեք վարդապետությունը:
- Ջանասիրաբար սովորելու կոչ արեք:

Սիրեք նրանց, ում ուսուցանում եք

Եթե սիրով վերաբերվեք նրանց, ում ուսուցանում եք, նրանք ընկալունակ կդառնան Տիրոջ Հոգու հանդեպ: Նրանք ավելի մեծ խանդավառությամբ կսովորեն և ավելի սրտաբաց կլինեն

ձեր և մյուսների հետ: Ծանոթացեք նրանց հետ, ում ուսուցանում եք, և թող նրանք իմանան, որ դուք անկեղծորեն հոգ եք տանում իրենց համար: Զգայուն եղեք հատուկ կարիքներով մարդկանց հանդեպ: Ձեր դասարանում անկաշկանդ միջավայր ստեղծեք, որպեսզի մասնակիցները ազատ զգան ձեզ ուղղելու ցանկացած հարց՝ ավետարանի սկզբունքների և դրանք կիրառելու վերաբերյալ:

Տիրոջ Հոգին ներկա կլինի, երբ սեր և միասնություն է տիրում: Տերն ասել է. «Նոր պատվիրանք եմ տալիս ձեզ, որ իրար սիրեք. ինչպես ես ձեզ սիրեցի, որ դուք էլ իրար սիրեք» (Հովհաննես ԺԳ.34):

Այս նյութի մասին ավելին իմանալու համար, տես *Teaching, No Greater Call,* էջեր 31–39:

Հոգով ուսուցանեք:

Ամենակարևոր բաները, որ երբևէ կուսուցանեք, Քրիստոսի վարդապետություններն են՝ սուրբ գրությունների և մեր օրերի մարգարեների միջոցով հայտնված և Սուրբ Հոգու կողմից հաստատված: Այս ամենը արդյունավետորեն ուսուցանելու համար դուք պետք է ունենաք Տիրոջ Հոգին: «Եվ Հոգին կտրվի ձեզ հավատքի աղոթքով,-ասել է Տերը,- և եթե դուք չստանաք Հոգին, դուք չպետք է ուսուցանեք» (ՎևՈւ 42.14; տես նաև ՎևՈւ 50.13–22): Սուրբ Հոգին իրական ուսուցիչ է, այնպես որ կարևոր է ստեղծել այնպիսի մթնոլորտ, որտեղ Տիրոջ Հոգին կարող է ներկա լինել:

Այս նյութի վերաբերյալ ավելին իմանալու համար, տես *Teaching, No Greater Call,* էջեր 41–48:

Ուսուցանեք վարդապետությունը

Նախքան տվյալ գլուխն ուսուցանելը, մանրամասն ուսումնասիրեք այն, որպեսզի հավաստիանաք, որ հասկանում եք վարդապետությունը: Լրացուցիչ սուրբ գրություններ Դուք ավելի անկեղծորեն և զորությամբ կուսուցանեք, եթե տվյալ գլխի ուսմունքներն անձնապես ազդեցություն են գործել ձեզ վրա:

Երբեք ոչինչ ձեզանից մի ավելացրեք Եկեղեցու վարդապետությանը: Ուսուցանեք միայն այն, ինչ հաստատվում է սուրբ գրություններով, վերջին օրերի մարգարեների և առաքյալների խոսքերով և Սուրբ Հոգով (տես ՎևՈւ 42.12–14; 52.9):

Եթե դուք կանչվել եք ուսուցանելու քվորումում կամ դասարանում օգտագործելով այս գիրքը, մի փոխարինեք այն այլ նյութերով, որքան էլ հետաքրքիր լինեն դրանք: Հավատարիմ մնացեք սուրբ գրություններին և այս գրքի խոսքերին: Հարմարության դեպքում օգտագործեք անձնական փորձառությունները և Եկեղեցու ամսագրերից հոդվածներ, որոնք կհամալրեն դասերը:

Այս նյութի վերաբերյալ ավելին իմանալու համար, տես *Teaching, No Greater Call,* էջեր 50–59:

Ջանասիրաբար սովորելու կոչ արեք

Ուսուցանելիս օգնեք մյուսներին տեսնել, թե ինչպես են ավետարանի սկզբունքներն առնչվում ամենօրյա կյանքին: Քննարկում ծավալեք, թե ինչպես կարող են այդ սկզբունքներն ազդել Աստծո, մեր, մեր ընտանիքի և մեր մերձավորների հանդեպ ունեցած մեր զգացումների վրա: Մասնակիցներին խրախուսեք սկզբունքներով ապրել:

Փորձեք դասին ներգրավել որքան հնարավոր է շատ մարդ: Դուք կարող եք նրանց ներգրավել առաջարկելով՝ բարձրաձայն կարդալ, հարցերին պատասխանել կամ կիսվել փորձառություններով, սակայն դա արեք միայն այն դեպքում, երբ վստահ եք, որ չեք շփոթեցնի նրանց: Դասը պատրաստելիս հնարավոր է ցանկություն ունենաք հատուկ առաջադրանքներ տալ մասնակիցներին: Զգայուն եղեք մյուսների կարիքների և զգացմունքների հանդեպ: Կարող եք դասից առաջ առանձին խոսել դասարանի որոշ անդամների հետ և հարցնել, թե արդյոք ցանկություն ունեն մասնակցելու:

Այս նյութի մասին ավելին իմանալու համար, տես *Teaching, No Greater Call,* էջեր 61–74:

Լրացուցիչ օգնություն ուսուցիչներին

Այս գրքի յուրաքանչյուր գլուխ ուսուցիչների համար մեկ կամ երկու նշում է պարունակում: Այդ նշումները պարունակում են գաղափարներ, որոնք կօգնեն ձեզ սիրել նրանց, ում ուսուցանում եք, ուսուցանել հոգով, ուսուցանել վարդապետությունը և ջանասիրաբար սովորելու կոչ անել նրանց, ում ուսուցանում եք:

Մեր Երկնային Հայրը

Գլուխ 1

Աստված գոյություն ունի

- Նշեք մի քանի բաներ, որոնք վկայում են Աստծո գոյության մասին:

Մորմոնի Գրքի մարգարե Ալման գրել է. «Բոլոր բաները մատնանշում են՝ կա՛ Աստված. այո, նույնիսկ երկիրը, և բոլոր բաները, որ դրա երեսին են, այո, և դրա շարժումը, այո, և բոլոր մոլորակները, որոնք շարժվում են իրենց կանոնավոր ձևով, վկայում են, որ կա մի Գերագույն Ստեղծող» (Ալմա 30.44): Մենք կարող ենք գիշերը նայել երկնքին և կռահել, թե ինչ ի նկատի ուներ Ալման: Կան միլիոնավոր աստղեր և մոլորակներ՝ բոլորը կատարյալ ձևով համակարգված: Դրանք պատահաբար չեն հայտնվել այնտեղ: Մենք կարող ենք տեսնել Աստծո աշխատանքը երկնքում և երկրի վրա: Բազմաթիվ գեղեցիկ բույսեր, տարբեր տեսակի կենդանիներ, լեռներ, գետեր, անձրև և ձյուն բերող ամպեր՝ այս ամենը վկայում են մեզ, որ Աստված գոյություն ունի:

Մարգարեներն ուսուցանել են մեզ, որ Աստված տիեզերքի Ամենազոր Կառավարիչն է: Աստված ապրում է երկնքում (տես ՎևՈւ 20.17): Իր Որդու՝ Հիսուս Քրիստոսի միջոցով Նա արարեց երկինքն ու երկիրը և այն ամենը, ինչ գոյություն ունի դրանցում (տես 3 Նեփի 9.15; Մովսես 2.1): Նա արարեց լուսինը, աստղերն ու արևը: Նա կազմավորեց այս աշխարհը, ձևավորեց, շարժման մեջ դրեց այն և կյանք ստեղծեց: Նա օդը և ջուրը լցրեց կենդանի արարածներով: Նա բլուրներն ու տափաստանները լցրեց ամեն տեսակի կենդանիներով: Օր ու

Ուսուցիչներին. Օգտագործեք բաժնի սկզբում տրված հարցերը, որպեսզի քննարկում սկսեք և դասարանի կամ ընտանիքի անդամներին ուղղեք դեպի տեքստը ավելի շատ տեղեկություն գտնելու համար: Օգտագործեք բաժնի վերջում տրված հարցերը, որպեսզի օգնեք դասարանի կամ ընտանիքի անդամներին խորհել ու քննարկել իրենց կարդացածի շուրջ և կիրառեն այն իրենց կյանքում:

գիշեր, ամառ ու ձմեռ, ցանելու և հնձելու ժամանակ տվեց մեզ: Նա ստեղծեց մարդուն Իր կերպարով, որ կառավարիչ լինի Իր ստեղծած մյուս արարածների վրա (տես Ծննդոց Ա.26–27):

Աստված Գերագույն և Բացարձակ Էակ է, որին մենք հավատում և երկրպագում ենք: Նա «տիեզերքի Մեծ ծնողն է», և Նա «նայում է մարդկային ողջ ընտանիքին հայրական հոգածությամբ և ուշադրությամբ» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 39):

Աստծո էությունը

• Որո՞նք են Աստծո հատկանիշները:

Քանի որ մենք ստեղծվել ենք Նրա պատկերով (տես Մովսես 2.26; 6.9), մենք գիտենք, որ մեր մարմինը նման է Նրա մարմնին: Նրա հավերժական հոգին բնակվում է մսից և ոսկորներից կազմված նյութեղեն մարմնում (տես ՎևՈւ 130.22): Սակայն Աստծո մարմինը կատարյալ և փառավորված է՝ ամեն պատկերացումից վեր փառքով:

Աստված կատարյալ է: Նա արդարության Աստված է՝ ունենալով սեր, ողորմածություն, գթասրտություն, ճշմարտություն, զորություն, հավատ, գիտելիք և դատողություն: Նա ամենազոր է: Նա ամենազետ է: Նա մեծահոգությամբ լի է:

Ամեն բարի բան գալիս է Աստծուց: Նա ամեն ինչ անում է, որպեսզի օգնի Իր զավակներին Իր նման դառնալ: Նա ասել է. «Քանզի ահա, սա է իմ գործը և իմ փառքը՝ իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

• Ինչո՞ւ է մեզ համար կարևոր Աստծո էությունը հասկանալը:

Ճանաչենք Աստծուն

• Ինչպե՞ս կարող ենք մենք ճանաչել Աստծուն:

Աստծուն ճանաչելն այնքան կարևոր է, որ Փրկիչն ասել է. «Սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած, և նրան որ ուղարկեցիր՝ Հիսուս Քրիստոսին» (Հովհաննես ԺԷ.3):

Առաջին և ամենամեծ պատվիրանն է՝ «Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը» (Մատթեոս ԻԲ.37)։

Որքան շատ ենք ճանաչում Աստծուն, այնքան շատ ենք սիրում Նրան և պահում Նրա պատվիրանները (տես 1 Հովհաննես Բ.3–5)։ Նրա պատվիրանները պահելով մենք կարող ենք Նրան նմանվել։

Մենք կճանաչենք Աստծուն, եթե՝

1. Հավատանք, որ Նա գոյություն ունի և սիրում է մեզ (տես Մոսիա 4.9)։
2. Ուսումնասիրենք սուրբ գրությունները (տես Բ Տիմոթեոս Գ.14–17)։
3. Աղոթենք Նրան (տես Հակոբոս Ա.5)։
4. Լավագույն ձևով հնազանդվենք Նրա բոլոր պատվիրաննե-րին (տես Հովհաննես ԺԴ.21–23)։

Այդ ամենն անելով մենք կճանաչենք Աստծուն և, ի վերջո, հավերժական կյանք կունենանք։

• Մտածեք, ինչպես կարող եք ավելի մոտենալ Աստծուն։

Լրացուցիչ սուրբ գրություններ

• Գործք Է.55–56 (Որդին Հոր աջ կողմում)

• ՎևՈւ 88.41–44 (Աստծո հատկանիշները)

• Սաղմոս ԻԴ.1 (երկիրը Տիրոջինն է)

• Մովսես 1.30–39 (Արարում)

• Ալմա 7.20 (Աստված չի կարող սխալ բան անել)

• Ջոզեֆ Սմիթ—Պատմություն 1.17 (Հայրը և Որդին առանձին էակներ են)

• Ալմա 5.40 (բարին գալիս է Աստծուց)

• Հովհաննես ԺԴ.6–9 (Որդին և Հայրը նման են)

• Մորմոն 9.15–20 (հրաշքների Աստված)

• Ամովս Գ.7 (հայտնության Աստված)

• Հովհաննես Գ.16 (սիրո Աստված)

Մեր Երկնային ընտանիքը

Գլուխ 2

Մենք մեր Երկնային Հոր զավակներն ենք

- Ի՞նչ են սուրբ գրություններն ու վերջին օրերի մարգարեներն ուսուցանում մեզ Աստծո հետ մեր հարաբերության մասին:

Աստված միայն մեր Կառավարիչն ու Արարիչը չէ, Նա նաև մեր Երկնային Հայրն է: Բոլոր տղամարդիկ և կանայք իրականում Աստծո որդիներն ու դուստրերն են: «Մարդը, որպես հոգի, ծնվել է երկնային ծնողներից և դաստիարակվել է մինչև հասուն տարիքը Հոր հավերժական ապարանքներում, նախքան կգար երկիր ժամանակավոր [ֆիզիկական] մարմնով» (*Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* [1998], 335):

Յուրաքանչյուր անձ, որ երբևէ ծնվել է երկրի վրա, մեր հոգևոր եղբայրը կամ քույրն է: Քանի որ մենք Աստծո հոգևոր զավակներն ենք, մենք Նրա աստվածային հատկանիշները զարգացնելու ներուժ ենք ժառանգել: Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ մենք կարող ենք մեր Երկնային Հոր նման դառնալ և լիարժեք ուրախություն ստանալ:

- Ինչպե՞ս է Աստծո զավակ լինելու մասին ձեր գիտելիքը ազդում ձեր մտքերի, խոսքերի և գործերի վրա:

Մենք անհատականություն և տաղանդներ ենք զարգացրել երկնքում ապրելու ընթացքում

- Մտածեք, թե ինչպիսի տաղանդներով և պարգևներով եք դուք օրհնվել:

Ուսուցիչներին. Կարիք չկա, որ յուրաքանչյուր գլուխն ամբողջությամբ ուսուցանեք: Աղոթքով պատրաստվելով ուսուցանելուն՝ փնտրեք Հոգու առաջնորդությունը, որպեսզի իմանաք, թե տվյալ գլխի որ մասերը պետք է ուսուցանեք և որ հարցերը պետք է տաք:

Սուրբ գրություններն ուսուցանում են մեզ, որ մինչ մարգարեները դեռևս հոգիներ էին երկնքում, պատրաստվել են դառնալու ղեկավարներ երկրի վրա (տես Ալմա 13.1–3)։ Նախքան նրանք կծնվեին մահկանացու մարմնում, Աստված նրանց նախակարգել (ընտրել) է լինելու ղեկավարներ երկրի վրա։ Հիսուսը, Ադամը և Աբրահամը այդ ղեկավարներից էին։ (Տես Աբրահամ 3.22–23։) Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ «յուրաքանչյուր մարդ, ով աշխարհի բնակիչներին ծառայելու կոչում ունի, նախակարգվել է այդ հատուկ նպատակին» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 511)։ Ինչևէ, երկրի վրա յուրաքանչյուր ոք ազատ է ընդունել կամ մերժել ծառայելու ցանկացած հնարավորություն։

Մենք բոլորս նման չէինք երկնքում։ Մենք գիտենք, օրինակ, որ մենք երկնային ծնողների որդիներ և դուստրեր էինք՝ տղամարդիկ և կանայք (տես «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Ensign,* Nov. 1995, 102)։ Մենք տարբեր տաղանդներ և ունակություններ ունեինք, և մենք կանչվել ենք կատարելու տարբեր բաներ երկրի վրա։ Մենք կարող ենք ավելին իմանալ մեր «հավերժական հնարավորությունների» մասին, երբ մեր հայրապետական օրհնությունն ենք ստանում (տես Thomas S. Monson, in Conference Report, Oct. 1986, 82; or *Ensign,* Nov. 1986, 66)։

Վարագույրը ծածկում է մեր նախամահկանացու կյանքի հիշողությունները, սակայն մեր Երկնային Հայրը գիտե, ով ենք մենք և ինչ ենք արել, նախքան այստեղ գալը։ Նա մեզանից յուրաքանչյուրի համար ընտրել է ժամանակ և վայր, որ ծնվենք և սովորենք դասերը, որոնց կարիքը մենք անձնապես ունենք, և լավագույնը կատարենք մեր անհատական տաղանդներով և անհատականություններով։

- Ինչպե՞ս են այլ մարդկանց տաղանդներն օրհնել ձեզ։ Ինչպե՞ս կարող են ձեր տաղանդներն ու պարգևներն օրհնել մյուսներին։

Մեր Երկնային Հայրը մեզ ներկայացրեց Իր նման դառնալու ծրագիր

- Ինչպե՞ս է երկրային կյանքն օգնում մեզ դառնալ մեր Երկնային Հոր նման:

Մեր Երկնային Հայրը գիտեր, որ մենք չէինք կարող զարգանալ որոշակի կետից հետո, եթե մենք որոշակի ժամանակով չհեռանայինք Նրան մոտից: Նա ցանկացավ, որ մենք աստվածանման հատկանիշներ զարգացնենք, որոնք Ինքն ունի: Այդ պատճառով, մենք պետք է թողնեինք մեր նախամահկանացու տունը, որպեսզի փորձվեինք և փոձառություն ձեռք բերեինք: Մեր հոգիները պետք է ֆիզիկական մարմին ստանային: Մենք պետք է մահվան միջոցով հեռանայինք մեր ֆիզիկական մարմնից և կրկին ստանայինք այն Հարության ժամանակ: Այնուհետև մենք պետք է ստանայինք անմահ մարմին, ինչպես մեր Երկնային Հայրն ունի: Եթե անցնենք մեր փորձությունները, մենք կարող ենք ստանալ լիարժեք ուրախություն, որ մեր Երկնային Հայրն է ստացել: (Տես ՎևՈւ 93.30–34:)

Մեր Երկնային Հայրը Մեծ Խորհուրդ հրավիրեց, որպեսզի ներկայացնի մեր զարգացման Իր ծրագիրը (տես *Teachings of Presidents of the Church: Joseph Smith,* 209, 511): Մենք սովորեցինք, որ եթե հետևենք Նրա ծրագրին, մենք Նրան կնմանվենք: Մենք պետք է հարություն առնենք, մենք զորություն կունենանք երկնքում և երկրի վրա, մենք կդառնանք երկնային ծնողներ և կունենանք հոգևոր զավակներ, ճիշտ ինչպես Նա (տես ՎևՈւ 132.19–20):

Մենք իմացանք, որ Նա մեզ համար երկիր կպատրաստի, որտեղ կարող ենք փորձվել (տես Աբրահամ Գ.24–26): Վարագույրը կծածկի մեր հիշողությունը, և մենք կմոռանանք մեր երկնային տունը: Սա անհրաժեշտ էր, որպեսզի առանց մեր Երկնային Հոր հետ ապրելու մասին հիշողության ազդեցության մենք կարողանայինք գործադրել բարու և չարի միջև

Ուսուցիչներին. Դասարանի կամ ընտանիքի անդամներն ավելի խորը կպատասխանեն հարցին, եթե նրանց ժամանակ տրվի իրենց պատասխանը մտածելու համար: Օրինակ, հարց տալու փոխարեն դուք կարող եք ասել. «Խնդրում եմ մեկ րոպե մտածեք ձեր պատասխանի համար, իսկ հետո ես կհարցնեմ պատասխանները»: Ապա նրանց խորհելու ժամանակ տվեք:

ընտրելու մեր ազատությունը: Այդպես մենք կարող էինք հնազանդվել Նրան ոչ թե Նրա մասին մեր գիտելիքի կամ հիշողության, այլ Նրա հանդեպ մեր հավատքի շնորհիվ: Նա կօգներ մեզ ընկալել ճշմարտությունը, երբ մենք կրկին լսեինք այն երկրի վրա (տես Հովհաննես ԺԸ.37):

Մեծ Խորհրդում մենք նաև իմացանք, որ մեր զարգացման նպատակն է՝ լիարժեք ուրախություն ունենալ: Սակայն, մենք նաև իմացանք, որ ոմանք կխաբվեն, կընտրեն այլ ուղիներ և կկորցնեն իրենց ճանապարհը: Մենք իմացանք, որ մենք բոլորս փորձություններ կունենանք մեր կյանքում՝ հիվանդություն, հիասթափություն, ցավ, վիշտ և մահ: Սակայն մենք հասկացանք, որ դրանք կտրվեն մեզ մեր փորձառության և մեր բարիքի համար (տես ՎԵՈՒ 122.7): Եթե մենք ընդունենք այդ փորձությունները, դրանք ոչ թե կխորտակեն, այլ կմաքրագործեն մեզ: Դրանք կսովորեցնեն մեզ դիմացկունություն, համբերություն և գթասրտություն (տես *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 15–16):

Այդ խորհրդում մենք նաև սովորեցինք, որ մեր թուլության պատճառով մենք բոլորս, բացի փոքր երեխաներից, մեղանչելու ենք (տես ՎԵՈՒ 29.46–47): Մենք սովորեցինք, որ Փրկիչը մեզ կօգնի, որ հարությամբ հաղթահարենք մեր մեղքերն ու մահը: Մենք իմացանք, որ եթե հավատանք Նրան, հնազանդվենք Նրա խոսքին և հետևենք Նրա օրինակին, մենք վեհացում կստանանք և կդառնանք մեր Երկնային Հոր պես: Մենք կստանանք լիարժեք ուրախություն:

- Թվարկեք Երկնային Հոր մի քանի հատկանիշներ: Ինչպե՞ս է փրկության ծրագիրն օգնում մեզ զարգացնել այդ հատկանիշները:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Եբրայեցիս ԺԲ.9 (Աստված մեր հոգիների Հայրն է)
- Հոբ ԼԸ.4–7 (նախամահկանացու կյանքն է ակնարկվում)
- Աբրահամ 3.22–28 (նախամահկանացու կյանքի տեսիլք)

- Երեմիա Ա.5 (նախամահկանացու կյանքի տեսիլք)
- ՎևՈւ 29.31–38 (նախամահկանացու կյանքի տեսիլք)
- Մովսես 3.4–7 (հոգևոր և ժամանակավոր էակներ)
- Ա Կորնթացիս ԺԵ.44 (հոգևոր և ժամանակավոր էակներ)
- ՎևՈւ 76.23–24 (ծնված որդիներ և դուստրեր)
- ՎևՈւ 132.11–26 (զարգացման ծրագիր)

Հիսուս Քրիստոս՝ մեր ընտրյալ Ղեկավար և Փրկիչ

Գլուխ 3

Փրկիչ և Ղեկավար էր անհրաժեշտ

- Ինչո՞ւ մենք պետք է հեռանայինք Երկնային Հոր ներկայությունից: Ինչո՞ւ մենք Փրկչի կարիք ունենք:

Երբ մեր փրկության ծրագիրը ներկայացվեց մեզ նախամահկանացու հոգևոր աշխարհում, մենք այնքան երջանիկ էինք, որ ուրախությունից բացականչեցինք (տես Հոբ ԼԸ.7):

Մենք հասկացանք, որ պետք է ժամանակավոր հեռանայինք մեր երկնային տնից: Մենք չպետք է ապրեինք մեր Երկնային Հոր ներկայությամբ: Նրանից հեռու գտնվելով, մենք բոլորս պետք է մեղանչեինք և մեզանից ոմանք պետք է հեռանային ճիշտ ուղուց: Մեր Երկնային Հայրը ճանաչում և սիրում էր մեզանից յուրաքանչյուրին: Նա գիտեր, որ մենք օգնության կարիք կունենայինք, և Նա պլանավորեց, ինչպես կարող էր օգնել մեզ:

Մեզ Փրկիչ էր անհրաժեշտ, որպեսզի վճարեր մեր մեղքերի համար և ուսուցաներ մեզ, ինչպես վերադառնալ մեր Երկնային Հոր մոտ: Մեր Հայրն ասաց. «Ո՞ւմ ուղարկեմ»: (Աբրահամ 3.27): Հիսուս Քրիստոսը, որը կոչվում էր Եհովա, ասաց. «Ահա ես, ինձ ուղարկիր» (Աբրահամ 3.27; տես նաև Մովսես 4.1–4):

Հիսուսը ցանկացավ գալ երկիր, մեզ համար տալ Իր կյանքը և Իր վրա վերցնել մեր մեղքերը: Նա, մեր Երկնային Հոր նման, ցանկացավ, որ մենք ընտրենք հնազանդվել թե չհնազանդվել Երկնային Հոր պատվիրաններին: Նա գիտեր, որ մենք պետք

է ընտրելու համար ազատ լինենք, որպեսզի ապացուցենք, որ վեհացմանն արժանի ենք: Հիսուսն ասաց. «Հայր, քո կամքը կատարվի, և փառքը քոնը լինի հավիտյան» (Մովսես 4.2):

Սատանան, որը կոչվում էր Լյուցիֆեր, նույնպես առաջ եկավ՝ ասելով. «Ահա, ես այստեղ եմ, ի՛նձ ուղարկիր, ես կլինեմ քո որդին և կփրկագնեմ ողջ մարդկությանը, այնպես որ մեկ հոգի չի կորչի, և անկասկած ես դա կանեմ. ուստի, տուր ինձ քո պատիվը» (Մովսես 4.1): Սատանան ուզում էր մեզ բոլորիս ստիպել, որ կատարեինք իր կամքը: Ըստ նրա ծրագրի՝ մեզ թույլ չէր տրվելու ընտրել: Նա պետք է վերցներ ընտրելու ազատությունը, որ մեր Հայրն էր տվել մեզ: Սատանան ցանկանում էր ունենալ մեր փրկության համար ողջ պատիվը: Ըստ նրա առաջարկի, երկիր գալու մեր նպատակը պետք է խափանվեր (տես *Teachings of Presidents of the Church: David O. McKay* [2003], 207):

Հիսուս Քրիստոսը դարձավ մեր ընտրյալ Ղեկավարն ու Փրկիչը

- Այս բաժինը կարդալիս մտածեք, թե ինչ զգացումներ եք տածում Փրկչի հանդեպ:

Երկու որդիներին լսելուց հետո, Երկնային Հայրն ասաց. «Ես կուղարկեմ առաջինին» (Աբրահամ 3.27):

Հիսուս Քրիստոսը ընտրվել և նախակարգվել էր լինելու մեր Փրկիչը: Շատ սուրբ գրություններ ասում են այս մասին (տես, օրինակ, Ա Պետրոս Ա.19–20; Մովսես 4.1–2): Սուրբ գրություններից մեկն ասում է մեզ, որ Հիսուսի ծնվելուց շատ առաջ, Նա հայտնվել է Մորմոնի Գրքի մի մարգարեի, որը հայտնի է որպես Հարեդի եղբայր, և ասել. «Ահա, ես եմ նա, ով պատրաստված էր աշխարհի հիմնադրումից ի վեր՝ փրկագնելու իմ ժողովրդին: Ահա, ես եմ Հիսուս Քրիստոսը: . . . Ինձանով պիտի ողջ մարդկությունը կյանք ունենա, և դա՝ հավերժորեն, այսինքն՝ նրանք, ովքեր կհավատան իմ անունին» (Եթեր 3.14)

Երբ Հիսուսն ապրում էր երկրի վրա, Նա ուսուցանեց. «Ես իջա երկնքիցը, որ ոչ թե իմ կամքն անեմ, այլ ինձ ուղարկողի կամքը: . . . Եվ սա է ինձ ուղարկողի կամքը. որ ամեն ով որ

տեսնե Որդուն և հավատա նորան, հավիտենական կյանք ունենա. և ես հետին օրումը կհարուցանեմ նորան» (Հովհաննես Զ.38, 40)։

Պատերազմ Երկնքում

Քանի որ մեր Երկնային Հայրն ընտրեց Հիսուս Քրիստոսին որպես մեր Փրկիչ, Սատանան բարկացավ և ապստամբեց։ Երկնքում պատերազմ եղավ։ Սատանան և նրա հետևորդները կռվում էին Հիսուս Քրիստոսի և Նրա հետևորդների դեմ։ Փրկչի հետևորդները «հաղթեցին [սատանային]՝ Գառի արյունովը և իրանց վկայության խոսքովը» (Հայտնություն ԺԲ.11)։

Այդ մեծ ապստամբության ժամանակ, Սատանան և այն բոլոր հոգիները, ովքեր հետևեցին նրան, հեռացվեցին Աստծո ներկայությունից և դուրս նետվեցին երկնքից։ Երկնքի զորքերի մեկ երրորդը պատժվեցին սատանային հետևելու համար (տես ՎԿՈ 29.36)։ Նրանց մերժվեց մահկանացու մարմին ստանալու իրավունքը։

Որովհետև մենք այստեղ երկրի վրա ենք և մահկանացու մարմին ունենք, մենք գիտենք, որ հետևել ենք Հիսուս Քրիստոսին և մեր Երկնային Հորը։ Սատանան և նրա հետևորդները նույնպես երկրի վրա են, բայց որպես հոգիներ։ Նրանք չեն մոռացել, թե ով ենք մենք, և նրանք ամեն օր մեր շուրջն են, գայթակղում և հրապուրում են մեզ, որ անենք այն, ինչ հաճելի չէ մեր Երկնային Հորը։ Մեր նախամահկանացու կյանքում մենք ընտրել ենք հետևել Հիսուս Քրիստոսին և ընդունել ենք Աստծո ծրագիրը։ Մենք պետք է շարունակենք հետևել Հիսուս Քրիստոսին այստեղ՝ երկրի վրա։ Միայն Նրան հետևելով մենք կարող ենք վերադառնալ մեր երկնային տուն։

• Ի՞նչ ուղիներով է Երկնքի Պատերազմը շարունակվում այսօր։

Մենք ուենենք Փրկչի ուսմունքները, որոնց պետք է հետևենք

• Մտածեք, թե ինչպես են Փրկչի ուսմունքներն ազդել ձեզ վրա։

Ի սկզբանե, Հիսուս Քրիստոսը հայտնել է ավետարանը, որն ասում է մեզ, թե ինչ մենք պետք է անենք, որպեսզի

վերադառնանք մեր Երկնային Հոր մոտ: Նշանակված ժամանակ Նա եկավ երկիր: Նա ուսուցանեց փրկության և վեհացման ծրագիրը Իր խոսքով և Իր ապրելակերպով: Նա հաստատեց Իր Եկեղեցին և Իր քահանայությունը երկրի վրա: Նա Իր վրա վերցրեց մեր մեղքերը:

Նրա ուսմունքներին հետևելով մենք կարող ենք ժառանգել մի վայր սելեստիալ արքայությունում: Նա արեց Իր գործը, որպեսզի օգնի մեզ վերադառնալ մեր երկնային տուն: Այժմ մեզանից յուրաքանչյուրը պետք է կատարի իր մասը և արժանանա վեհացմանը:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Մովսես 4.1–4; Աբրահամ 3.22–28 (Փրկիչն ընտրվել է նախամահկանացու կյանքում)
- ՎևՈ 76.25–29 (Պատերազմ Երկնքում)
- Հայտնություն ԺԲ.7–9, 11 (Երկնքի Պատերազմում Փրկչի հետևորդները հաղթեցին Սատանային Գառան արյունով և իրենց վկայության խոսքով)
- Եսայիա ԺԴ.12–15 (ինչու Լուցիֆերը դուրս գցվեց)

Ուսուցիչներին. Դուք կարող եք դասարանի կամ ընտանիքի անդամներին խնդրել անհատապես, զույգերով կամ խմբով ուսումնասիրել «Լրացուցիչ սուրբ գրությունները»:

Ընտրելու ազատություն

Գլուխ 4

Ազատ կամքը հավերժական սկզբունք է

- Եթե ինչ-որ մեկը հարցնի ձեզ, թե ինչու է կարևոր ազատ կամք ունենալը, ի՞նչ կպատասխանեք դուք:

«Դու կարող ես ընտրել քեզ համար, քանզի դա տրված է քեզ» (Մովսես 3.17):

Աստված ասել է մեզ Իր մարգարեների միջոցով, որ մենք ազատ ենք ընտրելու բարու և չարի միջև: Մենք կարող ենք ընտրել ազատություն և հավերժական կյանք՝ հետևելով Հիսուս Քրիստոսին: Մենք նաև ազատ ենք ընտրելու գերություն և մահ՝ հետևելով Սատանային: (Տես 2 Նեփի 2.27:) Բարու և չարի միջև ընտրելու իրավունքը և ինքնուրույն գործելը կոչվում է ազատ կամք:

Մեր նախամահկանացու կյանքում մենք բարոյական ազատ կամք ենք ունեցել: Երկրային կյանքի նպատակներից մեկը ցույց տալն է, թե ինչ ընտրություններ ենք կատարելու (տես 2 Նեփի 2.15–16): Եթե մեզ ստիպեին ընտրել ճիշտը, մենք չէինք կարող ցույց տալ, թե ինքներս ինչ կընտրեինք: Ինչպես նաև, մենք ավելի ուրախությամբ ենք կատարում գործեր, երբ ինքնուրույն ենք ընտրություններ կատարում:

Նախամահկանացու Երկնային Խորհրդում բարձրացված հիմնական հարցերից մեկն էր՝ ազատ կամքը: Դա Քրիստոսի հետևորդների և Սատանայի հետևորդների միջև ծագած հակասության հիմնական պատճառներից մեկն էր: Սատանան ասաց. «Ահա, ես այստեղ եմ, ի՛նձ ուղարկիր, ես կլինեմ քո որդին և կփրկագնեմ ողջ մարդկությանը, այնպես որ մեկ հոգի

չի կորչի, և անկասկած ես դա կանեմ. ուստի, տուր ինձ քո պատիվը» (Մովսես 4.1)։ Սա ասելով, նա «ապստամբեց [Աստծո] դեմ և փնտրեց կործանել մարդու կամքի ազատությունը» (Մովսես 4.3)։ Նրա առաջարկը մերժվեց, և նա դուրս գցվեց երկնքից իր հետևորդների հետ միասին (տես ՎևՈւ 29.36–37)։

Ազատ կամքը Փրկության ծրագրի կարևոր մասն է

Ազատ կամքը երկրի վրա մեր կյանքը դարձնում է փորձաշրջան։ Իր զավակներին մահկանացու վիճակում ստեղծելը պլանավորելիս Աստված ասաց. «Դրանով մենք նրանց կստուգենք, որպեսզի տեսնենք, թե արդյոք նրանք կանեն այն ամենը, ինչ Տերը՝ իրենց Աստվածը, կպատվիրի նրանց» (Աբրահամ 3.25)։ Առանց ազատ կամքի պարգևի մենք չէինք կարող ցույց տալ մեր Երկնային Հորը արդյոք կկարողանայինք անել այն ամենը, ինչ Նա պատվիրել է մեզ։ Քանի որ կարող ենք ընտրել, մենք պատասխանատու ենք մեր արարքների համար (տես Հելաման 14.30–31)։

Երբ մենք ընտրում ենք ապրել մեզ համար Աստծո ծրագրով, մեր ազատ կամքն ամրապնդվում է։ Ճիշտ ընտրություններն ավելացնում են ավելի շատ ճիշտ որոշումներ կայացնելու մեր կարողությունը։

Երբ մենք հնազանդվում են մեր Հոր պատվիրաններից յուրաքանչյուրին, մենք աճում ենք իմաստության և ուժեղ բնավորության մեջ։ Մեր հավատն ավելանում է։ Մեզ համար հեշտանում է ճիշտ ընտրություններ կատարելը։

Մենք սկսել ենք ընտրություններ կատարել լինելով հոգևոր զավակներ մեր Երկնային Հոր ներկայության մեջ։ Այնտեղ կատարած մեր ընտրությունների շնորհիվ մենք արժանի դարձանք երկիր գալուն։ Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք աճենք հավատի, զորության, գիտելիքի, իմաստության մեջ և այլ լավ բաներում։ Եթե մենք պահենք Նրա պատվիրանները և ճիշտ ընտրություններ կատարենք, մենք կսովորենք և կհասկանանք։ Մենք կդառնանք Նրա պես։ (Տես ՎևՈւ 93.28։)

- Ինչպե՞ս է ճիշտ ընտրություններ կատարելն օգնում մեզ ավելի շատ ճիշտ ընտրություններ կատարել։

Ազատ կամքը պահանջում է, որ ընտրություն լինի

• Ինչո՞ւ է անհրաժեշտ հակադրությունը։

Մենք չենք կարող ընտրել արդարակեցությունը, եթե մեր առջև չունենանք բարու և չարի հակադրությունները։ Մորմոնի Գրքի մարգարե՝ Լեքին, իր որդի Հակոբին ասել է, որ Աստծո նպատակների իրականացման համար պետք է «հակադրություն լինի բոլոր բաներում։ Եթե այդպես չլիներ . . . արդարությունը չէր կարող իրագործվել, ո՛չ էլ՝ ամբարշտությունը, ո՛չ՝ սրբությունը, ո՛չ էլ՝ թշվառությունը, ո՛չ՝ լավը, ո՛չ էլ՝ վատը» (2 Նեփի 2.11)։

Աստված թույլ է տալիս Սատանային հակադրվել բարուն։ Աստված ասել է Սատանայի մասին.

«Ես այնպես արեցի, որ նա ցած զցվեր.

«Եվ նա դարձավ Սատանա, այո, այսինքն՝ դևը, բոլոր աստերի հայրը, որ խաբի և կուրացնի մարդկանց, և գերության տանի նրանց իր կամքով, նույնիսկ բոլոր նրանց, ովքեր չեն կամենա ականջ դնել իմ ձայնին» (Մովսես 4.3–4)։

Սատանան փորձում է անել ամեն ինչ, որ կործանի Աստծո աշխատանքը։ Նա փնտրում է «ողջ մարդկության թշվառությունը։ . . . Նա ջանում է, որ բոլոր մարդիկ լինեն թշվառ, ինչպես ինքը» (2 Նեփի 2.18, 27)։ Նա մեզ չի սիրում։ Նա ոչ մի լավ բան չի ցանկանում մեզ (տես Մորոնի 7.17)։ Նա չի ցանկանում, որ մենք երջանիկ լինենք։ Նա ցանկանում է, որ մեզ իր գերիները դարձնի։ Նա օգտագործում է շատ դիմակներ, որպեսզի ստրկացնի մեզ։

Հետևելով Սատանայի գայթակղություններին՝ մենք սահմանափակում ենք մեր ընտրությունները։ Հետևյալ օրինակը ցույց է տալիս, թե ինչպես է դա աշխատում։ Պատկերացրեք ծովափին կա նշան, որն ասում է՝ «Վտանգավոր ջրապտույտ։ Այստեղ չի թույլտրվում լողանալ»։ Մենք կարող ենք մտածել, որ դա սահմանափակում է։ Իրո՞ք այդպես է։ Մենք դեռևս շատ ընտրություններ ունենք։ Մենք կարող ենք լողանալ մեկ այլ վայրում։ Մենք ազատ ենք և կարող ենք քայլել ծովափում և խխունջներ

հավաքել: Մենք ազատ ենք դիտելու արևամուտը: Մենք ազատ ենք գնալու տուն: Մենք նաև ազատ ենք՝ անտեսելու նշանը և լողանալու վտանգավոր վայրում: Սակայն երբ ջրապտույտն իր ճանկերի մեջ առնի մեզ և ներքև քաշի, մենք շատ քիչ ընտրություններ կունենանք: Մենք կարող ենք փորձել փրկվել կամ օգնություն կանչել, սակայն կարող ենք խեղդվել:

Թեպետ մենք ազատ ենք ընտրելու մեր գործողությունների ընթացքը, մենք ազատ չենք ընտրելու մեր արարքների հետևանքները: Հետևանքները, լինեն լավ թե վատ, գալիս են որպես մեր կատարած ընտրության բնական արդյունք (տես Գաղատացիս Զ.7; Հայտնություն ԻԲ.12):

Երկնային Հայրը ասել է մեզ, թե ինչպես կարող ենք խույս տալ սատանայի գերությունից: Մենք պետք է միշտ ուշադիր լինենք և աղոթենք՝ խնդրելով Աստծուն օգնել մեզ դիմակայելու սատանայի գայթակղություններին (տես 3 Նեփի 18.15): Մեր Երկնային Հայրը թույլ չի տա, որ մեր դիմակայելու կարողությունից վեր գայթակղվենք (տես Ա Կորնթացիս Ժ.13; Ալմա 13.28):

Աստծո պատվիրանները մեզ հեռացնում են վտանգից և տանում դեպի հավերժական կյանք: Իմաստուն ձևով ընտրելով մենք ձեռք կբերենք վեհացում, հավերժական առաջընթաց և կվայելենք կատարյալ երջանկություն (տես 2 Նեփի 2.27–28):

- Թվեք մի քանի գործողություններ, որոնք սահմանափակում են մեր ընտրությունները: Թվեք մի քանի գործողություններ, որոնք մեզ ազատություն են պարգևում:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Մովսես 7.32 (ընտրելու ազատություն)
- Աբրահամ 3.24–25 (երկրային կյանքը փորձություն է)
- Ալմա 41.3; Մորոնի 7.5–6 (դատվել ըստ գործերի)
- 2 Նեփի 2.11–16 (անհրաժեշտ է, որ լինի հակադրություն)

Ուսուցիչներին. Մի պարզ նկարը կարող է օգնել սովորողներին կենտրոնացնել իրենց ուշադրությունը: Եթե քննարկում եք այս գլխում ներկայացված զգուշացման նշանի մասին պատմությունը, դուք կարող եք նման նշան նկարել գրատախտակին կամ մեծ թղթի վրա:

- Մորոնի 7.12–17 (ընտրել բարու և չարի միջև)
- Բ Պետրոս Բ.19; Հովհաննես Ը.34 (մեղքը գերության է տանում)
- 2 Նեփի 2.28–29; Ալմա 40.12–13 (հատուցում ըստ գործերի)

Արարում

Գլուխ 5

Աստծո ծրագիրը մեզ համար

• Ինչո՞ւ մենք երկիր գալու կարիքը ունեինք:

Երբ մենք ապրում էինք որպես հոգևոր զավակներ մեր երկնային ծնողների հետ, մեր Երկնային Հայրն ասաց մեզ Իր ծրագրի մասին, որ մենք ավելի նմանվեինք Նրան: Երբ լսեցինք Նրա ծրագիրը, մենք ուրախությունից բացականչում էինք (տես Հոբ ԼԸ.7): Մենք նոր փորձառություններ էինք ցանկանում ունենալ: Որպեսզի այդ ամենը կատարվեր, մենք պետք է հեռանայինք մեր Հոր ներկայությունից և մահկանացու մարմին ստանայինք: Մեզ անհրաժեշտ էր ապրելու մեկ այլ վայր, որտեղ մենք կարող էինք պատրաստվել, որպեսզի Նրան նմանվեինք: Մեր նոր տունը կոչվեց երկիր:

• Ձեր կարծիքով, ինչո՞ւ մենք ուրախությունից բացականչեցինք, երբ լսեցինք փրկության ծրագրի մասին:

Հիսուսն արարեց երկիրը

Հիսուս Քրիստոսն արարել է այս երկիրը և այն ամենը, ինչ կա դրանում: Նա նաև արարել է շատ այլ աշխարհներ: Նա դա կատարեց քահանայության զորությամբ՝ մեր Երկնային Հոր ղեկավարության ներքո: Հայր Աստվածն ասաց. «Անթիվ աաշխարհներ եմ ես ստեղծել . . . և Որդու միջոցով եմ ես ստեղծել դրանք, որն իմ Միածինն է» (Մովսես 1.33): Մենք այլ վկայություններ ունենք այս ճշմարտության մասին: Ջոզեֆ Սմիթն ու Սիդնի Ռիգդոնը տեսիլքով տեսան Հիսուս Քրիստոսին: Նրանք վկայեցին, «որ նրանով, նրա միջոցով, և նրանից

Ուսուցիչներին. Դասարանի կամ ընտանիքի որոշ անդամներ գուցե անհարմար զգան բարձրաձայն կարդալ: Նախքան կխնդրեք նրանց բարձրաձայն կարդալ, կարող եք հարցնել. «Ո՞վ է ցանկանում կարդալ»: Ապա խնդրեք նրանց, ովքեր կարդալու ցանկություն են հայտնել:

է, որ աշխարհները կան և ստեղծվել են, և դրանց բնակիչները ծնված որդիներն ու դուստրերն են Աստծո» (ՎևՈւ 76.24):

Արարման իրագործումը

• Որո՞նք են Արարման նպատակները:

Երկիրը և երկրի վրա ամեն ինչ ստեղծվեց հոգևոր ձևով, նախքան դրանք կստեղծվեին ֆիզիկապես (տես Մովսես 3.5): Պլանավորելով ստեղծել ֆիզիկական երկիր, Քրիստոսն ասաց նրանց, ովքեր Իր հետ էին. «Մենք կիջնենք ներքև, քանզի մի տարածություն կա այնտեղ, . . . և կստեղծենք մի երկիր, որի վրա սրանք [մեր Երկնային Հոր զավակները] կկարողանան բնակվել» (Աբրահամ 3.24):

Հոր ղեկավարությամբ Քրիստոսը կազմավորեց և կազմակերպեց երկիրը: Նա առանձնացրեց լույսը խավարից, որպեսզի ստեղծի օր ու գիշեր: Նա կազմավորեց արևը, լուսինը և աստղերը: Նա ջրերն առանձնացրեց ցամաքից, որպեսզի ստեղծի ծովեր, գետեր և լճեր: Նա երկիրը դարձրեց գեղեցիկ և պտղաբեր: Նա ստեղծեց խոտեր, ծառեր, ծաղիկներ և այլ տեսակի բույսեր: Այս բույսերը սերմ ունեին, որից նոր բույսեր կարող էին աճել: Այնուհետև Նա ստեղծեց կենդանիներին՝ ամեն տեսակի ձկներ, անասուններ, միջատներ և թռչուններ: Այդ կենդանիները կարող էին վերարտադրել իրենց տեսակը:

Այժմ երկիրը պատրաստ էր արարումներից մեծագույնի՝ մարդկության համար: Մեր հոգիներին պետք է մսից և արյունից մարմին տրվեր, որպեսզի նրանք ապրեին երկրի վրա: «Եվ ես՝ Աստվածս, ասացի իմ Միածնին, որն ինձ հետ էր ի սկզբանե. Եկ մարդ արարենք մեր պատկերով՝ մեր նմանությամբ. և այդպես եղավ» (Մովսես 2.26): Եվ այդպես առաջին տղամարդը՝ Ադամը, և առաջին կինը՝ Եվան, ստեղծվեցին ու նրանց տրվեցին մարմիններ, որոնք նման էին մեր երկնային ծնողների մարմիններին: «Աստծո պատկերովը ստեղծեց նրան. արու և էգ ստեղծեց նրանց» (Ծննդոց Ա.27): Երբ Տերն ավարտեց Իր արարումը, Նա գոհ էր և գիտեր, որ Իր աշխատանքը լավ էր, և Նա որոշ ժամանակ հանգստացավ:

Աստծո արարումը ցույց է տալիս Նրա սերը

- Ինչպե՞ս են Աստծո ստեղծածները ցույց տալիս, որ Նա սիրում է մեզ:

Մենք այժմ ապրում ենք այս գեղեցիկ աշխարհում: Մտածեք արևի մասին, որը մեզ ջերմություն և լույս է տալիս: Մտածեք անձրևի մասին, որը աճեցնում է բույսերը և մաքրում ու թարմացնում է աշխարհը: Մտածեք, թե որքան հաճելի է լսել թռչունի երգն ու ընկերոջ ծիծաղը: Մտածեք, թե որքան հրաշալի են մեր մարմինները՝ ինչպես կարող ենք աշխատել, խաղալ և հանգստանալ: Երբ մտածում ենք այս բոլոր ստեղծագործությունների մասին, մենք սկսում ենք հասկանալ, թե որքան իմաստուն, հզոր և սիրող էակներ են Հիսուս Քրիստոսն ու մեր Երկնային Հայրը: Նրանք մեծ սեր են ցուցաբերել մեր հանդեպ՝ բավարարելով մեր բոլոր կարիքները:

Բուսական և կենդանական աշխարհները նույնպես ստեղծվել են մեզ ուրախություն պարգևելու համար: Տերն ասաց. «Այո՛, բոլոր բաները, որ բխում են երկրից, իր ժամանակին, ստեղծված են մարդու օգտի և գործածության համար՝ թե՛ աչքը շոյելու և թե՛ սիրտն ուրախացնելու համար. այո՛, սննդի և հագուստի համար, համի և հոտի համար, մարմինն ամրացնելու և հոգու կենարարության համար» (Վեր. 59.18–19): Թեպետ Աստծո արարչագործությունները շատ են, Նա ճանաչում և սիրում է նրանց բոլորին: Նա ասաց. «Ինձ համար բոլոր բաները հաշվելի են, քանզի դրանք իմն են, և ես գիտեմ դրանց» (Մովսես 1.35):

- Թվեք մի քանի բաներ, որ դուք գնահատում եք Աստծո արարչագործությունների մեջ:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ծննդոց Ա, Բ.1–7; Աբրահամ 3.22–23; 4–5; Մովսես 1.27–42; 2–3 (Արարման պատմություններ)
- Եբրայեցիս Ա.1–3; Կողոսացիս Ա.12–17; Վեր. 38.1–3 (Հիսուսն Արարիչ)
- Վեր. 59.18–20; Մովսես 2.26–31; Վեր. 104.13–17; Մատթեոս Զ.25–26 (Արարումը ցույց է տալիս Աստծո սերը)

Ադամի և Եվայի Անկումը

Գլուխ 6

Ադամն ու Եվան առաջինը եկան աշխարհ

- Ի՞նչ փաստեր են օգնում մեզ ըմբռնել, որ Ադամն ու Եվան քաջարի հոգիներ էին:

Աստված պատրաստել է այս երկիրը որպես տուն Իր զավակների համար: Ադամն ու Եվան ընտրվեցին լինելու առաջին ծնողները, որոնք պետք է ապրեին երկրի վրա (տես Մովսես 1.34; 4.26): Մեր Հոր ծրագրում նրանց գործն էր մահկանացու կյանքի սկիզբը դնել աշխարհի վրա: Նրանք պետք է լինեին առաջին ծնողները: (Տես ՎևՈւ 107.54–56:)

Ադամն ու Եվան մեր Հոր ազնվազարմ զավակների շարքում էին: Հոգևոր աշխարհում Ադամը կոչվում էր Միքայել հրեշտակապետ (տես ՎևՈւ 27.11; Հուդա Ա.9): Մեր Երկնային Հայրն ընտրեց նրան, որ Սատանայի դեմ կռվում առաջնորդի արդարակյացներին (տես Հայտնություն ԺԲ.7–9): Ադամն ու Եվան նախակարգվել էին դառնալու մեր առաջին ծնողները: Տերն Ադամին մեծ օրհնություններ խոստացավ. «Ես քեզ դրել եմ, որ լինես գլխավերևում. ազգերի բազմություն կծնվի քեզանից, և դու նրանց վրա իշխան կլինես հավիտյան» (ՎևՈւ 107.55):

Եվան բոլոր կենդանի էակների մայրն էր Մովսես 4.26): Աստված Ադամին և Եվային ամուսնացրեց, որովհետև «լավ չէ, որ մարդը մենակ լինի» (Մովսես 3.18; տես նաև Ա Կորնթացիս

Ուսուցիչներին. Օգտագործեք բաժնի սկզբում տրված հարցերը, որպեսզի քննարկում սկսեք և դասարանի կամ ընտանիքի անդամներին ուղղեք դեպի տեքստը ավելի շատ տեղեկություն գտնելու համար: Օգտագործեք բաժնի վերջում տրված հարցերը, որպեսզի օգնեք դասարանի կամ ընտանիքի անդամներին խորհել ու քննարկել իրենց կարդացածի շուրջ և կիրառել այն իրենց կյանքում:

ԺԱ.11)։ Նա կիսում էր Ադամի պատասխանատվությունը և կիսելու էր նաև նրա հավերժական օրհնությունները։

- Ի՞նչ կարող ենք մենք սովորել Ադամի և Եվայի օրինակներից։

Եդեմի Պարտեզը

- Ինչպիսի՞ պայմաններում էին Ադամն ու Եվան ապրում Եդեմի Պարտեզում։

Երբ Ադամն ու Եվան տեղադրվեցին Եդեմի Պարտեզում, նրանք դեռևս մահկանացու չէին։ Այդ վիճակում «նրանք երեխաներ չէին կարող ունենալ» (2 Նեփի 2.23)։ Մահ չկար։ Նրանք *ֆիզիկական* կյանքով էին ապրում, որովհետև նրանց հոգիները ֆիզիկական մարմնի մեջ էին բնակվել, որը պատրաստվել էր հողից (տես Մովսես 6.59; Աբրահամ 5.7)։ Նրանք *հոգևոր* կյանքով էին ապրում, որովհետև գտնվում էին Աստծո ներկայության մեջ։ Նրանք դեռևս բարու և չարի միջև ընտրություն չէին կատարել։

Աստված պատվիրեց նրանց երեխաներ ունենալ։ Նա ասաց. «Պտղաբեր եղեք և բազմացեք, լցրեք երկիրը և տիրեք նրան և իշխեք . . . երկրի վրա շարժվող ամեն կենդանու վրա» (Մովսես 2.28)։ Աստված ասաց նրանց, որ կարող են ազատորեն ուտել պարտեզի բոլոր ծառերից, բացի մեկից՝ բարու և չարի գիտության ծառից։ Այդ ծառի համար Աստված ասաց. «Այն օրը, երբ դու ուտես դրանից, դու անկասկած կմեռնես» (Մովսես 3.17)։

Սատանան, չիմանալով Աստծո միտքը, սակայն ձգտելով կործանել Աստծո ծրագիրը, մոտեցավ Եվային Եդեմի Պարտեզում։ Նա գայթակղեց Եվային, որ ուտի բարու և չարի գիտության ծառի պտղից։ Նա հավաստիացրեց Եվային, որ նա և Ադամը չեն մեռնի, այլ «աստվածների պես կլինեն՝ բարին և չարը գիտեցող» (Մովսես 4.11)։ Եվան տեղի տվեց գայթակղությանը և կերավ այդ պտուղը։ Երբ Ադամը իմացավ, նա ևս որոշեց ճաշակել դրանից։ Պտուղն ուտելու հետևանքով Ադամի և Եվայի հետ տեղի ունեցած փոփոխությունը կոչվում է Անկում։

Ադամի և Եվայի Բաժանումն Աստծուց

• Ի՞նչ ֆիզիկական և հոգևոր փոփոխություններ կատարվեցին Ադամի և Եվայի մեջ իրենց օրինազանցության արդյունքում:

Քանի որ Ադամն ու Եվան կերան բարու և չարի գիտության ծառի պտղից, Տերը նրանց Եդեմի Պարտեզից դուրս հանեց աշխարհ: Նրանց ֆիզիկական վիճակը փոխվեց արգելված պտուղն ուտելու արդյունքում: Ինչպես Աստված խոստացել էր, նրանք մահկանացու դարձան: Նրանք և իրենց երեխաները պետք է ճաշակեին հիվանդություն, ցավ և ֆիզիկական մահ:

Իրենց օրինազանցության պատճառով, Ադամն ու Եվան նաև հոգևոր մահ կրեցին: Դա նշանակում էր, որ նրանք և իրենց երեխաները չէին կարող քայլել և դեմառդեմ խոսել Աստծո հետ: Ադամը, Եվան և իրենց երեխաները բաժանվեցին Աստծուց՝ թե ֆիզիկապես և թե հոգեպես:

Մեծ օրհնություններ եկան օրինազանցության արդյունքում

• Ինչպե՞ս է Անկումը հնարավորություն ընձեռում մեզ դառնալ մեր Երկնային Հոր պես:

Որոշ մարդիկ հավատում են, որ Ադամն ու Եվան ծանր մեղք գործեցին, երբ բարու և չարի գիտության ծառի պտղից ճաշակեցին: Ինչևէ, վերջին օրերի սուրբ գրություններն օգնում են մեզ հասկանալ, որ նրանց Անկումը անհրաժեշտ քայլ էր կյանքի ծրագրում և մեծ օրհնություն բոլորիս համար: Անկման շնորհիվ մենք օրհնվեցինք ֆիզիկական մարմնով, բարու և չարի միջև ընտրելու իրավունքով և հավերժական կյանք ստանալու հնարավորությամբ: Այդ արտոնություններից ոչ մեկը չէինք ունենա, եթե Ադամն ու Եվան մնային պարտեզում:

Անկումից հետո, Եվան ասաց. «Եթե չլիներ մեր օրինազանցությունը, մենք երբեք [երեխաներ] չէինք ունենա, և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և մեր փրկագնման ուրախությունը, և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին» (Մովսես 5.11):

Լեքի մարգարեն բացատրել է.

«Եվ, ահա, եթե Ադամն օրինազանցություն չաներ, նա չէր ընկնի [չէր զրկվի Աստծո ներկայությունից], այլ նա կմնար Եդեմի պարտեզում: Եվ բոլոր բաները, որոնք արարվել էին, պետք է մնացած լինեին նույն վիճակում, որում եղել էին արարվելուց հետո: . . .

Եվ նրանք երեխաներ չէին ունենա. ուստի, նրանք մնացած կլինեին անմեղության վիճակում, չունենալով ուրախություն, քանզի չգիտեին թշվառություն. չանելով բարիք, քանզի նրանք չգիտեին մեղքը:

Բայց, ահա, բոլոր բաներն արվել են նրա իմաստությամբ, ով գիտի բոլոր բաները:

«Ադամն ընկավ, որպեսզի մարդիկ լինեն. և մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.22–25):

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ է անհրաժեշտ իմանալ Անկման մասին և ինչպես է այն ազդում մեզ վրա:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- 1 Նեփի 5.11; 2 Նեփի 2.20 (Ադամն ու Եվան առաջին ծնողներ, ընտանիք)
- 2 Նեփի 2.14–21 (հակադրություն և Անկում. կյանքը փորձաշրջան է)
- 2 Նեփի 2.22–26 (փրկության ծրագրի Անկման մասը)

Սուրբ Հոգի

Գլուխ 7

Սուրբ Հոգին եկավ Ադամին և Եվային

- Ինչո՞ւ Ադամն ու Եվան Սուրբ Հոգու առաջնորդության կարիքն ունեին:

Եդեմի Պարտեզից հեռանալուց հետո, Ադամն ու Եվան սկսեցին հող մշակել և այլ գործեր կատարել, որպեսզի կարողանան ապրել: Նրանք շատ երեխաներ ունեցան, և նրանց որդիներն ու դուստրերն ամուսնացան և իրենց երեխաներն ունեցան (տես Մովսես 5.1–3): Այսպիսով, մեր Երկնային Հոր զավակները սկսեցին հեռանալ Նրա ներկայությունից և գալ երկիր, ինչպես նրանց խոստացվել էր (տես Աբրահամ 3.24–25): Երկիր գալով, նրանց մոտ ջնջվեց երկնային տան մասին հիշողությունը: Բայց մեր Հայրը նրանց չզրկեց Իր ազդեցությունից: Նա ուղարկեց Սուրբ Հոգին, որ սփոփի, օգնի և առաջնորդի Իր հոգևոր բոլոր զավակներին:

Ադամն ու Եվան աղոթքով էին դիմում Երկնային Հորը: Նա խոսում էր նրանց հետ և պատվիրաններ տալիս նրանց, որոնց նրանք հնազանդվում էին: Տիրոջ հրեշտակը եկավ և ուսուցանեց Ադամին և Եվային փրկության ծրագիրը: Տերը ուղարկեց Սուրբ Հոգին, որ վկայի Հոր և Որդու մասին և ուսուցանի ավետարանը Ադամին և Եվային: (Տես Մովսես 5.4–9:)

Սուրբ Հոգու զորությամբ Ադամը «սկսեց մարգարեանալ երկրի բոլոր ընտանիքների վերաբերյալ՝ ասելով. Օրհնյալ է Աստծո անունը, քանզի իմ օրինազանցության հետևանքով աչքերս բացվել են, և այս կյանքում ես ուրախություն կունենամ, և կրկին, մարմնի մեջ, ես կտեսնեմ Աստծուն» (Մովսես 5.10):

Ուսուցիչներին. Երբ դուք դասարանի անդամներին դիմում եք իրենց անուններով, նրանք հասկանում են, որ իրենք կարևոր են ձեզ համար, և դուք հոգ եք տանում իրենց համար: Սովորեք նրանց անունները և դասերի ընթացքում նրանց անունով դիմեք: Օգնեք նրանց սովորել միմյանց անունները:

Սուրբ Հոգուց ստացած վկայության շնորհիվ Եվան ասաց. «Եթե չլիներ մեր օրինազանցությունը, մենք երբեք [երեխաներ] չէինք ունենա, և երբեք չէինք գիտենա բարին և չարը, և մեր փրկագնման ուրախությունը, և հավերժական կյանքը, որն Աստված տալիս է բոլոր հնազանդներին» (Մովսես 5.11):

- Սուրբ Հոգու կողմից առաջնորդվելու մեր կարիքը ինչպե՞ս է նման Ադամի և Եվայի առաջնորդվելու կարիքին:

Սուրբ Հոգու հատկանիշները

- Ինչպե՞ս է Սուրբ Հոգին տարբերվում Հորից և Որդուց: Ինչո՞ւ է այդ տարբերությունը կարևոր մեզ համար:

Սուրբ Հոգին Աստվածագլխի անդամ է (տես Ա Հովհաննես Ե.7; ՎևՈւ 20.28): Նա «Հոգեղեն անձնավորություն է» (ՎևՈւ 130.22): Նա կարող է մեկ տեղում լինել, սակայն միևնույն ժամանակ Նրա ազդեցությունը կարող է լինել ամենուր:

Երկնային Հայրը, Հիսուս Քրիստոսը և Սուրբ Հոգին կոչվում են Աստվածագլուխ: Նրանք միացած են նպատակով: Յուրաքանչյուրը կարևոր հանձնարարություն ունի փրկության ծրագրում: Մեր Երկնային Հայրը մեր Հայրն ու կառավարիչն է: Հիսուս Քրիստոսը մեր Փրկիչն է: Սուրբ Հոգին հայտնող է և ամեն ճշմարտության մասին վկայող:

Սուրբ Հոգին մեր Երկնային Հոր սուրհանդակն է և հատուկ պարգև է մեզ տրված (տես այս գրքի գլուխ 21):

Սուրբ Հոգու առաքելությունը

- Նշեք մի քանի ճշմարտություններ, որ Սուրբ Հոգին հայտնում է մեզ:

Սուրբ Հոգու առաքելությունն է՝ վկայություն բերել Հոր և Որդու, և բոլոր բաների ճշմարտության մասին:

Սուրբ Հոգին կվկայի մեզ, որ Հիսուսը մեր Փրկիչն ու Քավիչն է (տես 3 Նեփի 28.11; ՎևՈւ 20.27): Նա կհայտնի մեզ, որ մեր Երկնային Հայրը մեր հոգիների Հայրն է: Նա կօգնի մեզ հասկանալ, որ մենք կարող ենք վեհացում ստանալ մեր Երկնային Հոր պես: (Տես Հռովմեացիս Ը.16–17:) Տիրոջ մարգարեները խոստացել են՝

«Սուրբ Հոգու զորությամբ դուք կարող եք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների վերաբերյալ» (Մորոնի 10.5)։

Առանց Սուրբ Հոգու մենք չենք կարող իմանալ, որ Հիսուսը Քրիստոսն է։ Պողոս Առաքյալը գրել է. «Ոչ ոք չի կարող Հիսուսին Տեր ասել՝ եթե ոչ Հոգով Սրբով» (Ա Կորնթացիս ԺԲ.3)։ Իր մասին Փրկիչն ասել է. «Եվ սա է հավիտենական կյանքը, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած. և նորան որ ուղարկեցիր՝ Հիսուսին Քրիստոսին» (Հովհաննես ԺԷ.3)։ Սուրբ Հոգու զորությամբ է, որ մենք հասկանում ենք Հիսուս Քրիստոսի ավետարանը և ապրում դրանով։

Սուրբ Հոգու համոզիչ զորությունն այնքան մեծ է, որ անկասկած այն, ինչ Նա հայտնում է մեզ, ճշմարիտ է։ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է.

«Երբ մարդը հայտնություն է ստանում Սուրբ Հոգուց, այն անմոռանալի տպավորություն է թողնում նրա հոգու վրա, որը հեշտությամբ չի ջնջվում։ Դա Հոգին է խոսում հոգու հետ, և այն գալիս է հավաստիացնող ուժով։ Հրեշտակի կամ նույնիսկ հենց իր՝ Աստծո Որդու կողմից եկող հայտնությունը կազդի աչքի և մտքի վրա, և ի վերջո կդառնա աղոտ, իսկ Սուրբ Հոգու տպավորությունը նստում է հոգու խորքում և ավելի դժվար է ջնջել» (*Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 2:151)։

Նախագահ Սմիթը նաև ասել է. «Սուրբ Հոգու միջոցով ճշմարտությունը միահյուսվում է ջիլերին և մկաններին, այնպես որ այն հնարավոր չէ մոռանալ» (*Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:48)։

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք պետք է արժանի դառնանք ընդունելու մեր Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի այդ հատուկ սուրհանդակին և վկայությունը։

- Մտածեք այն ժամանակների մասին, երբ Սուրբ Հոգին օգնել է ձեզ աճել ձեր վկայության մեջ։ Հարմարության դեպքում, կիսվեք այդ փորձառություններով դասարանի կամ ընդանիքի անդամների հետ։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Մովսես 5 (Ադամի ընտանիքի պատմությունը)
- ՎևՈւ 130.22 (ներկայացված է Սուրբ Հոգին)
- Հովհաննես ԺԴ.26; ԺԵ.26; ԺԶ.13; Ղուկաս ԺԲ.12; 2 Նեփի 31.18; 32.5, 8; 33.1; Ալմա 14.11; 3 Նեփի 27.20; 4 Նեփի 1.48; Մորոնի 10.6–7; ՎևՈւ 8.2–3; 11.12–13; 20.26 (Սուրբ Հոգու դերերը)

Աղոթել մեր Երկնային Հորը

Գլուխ 8

Ի՞նչ է աղոթքը:

Հիսուսն ուսուցանել է. «Դուք պետք է միշտ աղոթեք Հորը՝ իմ անունով» (3 Նեփի 18.19):

Աղոթքը ամենամեծ օրհնություններից մեկն է, որ մենք ունենք, մինչ այստեղ երկրի վրա ենք: Աղոթքի միջոցով մենք կարող ենք հաղորդակցվել մեր Երկնային Հոր հետ և ամեն օր Նրա առաջնորդությունը փնտրել:

Աղոթքն անկեղծ, սրտառուչ զրույց է մեր Երկնային Հոր հետ: Մենք պետք է աղոթենք Աստծուն և ուրիշ ոչ ոքի: Մենք չենք աղոթում մեկ այլ էակի, մարդու կամ Աստծո կողմից ստեղծված որևէ բանի (տես Ելից Ի.3–5):

Ինչո՞ւ ենք մենք աղոթում:

Աղոթքը եղել է ավետարանի կարևոր մասը աշխարհի սկզբից ի վեր: Տիրոջ հրեշտակը պատվիրեց Ադամին և Եվային, որ ապաշխարեն և առ Աստված կանչեն՝ Որդու անունով (տես Մովսես 5.8): Այս պատվիրանը երբեք ետ չի վերցվել: Աղոթքը կօգնի մեզ ավելի մոտենալ Աստծուն: Մեր աղոթքներն ազդում են մեր բոլոր մտքերի, խոսքերի և գործերի վրա:

Ուսուցիչներին. Այս գլուխը կազմվել է հինգ ենթաբաժիններով: Յուրաքանչյուր խորագիր աղոթքի մասին հարց է: Դուք կարող եք օգտագործել այդ հարցերը որպես ուղեցույց ձեր դասի համար: Եթե դասարանի կազմը հնարավորություն է տալիս փոքր խմբերով քննարկում կազմակերպել, կարող եք դասարանի անդամներին բաժանել երկուսից չորս փոքր խմբերի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք այս գլխի մեկ բաժինը: Թող յուրաքանչյուր խումբը կարդա և քննարկի իրեն հանձնարարված բաժինը և կիսվի դրա հետ կապված անձնական փորձառությամբ: Այնուհետև դասարանով քննարկեք հինգ բաժինները՝ կենտրոնանալով այն հարցերի վրա, որոնք ամենաշատն են հետաքրքրում դասարանի անդամներին:

Մենք պետք է աղոթենք, որ ուժ ունենանք դիմակայելու Սատանայի և նրա հետևորդների գայթակղություններին (տես 3 Նեփի 18.15; ՎևՈւ 10.5)։ Մենք պետք է աղոթենք՝ խոստովանելով մեր մեղքերն Աստծուն և խնդրելով Նրան, որ ների մեզ (տես Ալմա 38.14)։

Մենք պետք է աղոթենք մեր առօրյա կյանքում Տիրոջ առաջնորդությունն ու օգնությունն ունենալու համար։ Մենք պետք է աղոթենք մեր ընտանիքների և ընկերների, մեր հարևանների, մեր բերքի և մեր կենդանիների, մեր ամենօրյա աշխատանքի և մեր մյուս գործերի համար։ Մենք պետք է աղոթենք մեր թշնամիներից պաշտպանվելու համար։ (Տես Ալմա 34.17–27։)

Մենք պետք է աղոթենք, որպեսզի մեր սերը արտահայտենք մեր Երկնային Հորը և ավելի մոտ զգանք Նրան։ Մենք պետք է աղոթենք մեր Հորը՝ շնորհակալություն հայտնելով Նրան մեր բարօրության, հարմարավետության և այն ամենի համար, որ Նա տալիս է մեզ ամեն օր (տես Ա Թեսաղոնիկեցիս Ե.18)։ Մենք պետք է աղոթենք՝ խնդրելով մեր Երկնային Հորը, որպեսզի ուժ ունենանք ավետարանով ապրելու համար։

Մենք պետք է աղոթենք, որպեսզի մնանք դեպի հավերժական կյանք տանող նեղ ու անձուկ ճանապարհի վրա։ Մենք պետք է աղոթենք Աստծուն, ամեն արդարության հեղինակին, որպեսզի կարողանանք արդարակյաց լինել մեր մտքերով, խոսքերով և գործերով։

• Ինչպե՞ս է աղոթքն օգնել ձեզ ավելի մոտենալ Երկնային Հորը։

Ե՞րբ պետք է մենք աղոթենք։

Մենք կարող ենք աղոթել, երբ զգում ենք մեր Երկնային Հոր հետ հաղորդակցվելու կարիքը՝ լինի դա լուռ թե բարձրաձայն։ Երբեմն մենք պետք է միայնակ լինենք, երբ կարող ենք մեր հոգին դուրս թափել Նրա առաջ (տես Մատթեոս Զ.6)։ Նաև մենք կարող ենք աղոթել մեր առօրյա գործերի ժամանակ։ Մենք կարող ենք աղոթել Եկեղեցու ժողովներին, տանը, ճանապարհով կամ փողոցով քայլելիս, աշխատելիս, ճաշ պատրաստելիս, կամ ցանկացած վայրում և ցանկացած գործ կատարելիս։ Մենք կարող ենք աղոթել ցանկացած ժամանակ՝

օրվա մեջ կամ գիշերը: Մենք կարող ենք աղոթել, երբ միայնակ ենք կամ ուրիշ մարդկանց հետ: Մենք կարող ենք միշտ մեր Երկնային Հորը պահել մեր մտքում (տես Ալմա 34.27): Մենք կարող ենք «միշտ աղոթել» (ՎևՈւ 10.5):

Երբեմն աղոթելու ցանկություն չենք ունենա: Մենք հնարավոր է բարկացած, հիասթափված կամ անտրամադիր լինենք: Երբեմն մենք պետք է հատուկ ջանք գործադրենք, որ աղոթենք (տես 2 Նեփի 32.8–9):

Մենք պետք է յուրաքանչյուրս առանձին աղոթենք՝ առնվազն ամեն գիշեր ու ամեն առավոտ: Սուրբ գրությունները խոսում են առավոտյան, կեսօրին և երեկոյան աղոթելու մասին (տես Ալմա 34.21):

Մեզ պատվիրվել է ընտանիքով աղոթել, որ մեր ընտանիքները օրհնվեն (տես 3 Նեփի 18.21): Մեր Եկեղեցու ղեկավարները խորհուրդ են տվել մեզ ընտանիքով աղոթել առավոտյան և երեկոյան:

Մենք նաև աղոթելու արտոնություն ունենք, որպեսզի ճաշելուց առաջ շնորհակալություն հայտնենք և օրհնություն խնդրենք ուտելիքի համար:

Մենք աղոթքով բացում և փակում ենք մեր Եկեղեցու բոլոր ժողովները: Մենք շնորհակալություն ենք հայտնում Տիրոջն Իր օրհնությունների համար և խնդրում ենք, որ մեզ օգնի այնպես երկրպագենք, ինչպես Իրեն է հաճելի:

Ինչպե՞ս մենք պետք է աղոթենք:

Կարևոր չէ, թե որտեղ ենք մենք գտնվում, կանգնած ենք, թե ծնկի իջած, բարձրաձայն ենք աղոթում, թե լուռ, առանձին ենք աղոթում, թե խմբի անունից, մենք պետք է միշտ աղոթենք հավատքով, «մաքուր սրտով, անկեղծ միտումով» (Մորոնի 10.4):

Մեր Երկնային Հորն աղոթելիս մենք պետք է ասենք, թե իրականում ինչ ենք զգում մեր սրտում, Նրան վստահենք, Նրա ներողամտությունը խնդրենք, Նրան աղերսենք, Նրան շնորհակալություն հայտնենք, Նրան մեր սերը հայտնենք: Մենք չպետք է անիմաստ խոսքեր կամ արտահայտություններ

կրկնենք (տես Մատթեոս Զ.7–8)։ Մենք պետք է միշտ խնդրենք, որ Նրա կամքը կատարվի, հիշելով, որ մեր ցանկությունը հնարավոր է լավագույնը չլինի մեզ համար (տես 3 Նեփի 18.20)։ Մենք աղոթքն ավարտում ենք Հիսուս Քրիստոսի անունով (տես 3 Նեփի 18.19)։

Ինչպե՞ս են աղոթքները պատասխանվում։

- Ձեր կարծիքով, ինչո՞ւ աղոթքների պատասխանները միշտ չեն ակնհայտ։ Ձեր կարծիքով, ինչո՞ւ աղոթքների պատասխանները միշտ չեն գալիս մեր ցանկացած ժամանակ և մեր ցանկացած ձևով։

Մեր անկեղծ աղոթքները միշտ պատասխանվում են։ Երբեմն պատասխանը կարող է լինել՝ ոչ, քանի որ այն, ինչ խնդրել ենք, լավագույնը չի մեզ համար։ Երբեմն պատասխանն է՝ այո, և մենք ունենում ենք ջերմ, հանգիստ զգացում, իմանալով, թե ինչ պետք է անենք (տես ՎևՈւ 9.8–9)։ Երբեմն պատասխանն է՝ «մի փոքր սպասիր»։ Մեր աղոթքները միշտ պատասխանվում են ժամանակին և այնպես, ինչպես Տերը գիտի, թե որն է մեզ համար լավագույնը։

Երբեմն Տերը մեր աղոթքներին պատասխանում է ուրիշների միջոցով։ Լավ ընկերոջ, ամուսնու կամ կնոջ, ծնողի կամ ընտանիքի այլ անդամի, Եկեղեցու ղեկավարի, միսիոների միջոցով, այդ մարդկանցից յուրաքանչյուրը կոգեշնչվի կատարելու այնպիսի արարք, որը կպատասխանի մեր աղոթքին։ Դրա օրինակն է՝ մի երիտասարդ մոր փորձառությունը, որի երեխայի հետ տանը դեպք էր պատահել և նա վնասվել էր։ Նա ոչ մի կերպ չէր կարողանում իր երեխային բժշկի տանել։ Նա նոր էր այդ թաղամասում և չէր ճանաչում հարևաններին։ Երիտասարդ մայրն աղոթեց օգնության համար։ Մի քանի րոպեից, մի հարևան մոտեցավ դռանը և ասաց. «Ես զգացի, որ պետք է գամ և տեսնեմ, արդյոք ինչ-որ օգնության կարիք ունեք»։ Հարևանն օգնեց այդ երիտասարդ մորը երեխային բժշկի տանել։

Հաճախ Աստված մեզ զորություն է տալիս՝ օգնելով պատասխանել մեր իսկ աղոթքներին: Երբ մենք աղոթում ենք օգնության համար, մենք պետք է մեր ուժերի սահմանում անենք ամեն ինչ, որպեսզի իրագործենք մեր ցանկությունը:

Ապրելով Հիսուս Քրիստոսի ավետարանով և միշտ աղոթելով մենք ուրախություն և երջանկություն կունենանք: «Եղիր խոնարհ. և Տերը՝ քո Աստվածը, ձեռքդ բռնած կառաջնորդի քեզ և կպատասխանի քո աղոթքներին» (ՎԵՈՒ 112.10):

- Ի՞նչ ճանապարհներով է Երկնային Հայրը պատասխանել ձեր աղոթքներին:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Հակոբոս Ա.5 (ինչի համար պետք է աղոթել)
- Ա Թեսաղոնիկեցիս Ե.17; Սաղմոս ԾԵ.17; 2 Նեփի 32.9 (որտեղ աղոթել)
- Ալմա 34.26 (որտեղ աղոթել)
- 3 Նեփի 19.6, 24 (ինչպես աղոթել)
- ՎԵՈՒ 88.63–65 (ինչպես են աղոթքները պատասխանվում)
- Մորոնի 10.3–5; Ալմա 37.37 (աղոթքի համար խոստումներ)
- Հակոբոս Ե.16 (արդարակյաց մարդու աղոթքի ուժը)
- Bible Dictionary, “Prayer,” 753

Ջոզեֆ Սմիթ

Բրիգամ Յանգ

Ջոն Թեյլոր

Վիլֆորդ Վուդրուֆ

Լորենզո Մնոու

Ջոզեֆ Ֆ. Սմիթ

Հեբեր Ջ. Գրանտ

Ջորջ Ալբերտ Սմիթ

Դեյվիդ Օ. Մակքեյ

Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ

Հարոլդ Բ. Լի

Սպենսեր Վ. Քիմբալ

Էզրա Թաֆտ Բենսոն

Հովարդ Վ. Հանթեր

Գորդոն Բ. Հինքլի

Թոմաս Ս. Մոնսոն

Աստծո մարգարեները

Գլուխ 9

Մարգարեները Աստծո ներկայացուցիչներն են երկրի վրա

• Ի՞նչ զորություն և պարգևներ ունի մարգարեն։

«Տեր Եհովան ոչ մի բան չի անիլ, եթե չհայտնէ իր խորհուրդները իր ծառաներին՝ մարգարեներին» (Ամովս Գ.7)։

Շատ մարդիկ ապրում են խավարում՝ չիմանալով Աստծո կամքը։ Նրանք հավատում են, որ երկինքը փակ է, և մարդիկ պետք է միայնակ դիմակայեն աշխարհի աղետներին։ Որքա՜ն բախտավոր են Վերջին Օրերի Սրբերը։ Մենք գիտենք, որ Աստված հաղորդակցվում է Եկեղեցու հետ Իր մարգարեի միջոցով։ Երախտապարտ սրտով աշխարհի Սրբերը երգում են օրհներգը. «Շնորհակալություն Քեզ, Տեր, մարգարեի համար, որ առաջնորդում է մեզ այս վերջին օրերին» (*Hymns,* no. 19)։

Մարգարեն մարդ է կանչված Աստծո կողմից, որ լինի Իր ներկայացուցիչը երկրի վրա։ Երբ մարգարեն խոսում է Աստծո համար, կարծես թե Աստված է խոսում (տես ՎԿՈՒ 1.38)։ Մարգարեն նաև Քրիստոսի հատուկ վկան է, որը վկայում է Նրա աստվածության մասին և ուսուցանում է Նրա ավետարանը։ Մարգարեն ուսուցանում է ճշմարտությունը և մեկնաբանում Աստծո խոսքերը։ Նա ոչ արդարակյաց մարդկանց ապաշխարելու կոչ է անում։ Նա Տիրոջից հայտնություններ և հրահանգներ է ստանում՝ հօգուտ մեզ։ Նա կարող է տեսնել ապագան և կանխատեսել իրադարձություններ, որպեսզի զգուշացնի աշխարհին։

Մարգարեն կարող է հասարակության տարբեր խավերի պատկանել։ Նա կարող է լինել երիտասարդ կամ ծեր, կրթված կամ չկրթված։ Նա կարող է լինել ազարակատեր, իրավաբան կամ ուսուցիչ։ Հնում մարգարեները հագնում էին պարեգոտ և

կրում գավազան: Ժամանակակից մարգարեները հագնում են կոստյում և կրում պայուսակ: Ինչո՞վ է այդ դեպքում տարբերվում ճշմարիտ մարգարեն: Ճշմարիտ մարգարեն միշտ ընտրվում է Աստծո կողմից և կանչվում քահանայության պատշաճ իշխանությամբ (տես Հավատո Հանգանակ 1.5):

Վերջին Օրերի Սրբերը հաստատում են Առաջին Նախագահությանը և Տասներկու Առաքյալներին որպես մարգարեներ: Ինչևէ, ասելով «Եկեղեցու մարգարե» մենք ի նկատի ունենք Եկեղեցու Նախագահին, որը բարձրագույն քահանայության Նախագահն է:

Դարեր շարունակ Աստված կանչել է մարգարեներին, որ ղեկավարեն մարդկանց

- Ինչպե՞ս են անցյալում մարգարեներն առաջնորդել Աստծո զավակներին:

Ադամի օրերից ի վեր երկրի վրա մարգարեներ են եղել: Այդ հրաշալի տղամարդկանց փորձառությունները ոգևորում և ոգեշնչում են մեզ: Հին Կտակարանի մարգարե Մովսեսը իր ժողովրդին դուրս բերեց Եգիպտոսի գերությունից և առաջնորդեց խոստացված երկիր: Նա գրեց Հին Կտակարանի առաջին հինգ գրքերը և արձանագրեց Տաս Պատվիրանները: Մորմոնի Գրքի մարգարե Նեփին, ճամփորդեց Երուսաղեմից Ամերիկաներ Քրիստոսի ծնունդից 600 տարի առաջ: Այդ մեծ առաջնորդն ու գաղութաբնակը շատ կարևոր գրություններ է թողել մեզ Մորմոնի Գրքում: Հովհաննես Մկրտիչն ընտրվել էր պատրաստելու աշխարհը Տեր Հիսուս Քրիստոսի գալստին: Վերջին օրերի մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը վերականգնեց Եկեղեցին: Ջոզեֆ Սմիթը նաև թարգմանեց Մորմոնի Գիրքը, լինելով երիտասարդ տղամարդ:

- Ի՞նչ եք սովորել մարգարեների կյանքից և ուսմունքներից:

Մենք կենդանի մարգարե ունենք այսօր երկրի վրա

- Ինչո՞ւ մենք կենդանի մարգարեի կարիք ունենք այսօր:

Մենք այսօր երկրի վրա ապրող մարգարե ունենք: Այդ մարգարեն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու

Նախագահն է: Նա ողջ Եկեղեցու համար հայտնություն ստանալու իրավունք ունի: Նա կրում է «արքայության բանալիները», որը նշանակում է, որ նա իշխանություն ունի ղեկավարելու ողջ Եկեղեցին և Աստծո արքայությունը երկրի վրա, ներառյալ քահանայության արարողությունների սպասավորումը (տես Մատթեոս ԺԶ.19): Ոչ ոք, բացի ընտրված մարգարեից և Նախագահից, չի կարող իմանալ Աստծո կամքը ողջ Եկեղեցու համար: Տերն ասել է. «Միշտ երկրի վրա տվյալ պահին կա միայն մեկը, որին շնորհված է այս զորությունը և այս քահանայության բանալիները» (ՎևՈւ 132.7): Եկեղեցու Նախագահին օգնում են Առաջին Նախագահության իր խորհրդականները և Տասներկուսի Քվորումի անդամները, որոնք նույնպես մարգարեներ, տեսանողներ և հայտնողներ են:

Մենք պետք է անենք այն, ինչ մարգարեն ասում է մեզ: Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆն ասել է, որ մարգարեին երբեք թույլ չի տրվի Եկեղեցին տանել սխալ ուղղությամբ.

«Տերը երբեք թույլ չի տա ինձ կամ մեկ ուրիշին, որը հանդիսանում է այս Եկեղեցու Նախագահ, մոլորեցնել ձեզ: Ծրագրում դա չկա: Աստծո մտքում դա չկա: Եթե ես փորձեմ դա անել, Տերն ինձ իմ տեղից կհեռացնի» (*Teachings of Presidents of the Church: Wilford Woodruff* [2004], 199):

• Ինչպե՞ս է կենդանի մարգարեն ազդում Եկեղեցու վրա:

Մենք պետք է աջակցենք Տիրոջ Մարգարեին

• Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի հետևենք և աջակցենք մարգարեին:

Շատերը հեշտությամբ են հավատում հին ժամանակներում ապրող մարգարեներին: Բայց ավելի հեշտ է հավատալ և հետևել կենդանի մարգարեին: Մենք բարձրացնում ենք մեր ձեռքը, հաստատելով Եկեղեցու Նախագահին որպես մարգարե, տեսանող և հայտնող:

Ինչպե՞ս կարող ենք աջակցել մարգարեին: Մենք պետք է աղոթենք նրա համար: Նրա բեռը ծանր է, և նա Սրբերի աղոթքներով ամրանալու կարիք ունի:

Մենք պետք է ուսումնասիրենք նրա խոսքերը: Մենք կարող ենք լսել համաժողովի նրա ելույթները: Մենք կարող ենք նաև բաժանորդագրվել *Ensign* կամ *Լիահոնա* ամսագրերին, որպեսզի կարողանանք կարդալ նրա համաժողովյան ելույթները և այլ ուղերձները:

Մենք պետք է լիովին հետևենք նրա ոգեշնչված ուսմունքներին: Մենք չպետք է ընտրենք հետևել նրա ոգեշնչված խորհրդի մի մասին և անտեսել այն, ինչը տհաճ է կամ դժվար: Տերը պատվիրել է մեզ հետևել Իր մարգարեի ոգեշնչված ուսուցումներին.

«Դու պիտի ուշք դարձնես նրա [մարգարեի] բոլոր խոսքերին ու պատվիրաններին, որոնք նա կտա քեզ, երբ նա ստանա դրանք՝ ողջ սրբությամբ քայլելով իմ առաջ.

Քանզի նրա խոսքը դուք պետք է ընդունեք, ինչպես որ իմ իսկ բերանից, ողջ համբերությամբ ու հավատքով» (ՎևՈւ 21.4–5):

Տերը երբեք թույլ չի տա Եկեղեցու Նախագահին մեզ մոլորեցնել:

- Ի՞նչ է վերջերս Եկեղեցու Նախագահը սովորեցրել կամ շեշտել

Մեծ օրհնություններ են գալիս Մարգարեին հնազանդվելու արդյունքում

Եթե հնազանդվենք, Տերը խոստացել է. «Դժոխքի դռները չեն հաղթի ձեզ. այո՛, և Տեր Աստված ձեր առջևից կցրի խավարի զորությունները և այնպես կանի, որ երկինքները կցնցվեն՝ ձեր բարիքի և իր անվան փառքի համար» (ՎևՈւ 21.6): Երբ մենք անում ենք այն, ինչ մարգարեն է հրահանգում, օրհնություններ կթափվեն երկնքից:

Որպեսզի կանգուն լինի, ճշմարիտ Եկեղեցին պետք է «առաքյալների և մարգարեների հիմքի վրա շինված լինի, որի անկյունի գլուխը Հիսուս Քրիստոսն է» (Եփեսացիս Բ.20): Մենք օրհնված ենք այս անկայուն աշխարհում, որ ունենք մարգարե, որի միջոցով Տերը հայտնում է Իր կամքը:

- Ի՞նչ օրհնություններ եք դուք ունեցել, հնազանդվելով մարգարեի խորհրդին:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Թվոց ԺԲ.6 (Աստված խոսում է մարգարեների միջոցով)
- Ա Թագավորաց Թ.9 (մարգարեն կոչվում է տեսանող)
- Ամովս Գ.7 (Աստված Իր գաղտնիքները հայտնում է մարգարեներին)
- Մոսիա 8.16–18 (տեսանողը կարող է իմանալ անցյալ և գալիք բաների մասին)
- Ղուկաս Ա.70 (Աստված խոսում է մարգարեների միջոցով)
- ՎևՈւ 45.10, 15 (Աստված խոսում է այսօր, ինչպես հին օրերում)
- 1 Նեփի 22.2 (Հոգու միջոցով բաները հայտնի են դարձվում մարգարեներին)
- ՎևՈւ 68.3–5 (երբ Տիրոջ ծառաները խոսում են Սուրբ Հոգուց դրդված, դա Տիրոջ միտքը, կամքը և ձայնն է)
- ՎևՈւ 107.65–67, 91–92 (Եկեղեցու Նախագահի պարտականությունները)
- ՎևՈւ 43.1–7 (միայն մարգարեն է լիազորված հայտնություններ ստանալու Եկեղեցու համար)

Ուսուցիչներին. Փորձառություններով կիսվելն ու վկայություն բերելը հրավիրում է Հոգին: Այս դասն ավարտելիս կարող եք կիսվել ձեր փորձառությամբ, թե ինչպիսի օրհնություններ եք ունեցել Եկեղեցու Նախագահին հետևելու արդյունքում: Կիսվեք կենդանի մարգարեի մասին ձեր վկայությամբ:

Սուրբ Գրություններ

Գլուխ 10

Սուրբ Գրություններն այսօր մատչելի են մեզ

- Նշեք մի քանի օրհնություններ, որ վայելում ենք այսօր սուրբ գրություններն ունենալու շնորհիվ:

Երբ Տիրոջ ծառաները խոսում են այսօր կամ գրում Սուրբ Հոգու ազդեցության ներքո, նրանց խոսքերը դառնում են սուրբ գրություն (տես ՎևՈւ 68.4): Ի սկզբանե, Տերը պատվիրել է Իր մարգարեներին գրի առնել Իր հայտնությունները և Իր զավակների հետ Իր գործերը: Նա ասաց. «Ես պատվիրում եմ բոլոր մարդկանց՝ և՛ արևելքում, և՛ արևմուտքում, և՛ հյուսիսում, և՛ հարավում, և՛ ծովի կղզիներում, որ նրանք պետք է գրեն խոսքերը, որոնք ես խոսում եմ նրանց համար, քանզի այն գրքերից ելնելով, որոնք կգրվեն, ես կդատեմ աշխարհը, ամեն մարդու՝ համաձայն իր գործերի, համաձայն նրա, ինչ գրված է» (2 Նեփի 29.11):

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին որպես սուրբ գրություն ընդունում է չորս գրքեր. Աստվածաշունչը, Մորմոնի Գիրքը, Վարդապետություն և Ուխտերը, և Թանկագին Մարգարիտը: Այս գրքերը կոչվում են Եկեղեցու կանոնիկ աշխատություններ: Մեր կենդանի մարգարեների ոգեշնչված խոսքերը նաև ընդունվում են որպես սուրբ գրություններ:

Աստվածաշունչ

Աստվածաշունչը մարդուն տրված Աստծո հայտնությունները պարունակող սուրբ գրվածքների հավաքածու է: Այդ գրվածքները ներկայացնում են շատ դարեր՝ Ադամի ժամանակից

Ուսուցիչներին. Որպեսզի քննարկում ծավալեք կանոնիկ չորս աշխատությունների վերաբերյալ, դուք կարող եք դասարանի կամ ընտանիքի անդամներից յուրաքանչյուրին տալ 1-4 թվերից մեկը: 1 թիվն ունեցողներին խնդրեք կարդալ այն, ինչ այս գլուխը ուսուցանում է Աստվածաշնչի մասին, 2 թիվն ունեցողներին կարդալ այն, ինչ ուսուցանվում է Մորմոնի Գրքի մասին, 3 թիվն ունեցողները՝ Վարդապետություն և Ուխտերի մասին, իսկ 4 թիվն ունեցողները՝ Թանկագին Մարգարիտի մասին: Այնուհետև խնդրեք կիսվել իրենց սովորածով:

մինչև այն ժամանակները, երբ Հիսուս Քրիստոսի Առաքյալներն էին ապրում: Դրանք գրվել են շատ մարգարեների կողմից, որոնք ապրել են աշխարհի պատմության տարբեր ժամանակաշրջաններում:

Աստվածաշունչը բաժանված է երկու մասի՝ Հին կտակարան և Նոր Կտակարան: Հին Կտարակարանի շատ մարգարեություններ կանխատեսում են Փրկչի և Քավիչի գալուստը: Նոր Կտակարանը պատմում է այդ Փրկչի և Քավիչի կյանքի մասին, որը Հիսուս Քրիստոսն է: Այն նաև պատմում է այն օրերին Նրա Եկեղեցու հիմնադրման մասին: «Մենք հավատում ենք, որ Աստվածաշունչն Աստծո խոսքն է, որքան որ այն ճիշտ է թարգմանված» (Հավատո Հանգանակ 1.8):

Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով Տերը խորացրեց մեր հասկացողությունը Աստվածաշնչի որոշ հատվածների վերաբերյալ: Տերը ոգեշնչեց Մարգարե Ջոզեֆին, որ վերականգնի Աստվածաշնչի ճշմարտությունները, որոնք կորչել էին կամ փոխվել բնագիրը գրվելուց հետո: Այս ոգեշնչված ուղղումները կոչվում են Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն: Աստվածաշնչի Ջեյմս թագավորի տարբերակի Վերջին Օրերի Սրբերի խմբագրության մեջ Ջոզեֆ Սմիթի Թարգմանությունից ընտրված հատվածներ են զետեղվել 797-813 էջերում և բազմաթիվ տողատակի ծանոթագրություններում:

Մորմոնի Գիրք

Մորմոնի Գիրքը սուրբ հիշատակարան է մարդկանց մասին, որոնք ապրել են Ամերիկյան մայրցամաքում մ.թ.ա. 2000 և մ.թ. 400 թվերի միջև: Այն պարունակում է Հիսուս Քրիստոսի ավետարանի լրիվությունը (տես ՎԵՈ 20.9; 42.12; 135.3): Մորմոնի Գիրքը պատմում է Հարությունից հետո Հիսուս Քրիստոսի Ամերիկաների ժողովրդին կատարած այցելության մասին:

Ջոզեֆ Սմիթը թարգմանել է Մորմոնի Գիրքը անգլերեն Աստծո պարգևով և զորությամբ: Նա ասաց, որ դա «ամենաճիշտն է երկրի վրա եղած բոլոր գրքերից և մեր կրոնի պորտաքարն է, և մարդն ավելի կմոտենար Աստծուն ապրելով ըստ նրա ցուցումների, քան՝ ըստ որևէ այլ գրքի» (Մորմոնի Գրքի նախաբանը):

Նախագահ Էզրա Թաֆտ Բենսոնն օգնել է մեզ հասկանալ, որ Մորմոնի Գիրքը մեր կրոնի պորտաքարն է: Նա ասել է.

«Երեք ձևով է արտահայտվում այն, որ Մորմոնի Գիրքը մեր կրոնի անկյունաքարն է: Այն Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է: Այն մեր վարդապետության պորտաքարն է: Այն վկայության պորտաքարն է:

«Մորմոնի Գիրքը Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայության պորտաքարն է, որն անկյունաքարն է այն ամենի, ինչ մենք անում ենք: Այն զորությամբ և պարզորեն վկայում է Նրա իրական լինելու մասին: . . .

Այն խորացնում է փրկության վարդապետության մեր հասկացողությունը:. . . Մորմոնի Գիրքը . . . գրվել է մեր օրերի համար:. . . Այնտեղ տրված է, թե ինչպես պետք է պատրաստվենք Երկրորդ Գալուստին: . . .

. . . Մորմոնի Գիրքն ուսուցանում է մեզ ճշմարտությունը և վկայում է Քրիստոսի մասին: . . . Բայց կա ավելին: Այդ գրքում կա զորություն, որը կսկսի հորդել ձեր կյանք, երբ սկսեք լրջորեն ուսումնասիրել այն: Դուք գայթակղությանը դիմակայելու ավելի մեծ ուժ կգտնեք: Դուք խաբեությունից խույս տալու ուժ կգտնեք: Դուք նեղ ու անձուկ ճանապարհի վրա մնալու ուժ կգտնեք: Սուրբ գրությունները կոչվում են «կյանքի խոսքեր» և ոչ մի տեղ դրանք այնքան ճշմարիտ չեն, որքան Մորմոնի Գրքում: . . . Վերջին Օրերի յուրաքանչյուր Սուրբ պետք է ուսումնասիրի այս գիրքը իր ողջ կյանքում» (in Conference Report, Oct. 1986, 4–7; or *Ensign,* Nov. 1986, 5–7; quoting Marion G. Romney, in Conference Report, Apr. 1980, 90; or Ensign*, May* 1980, 67):

Վարդապետություն և Ուխտեր

Վարդապետություն և Ուխտերը ժամանակակից հայտնությունների հավաքածու է: Վարդապետություն և Ուխտերի բաժին 1-ում Տերը հայտնում է, որ այս գիրքը պետք է հրապարակվի երկրի բնակիչներին, որպեսզի նրանք պատրաստվեն Իր գալստին.

«Ուստի Տիրոջ ձայնը գնում է աշխարհի ծայրերը, որպեսզի բոլորը, ովքեր կամենում են լսել, կարողանան լսել.

Պատրաստվեք, պատրաստվեք այն բանի համար, որը պետք է գա, քանզի Տերը մոտ է» (ՎևՈւ 1.11–12)։

Այս գիրքը պարունակում է հայտնություններ Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վերաբերյալ, որը վերականգնվել է այս վերջին օրերին։ Գրքի մի քանի բաժիններ բացատրում են Եկեղեցու կազմակերպությունը և սահմանում քահանայության պաշտոններն ու դրանց ֆունկցիաները։ Այլ բաժիններ, օրինակ 76 և 88-ը, պարունակում են փառահեղ ճշմարտություններ, որոնք անհետացել են երկրի վրայից հարյուրավոր տարիներ առաջ։ Մի քանի բաժիններ էլ, օրինակ 29 և 93-ը, լույս են սփռում Աստվածաշնչի ուսմունքների վրա։ Ինչպես նաև մի քանի բաժիններ, ինչպես օրինակ 133 բաժինը, պարունակում են մարգարեություններ գալիք իրադարձությունների մասին։ Աստված պատվիրել է մեզ ուսումնասիրել այս գրքում տրված Իր հայտնությունները. «Քննեք այս պատվիրանները, քանզի դրանք ճշմարիտ են ու հավատարիմ, և մարգարեություններն ու խոստումները, որոնք դրանց մեջ են, բոլորը պիտի կատարվեն» (ՎևՈւ 1.37)։

Թանկագին Մարգարիտ

Թանկագին Մարգարիտը պարունակում է Մովսեսի գիրքը, Աբրահամի գիրքը, և Ջոզեֆ Սմիթի մի քանի ոգեշնչված գրվածքներ։ Մովսեսի գիրքը պարունակում է Մովսեսի մի քանի տեսիլքների պատմություններ և գրվածքներ, որոնք հայտնվել են Մարգարե Ջոզեֆ Սմիթին։ Այն պարզաբանում է վարդապետություններն ու ուսմունքները, որոնք կորել են Աստվածաշնչից և լրացուցիչ տեղեկություն է տալիս երկրի Արարման վերաբերյալ։

Աբրահամի գիրքը թարգմանվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի կողմից պապիրուսի գալարներից, որոնք հանվել են Եգիպտական դամբարաններից։ Այս գիրքը պարունակում է արժեքավոր տեղեկություն Արարման, ավետարանի, Աստծո բնույթի և քահանայության վերաբերյալ։

Ջոզեֆ Սմիթի գրվածքները ներառում են Աստվածաշնչի Ջոզեֆ Սմիթի ոգեշնչված թարգմանության մի մասը, նրա *Եկեղեցու Պատմությունից* ընտիր մասեր և Հավատո Հանգանակը։

- Նշեք սուրբ գրություններից մի քանի պատմություններ, որ ոգեշնչել են ձեզ: Նշեք մի քանի ուսմունքներ այդ սուրբ գրքերից, որոնք օգնել են ձեզ:

Մեր կենդանի մարգարեների խոսքերը

Այս չորս սուրբ գրքերից բացի մենք սուրբ գրություն ենք համարում մեր կենդանի մարգարեների ոգեշնչված խոսքերը: Նրանց խոսքերը գալիս են մեզ համաժողովների, *Լիահոնա* կամ *Ensign* ամսագրերի, և տեղական քահանայության ղեկավարների հրահանգների միջոցով: «Մենք հավատում ենք այն ամենին, ինչ Աստված հայտնել է, այն ամենին, ինչ Նա այժմ հայտնում է, և հավատում ենք, որ Նա դեռ շատ մեծ ու կարևոր բաներ է հայտնելու Աստծո Արքայության վերաբերյալ» (Հավատո Հանգանակ 1.9):

- Որտե՞ղ կարող ենք մենք գտնել մեր կենդանի մարգարեների խոսքերը:

Ուսումնասիրել սուրբ գրությունները

- Ի՞նչ օրհնություններ կարող ենք ստանալ, երբ ուսումնասիրում ենք սուրբ գրությունները:

Մեզանից յուրաքանչյուրը պետք է ամեն օր ուսումնասիրի սուրբ գրությունները: Մենք պետք է այդ ճշմարտություններով կիսվենք մեր երեխաների հետ: Մենք պետք է կարդանք կանոնիկ աշխատությունները մեր երեխաների հետ, որպեսզի նրանք սովորեն սիրել դրանք և օգտագործեն դրանք այնտեղ պարունակվող ճշմարտությունների համար:

Եթե մենք ցանկանում ենք խուսափել այս աշխարհի չարից, պետք է մեր միտքը սնենք սուրբ գրություններում պարունակվող ճշմարտությամբ և առաքինությամբ: Մենք ավելի կմոտենանք Աստծուն և միմյանց, եթե միասին կարդանք սուրբ գրությունները և խորհենք դրանց շուրջ:

Եթե կարդանք սուրբ գրությունները, խորհենք և աղոթենք դրանց շուրջ և Աստծուց հասկացողություն խնդրենք, Սուրբ Հոգին վկայություն կբերի մեզ այս բաների ճշմարտացիության մասին: Մեզանից յուրաքանչյուրը կիմանա, որ այդ բաները

ճշմարիտ են: Մենք չենք խաբնվի (տես Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.37): Մենք կարող ենք նույն զգացողություններն ունենալ, ինչպես Նեփին է նկարագրել, երբ նա ասել է. «Հոգիս հրճվում է Տիրոջ բաներով. և սիրտս շարունակ խորհում է այն բաների վրա, որոնք տեսել եմ ու լսել» (2 Նեփի 4.16):

- Ինչպե՞ս կարող ենք պահել ամեն օր սուրբ գրություններն ուսումնասիրելու պարտավորվածությունը: Պլանավորեք ամեն օր երբ և որտեղ եք ուսումնասիրելու սուրբ գրությունները:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- 1 Նեփի 14.20–26 (մարգարեներին պատվիրվել է գրել)
- 1 Նեփի 19.1–3, 6–7; Ալմա 37.1–8 (սուրբ գրությունների մեծ արժեքը)
- 2 Նեփի 33.10 (սուրբ գրությունները վկայում են Քրիստոսի մասին)
- Ալմա 29.8 (Տերը բոլոր ազգերի հետ խոսում է սուրբ գրությունների միջոցով)
- Ալմա 31.5; Հելաման 3.29–30 (Աստծո խոսքը զորավոր է)
- Հելաման 15.7–8 (սուրբ գրությունները առաջնորդում են մեզ լինելու ամուր և հաստատակամ հավատքում)
- Բ Տիմոթեոս Գ.16–17; 1 Նեփի 19.21–24 (ինչու և ինչպես են սուրբ գրությունները տրվում)
- Բ Պետրոս Ա.20; Ալմա 13.20; ՎևՈւ 10.62 (սուրբ գրությունները լուսաբանում են վարդապետության ճշմարիտ կետերը)
- ՎևՈւ 128.18; Հավատո Հանգանակ 1.9; 1 Նեփի 14.25–26 (սուրբ գրություններ դեռևս կտրվեն)
- 2 Նեփի 29.3–10 (Հրեաներին և հեթանոսներին ուղղված սուրբ գրություններ)

Քրիստոսի կյանքը

Գլուխ 11

Քրիստոսի կյանքը կանխատեսվել էր Իր ծնունդից շատ առաջ

Երկիր եկող յուրաքանչյուր ոք կախված է Հիսուս Քրիստոսից, որն իրականացնում է մեր Փրկիչը լինելու երկնքում տված Իր խոստումը: Առանց Նրա փրկության ծրագիրը կձախողվեր: Քանի որ Նրա առաքելությունը անհրաժեշտ էր, բոլոր մարգարեները, Ադամից մինչև Քրիստոս, վկայել են, որ Նա գալու է (տես Գործք Ժ.43): Քրիստոսից հետո բոլոր մարգարեները վկայել են, որ Նա եկել է: Մենք բոլորս պետք է ուսումնասիրենք Փրկչի կյանքը և հավատարմորեն հետևենք Նրան մեր ողջ կյանքի ընթացքում:

Ադամն իմացավ, որ Փրկչի անունը լինելու է Հիսուս Քրիստոս (տես Մովսես 6.51–52): Ենովքը տեսավ, որ Հիսուսը կմահանա խաչի վրա և հարություն կառնի (տես Մովսես 7.55–56): Նոյը և Մովսեսը նույնպես վկայեցին Նրա մասին (տես Մովսես 1.11; 8.23–24): Մոտ 800 տարի առաջ Փրկիչը ծնվեց երկրի վրա, Եսայիան կանխատեսել էր Նրա կյանքը: Երբ Եսայիան տեսավ, թե ինչպիսի տառապանք և վիշտ պետք է կրի Փրկիչը, որպեսզի վճարի մեր մեղքերի համար, նա բացականչեց.

«Նա անարգուած և մարդկանց երեսից ընկած. հարուածների տեր, և ցավի տեղեակ եղավ: . . .

. . . Հիրավի՜ նա մեր ցավերը վեր առավ, և մեր վշտերը բեռնեց իր վրա: . . .

Նա մեր մեղքերի համար վիրավորուեցավ, մեր անօրենությունների համար հարուածվեցավ: . . .

Ուսուցիչներին. Այս գլուխը հավանաբար ավելի շատ նյութ է պարունակում, քան դուք կարող եք ընդգրկել մեկ դասի ընթացքում: Երբ պատրաստվեք ուսուցանելուն, փնտրեք Հոգու առաջնորդությունը, որպեսզի որոշեք, որ մասերը ամենաշատը օգուտ կբերեն նրանց, ում ուսուցանում եք:

Նա անիրավություն կրեց և չարչարուեցավ, բայց իր բերանը չբացավ, ինչպես մի ոչխար որ մորթուելու է տարվում» (Եսայիա ԾԳ.3–5, 7)։

Նեփիին նաև տեսավ Փրկչի ծննդի և առաքելության տեսիլքը։ Նա տեսավ մի գեղեցիկ կույս, և հրեշտակը բացատրեց. «Նայի՛ր, կույսը, որին դու տեսնում ես, Աստծո Որդու մայրն է՝ մարմնական ձևով» (1 Նեփի 11.18)։ Այնուհետև Նեփիին տեսավ կույսին՝ երեխան գիրկը։ Հրեշտակը հայտարարեց. «Ահա՛ Աստծո Գառը, այո, հիրավի, Հավերժական Հոր Որդին» (1 Նեփի 11.21)։

Հիսուսի ծնունդից մոտ 124 տարի առաջ մեկ այլ Նեփիացի մարգարե Բենիամին թագավորը նույնպես կանխատեսեց Փրկչի կյանքը.

«Քանզի ահա, ժամանակը գալիս է և հեռու հեռվում չէ, երբ Ամենակարող Տերը, որն իշխում է զորությամբ, որն էր, և է, ողջ հավերժությունից ողջ հավերժություն, կիջնի ներքև երկնքից՝ մարդկանց զավակների մեջ և կբնակվի կավե տաղավարում, և առաջ կգնա մարդկանց մեջ՝ գործելով հզոր հրաշքներ, ինչպես՝ բժշկելով հիվանդներին, հարություն տալով մեռածներին, իրականացնելով կաղերի քայլելը, կույրերին շնորհելով իրենց տեսողությունը, խուլերին՝ լսելը, և բուժելով ամեն ձևի հիվանդություններ։

Եվ նա դուրս կհանի դևեր կամ չար ոգիներ, որոնք բնակվում են մարդկանց զավակների սրտերում։

Եվ ահա, նա կտանի փորձություններ, և մարմնի ցավ, քաղց, ծարավ և հոգնածություն, նույնիսկ՝ ավելին, քան մարդը կարող է տանել, բացի մահից. քանզի ահա, արյուն կգա յուրաքանչյուր ծակոտիից, այնքան մեծ կլինի նրա տվայտանքն իր ժողովրդի ամբարշտության և պղծությունների համար։

Եվ նա կկոչվի Հիսուս Քրիստոս, Աստծո Որդի, երկնքի և երկրի Հայր, բոլոր բաների Ստեղծող՝ ի սկզբանե. և նրա մայրը կկոչվի Մարիամ» (Մոսիա 3.5–8)։

- Նշեք Հիսուս Քրիստոսի մասին մի քանի հին մարգարեություններ։

Նա Հոր Միածինն էր

• Ի՞նչ ժառանգեց Հիսուս Քրիստոսը Իր Հորից: Ի՞նչ ժառանգեց Նա Իր մորից:

Փրկչի ծննդյան և կյանքի պատմությունը տրված է Նոր Կտակարանում Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի գրքերում: Նրանց պատմություններից մենք իմանում ենք, որ Հիսուսը ծնվել է Մարիամ անունով կույսից: Նա նշանված էր և պետք է ամուսնանար Հովսեփի հետ, երբ Տիրոջ հրեշտակը հայտնվեց նրան: Հրեշտակն ասաց նրան, որ նա պետք է լինի Աստծո Որդու մայրը: Նա հարցրեց, թե ինչպես է դա հնարավոր (տես Ղուկաս Ա.34): Հրեշտակն ասաց նրան. «Սուրբ Հոգին կգա քեզ վրա, և Բարձրեալի զորությունը քեզ վրա կհովանավորե, վասն որոյ և այն ծնուած սուրբն էլ Աստուծոյ Որդի կկոչուի» (Ղուկաս Ա.35): Այսպիսով, Հայր Աստվածը դարձավ Հիսուս Քրիստոսի Հայրը:

Հիսուսը միակ մարդն է երկրի վրա, որ ծնվել է մահկանացու մորից և անմահ Հորից: Այդ պատճառով Նա կոչվում է Միածին Որդի: Նա ժառանգեց աստվածային զորություններ Իր Հորից: Իր մորից Նա ժառանգեց մահկանացու մարմին և քաղց, ծարավ, հոգնածություն, ցավ և մահ կրեց: Ոչ ոք չէր կարող Փրկչի կյանքը վերցնել Իրենից, եթե Նա չցանկանար դա: Նա զորություն ուներ այն ցած դնելու և զորություն՝ մահանալուց հետո կրկին բարձրացնելու Իր մարմինը: (Տես Հովհաննես Ժ.17–18:)

Նա կատարյալ կյանք էր վարում

• Ի՞նչ է Փրկչի կյանքը նշանակում մեզ համար:

Մանկուց ի վեր Հիսուսը հնազանդվել է այն ամենին, ինչ Երկնային Հայրը պահանջել է Իրենից: Մարիամի և Հովսեփի խնամքի ներքո, Հիսուսն աճում էր մյուս երեխաների պես: Նա սիրում էր ճշմարտությունը և հնազանդվում դրան: Ղուկասն ասում է մեզ. «Երեխան աճում էր և զորանում հոգիով՝ իմաստությունով լցուած. և Աստուծոյ շնորհքը նրա վրա էր» (Ղուկաս Բ.40; տես նաև ՎևՈւ 93.12–14):

Երբ արդեն 12 տարեկան էր, Հիսուսը հասկանում էր, որ ուղարկվել էր Իր Հոր կամքը կատարելու: Նա իր ծնողների հետ գնաց Երուսաղեմ: Երբ ծնողները վերադառնում էին տուն, հայտնաբերեցին, որ Նա իրենց խմբի հետ չէր: Նրանք ետ դարձան Երուսաղեմ, որպեսզի փնտրեն Նրան: «Եվ երեք օրից հետո եղավ, որ նրան տաճարում գտան, վարդապետների մեջ նստած, և նրանք լսում էին նրան, և հարցեր էին տալիս նրան» (Ջոզեֆ Սմիթ Թարգմանություն, Ղուկաս 2.46): «Եվ ամենքն, որ նրանից լսում էին, զարմանում էին նրա իմաստության և պատասխանների վրա» (Ղուկաս Բ.47):

Հովսեփն ու Մարիամը ուրախացան գտնելով Նրան, սակայն «սքանչացան. և նորա մայրն ասեց նորան. Որդեակ, ի՞նչու համար մեզ այսպես արիր. ահա, հայրդ և ես ցավելով որոնում էինք քեզ»: Հիսուսը պատասխանեց նրան՝ ասելով. «Դուք չգիտեի՞ք թե պետք է, որ ես իմ Հոր տանը լինեմ» (Ղուկաս Բ.48–49):

Իր առաքելությունը կատարելու համար Հիսուսը պետք է կատարեր Իր Երկնային Հոր կամքը: «Ես իմ անձիցը ոչինչ չեմ անում,- հայտարարեց Նա,- այլ ինչպես իմ Հայրը սովորեցրեց ինձ, այն եմ խոսում: . . . Ես միշտ նորան հաճելի բաներն եմ խոսում» (Հովհաննես Ը.28–29):

Երբ Հիսուսը 30 տարեկան էր, Նա եկավ Հովհաննես Մկրտչի մոտ, որպեսզի մկրտվի Հորդանան Գետում: Հովհաննեսը չէր կամենում մկրտել Հիսուսին, քանի որ գիտեր, որ Հիսուսն ավելի մեծ էր, քան ինքը: Հիսուսը խնդրեց, որ Հովհաննեսը մկրտի Իրեն, որպեսզի «ամեն արդարություն կատարվի»: Հովհաննեսը մկրտեց Հիսուսին, Նրան ամբողջովին ընկղմելով ջրի մեջ: Երբ Հիսուսը մկրտվեց, Նրա Հայրը խոսեց երկնքից, ասելով. «Դա է իմ սիրելի որդին, որին ես հավանեցի»: Սուրբ Հոգին իջավ աղավնու տեսքով: (Տես Մատթեոս 3.13–17:)

Մկրտվելուց հետո, Հիսուսը 40 օր ու գիշեր ծոմ պահեց, որպեսզի լինի Աստծո հետ: Ապա Սատանան եկավ գայթակղելու Նրան: Հիսուսը հաստատակամ դիմադրեց սատանայի բոլոր գայթակղություններին և ապա Սատանային հրամայեց, որ հեռանա: (Տես Մատթեոս Դ.1–11; տես նաև Ջոզեֆ Սմիթ

Թարգմանություն, Մատթեոս 4.1, 5–6, 8–9, 11:) Հիսուս Քրիստոսը մնաց անմեղ, միակ կատարյալ էակը, որ երբևէ քայլել է երկրի վրա (տես Եբրայեցիս Դ.15; Ա Պետրոս Բ.1–22):

- Փրկչի կյանքից ո՞ր պատմություններն են հատկապես նշանակալից ձեզ համար:

Նա ուսուցանեց մեզ, ինչպես պետք է սիրել և ծառայել միմյանց

- Ըստ Փրկչի ուսմունքի, ինչպե՞ս պետք է սիրել և ծառայել միմյանց:

Ծոմ պահելուց և Սատանայի հետ հանդիպելուց հետո, Հիսուսը սկսեց հանրությանը ծառայել: Նա եկավ երկիր ոչ թե միայն մահանալու, այլև մեզ ուսուցանելու, թե ինչպես պետք է ապրել: Նա ուսուցանեց, որ կան երկու մեծ պատվիրաններ. առաջինը՝ սիրել Աստծուն մեր ողջ սրտով, մտքով և զորությամբ, իսկ երկրորդը՝ սիրել մյուսներին, ինչպես սիրում ենք ինքներս մեզ (տես Մատթեոս ԻԲ.36–39): Նրա կյանքը օրինակ է, թե ինչպես մենք պետք է հնազանդվենք այդ երկու պատվիրաններին: Եթե մենք սիրում ենք Աստծուն, մենք պետք է վստահենք և հնազանդվենք Նրան, ինչպես Հիսուսը: Եթե սիրում ենք մյուսներին, մենք կօգնենք նրանց բավարարել իրենց ֆիզիկական և հոգևոր կարիքները:

Հիսուսը իր կյանքը անցկացրեց, ծառայելով մյուսներին: Նա բժշկեց նրանց: Նա կույրին տեսողություն շնորհեց, խուլին լսողություն և արեց այնպես, որ կաղը քայլի: Մի անգամ, երբ Նա բժշկում էր հիվանդներին, արդեն ուշ էր, և մարդիկ քաղցած էին: Նրանց իրենց տներն ուղարկելու փոխարեն, Նա օրհնեց հինգ հատ հացը և երկու ձուկը և հրաշքով կարողացավ կերակրել 5000 մարդու: (Տես Մատթեոս ԺԴ.14–21:) Նա ուսուցանեց, որ երբ տեսնում ենք մարդիկ քաղցած են, մրսած, մերկ կամ միայնակ, մենք պետք է օգնենք նրանց, ինչով կարող ենք: Երբ մենք օգնում ենք մյուսներին, մենք ծառայում ենք Տիրոջը: (Տես Մատթեոս ԻԵ.35–46:)

Հիսուսը սիրում էր մուսներին Իր ողջ սրտով: Երբեմն Նրա սիրտն այնքան էր կարեկցանով լցվում, որ Նա արտասվում էր:

Նա սիրում էր փոքր երեխաներին, մեծերին և հեզ ու հասարակ մարդկանց, ովքեր հավատում էին Իրեն: Նա սիրում էր մեղավորներին, և մեծ կարեկցանքով ուսուցանում էր նրանց, որ ապաշխարեն և մկրտվեն: Նա ուսուցանում էր. «Ես եմ ճանապարհը և ճշմարտությունը և կյանքը» (Հովհաննես ԺԴ.6):

Հիսուսը նույնիսկ սիրում էր նրանց, ովքեր մեղանչել էին իր հանդեպ և չէին ապաշխարել: Իր կյանքի վերջում, խաչի վրա կախված, Նա աղոթեց Հորը այն զինվորների համար, ովքեր խաչել էին Իրեն, աղերսելով. «Հայր, թողիր դորանց. որովհետև չգիտեն թե ինչ են անում» (Ղուկաս ԻԳ.34): Նա ուսուցանեց. «Սա է իմ պատվիրանքը, որ իրար սիրեք, ինչպես որ ես ձեզ սիրեցի» (Հովհաննես ԺԵ.12):

- Ինչպե՞ս կարող ենք մենք ցույց տալ Տիրոջը, որ սիրում ենք Նրան:

Նա կազմակերպեց միակ ճշմարիտ Եկեղեցին

- Ինչո՞ւ Փրկիչը կազմակերպեց Իր Եկեղեցին և Առաքյալներ կարգեց:

Հիսուսը ցանկացավ Իր ավետարանն ուսուցանել երկրի վրա ապրող բոլոր մարդկանց, և Նա տասներկու Առաքյալներ ընտրեց, որ վկայեն Իր մասին: Նրանք Իր Եկեղեցու առաջին ղեկավարներն էին: Նրանք իշխանություն ստացան Իր անունով գործելու և կատարելու այն, ինչ Նա էր կատարում: Նրանք, ովքեր իշխանություն ստացան նրանցից, նույնպես կարողացան ուսուցանել, մկրտել և Նրա անունով այլ արարողություններ կատարել: Նրա մահից հետո, նրանք շարունակեցին անել Նրա գործը մինչև մարդիկ այնքան չարացան, որ սպանեցին Առաքյալներին:

Նա մեզ փրկագնեց մեր մեղքերից և փրկեց մահից

- Այս բաժինը ուսումնասիրելիս ժամանակ տրամադրեք խորհելու Քավության իրադարձությունների մասին:

Ուսուցիչներին. Խորհելը հրավիրում է Հոգին: Կարող եք դասարանի կամ ընտանիքի անդամներին խնդրել մտքում կարդալ այս բաժնի վերջին երկու մասերը՝ մտածելով Փրկչի հանդեպ իրենց զգացումների մասին: Այնուհետև հրավիրեք ցանկություն ունեցողներին դասարանի հետ կիսվել իրենց մտքերով:

Այս մահականցու ծառայության ավարտին մոտ Հիսուսը պատրաստվեց կատարել ամենամեծ զոհաբերությունը մարդկության բոլոր մեղքերի համար: Նրան մահվան դատապարտեցին, որովհետև Նա վկայեց մարդկանց, որ Ինքը Աստծո Որդին էր:

Իր Խաչելության նախորդ գիշերը, Հիսուսը գնաց Գեթսեմանի կոչվող այգին: Շուտով Նա մեծ տառապանք կրեց և աղոթելիս արտասվեց: Վերջին Օրերի Առաքյալ Օրսոն Ֆ. Վիթնիին թույլատրվեց տեսիլքով տեսնել Փրկչի տառապանքը: Տեսնելով Փրկչին արտասվելիս, նա ասաց. «Ես այնքան էի հուզվել այդ գիշեր, որ ես նույնպես արտասվում էի՝ անկեղծ կարեկցանքից ելնելով: Սիրտս ամբողջովին Նրա հետ էր. ես սիրեցի Նրան իմ ողջ հոգով, և ես միայն ցանկանում էի Նրա հետ լինել» (“The Divinity of Jesus Christ,” *Improvement Era,* Jan. 1926, 224–25; տես նաև *Ensign,* Dec. 2003, 10): Հիսուսը «մի քիչ առաջ գնալով իր երեսի վրա ընկավ, աղոթք էր անում և ասում. Իմ Հայր, եթե կարելի է, թող այս բաժակն իմ անցնի. սակայն ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու» (Մատթեոս ԻԶ.39):

Մեր օրերի հայտնության մեջ Փրկիչը նկարագրում է, թե որքան մեծ էր Իր տառապանքը, ասելով, որ այն ստիպեց Իրեն «ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե՛ մարմնով, թե՛ ոգով» (ՎևՈւ 19.18): Նա տառապեց «համաձայն մարմնի», իր վրա վերցնելով մեր ցավերը, հիվանդությունները, թուլությունները և մեղքերը (տես Ալմա 7.10–13): Մահկանացու մարդը չի կարող ըմբռնել, թե որքան մեծ էր Նրա բեռը: Մահկանացու մարդը չէր կարող կրել մարմնի և հոգու նման հոգևարք: «Նա վայր իջավ բոլոր բաներից ցած . . . որ կարողանա ամենի մեջ և ամենուրեք լինել ճշմարտության լույսը» (ՎևՈւ 88.6):

Սակայն Նրա տառապանքը դեռևս չէր ավարտվել: Հաջորդ օրը, Հիսուսին ծեծեցին, անարգեցին, նվաստացրեցին՝ նրա վրա թքելով: Նրան տվեցին, որ Իր խաչը տանի, այնուհետև Նրան գամեցին այդ խաչին: Նրան տանջեցին ամենադաժան ձևով, որ մարդը երբևէ հորինել է: Խաչի վրա տանջվելով, Նա հոգևարքի մեջ աղաղակեց. «Իմ Աստուած, իմ Աստուած, ինչո՞ւ թողիր ինձ» (Մարկոս ԺԵ.34): Հիսուսի համար

ամենածանր պահին Հայրը հեռացավ Նրանից, որպեսզի Հիսուսը կարողանար ավարտել ողջ մարդկության մեղքերի համար տառապելը, որպեսզի Հիսուսը իր ավարտին հասցներ մեղքի և մահվան ուժերի դեմ հաղթանակը (տես James E. Talmage, *Jesus the Christ,* 3rd ed. [1916], 660–61):

Երբ Փրկիչը իմացավ, որ իր զոհաբերությունը ընդունվել էր Հոր կողմից, Նա բարձրաձայն բացականչեց. «Կատարուած է» (Հովհաննես ԺԹ.30): «Հայր, հոգիս քո ձեռն եմ ավանդում» (Ղուկաս ԻԳ.46): Նա խոնարհեց Իր գլուխը և կամովին Իր Հոգին տվեց: Փրկիչը մահացավ: Դաժան երկրաշարժը ցնցեց երկիրը:

Մի քանի ընկերներ Փրկչի մարմինը դրեցին գերեզմանի մեջ, որտեղ այն մնաց մինչև երրորդ օրը: Այդ ընթացքում Նրա հոգին գնաց և միսիոներական աշխատանք կազմակերպեց մյուս հոգիների համար, որոնք Իր ավետարանը ստանալու կարիքն ունեին (տես Ա Պետրոս Գ.18–20; ՎևՈւ 138): Երրորդ օրը, որ կիրակի էր, Նա վերադարձավ Իր մարմնի մեջ: Նա առաջինն էր, որ հաղթեց մահին: Կատարվեց մարգարեությունը, որ «պետք է նա մեռելներից հարություն առնի» (Հովհաննես Ի.9):

Իր Հարությունից շատ չանցած Փրկիչը հայտնվեց Նեփիացիներին և Իր Եկեղեցին հիմնադրեց Ամերիկաներում: Նա ուսուցանեց մարդկանց և օրհնեց նրանց: Այս հուզիչ պատմությունը տրված է 3 Նեփի 11-28-ում:

Նրա Զոհաբերությունը ցույց տվեց Նրա սերը Իր Հոր և մեր հանդեպ

Հիսուսն ուսուցանեց. «Ոչ ով նորանից ավելի մեծ սեր չունի, որ մեկն իր անձը դնե իր բարեկամների համար: Դուք իմ բարեկամներն եք, եթե անեք ինչ որ ես պատվիրում եմ ձեզ» (Հովհաննես ԺԵ.13–14): Նա կամովին և խոնարհաբար անցավ Գեթսեմանի տանջանքների միջով և խաչի վրա տառապեց, որ մենք կարողանանք ստանալ փրկության ծրագրի բոլոր օրհնությունները: Այդ օրհնությունները ստանալու համար, մենք պետք է գանք Նրա մոտ, ապաշխարենք մեր մեղքերից և սիրենք Նրան մեր ողջ սրտով: Նա ասաց.

«Եվ այս է ավետարանը, որ ես տվել եմ ձեզ, որ ես եկա աշխարհ՝ կատարելու իմ Հոր կամքը, որովհետև իմ Հայրն ուղարկեց ինձ։

Եվ իմ Հայրն ուղարկեց ինձ, որպեսզի ես խաչի վրա բարձրացվեմ. իսկ հետո, երբ խաչի վրա էի բարձրացվել, որպեսզի ես կարողանայի բոլոր մարդկանց ձգել դեպի ինձ . . . որպեսզի նրանք կարողանան դատվել՝ համաձայն իրենց գործերի։ . . .

Քանզի այն գործերը, որոնք դուք տեսաք ինձ անելիս, դրանք պետք է նաև դո՛ւք անեք։ . . .

Հետևաբար, ինչպիսի՞ մարդ եք դուք պարտավոր լինել։ Ճշմարիտ եմ ասում ձեզ՝ *ճիշտ ինչպես ես եմ»* (3 Նեփի 27.13–15, 21, 27; շեշտադրումն ավելացված է)։

- Ի՞նչ զգացումներ եք ունենում, երբ մտածում եք ձեզ համար կատարած Փրկչի զոհաբերության մասին։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- 2 Նեփի 25.12 (Հոր Միածինը մարմնում)
- Մովսես 6.57 (Հիսուս Քրիստոսը կոչվեց Միածին)
- Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես (Հիսուս Քրիստոսի կյանքն ու ուսմունքները)
- Մատթեոս Ժ.1–8; Ղուկաս Թ.1–2 (Առաքյալները կարգվեցին զորությամբ և իշխանությամբ)
- Մատթեոս ԻԶ–ԻԸ; Մարկոս ԺԴ–ԺԶ; Ղուկաս ԻԲ–ԻԴ; Հավհաննես ԺԸ–Ի (Հիսուսը պարտեզում, մատնությունը, խաչումն ու հարությունը)
- «Կենդանի Քրիստոսը. Առաքյալների վկայությունը», *Ensign,* Apr. 2000, 2–3

Քավություն

Գլուխ 12

Քավությունն անհրաժեշտ է մեր փրկության համար

• Ինչո՞ւ է Քավություն անհրաժեշտ մեր փրկության համար:

Հիսուս Քրիստոսը «եկավ աշխարհ . . . աշխարհի համար խաչվելու, և աշխարհի մեղքերը կրելու, և աշխարհը սրբագործելու, և այն անիրավությունից մաքրելու համար. որ նրա միջոցով կարողանան փրկվել բոլորը» (ՎևՈւ 76.41–42): Մեծ զոհաբերությունը, որ Նա կատարեց, որպեսզի վճարի մեր մեղքերի համար և հաղթի մահին, կոչվում է Քավություն: «Քանզի անհրաժեշտ է, որ մի քավություն արվի. քանզի Հավերժական Աստծո մեծ ծրագրի համաձայն, պետք է մի քավություն արվի, այլապես, ողջ մարդկությունը պետք է անխուսափելիորեն ոչնչանա . . . այո, բոլորն ընկած են և կորած, և պետք է ոչնչանան, եթե դա չլինի քավության միջոցով» (Ալմա 34.9):

Ադամի Անկումը երկու տեսակի մահ բերեց աշխարհ՝ ֆիզիկական մահ և հոգևոր մահ: Ֆիզիկական մահը մարմնի և հոգու առանձնացումն է: Հոգևոր մահը Աստծուց առանձնացումն է: Եթե մահվան այս երկու տեսակը չհաղթահարվեր Հիսուս Քրիստոսի Քավության միջոցով, երկու հետևանք կունենայինք՝ մեր մարմինը և հոգին հավերժ առանձին կլինեին, և մենք չէինք կարող կրկին մեր Երկնային Հոր հետ ապրել (տես 2 Նեփի 9.7–9):

Բայց մեր իմաստուն Երկնային Հայրը պատրաստեց հրաշալի, ողորմած ծրագիր, որպեսզի մեզ ազատի ֆիզիկական և հոգևոր մահից: Նա ծրագրեց, որ Փրկիչը գա երկիր և ազատի (փրկագնի) մեզ մեր մեղքերից և մահից: Մեր մեղքերի և

Ուսուցիչներին. Պարզ աղյուսակները կամ նկարները կարող են օգնել դասարանի կամ ընտանիքի անդամներին հասկանալ սկզբունքներն ու վարդապետությունները: Կարող եք երկու սյունակից աղյուսակ գծել, մեկի վերնագիրը դնել *Անկման հետևանքները* իսկ մյուսինը՝ *Քավության օրհնությունները:* Այս գլխի նյութն օգտագործեք աղյուսակը լրացնելու համար:

մահկանացու մարմնի թուլության պատճառով մենք չէինք կարող ինքնուրույն փրկվել (տես Ալմա 34.10–12)։ Մեր Փրկիչը պետք է լիներ անմեղ և զորություն ունենար մահվան վրա։

Հիսուս Քրիստոսը միակն էր, որ կարող էր քավել մեր մեղքերը

- Ինչո՞ւ էր Հիսուս Քրիստոսը միակը, որ կարող էր քավել մեր մեղքերը։

Կան մի քանի պատճառներ, թե ինչու էր Հիսուս Քրիստոսը միակ մարդը, որ կարող էր մեր Փրկիչը լինել։ Մի պատճառն այն է, որ Երկնային Հայրը ընտրեց Նրան լինելու Փրկիչը։ Նա Աստծո Միածին Որդին էր և, հետևաբար, զորություն ուներ մահվան վրա։ Հիսուսը բացականչեց. «Իմ անձը դնում եմ, որպեսզի դարձյալ առնեմ նորան։ Ոչ ով նորան վեր չէ առնում ինձանից. այլ ես ինքս եմ ինձանից դնում նորան։ Ես իշխանություն ունիմ նորան դնելու և իշխանություն ունիմ նորան դարձյալ առնելու» (Հովհաննես Ժ.17–18)։

Հիսուսը նաև արժանացավ լինելու մեր Փրկիչը, որովհետև Նա միակ մարդն էր, որը երբևէ ապրել է երկրի վրա և չի մեղանչել։ Դա Նրան արժանի զոհ դարձրեց, որ վճարի մյուսների մեղքերի համար։

Քրիստոսը տառապեց և մահացավ, որ քավի մեր մեղքերը

- Այս բաժինը կարդալիս ձեզ պատկերացրեք Գեթսեմանի այգում կամ խաչի մոտ՝ որպես Հիսուս Քրիստոսի տառապանքի վկա։

Փրկիչը քավեց մեր մեղքերը՝ տառապելով Գեթսեմանում և Իր կյանքը տալով խաչի վրա։ Մեզ համար հնարավոր չէ լիովին հասկանալ, թե ինչպես Նա տառապեց մեր բոլոր մեղքերի համար։ Գեթսեմանի Այգում մեր մեղքերի ծանրությունը Նրան այնպիսի տառապանք պատճառեց, որ Նա արյունահոսում էր յուրաքանչյուր ծակոտիով (տես ՎևՈւ 19.18–19)։ Ավելի ուշ, խաչի վրա կախված Հիսուսը տառապանքով լի մահ կրեց՝ մարդուն հայտնի ամենադաժան ձևով։

Որքան շատ է Հիսուսը սիրում մեզ, որ նման հոգևոր և ֆիզիկական հոգևարք կրեց մեզ համար: Որքան մեծ է Երկնային Հոր սերը, որ Նա Իր Միածին Որդուն ուղարկեց, որ տառապի և մահանա Իր մյուս զավակների համար: «Որովհետև Աստված այնպես սիրեց աշխարհքը որ իր միածին Որդին տուավ. որ ամեն նորան հավատացողը չկորչի, այլ հավիտենական կյանքն ունենա» (Հովհաննես Գ.6):

Քավությունը և Հարությունը Հարություն են պարգևում բոլորին

Իր Խաչելությունից հետո երրորդ օրը Քրիստոսը կրկին վերցրեց Իր մարմինը և դարձավ առաջին մարդը, որ հարություն առավ: Երբ Նրա ընկերները գնացին փնտրելու Նրան, Նրա գերեզմանը հսկող հրեշտակներն ասացին նրանց. «Այստեղ չէ. որովհետև հարություն առավ, ինչպես ասեց» (Մատթեոս ԻԸ.6): Նրա հոգին կրկին միացավ Նրա մարմնին, որպեսզի այլևս չառանձնանա:

Այսպիսով Քրիստոսը հաղթեց ֆիզիկական մահին: Նրա Քավության շնորհիվ, այս երկրի վրա ծնված ամեն ոք հարություն կառնի (տես Ա Կորնթացիս ԺԵ.21–22): Ճիշտ ինչպես Հիսուսը հարություն առավ, մեր հոգիները կմիավորվեն մեր մարմինների հետ, «այնպես որ նրանք այլևս չեն կարող մեռնել . . . երբեք չբաժանվելու» (Ալմա 11.45): Այս վիճակը կոչվում է անմահություն: Բոլոր մարդիկ, որ երբևէ ապրել են, հարություն կառնեն, «ծեր ու երիտասարդ, ճորտ ու ազատ, տղամարդ ու կին, ամբարիշտ ու արդար» (Ալմա 11.44):

• Ինչպե՞ս է Հարության մասին ձեր գիտելիքը օգնել ձեզ:

Ուսուցիչներին. Առարկայական դասերը կարող են օգնել դասարանի և ընտանիքի անդամներին հասկանալ սկզբունքներն ու վարդապետությունները: Մահը և հարությունը բացատրելու համար կարող եք այսպիսի առարկայական դաս անցկացնել՝ ձեր ձեռքի վրա ձեռնոց հագեք: Բացատրեք, որ ձեռնոցի մեջ գտնվող ձեռքը կարելի է համեմատել իր մարմնում գտնվող մարդու հոգու հետ: Հանեք ձեռնոցը: Բացատրեք, որ սա նման է ֆիզիկական մահվանը՝ հոգին (ձեռքը) և մարմինը (ձեռնոցը) առանձնացած են: Այնուհետև ձեռնոցը կրկին ձեռքի վրա հագեք: Բացատրեք, որ դա նման է հարությանը՝ հոգին և մարմինը վերամիավորվում են:

Քավությամբ հնարավոր է դառնում, որպեսզի նրանք, ովքեր հավատ ունեն առ Քրիստոս, փրկվեն իրենց մեղքերից

- Մտածեք, թե ինչպես է այս բաժնի առակը օգնում մեզ հասկանալ Քավությունը: Այս առակի մարդիկ ո՞ւմ են ներկայացնում մեր կյանքում:

Փրկչի Քավությունը մեզ համար հնարավոր է դարձնում հոգևոր մահը հաղթահարելը: Թեև բոլոր մարդիկ հարություն կառնեն, հոգևոր մահից կփրկվեն միայն նրանք, ովքեր կընդունեն Քավությունը (տես Հավատո Հանգանակ 1.3):

Մենք ընդունում ենք Քրիստոսի Քավությունը՝ Նրա վրա դնելով մեր հավատը: Այդ հավատի շնորհիվ, մենք ապաշխարում ենք մեր մեղքերից, մկրտվում, ստանում ենք Սուրբ Հոգին և հնազանդվում Նրա պատվիրաններին: Մենք դառնում ենք Հիսուս Քրիստոսի հավատարիմ աշակերտները: Մենք թողություն ենք ստանում, մաքրվում մեր մեղքերից և պատրաստվում վերադառնալ և հավերժ ապրել մեր Երկնային Հոր հետ:

Փրկիչը մեզ ասում է. «Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն . . . ճիշտ ինչպես ես» (ՎԵՈՒ 19.16–17): Քրիստոսը կատարեց Իր մասը, որպեսզի քավի մեր մեղքերը: Որպեսզի Նրա Քավությունը լիովին գործի մեր կյանքում, մենք պետք է ձգտենք հնազանդվել Նրան և ապաշխարենք մեր մեղքերից:

Տասներկուսի Խորհրդից Նախագահ Բոյդ Ք. Փաքերը այսպես է մեկնաբանում, ցույց տալով, թե ինչպես է Քրիստոսի Քավությունը հնարավոր դարձնում մեղքից փրկվելը, *եթե* մենք էլ մեր մասն ենք կատարում:

«Ձեզ մի առակ կպատմեմ:

Մի մարդ կար, որն ինչ-որ մեծ փափագ ուներ: Թվում էր դա իր կյանքում ամենակարևոր բանն էր: Իր ցանկությունն իրականացնելու համար, նա մեծ պարտք վերցրեց:

Նրան զգուշացրեցին այդքան մեծ պարտքի և, հատկապես, իր պարտատիրոջ մասին: Բայց նրա համար չափազանց կարևոր

էր թվում դա անելը և իր փափագած իրն ունենալը: Նա վստահ էր, որ հետագայում կկարողանա վճարել դրա դիմաց:

Նա համաձայնագիր ստորագրեց: Նա պետք է որոշ ժամանակի ընթացքում վճարեր իր պարտքը: Նա շատ չէր անհանգստանում դրա համար, քանի որ ժամկետը շատ հեռու էր թվում: Նա այժմ ուներ իր համար բաղձալի բանը, և դա էր ամենակարևորը:

Պարտատերը միշտ նրա մտքի մի հեռավոր անկյունում էր, և նա երբեմն վճարումներ էր կատարում, մտածելով, որ գումարը վերադարձնելու օրը իրականում երբեք չի գալու:

Սակայն, ինչպես միշտ այդ օրը եկավ և համաձայնագրի ժամկետը լրացավ: Պարտքը լիովին չէր վճարվել: Պարտատերը հայտնվեց և պահանջեց լրիվ գումարը:

Միայն այդ ժամանակ նա հասկացավ, որ իր պարտատերը իշխանություն ունի ոչ միայն իր ողջ ունեցվածքը վերցնելու, այլև իրեն բանտ նետելու:

«Ես չեմ կարող վճարել քեզ, քանի որ կարողությունս չի ներում», - խոստովանեց նա:

«Ուրեմն,- ասաց պարտատերը, - ուժի մեջ կմտնի համաձայնագիրը, կվերցնեմ քո ունեցվածքը և դու կգնաս բանտ: Դու տվել ես քո համաձայնությունը: Դա քո ընտրությունն էր: Դու ստորագրել ես համաձայնագիրը, և այժմ այն պետք է գործի մեջ դրվի»:

«Կարո՞ղ եք երկարացնել ժամկետը կամ ներել պարտքը»,- խնդրեց պարտապանը: «Եկեք ինչ-որ կերպ պայմանավորվենք, որպեսզի կարողանամ ունեցվածքս պահել և բանտ չգնալ: Անշուշտ դուք հավատում եք ողորմածությանը: Ողորմած չե՞ք լինի»:

Պարտատերը պատասխանեց. «Ողորմածությունը միշտ միակողմանի է աշխատում: Դա կարող է միայն ի օգուտ քեզ լինել: Եթե ես ողորմածություն ցուցաբերեմ, առանց փող կմնամ: Ես արդարությունն եմ պահանջում: Դու հավատո՞ւմ ես արդարությանը»:

«Ես հավատում էի արդարությանը, երբ համաձայնագիրը ստորագրեցի, - պարտապանն ասաց,- Այն իմ կողմում էր այն ժամանակ, քանի որ մտածում էի, որ այն կպաշտպանի ինձ: Այն ժամանակ ես ողորմածության կարիք չունեի, ոչ էլ կարծում էի, թե երբևէ դրա կարիքը կունենամ: Կարծում էի, որ արդարությունը հավասարապես կծառայի երկուսիս»:

«Արդարությունը պահանջում է, որ դու վճարես ըստ համաձայնագրի կամ պատիժ կրես, - ասաց պարտատերը,- Դա է օրենքը: Դու համաձայնվել ես և այդպես պետք է լինի: Ողորմածությունը չի կարող կողոպտել արդարությանը»:

Այսպիսին էր իրավիճակը՝ մեկը պահանջում էր արդարություն, իսկ մյուսը աղերսում էր ողորմածություն: Չէր կարող դրանցից մեկը մյուսի հաշվին զերիշխել:

«Եթե դու չներես պարտքը, ողորմածություն չի լինի», - ասաց պարտապանը:

«Եթե ես անեմ դա, արդարություն չի լինի», - եղավ պատասխանը:

Կարծես երկու օրենքն էլ չի աշխատում: Դրանք երկու հավերժական իդեալներ են, որոնք կարծես հակասում են միմյանց: Չկա՞ արդյոք միջոց, որ և արդարությունը լիովին գործի, և ողորմածությունը:

Կա միջոց: Արդարության օրենքը *կարող* է լիովին բավարարվել և ողորմածությունը *կարող* է լիովին ընդլայնվել, բայց դա ընդգրկում է մեկ ուրիշին ևս: Եվ այդպես եղավ նաև այս դեպքում:

«Պարտապանը ընկեր ուներ: Նա օգնության եկավ: Նա պարտապանին լավ էր ճանաչում: Գիտեր, որ նա կարճատես է: Նա մտածում էր, որ անմտություն է սեփական անձը նման անախորժ վիճակում դնելը: Սակայն, նա ցանկանում էր օգնել, որովհետև սիրում էր նրան: Նա կանգնեց նրանց միջև, պարտատիրոջը դեմ առ դեմ, և այսպիսի առաջարկ արեց:

«Ես կվճարեմ պարտքը, եթե դու ազատես պարտապանին իր համաձայնագրից, որպեսզի նա կարողանա պահել իր ունեցվածքը և չընկնի բանտ»:

Երբ պարտատերը մտածում էր այդ առաջարկի մասին, միջնորդն ավելացրեց. «Դու արդարություն ես պահանջում: Քանի որ նա չի կարող վճարել քեզ, ես կվճարեմ: Դու արդար վերաբերմունքի կարժանանս, և քեզ այլևս ոչինչ պետք չի լինի: Դա արդար չէր լինի»:

Պարտատերը համաձայնվեց:

Ապա միջնորդը շրջվեց դեպի պարտապանը: «Եթե ես վճարեմ քո պարտքը, կընդունե՞ս ինձ որպես քո պարտատեր:

«Օ՜, այո»,- բացականչեց պարտապանը: «Դու ինձ ազատում ես բանտից, ողորմածություն ցուցաբերելով իմ հանդեպ»:

«Ուրեմն, դու պարքդ կվճարես ինձ, և ես կդնեմ ժամկետը»,- ասաց բարերարը: Հեշտ չի լինի, սակայն հնարավոր կլինի: Ես միջոցը կգտնեմ: Դու բանտ չես գնա»:

Այսպիսով, պարտատիրոջը լիովին վճարվեց: Նա արդար վերաբերմունքի արժանացավ: Ոչ մի համաձայնագիր չխախտվեց:

Պարտապանի հանդեպ ողորմածություն ցուցաբերվեց: Երկու օրենքներն էլ կատարվեցին: Միջնորդի շնորհիվ արդարությունը հայցեց իր ողջ բաժինը, և ողորմածությունը լիովին բավարարվեց» (in Conference Report, Apr. 1977, 79–80; կամ *Ensign,* May 1977, 54–55):

Մեր մեղքերը մեր հոգևոր պարտքերն են: Առանց Հիսուս Քրիստոսի, որը մեր Փրկիչն ու Միջնորդն է, մենք բոլորս պետք է վճարեինք մեր մեղքերի համար՝ կրելով հոգևոր մահ: Սակայն Նրա շնորհիվ, եթե մենք պահենք նրա պայմանները, որոնք են ապաշխարել և պահել Նրա պատվիրանները, մենք կարող ենք վերադառնալ ապրելու մեր Երկնային Հոր հետ:

Հրաշալի է, որ Քրիստոսը մեզ ճանապարհ է տվել բուժվելու մեր մեղքերից: Նա ասաց.

«Ահա, ես եկել եմ աշխարհ . . . փրկելու աշխարհը մեղքից:

Հետևաբար, ով որ ապաշխարում է և գալիս ինձ մոտ ինչպես մի փոքր երեխա, նրան ես կընդունեմ, քանզի այդպիսիներինն է Աստծո արքայությունը: Ահա, այդպիսիների համար եմ ես

իմ կյանքը ցած դրել, և վերցրել այն կրկին. ուստի ապաշխարե՛ք և եկե՛ք ինձ մոտ, դո՛ւք, աշխարհի՛ ծայրեր, և փրկվե՛ք» (3 Նեփի 9.21–22)։

- Մտածեք, ինչպես կարող եք երախտագիտություն ցուցաբերել Քավության պարգևի համար։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ալմա 34.9–16 (Քավություն է անհրաժեշտ. Աստծո զոհաբերություն)
- 2 Նեփի 9.7–12 (Քավությունը փրկում է մեզ ֆիզիկական և հոգևոր մահից)
- Հռովմայեցիս Ե.12–17 (մեկի միջոցով եկավ մահ, մեկի միջոցով եկավ կյանք)
- Հելաման 14.15–18 (Հիսուսի մահվան նպատակը)
- Հավատո Հանգանակ 1.3 (բոլորը կարող են փրկվել)
- Ա Պետրոս Ա.18–20 (Հիսուսը նախակարգված էր)
- Մատթեոս ԺԶ.21 (Հիսուսի զոհաբերությունն անհրաժեշտ էր)
- Ղուկաս ԻԲ.39–46 (Հիսուսի տառապանքը պարտեզում)
- Ա Հովհաննես Ա.7 (Հիսուսը մաքրում է մեղքից)
- 2 Նեփի 9.21–22 (Փրկիչը տառապեց բոլոր մարդկանց համար)
- Մոսիա 16.6–8 (հարությունը հնարավոր է միայն Հիսուսի միջոցով)
- Ալմա 11.40–45; Մորմոն 9.12–14 (բոլորը հարություն կառնեն)
- Եսայիա Ա.18 (մեղքերը պիտի սպիտակ դառնան)
- Ա Կորնթացիս ԺԵ.40–44; Ալմա 40.23 (Հարության նկարագրությունը)

Քահանայություն

Գլուխ 13

Ի՞նչ է Քահանայությունը:

Քահանայությունը հավերժական զորություն է և Աստծո իշխանություն: Քահանայության միջոցով Նա ստեղծեց և կառավարեց երկինքը և երկիրը: Այդ զորությամբ է տիեզերքը կատարյալ կանոնավոր վիճակում պահվում: Այդ զորությամբ Նա կատարում է Իր գործը և փառքը, որն է՝ «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Մեր Երկնային Հայրն Իր քահանայության զորությամբ լիազորում է Եկեղեցու արժանի տղամարդ անդամներին: Քահանայությունը հնարավորություն է տալիս նրանց գործել Աստծո անունով՝ ի փրկություն մարդկային ընտանիքի: Դրա շնորհիվ նրանք կարող են լիազորվել քարոզելու ավետարանը, սպասավորել փրկության արարողությունները և կառավարել Աստծո արքայությունը երկրի վրա:

- Խորհեք Աստծո մեծության մասին, որը թույլ է տալիս արժանի տղամարդկանց և տղաներին կրել Իր քահանայությունը:

Ուսուցիչներին. Այս գլուխը բաղկացած է հինգ բաժիններից: Յուրաքանչյուր ենթավերնագիրը հարց է քահանայության մասին: Դուք կարող եք օգտագործել այս հարցերը որպես ձեր դասի ուղեցույց: Եթե դասարանի չափը հնարավորություն է տալիս փոքր խմբերով քննարկումներ անցկացնել, կարող եք դասարանի անդամներին բաժանել երկու կամ չորս խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք այս գլխի բաժիններից մեկը (մեծ դասարաններում, որոշ բաժիններ կարող են հանձնարարվել մեկից ավելի խմբերի): Թող յուրաքանչյուր խումբ կատարի հետևյալը. (1) Կարդան և քննարկեն իրենց հանձնարարված բաժինը: (2) Գտնեն սուրբ գրության հատվածներ, որոնք օգնում են պատասխանել տվյալ բաժնի ենթագրի հարցին: (3) Կիսվեն տվյալ բաժնի հետ կապված իրենց անձնական փորձառությամբ: Այնուհետև խնդրեք դասարանի անդամներին ամբողջ դասարանի հետ կիսվել այդ փորձառություններից մի քանիսով:

Ինչո՞ւ մենք երկրի վրա քահանայության կարիքն ունենք:

Մենք պետք է քահանայության իշխանություն ունենանք գործելու Աստծո անունով, երբ կատարում ենք ավետարանի սուրբ արարողությունները, ինչպիսիք են՝ մկրտությունը, հաստատումը, հաղորդության սպասավորումը և տաճարային արարողությունը: Եթե տղամարդը քահանայություն չունի, թեպետ նա կարող է անկեղծ լինել, Տերը չի ընդունի արարողությունները, որ նա կատարում է (տես Մատթեոս Է.21–23; հավատո Հանգանակ 1.5): Այդ կարևոր արարողությունները պետք է կատարվեն երկրի վրա քահանայություն կրող տղամարդկանց կողմից:

Տղամարդիկ պետք է քահանայություն ունենան, որ նախագահեն Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում և ղեկավարեն Եկեղեցու աշխատանքը աշխարհի բոլոր մասերում: Երբ Քրիստոսը ապրում էր երկրի վրա, Նա ընտրեց Իր Առաքյալներին և կարգեց նրանց, որպեսզի նրանք կարողանային ղեկավարել Իր Եկեղեցին: Նա նրանց քահանայության զորություն և իշխանություն տվեց՝ Իր անունով գործելու համար: (Տես Մարկոս Գ.13–15; Հովհաննես ԺԵ.16:)

Քահանայությունը նաև անհրաժեշտ է երկրի վրա, որպեսզի մենք կարողանանք հասկանալ Տիրոջ կամքը և իրագործենք Նրա նպատակները: Աստված հայտնում է Իր կամքը երկրի վրա Իր լիազորված քահանայության ներկայացուցչին՝ մարգարեին: Մարգարեն, որը Եկեղեցու Նախագահն է, ծառայում է որպես Աստծո խոսնակ Եկեղեցու բոլոր անդամների և երկրի բոլոր մարդկանց համար:

- Ինչո՞ւ է անհրաժեշտ, որ մարդը արարողություն կատարելիս պատշաճ իշխանություն ունենա:

Ինչպե՞ս են մարդիկ քահանայություն ստանում:

Տերը կարգ է սահմանել, թե ինչպես պետք է Իր քահանայությունը տրվի Իր որդիներին երկրի վրա: Եկեղեցու արժանի տղամարդ անդամը քահանայություն է ստանում: «Ավետարանը քարոզելու և նրա արարողությունները սպասավորելու համար,

մարդ պետք է կանչված լինի Աստծո կողմից՝ մարգարեությամբ և իշխանություն ունեցողների ձեռնադրմամբ» (Հավատո Հանգանակ 1.5)։

Այս նույն ձևով են մարդիկ նախկինում քահանայություն ստացել, նույնիսկ Մովսեսի օրերում. «Եվ ոչ թե մեկն իր անձի համար պատիվը առնում է. այլ նա որ Աստուածանից կանչուած է, ինչպես Ահարոնը» (Եբրայեցիս Ե.4)։ Ահարոնը քահանայություն ստացավ Մովսեսից՝ իր քահանայության ղեկավարից (տես Ելից ԻԸ.1)։ Միայն քահանայություն կրողները կարող են կարգել մյուսներին, և նրանք կարող են դա անել միայն, երբ լիազորված են նրանց կողմից, ովքեր կրում են այդ արարողության բանալիները (տես այս գրքի գլուխ 14-ը)։

Տղամարդիկ չեն կարող գնել կամ վաճառել քահանայության զորությունն ու իշխանությունը։ Ոչ էլ կարող են իրենց վրա վերցնել այդ իշխանությունը։ Նոր Կտակարանում մենք կարդում ենք Սիմոն անունով մի մարդու մասին, որն ապրում էր այն ժամանակ, երբ Քրիստոսի Առաքյալներն էին նախագահում Եկեղեցում։ Սիմոնը դարձի եկավ և մկրտվեց Եկեղեցում։ Քանի որ նա հմուտ մոգ էր, մարդիկ կարծում էին, թե նա Աստծո զորությունն ուներ։ Սակայն Սիմոնը քահանայություն չուներ, և նա գիտեր դա։

Սիմոնը գիտեր, որ Առաքյալները և Եկեղեցու քահանայության մյուս ղեկավարները ունեին Աստծո ճշմարիտ իշխանությունը։ Նա տեսնում էր, որ նրանք գործածում են իրենց քահանայությունը, որպեսզի կատարեն Տիրոջ աշխատանքը, և նա ևս ցանկացավ ունենալ այդ զորությունը։ Նա ցանկացավ գնել քահանայությունը։ (Տես Գործք Ը.9–19։) Սակայն Պետրոսը՝ գլխավոր Առաքյալը, ասաց. «Քո արծաթը քո հետ կորչի. որովհետև դու կարծեցիր, թե Աստուծոյ պարգևը փողով կառնուի» (Գործք Ը.20)։

- Ինչո՞ւ է կարևոր, որ «ոչ մեկն իր անձի համար պատիվը [քահանայությունը] առնում է»։

Ինչպե՞ս են տղամարդիկ պատշաճ ձևով օգտագործում քահանայությունը:

Քահանայությունը պետք է օգտագործվի մեր Երկնային Հոր զավակների կյանքը այստեղ երկրի վրա օրհնելու համար: Քահանայության կրողները պետք է նախագահեն սիրով և բարյացակամորեն: Նրանք չպետք է իրենց ընտանիքներին և մյուսներին ստիպեն հնազանդվել իրենց: Տերն ասել է մեզ, որ քահանայության զորությունը կարող է գործածվել միայն արդարությամբ (տես ՎևՈւ 121.36): Երբ մենք փորձում ենք օգտագործել քահանայությունը հարստություն կամ համբավ ձեռք բերելու կամ այլ եսասիրական նպատակով, «ահա, երկինքները ետ են քաշվում. Տիրոջ Հոգին տրտմում է. և երբ այն ետ է քաշվում, Ամե՛ն այդ մարդու քահանայությանը կամ իշխանությանը» (ՎևՈւ 121.37):

Երբ մարդն օգտագործում է քահանայությունը «համոզումով, երկայնամտությամբ, մեղմությամբ և հեզությամբ և անկեղծ սիրով» (ՎևՈւ 121.41), նա կարող է շատ հրաշալի բաներ անել իր ընտանիքի և ուրիշների համար: Նա կարող է մկրտել, հաստատել և հաղորդությունը սպասավորել, երբ լիազորված է նրանց կողմից, ովքեր կրում են այդ արարողությունների բանալիները: Նա կարող է օրհնել հիվանդներին: Նա կարող է քահանայության օրհնություններ տալ իր ընտանիքի անդամներին՝ քաջալերելով և պաշտպանելով նրանց, երբ նրանք հատուկ կարիքներ ունեն: Նա կարող է նաև օգնել մյուս ընտանիքներին այդ արարողություններով և օրհնություններով, երբ իրեն խնդրում են:

Տղամարդիկ օգտագործում են քահանայության իշխանությունը Եկեղեցում, երբ ծառայում են որպես ճյուղի նախագահ, եպիսկոպոս, քվորումի նախագահ, ցցի նախագահ և միսիայի նախագահ: Տղամարդիկ և կանայք, ովքեր Եկեղեցու պաշտոններ ունեն որպես ծառայողներ և ուսուցիչներ, աշխատում են քահանայության ղեկավարների ղեկավարության ներքո և Սուրբ Հոգու առաջնորդությամբ:

Ի՞նչ օրհնություններ են գալիս, երբ մենք պատշաճ ձևով ենք օգտագործում քահանայությունը:

Տերը մեծ օրհնություններ է խոստացել քահանայության արդար կրողներին, ովքեր քահանայությունն օգտագործում են մյուսներին օրհնելու համար.

«Այն ժամանակ քո վստահությունը կամրանա Աստծո ներկայության մեջ. և քահանայության վարդապետությունը կիջնի քո հոգու վրա, ինչպես ցողը երկնքից:

Սուրբ Հոգին կլինի քո մշտական ընկերը, և քո գավազանը կլինի արդարության ու ճշմարտության անփոփոխ գավազան. և քո տիրապետությունը կլինի հավիտենական տիրապետություն և առանց հարկադրանքի կհոսի դեպի քեզ հավիտյանս հավիտենից» (ՎևՈւ 121.45–46):

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը խոստացել է յուրաքանչյուր տղամարդու, որը արդարությամբ է օգտագործում քահանայությունը, որ նրա «կյանքը կքաղցրանա, խորաթափանց կդառնա արագորեն կողմնորոշվելով լավի ու վատի միջև, կդառնա զգայուն և կարեկցող, միևնույն ժամանակ նրա հոգին կամրապնդվի և կդառնա քաջարի ճիշտը պաշտպանելու համար. նա կհամոզվի, որ քահանայությունը երջանկության երբևէ չթուլացող աղբյուր է՝ կենդանի ջրի աղբյուր, որը բխում է դեպի հավերժական կյանք» (*Teachings of Presidents of the Church: David O. McKay* [2003], 116):

- Նշեք մի քանի օրհնություններ, որ դուք ստացել եք քահանայության միջոցով:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- ՎևՈւ 84; 107 (հայտնություններ քահանայության վերաբերյալ, ներառյալ երդումի և ուխտի քահանայությունը ՎևՈւ 84.33–40-ում)
- ՎևՈւ 20.38–67 (բացատրվում են քահանայության պարտականությունները)

Քահանայության կազմակերպությունը

Գլուխ 14

Քահանայությունն այսօր երկրի վրա է

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցին ղեկավարվում է քահանայության կողմից: Քահանայությունը, որը միշտ կապված է Աստծո աշխատանքի հետ «շարունակվում է Աստծո եկեղեցում, բոլոր սերունդների մեջ, և չունի օրերի սկիզբ կամ տարիների վերջ» (ՎԿՈՒ 84.17): Այն երկրի վրա է այսօր: Թե երիտասարդ և թե ծեր տղամարդիկ մկրտվում են Եկեղեցում, և երբ նրանք արժանի են համարվում, կարգվում են քահանայությանը: Նրանց իշխանություն է տրվում գործելու Տիրոջ համար և կատարելու Նրա գործը երկրի վրա:

Քահանայության երկու բաժինները

- Ինչպե՞ս են Մելքիսեդեկյան և Ահարոնյան Քահանայությունները ստացել իրենց անունները:

Քահանայությունը բաժանված է երկու մասի. Մելքիսեդեկյան Քահանայություն և Ահարոնյան Քահանայություն (տես ՎԿՈՒ 107.1): «Առաջինը կոչվում է Մելքիսեդեկյան Քահանայություն . . . որովհետև Մելքիսեդեկը շատ մեծ քահանայապետ էր:

Նախքան նրա օրերը, այն կոչվում էր *Սուրբ Քահանայություն ըստ Աստծո Որդու Կարգի:*

Սակայն, ելնելով Գերագույն Էակի անվան հանդեպ ունեցած հարգանքից կամ պատկառանքից, նրա անունը շատ հաճախ

Ուսուցիչներին. Օգտագործեք բաժնի սկզբում տրված հարցերը, որպեսզի քննարկում սկսեք և դասարանի կամ ընտանիքի անդամներին ուղղեք դեպի տեքստը ավելի շատ տեղեկություն գտնելու համար: Օգտագործեք բաժնի վերջում տրված հարցերը, որպեսզի օգնեք դասարանի կամ ընտանիքի անդամներին խորհել ու քննարկել իրենց կարդացածի շուրջ և կիրառել այն իրենց կյանքում:

կրկնելուց խուսափելու նպատակով, նրանք՝ հին օրերի եկեղեցին, այդ քահանայությունը կոչեցին Մեքիսեդեկի անունով, կամ Մելքիսեդեկյան Քահանայություն» (ՎևՈւ 107.2–4; շեղագրումն ավելացված է)։

Փոքրագույն քահանայությունը հավելումն է Մելքիսեդեկյան Քահանայության։ Այն կոչվում է Ահարոնյան Քահանայություն, որովհետև այն շնորհվել է Ահարոնին և նրա որդիներին և նրանց բոլոր սերունդներին։ Ահարոնյան Քահանայություն կրողները իշխանություն ունեն սպասավորելու հաղորդության և մկրտության արտաքին արարողությունները։ (Տես ՎևՈւ 20.46; 107.13–14, 20։)

Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները զորություն և իշխանություն ունեն ղեկավարելու Եկեղեցին և ուղղորդելու ավետարանի քարոզելը աշխարհի բոլոր մասերում։ Նրանք սպասավորում են Եկեղեցու ամբողջ հոգևոր աշխատանքը (տես ՎևՈւ 84.19–22; 107.8)։ Նրանք ղեկավարում են տաճարային աշխատանքը. նրանք նախագահում են ծխերում, ճյուղերում, ցցերում և միսիաներում։ Տիրոջ ընտրյալ մարգարեն՝ Եկեղեցու Նախագահը, նախագահող քահանայապետն է Մելքիսեդեկյան Քահանայության վրա (տես ՎևՈւ 107.65–67)։

Քահանայության բանալիները

- Ո՞րն է քահանայության և քահանայության բանալիների միջև տարբերությունը։ Ո՞ր քահանայության ղեկավարներն են ստանում բանալիները։

Տարբերություն կա քահանայության պաշտոնին կարգված լինելու և քահանայության բանալիները ստանալու միջև։ Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ուսուցանել է.

«Ընդհանրապես Քահանայությունը իշխանություն է, որը տրվում է մարդուն՝ գործելու Աստծո համար։ Այս իշխանությունը տրվում է յուրաքանչյուր տղամարդու, որը կարգված է Քահանայության որևէ աստիճանի։

Սակայն անհրաժեշտ է, որ այս իշխանության ներքո կատարված յուրաքանչյուր գործողություն կատարվի պատշաճ

ժամանակին ու տեղում, պատշաճ ձևով ու կարգով: Այդ գործերը ուղղորդող զորությունները կազմում են Քահանայության *բանալիները:* Որոշակի ժամանակահատվածում այդ բանալիներն ամբողջությամբ կրում է միայն մեկ մարդ՝ Եկեղեցու Մարգարեն և Նախագահը: Նա կարող է այդ զորության մի մասը հանձնել մեկ ուրիշին, և այդ դեպքում տվյալ անձնավորությունը կկրի այդ մասնակի գործի բանալիները: Այսպես, տաճարի նախագահը, ցցի նախագահը, ծխի եպիսկոպոսը, միսիայի նախագահը, քվորումի նախագահը՝ նրանցից յուրաքանչյուրը կրում է տվյալ մասնավոր մարմնում կամ տեղում կատարվող աշխատանքների բանալիները: Նրա Քահանայությունը չի ավելանում այդ հատուկ նշանակման միջոցով, . . . երեցների քվորումի նախագահը չունի ավելի մեծ Քահանայություն, քան այդ քվորումի որևէ անդամ: Սակայն նա կրում է այդ քվորումում . . . կատարվող պաշտոնական գործերն ուղղորդող զորությունը, կամ այլ խոսքով, այդ աշխատանքի տվյալ մասի *բանալիները:* (*Եկեղեցու Նախագահների Ուսմունքները. Ջոզեֆ Ֆ. Սմիթ* [1998], 141; շեղագրումն ավելացված է):

- Ինչպե՞ս են քահանայության բանալիները պաշտպանում Եկեղեցին:

Ահարոնյան Քահանայության պաշտոններն ու պարտականությունները

- Ինչպե՞ս են Ահարոնյան Քահանայություն կրողները ծառայում:

Երբ Ահարոնյան Քահանայությունը տրվում է տղամարդուն կամ տղային, նա կարգվում է այդ քահանայության պաշտոնին: Ահարոնյան Քահանայության պաշտոններն են՝ սարկավագ, ուսուցիչ, քահանա և եպիսկոպոս: Յուրաքանչյուր պաշտոն պարտականություններ և պատասխանատվություններ է կրում: Յուրաքանչյուր քվորում նախագահում է քվորումի նախագահը, որն ուսուցանում է անդամներին իրենց պարտականությունները և խնդրում է նրանց կատարել հանձնարարությունները:

Որոշ տղամարդիկ միանում են Եկեղեցուն կամ ակտիվ են դառնում, երբ արդեն անցել է այս քահանայության պաշտոնները ստանալու տարիքը: Նրանք սովորաբար կարգվում են Ահարոնյան Քահանայության մի պաշտոնի և արժանի մնալու դեպքում կարող են շուտով կարգվել այլ պաշտոնների:

Սարկավագ

Երիտասարդը, որը մկրտվել և հաստատվել է որպես Եկեղեցու անդամ և արժանի է, կարող է կարգվել սարկավագի պաշտոնին, երբ 12 տարեկան է դարձել: Սարկավագներին սովորաբար հանձնարարվում է Եկեղեցու անդամներին բաժանել հաղորդությունը, լավ վիճակում պահել Եկեղեցու շինությունները ու տարածքը, քահանայության ղեկավարների համար հաղորդագրություններ փոխանցել, կատարել հատուկ հանձնարարություններ, ինչպես ծոմի նվիրատվություններ հավաքելն է:

Ուսուցիչ

Երիտասարդ տղան կարող է ուսուցիչ կարգվել, երբ 14 տարեկան կամ ավելի է: Ուսուցիչները ունեն սարկավագի բոլոր պարտականությունները, իրավունքները և զորությունները, և այլ հավելյալ զորություններ, իրավունքներ ու պարտականություններ: Ահարոնյան Քահանայության ուսուցիչները օգնում են Եկեղեցու անդամներին ապրել պատվիրաններով (տես ՎևՈւ 20.53–59): Այս պարտականությունը կատարելու համար նրանց սովորաբար հանձնարարվում է ծառայել որպես տնային ուսուցիչներ: Նրանք այցելում են Եկեղեցու անդամների տները և խրախուսում նրանց ապրել ավետարանի սկզբունքներով: Նրանց պատվիրվում է սուրբ գրություններից ուսուցանել ավետարանի ճշմարտությունները (տես ՎևՈւ 42.12): Ուսուցիչները նաև պատրաստում են հաղորդության ծառայության հացն ու ջուրը:

Քահանա

Արժանի երիտասարդները կարող են կարգվել որպես քահանա, երբ 16 տարեկան կամ ավելի են: Քահանաները ունեն սարկավագի և ուսուցչի բոլոր պարտականությունները,

իրավունքներն ու զորությունները, և հավելյալ պարտականություններ, իրավունքներ ու զորություններ (տես ՎԵՈՒ 20.46–51)։ Քահանան կարող է մկրտել։ Նա կարող է նաև հաղորդությունը սպասավորել։ Նա կարող է կարգել այլ քահանաների, ուսուցիչների և սարկավագների։ Քահանան կարող է վարել ժողովները, երբ Մելքիսեդեկյան Քահանայություն կրողը ներկա չէ։ Նա պետք է քարոզի ավետարանը իր շրջապատի մարդկանց։

Եպիսկոպոս

Եպիսկոպոսը կարգվում և ձեռնադրվում է նախագահելու ծխի Ահարոնյան Քահանայության վրա։ Նա քահանաների քվորումի նախագահն է (տես ՎԵՈՒ 107.87–88)։ Երբ գործում է Ահարոնյան Քահանայության իր պաշտոնում, եպիսկոպոսը հիմնականում վարում է աշխարհիկ գործերը, օրինակ՝ ֆինանսները կառավարելը և գրանցումներ կատարելը և աղքատների ու կարիքավորների համար օգնություն կազմակերպելը (տես ՎԵՈՒ 107.68)։

Եպիսկոպոսը նաև կարգվում է որպես քահանայապետ, այնպես որ նա կարող է նախագահել ծխի բոլոր անդամների վրա (տես ՎԵՈՒ 107.71–73; 68.15)։ Եպիսկոպոսը Իսրայելի դատավոր է (տես ՎԵՈՒ 107.74) և անդամների հետ առանձնազրույցներ է անցկացնում տաճարային երաշխավորագրերի, քահանայության կարգումների և այլ կարիքների համար։ Նրա իրավունքն է ունենալ խորաթափանցության պարգևը։

- Ինչպե՞ս եք օրհնվել Ահարոնյան Քահանայության կրողների ծառայությունից։

Մելքիսեդեկյան Քահանայության պաշտոններն ու պարտականությունները

- Ինչպե՞ս են ծառայում Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները։

Մելքիսեդեկյան Քահանայության պաշտոններն են՝ երեց, քահանայապետ, հայրապետ, Յոթանասունական և Առաքյալ։

Երեց

Երեցները կանչվում են ուսուցանելու, մեկնաբանելու, հորդորելու, մկրտելու և Եկեղեցու վրա հսկելու (տես ՎևՈւ 20.42)։ Մելքիսեդեկյան Քահանայության բոլոր կրողները երեցներ են։ Նրանք իշխանություն ունեն Սուրբ Հոգու պարգևը շնորհել՝ ձեռնադրելով (տես ՎևՈւ 20.43)։ Երեցները պետք է վարեն Եկեղեցու ժողովները՝ Սուրբ Հոգով առաջնորդվելով (տես ՎևՈւ 20.45; 46.2)։ Երեցները կարող են սպասավորել հիվանդներին (տես ՎևՈւ 42.44) և օրհնել փոքր երեխաներին (տես ՎևՈւ 20.70)։ Երեցները կարող են նախագահել Եկեղեցու ժողովներին, երբ քահանայապետ չկա (ՎևՈւ 107.11)։

Քահանայապետ

Քահանայապետին իշխանություն է տրվում պաշտոնավարել Եկեղեցում և հոգևոր բաները սպասավորել (տես ՎևՈւ 107.10, 12)։ Նա կարող է նաև պաշտոնավարել բոլոր փոքր պաշտոններում (տես ՎևՈւ 68.19)։ Ցցի նախագահները, միսիայի նախագահները, բարձրագույն խորհրդականները, եպիսկոպոսները և Եկեղեցու մյուս ղեկավարները կարգված քահանայապետեր են։

Հայրապետ

Հայրապետները կարգվում են Բարձրագույն Իշխանավորների կողմից, կամ ցցի նախագահների կողմից, երբ նրանք լիազորվում են Տասներկուսի Խորհրդի կողմից, որպեսզի հայրապետական օրհնություններ տան Եկեղեցու անդամներին։ Այդ օրհնությունները մեզ որոշ հասկացողություն են տալիս երկրի վրա մեր կոչումների վերաբերյալ։ Դա անձնապես մեզ ուղղված Տիրոջ խոսքն է։ Հայրապետերը նաև կարգված քահանայապետեր են։ (Տես ՎևՈւ107.39–56։)

Յոթանասունական

Յոթանասունականները Հիսուս Քրիստոսի հատուկ վկաներն են աշխարհի համար և աջակցում են Եկեղեցու կառուցմանն ու կարգավորմանը Առաջին Նախագահության և Տասներկու Առաքյալների Քվորումի ղեկավարության ներքո (տես ՎևՈւ 107.25, 34, 38, 93–97)։

Առաքյալ

Առաքյալը Հիսուս Քրիստոսի անվան հատուկ վկան է ողջ աշխարհում (տես ՎԿՈ 107.23)։ Առաքյալները կառավարում են Եկեղեցու գործերը ամբողջ աշխարհում։ Նրանք, ովքեր կարգված են Մելքիսեդեկյան Քահանայության Առաքյալի պաշտոնում, սովորաբար ձեռնադրվում են որպես Տասներկու Առաքյալների Քվորումի անդամներ։ Նրանցից յուրաքանչյուրին շնորհվում է երկրի վրա Աստծո արքայության բոլոր բանալիները, սակայն բոլոր բանալիները ակտիվորեն գործադրում է միայն ավագ Առաքյալը, որը Եկեղեցու Նախագահն է։ Մյուսները գործում են նրա ղեկավարության ներքո։

- Ինչպե՞ս եք օրհնվել Մելքիսեդեկյան Քահանայություն կրողների ծառայությունից։

Ահարոնյան Քահանայության քվորումները

Տերը հրահանգել է, որ քահանայություն կրողները քվորումներ կազմեն։ Քվորումը քահանայության միևնույն պաշտոնը կրող եղբայրների կազմ է։

Կան Ահարոնյան Քահանայության երեք քվորումներ՝

1. Սարկավագների քվորում, որը բաղկացած է 12-ից ոչ ավել սարկավագներից (տես ՎԿՈ 107.85)։ Սարկավագների քվորումի նախագահությունը կանչվում է եպիսկոպոսի կողմից այդ քվորումի անդամներից։
2. Ուսուցիչների քվորում, որը բաղկացած է մինչև 24 ուսուցիչներից (տես ՎԿՈ 107.86)։ Ուսուցիչների քվորումի նախագահությունը կանչվում է եպիսկսպոսի կողմից այդ քվորումի անդամներից։
3. Քահանաների քվորում, որը բաղկացած է մինչև 48 քահանաներից (տես ՎԿՈ 107.87–88)։ Այնտեղ նախագահում է ծխի եպիսկոպոսը, որին պատկանում է տվյալ քվորումը։ Եպիսկոպոսը քահանայապետ է և ուստի նաև պատկանում է քահանայապետերի քվորումին։

Երբ քվորումի անդամների թիվը նախատեսվածից ավելի է, քվորումը կարող է բաժանվել։

Մելքիսեդեկյան Քահանայության Քվորումներ

Եկեղեցու ընդհանուր մակարդակով, Առաջին Նախագահության անդամները կազմում են քվորում, ինչպեսև Տասներկու Առաքյալները: Յոթանասունականները նույնպես կազմում են քվորումներ:

Եկեղեցու տեղական մակարդակով, ծխերում և ճյուղերում, ցցերում և շրջաններում, Մելքիսեդեկյան Քահանայություն կրողները կազմակերպվում են հետևյալ քվորումներով.

Երեցների Քվորում

Երեցների յուրաքանչյուր քվորում «հաստատվել է տեղի սպասավորների համար. չնայած նրանք կարող են ճամփորդել, այնուամենայնիվ, նրանք կարգված են, որ տեղի սպասավորներ լինեն» (ՎևՈ 124.137): Նրանք իրենց հիմնական գործը կատարում են իրենց տների մոտ: Քվորումը պետք է կազմված լինի մինչև 96 երեցներից, որոնց վրա նախագահում է քվորումի նախագահությունը: Երբ քվորումի անդամների թիվը նախատեսվածից շատ է, քվորումը կարող է բաժանվել:

Քահանայապետների քվորում

Յուրաքանչյուր քվորում ընդգրկում է ցցի սահմաններում նախագահող բոլոր քահանայապետերին, ներառյալ՝ հայրապետերն ու եպիսկոպոսները: Ցցի նախագահը և նրա խորհրդականները այս քվորումի նախագահությունն են: Յուրաքանչյուր ծխում քահանայապետերը խումբ են կազմում՝ խմբի ղեկավարով:

Քահանայության քվորումների կարևորությունը

- Ինչպե՞ս կարող են քահանայության քվորումները ամրապնդել անհատներին և ընտանիքներին:

Կարգվելով քահանայությանը տղամարդը կամ տղան մեխանիկորեն դառնում է քահանայության մի քվորումի անդամ: Այդ ժամանակից մինչև կյանքի վերջ ենթադրվում է, որ նա կմնա քահանայության քվորումի անդամ իր պաշտոնի համաձայն

(տես Boyd K. Packer, “What Every Elder Should Know—and Every Sister as Well: A Primer on Principles of Priesthood Government,” *Ensign,* Feb. 1993, 9)։

Եթե քահանայության քվորումը ճիշտ ձևով է գործում, քվորումի անդամները խրախուսվում են, օրհնվում, ընկերանում, և ավետարանը սովորում իրենց ղեկավարների կողմից։ Թեև մարդը կարող է ազատվել Եկեղեցու կոչումներից, օրինակ ուսուցչի, քվորումի նախագահի, եպիսկոպոսի, բարձրագույն խորհրդականի կամ ցցի նախագահի, նա մնում է նույն քվորումի անդամը։ Քահանայության տվյալ քվորումում անդամակցումը պետք է համարվի սուրբ արտոնություն։

Քահանայության օժանդակ կազմակերպություններ

- Ինչպե՞ս են քահանայության օժանդակ կազմակերպություններն օգնում ամրապնդել անհատներին և ընտանիքներին։

Եկեղեցու բոլոր կազմակերպություններն աշխատում են քահանայության ղեկավարների ղեկավարության ներքո և օգնում են նրանց կատարել Տիրոջ աշխատանքը։ Օրինակ, ծխի Սփոփող Միության, Երիտասարդ Կանանց, Երիտասարդ Տղամարդկանց, Երեխաների Միության և Կիրակնօրյա Դպրոցի կազմակերպությունների նախագահությունները ծառայում են եպիսկոպոսության ղեկավարության ներքո։ Այս կազմակերպությունները կոչվում են քահանայության օժանդակ կազմակերպություններ։

- Որպես անհատ ի՞նչ դեր եք կատարում, որով օգնում եք քահանայության քվորումներին և օժանդակ կազմակերպություններին հաջողությամբ գործել։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ալմա 13.1–19 (ինչպես են տղամարդիկ կարգվել քահանայությանը)
- Մատթեոս ԺԶ.19; ՎևՈւ 68.12 (Առաքյալներին շնորհված է քահանայության բանալիներն ու զորությունը. ինչ նրանք կնքում են երկրի վրա կնքվում է երկնքում)

- ՎԵՈՒ 20.38–67 (երեցների, քահանաների, ուսուցիչների, սարկավագների պարտականությունները)
- ՎԵՈՒ 84; 107 (հայտնություններ քահանայության վերաբերյալ)
- Ա Կորնթացիս ԺԲ.14–31 (քահանայության բոլոր պաշտոնները կարևոր են)

Տիրոջ ուխտյալ ժողովուրդ

Գլուխ 15

Ուխտերի բնույթը

- Ի՞նչ է ուխտը: Ինչո՞ւ են Վերջին Օրերի Սրբերը կոչվում ուխտյալ ժողովուրդ:

Ի սկզբանե, Տերը ուխտեր է կապել երկրի վրա Իր զավակների հետ: Երբ Նրա ժողովուրդը ուխտեր (խոստումներ) է կապում Նրա հետ, նրանք գիտեն, թե ինչ է Նա ակնկալում իրենցից և ինչ օրհնություններ կարող են ստանալ Նրանից: Նրանք կարող են ավելի լավ կատարել Նրա աշխատանքը երկրի վրա: Ժողովուրդը, որ ուխտ է կապում Տիրոջ հետ և ում հետ Տերը ուխտեր է կապում, հայտնի են որպես Տիրոջ ուխտյալ ժողովուրդ: Եկեղեցու անդամները Տիրոջ ուխտյալ ժողովրդի մի մասն են:

Ըստ ավետարանի ուխտ նշանակում է սուրբ համաձայնագիր կամ փոխադարձ խոստում Աստծո և մարդու կամ մարդկանց խմբի միջև: Ուխտ կապելիս Աստված օրհնություն է խոստանում պատվիրաններին հնազանդվելու համար: Նա պայմաններ է սահմանում Իր ուխտերի համար, և Նա հայտնում է այդ պայմանները Իր մարգարեներին: Եթե մենք հնազանդվում ենք ուխտի պայմաններին, մենք ստանում ենք խոստացված օրհնությունները: Եթե մենք ընտրում ենք չհնազանդվելը , Նա ետ է պահում օրհնությունները, և որոշ դեպքերում նաև պատժում է:

Օրինակ, երբ մենք միանում ենք Եկեղեցուն, մենք մի քանի ուխտեր ենք կապում Աստծո հետ (տես այս գրքի գլուխ 20): Մկրտության ժամանակ Փրկչի հետ մենք ուխտ ենք կապում, որ կվերցնենք Նրա անունը մեզ վրա: Նա խոստանում է, որ «բոլոր նրանք, ովքեր ապաշխարում ու մկրտվում են իմ

անունով, որն է՝ Հիսուս Քրիստոս, և համբերում են մինչև վերջ, պիտի փրկվեն» (ՎևՈւ 18.22)։ Մենք ուխտ ենք կապում Տիրոջ հետ, երբ հաղորդությունն ենք ընդունում (տես այս գրքի գլուխ 23)։ Մենք խոստանում ենք մեզ վրա վերցնել Նրա անունը, հիշել Նրան և հնազանդվել Նրա պատվիրաններին։ Մենք խոստանում ենք, որ Սուրբ Հոգին կլինի մեզ հետ։ (Տես ՎևՈւ 20.77–79։) Երբ ստանում ենք տաճարային արարողությունները, մենք այլ սուրբ ուխտեր ենք կապում և մեզ վեհացում է խոստացվում հավատարիմ հնազանդության համար (տես ՎևՈւ 132; տես նաև այս գրքի գլուխ 47)։

Աստված նաև հատուկ ուխտեր է կապել հատուկ մարդկանց կամ խմբերի հետ։ Նա հատուկ ուխտեր է կապել Ադամի, Ենովքի, Նոյի, Իսրայելի զավակների և Լեքիի հետ (տես Մովսես 6.31–36, 52; Ծննդոց 9.9–17; Ելից ԺԹ.5–6; 2 Նեփի 1)։ Նա հատուկ ուխտ է կապել Աբրահամի և նրա ժառանգների հետ, որն այսօր օրհնում է Եկեղեցու անդամներին և երկրի բոլոր ազգերին։

- Խորհեք Աստծո հետ կապած ուխտերի և այն օրհնությունների մասին, որ նա խոստացել է ձեզ այդ ուխտերը պահելու համար։

Աստծո ուխտը Աբրահամի և նրա ժառանգների հետ

- Ի՞նչ է Աբրահամյան ուխտը։

Հին Կտակարանի մարգարե Աբրահամը շատ արդարակյաց մարդ էր (տես այս գլխի նկարը)։ Նա հրաժարվեց երկրպագել իր հոր կուռքերին։ Նա պահում էր Տիրոջ բոլոր պատվիրանները։ Աբրահամի արդարակեցության շնորհիվ Տերը ուխտ կապեց նրա և նրա ժառանգների հետ։

Տերը խոստացավ Աբրահամին, որ նա անթիվ ժառանգներ կունենա։ Նա խոստացավ, որ նրանք բոլորը հնարավորություն կունենան ստանալ ավետարանը, քահանայության օրհնությունները, և վեհացման բոլոր արարողությունները։ Այդ ժառանգները, քահանայության զորության շնորհիվ, կտանեն ավետարանը բոլոր ազգերին։ Նրանց միջոցով, երկրի բոլոր ընտանիքները կօրհնվեն (տես Աբրահամ 2.11)։ Այնուհետև

Աստված խոստացավ, որ եթե նրանք արդարակյաց լինեն, Նա Իր ուխտը կհաստատի Աբրահամի զավակների սերունդների հետ (տես Ծննդոց ԺԷ.4–8)։

- Ինչպե՞ս են Աբրահամյան ուխտի պատվիրաններն ու խոստումները վերաբերվում մեզ։ (Հաշվի առեք, թե ինչպես է այս հարցը կիրառվում տարբեր միջավայրերում, օրինակ՝ տանը, աշխատանքի վայրում, համայնքում կամ որպես միսիոներ։)

Եկեղեցու անդամներն ուխտյալ ժողովուրդ են

- Ի՞նչ պատասխանատվություններ են կրում Աստծո ուխտյալ ժողովրդներն այսօր և ինչ օրհնություններ են ստանում։

Աբրահամի արյունակից ժառանգները միակ մարդիկ չեն, որոնց Աստված Իր ուխտյալ ժողովուրդն է կոչում։ Խոսելով Աբրահամի մասին, Աստված ասաց. «Բոլոր նրանք, ովքեր կընդունեն այս Ավետարանը, կկոչվեն քո անունով, և կհամարվեն քո սերունդը [տոհմը], և վեր կկենան ու կօրհնեն քեզ, որպես իրենց հայր» (Աբրահամ 2.10)։ Ուստի, մարդկանց երկու խմբեր են ընդգրկվում Աբրահամի հետ կապված ուխտի մեջ. (1) Աբրահամի արդար արյունակից ժառանգները և (2) նրա տոհմի մեջ ընդգրկվածները, որոնք ընդունել են Հիսուս Քրիստոսի ավետարանը և ապրում են դրանով (տես 2 Նեփի 30.2)։

Երբ մկրտվում ենք Եկեղեցում, մենք մտնում ենք Աբրահամի, Իսահակի և Հակոբի հետ կապված Տիրոջ ուխտի մեջ (տես Գաղատացիս Գ.26–29)։ Եթե հնազանդ ենք, մենք ժառանգում ենք այդ ուխտի օրհնությունները։ Մենք իրավունք ունենք օգնություն և առաջնորդություն ստանալ Սուրբ Հոգուց։ Արժանի տղամարդիկ քահանայություն կրելու իրավունք ունեն։ Ընտանիքները կարող են քահանայության օրհնություններ ստանալ։ Մենք կարող ենք հավերժական կյանք ձեռք բերել սելեստիալ թագավորությունում։ Դրանից առավել մեծ օրհնություններ գոյություն չունեն։

Ուսուցիչներին. Դուք կարող եք օգնել դասարանի կամ ընտանիքի անդամներին ավելի խորը մտածել հարցի մասին՝ խորհելու համար նրանց ժամանակ տրամադրելով։ Բավականաչափ ժամանակ տրամադրելուց հետո, նրանց խնդրեք պատասխանել։

Որպես Տիրոջ ուխտյալ ժողովուրդ, օրհնությունների հետ միասին մենք նաև մեծ պատասխանատվություններ ունենք: Տերը խոստացել է Աբրահամին, որ իր ժառանգների միջոցով ավետարանը կտարվի ողջ աշխարհին: Մենք իրականացնում ենք այս պատասխանատվությունը Եկեղեցու լիաժամկետ միսիոներական ծրագրի և անդամների կողմից կատարվող միսիոներական աշխատանքի միջոցով: Ողջ աշխարհին ավետարանը քարոզելու այս արտոնությունը պատկանում է միայն Տիրոջ Եկեղեցուն և Նրա ուխտյալ ժողովրդին:

Որպես Տիրոջ ուխտյալ ժողովուրդ մենք պետք է պահենք Նրա պատվիրանները: Նա ասել է. «Ես Տերս կապված եմ, երբ դուք անում եք այն, ինչ ես ասում եմ. բայց երբ դուք չեք անում այն, ինչ ես ասում եմ, դուք խոստում չունեք» (ՎևՈ 82.10): Եթե մենք ավետարանն ընդունելուց հետո դրժենք մեր ուխտը, ուխտը դառնում է անվավեր, և մենք մեղավոր ենք դառնում Աստծո առաջ (տես ՎևՈ 132.4): Նա ասել է. «Խուսափեք մեղքից, չլինի թե դառը դատաստաններ ընկնեն ձեր գլխին: Քանզի նրանից, ում շատ տրվել է, շատ էլ պահանջվում է. և նա, ով մեղանչում է ավելի մեծ լույսի դեմ, ավելի մեծ դատապարտություն պիտի ստանա» (ՎևՈ 82.2–3):

Նոր և հավիտենական ուխտ

- Ի՞նչ ենք մենք խոստանում անել, երբ ընդունում ենք ավետարանը: Ի՞նչ օրհնություններ է Երկնային Հայրը տալիս մեզ, երբ մենք պահում ենք այդ խոստումները:

Ավետարանի լրիվությունը կոչվում է նոր և հավիտենական ուխտ: Այն ներառում է մկրտության, հաղորդության ժամանակ, տաճարում և այլ ժամանակ կապված ուխտերը: Տերը կոչում է այն հավիտենական, որովհետև այն հաստատվել է հավիտենական Աստծո միջոցով, և որովհետև այդ ուխտը երբեք չի փոխվի: Նա այդ նույն ուխտը տվել է Ադամին, Ենովքին, Նոյին, Աբրահամին և այլ մարգարեներին: Այդ իմաստով այն նոր չէ: Բայց Տերը այն նոր է կոչում, որովհետև ամեն անգամ ավետարանը վերականգնվել է այն երկրից վերցվելուց հետո, դա նոր է այն մարդկանց համար, ովքեր ստանում են այն (տես Երեմիա ԼԱ.31–34; Եզեկիել ԼԷ.26):

Երբ մենք ընդունում ենք նոր ու հավիտենական ուխտը, մենք համաձայնվում ենք, որ կապաշխարենք, կմկրտվենք, կստանանք Սուրբ Հոգին, կստանանք մեր օժտումները, կստանանք տաճարային ամուսնության ուխտը, կհետևենք և կհնազանդվենք Քրիստոսին մինչև մեր կյանքի վերջ: Երբ մենք պահում ենք մեր ուխտերը, մեր Երկնային Հայրը խոստանում է մեզ, որ մենք վեհացում կստանանք սելեստիալ արքայությունում (տես ՎևՈւ 132.20–24; տես նաև այս գրքի գլուխ 47-ը):

Այդ խոստումի մեծությունը մահկանացուների համար դժվար է հասկանալ: Պատվիրանները, որ Նա տալիս է, մեր օգուտի համար են, և եթե մենք հավատարիմ ենք, կարող ենք հավերժ վայելել օրհնություններն ու երկնքի ու երկրի գեղեցկությունները: Մենք կարող ենք ապրել Նրա ներկայությամբ և ճաշակել Նրա սերը, կարեկցանքը, զորությունը, մեծությունը, գիտելիքը, իմաստությունը, փառքը և տիրապետությունը:

- Տիրոջ ուխտյալ ժողովուրդ լինելը ինչպե՞ս է կապված նրա հետ, թե ինչպես ենք հագնվում, գործում և պահում Աստծո պատվիրանները:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ա Պետրոս Բ.9–10 (սեփական ժողովուրդ)
- ՎևՈւ 54.4–6 (պահված և դրժված ուխտերի հետևանքները)
- ՎևՈւ 132.7 (ուխտերը կապվում են պատշաճ իշխանությամբ)
- ՎևՈւ 133.57–60 (ուխտերի նպատակը)
- ՎևՈւ 35.24 (խոստումներ ուխտերին հնազանդվելու համար)
- Եբրայեցիս Ը.6 (Հիսուս Քրիստոսը ավելի լավ ուխտի միջնորդն է)
- Bible Dictionary, “Covenant,” 651

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին հին ժամանակներում

Գլուխ 16

Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն առանձնահատուկ որոշ հատկանիշներ

«Մենք հավատում ենք նույն կազմակերպությանը, որը գոյություն ուներ Նախնական Եկեղեցում՝ իր առաքյալներով, մարգարեներով, հովիվներով, ուսուցիչներով, ավետարանիչներով և այլն (Հավատո Հանգանակ 1.6)։

Հիսուսը հաստատեց Իր Եկեղեցին, երբ Նա երկրի վրա էր։ Այն կոչվեց Հիսուս Քրիստոսի Եկեղեցի (տես 3 Նեփի 27.8), իսկ անդամները կոչվում էին Սրբեր (տես Եփեսացիս Բ.9–20)։

Հայտնություն

Երբ Հիսուսը հաստատեց Իր Եկեղեցին, Նա ինքը սովորեցրեց և ղեկավարեց Եկեղեցու ղեկավարներին։ Նա էլ, իր հերթին, հրահանգներ էր ստանում Իր Երկնային Հորից։ (Տես Եբրայեցիս Ա.1–2։) Այնպես որ Հիսուս Քրիստոսի Եկեղեցին ղեկավարվում էր ոչ թե մարդկանց, այլ Աստծո կողմից։ Հիսուսն ուսուցանում էր Իր հետևորդներին, որ հայտնությունը «վեմ» է, որի վրա Նա կկառուցի Իր Եկեղեցին (տես Մատթեոս ԺԶ.16–18)։

Ուսուցիչներին. Կարող եք առաջարկել ձեր ընտանիքի կամ դասարանի անդամին ուսումնասիրել Եկեղեցուն առանձնահատուկ վեց հատկանիշներից մեկը՝ շեղագրված ենթագրերից մեկը, ինչպես օրինակ՝ *Հայտնություն* և *Իշխանություն Աստծուց։* (Մեծ դասարանում որոշ անդամների հանձնարարեք նույն հատկանիշը։ Ընտանիքներում և փոքր դասարաններում, որոշ անդամների կարող եք հանձնարարել մեկից ավելի հատկանիշ։) Երբ նրանց բավականաչափ ժամանակ է հատկացվել ուսումնասիրելու համար, խնդրեք նրանց քննարկել իրենց սովորածը։

Իր Հարությունից հետո, նախքան երկինք համբարձվելը Հիսուսն ասաց Իր Առաքյալներին. «Ես ձեզ հետ եմ ամեն օր մինչև աշխարհքի վերջը» (Մատթեոս ԻԸ.20)։ Իր խոսքին հավատարիմ, Նա շարունակեց առաջնորդել նրանց երկնքից։ Նա ուղարկեց Սուրբ Հոգին որպես նրանց համար մխիթարիչ և հայտնիչ (տես Ղուկաս ԺԲ.12; Հովհաննես ԺԴ.26)։ Նա խոսեց Սավուղի հետ տեսիլքում (տես Գործք Թ.3–6)։ Նա հայտնեց Պետրոսին, որ ավետարանը պետք է ուսուցանվի ոչ միայն Հրեաներին, այլև ողջ աշխարհին (տես Գործք Ժ)։ Նա Հովհաննեսին հայտնեց շատ փառահեղ ճշմարտություններ, որոնք գրված են Հայտնության գրքում։ Նոր Կտակարանը հիշատակում է շատ այլ ճանապարհներ, որոնց միջոցով Հիսուսը հայտնել է Իր կամքը, որպեսզի ղեկավարի Իր Եկեղեցին և լուսավորի Իր աշակերտներին։

Իշխանություն Աստծուց

Ավետարանի արարողություններն ու սկզբունքները չեն կարող սպասավորվել և ուսուցանվել առանց քահանայության։ Հայրն այս իշխանությունը շնորհել էր Հիսուս Քրիստոսին (տես Եբրայեցիս Ե.4–6), որն իր հերթին կարգեց Իր Առաքյալներին և նրանց շնորհեց քահանայության զորությունն ու իշխանությունը (տես Ղուկաս Թ.1–2; Մարկոս Գ.14)։ Նա հիշեցրեց նրանց. «Ոչ թե դուք ինձ ընտրեցիք, այլ ես ընտրեցի ձեզ, և ձեզ դրի» (Հովհաննես ԺԵ.16)։

Որպեսզի կարգուկանոն լիներ Իր Եկեղեցում, Հիսուսը մեծ պատասխանատվություն և իշխանություն տվեց Տասներկու Առաքյալներին։ Նա Պետրոսին ավագ Առաքյալ նշանակեց և նրան երկրի վրա և երկնքում օրհնություններ կնքելու բանալիները տվեց (տես Մատթեոս ԺԶ.19)։ Հիսուսը նաև կարգեց այլ պաշտոնյաներ, որոնք հատուկ պարտականություններ պետք է կատարեին։ Երկինք Նրա համբարձվելուց հետո, նշանակման և կարգման ձևը շարունակվեց։ Ուրիշներն էին կարգվում քահանայությանը նրանց կողմից, ովքեր արդեն ստացել էին այդ իշխանությունը։ Հիսուսը Սուրբ Հոգու միջոցով հայտնի էր դարձնում, որ Նա հաստատում էր այդ կարգումները (տես Գործք Ա.24)։

Եկեղեցու կազմակերպությունը

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին մանրակրկիտ կազմակերպված միավոր էր: Այն համեմատվում էր շենքի հետ, որը «Առաքյալների և մարգարեների հիմքի վրա շինուած. որի անկյունի գլուխը Հիսուս Քրիստոսն է» (Եփեսացիս Բ.20):

Հիսուսը քահանայության այլ ղեկավարներ նշանակեց, որոնք պետք է օգնեին Առաքյալներին ծառայության գործում: Նա զույգերով Յոթանասունական կոչվող պաշտոնյաներ ուղարկեց, որպեսզի քարոզեն ավետարանը (տես Ղուկաս Ժ.1): Եկեղեցու այլ պաշտոնյաներն էին՝ ավետարանիչները (հայրապետերը), հովիվները (նախագահող ղեկավարները), քահանայապետերը, երեցները, եպիսկոպոսները, քահանաները, ուսուցիչները և սարկավագները (տես այս գրքի գլուխ 14-ը): Այս բոլոր պաշտոններն անհրաժեշտ էին միսիոներական աշխատանք, արարողություններ կատարելու, Եկեղեցու անդամներին ուսուցանելու և ոգեշնչելու համար: Այդ պաշտոնները օգնել են անդամներին գալ դեպի «հավատքի և Աստծո Որդին ճանաչելու միությանը» (Եփեսացիս Դ.13):

Աստվածաշունչը մեզ ամեն ինչ չի ասում քահանայության կամ Եկեղեցու կազմակերպության և կառավարման մասին: Սակայն, Աստվածաշունչը բավականաչափ ներկայացնում է Եկեղեցու կազմակերպության գեղեցկությունն ու կատարելությունը: Առաքյալներին պատվիրվել էր՝ գնալ ողջ աշխարհը և քարոզել (տես Մատթեոս ԻԸ.19–20): Նրանք չէին կարող մնալ մի որևէ քաղաքում, որպեսզի հսկեին նորադարձներին: Ուստի, քահանայության տեղական ղեկավարներ էին կանչվել և կարգվել, իսկ Առաքյալները նախագահում էին նրանց վրա: Առաքյալները և Եկեղեցու այլ ղեկավարները այցելում էին և նամակներ էին գրում տարբեր ճյուղերին: Այդ պատճառով, մեր Նոր Կտակարանը պարունակում է նամակներ գրված Պողոսի, Պետրոսի, Հակոբոսի, Հովհաննեսի և Հուդայի կողմից, որտեղ խորհուրդ և հրահանգ է տրվում քահանայության տեղի ղեկավարներին:

Նոր Կտակարանը ցույց է տալիս, որ այս Եկեղեցու կազմակերպությունը պետք է շարունակվեր: Օրինակ, Հուդայի մահից

հետո մնացին միայն տասնմեկ Առաքյալներ: Շուտով, Հիսուսի երկինք համբարձվելուց հետո, տասնմեկ Առաքյալները հանդիպեցին, որպեսզի Հուդայի տեղը մեկին ընտրեն: Սուրբ Հոգուց հայտնության միջոցով նրանք ընտրեցին Մատաթիային: (Տես Գործք Ա.23–26:) Հիսուսը օրինակ ծառայեց տասներկու Առաքյալների համար, թե ինչպես պետք է կառավարել Եկեղեցին: Պարզ էր, որ այդ կազմակերպությունը պետք է շարունակվեր այնպես, ինչպես Նա էր հաստատել:

Առաջին սկզբունքներն ու արարողությունները

Առաքյալները ուսուցանում էին երկու հիմնական սկզբունքներ. հավատ առ Տեր Հիսուս Քրիստոս և ապաշխարություն: Առ Հիսուս Քրիստոս որպես Աստծո Որդի և իրենց Քավիչ հավատ ունենալուց և իրենց մեղքերից ապաշխարելուց հետո, նորադարձները երկու արարողություն էին ստանում՝ մկրտություն ընկղմվելով և Սուրբ Հոգու պարգևը ձեռնադրվելով (տես Գործք 19.1–6): Դրանք ավետարանի առաջին սկզբունքներն ու արարողություններն էին: Հիսուսն ուսուցանել է. «Եթե մեկը ջրից ու հոգուց չծնուի, նա կարող չէ Աստծու արքայությունը մտնել» (Հովհաննես Գ.5):

Մահացածների համար կատարվող արարողությունները

Հիսուսը յուրաքանչյուրի համար ավետարանը լսելու միջոց է ապահովել՝ լինի երկրի վրա, թե մահից հետո: Իր մահից և Հարությունից հետո Հիսուսը գնաց մահացած մարդկանց հոգիների մոտ: Նա միսիոներական աշխատանք կազմակերպեց նրանց մեջ, ովքեր մահացել էին: Նա արդար սուրհանդակներ նշանակեց և նրանց զորություն տվեց ավետարանը ուսուցանել բոլոր մահացած մարդկանց հոգիներին: Դա նրանց ավետարանն ընդունելու հնարավորություն ընձեռեց: (Տես Ա Պետրոս Գ.18–20; Դ.6; ՎևՈւ 138:) Այն ժամանակ Իր Եկեղեցու անդամները արարողություններ էին կատարում մահացածների համար (տես Ա Կորնթացիս ԺԵ.29): Երկրի վրա պետք է կատարվեն այնպիսի արարողություններ, ինչպիսիք են՝ մկրտությունը և հաստատումը:

Հոգևոր պարգևներ

Եկեղեցու բոլոր հավատարիմ անդամները Հոգու պարգևներ ստանալու իրավունք ունեին: Դրանք տրվում էին նրանց ըստ իրենց անհատական կարիքների, ունակությունների և հանձնարարությունների: Այդպիսի պարգևներից էին հավատքը, ներառյալ բժշկելու և բժշկվելու զորությունը, մարգարեությունը և տեսիլքները: (Հոգու պարգևները ավելի մանրամասն քննարկվում են գլուխ 22-ում:) Հոգևոր պարգևները միշտ գոյություն ունեն Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցում (տես Ա Կորնթացիս ԺԲ.4–11; Մորոնի 10.8–18; ՎևՈւ 46.8–29): Հիսուսն ասաց Իր աշակերտներին, որ այդ նշանները կամ հոգևոր պարգևները միշտ հետևում են նրանց, ովքեր հավատում են (տես Մարկոս ԺՁ.17–18): Նրա աշակերտներից շատերը Սուրբ Հոգու զորությամբ հրաշքներ էին գործում, մարգարեանում կամ տեսիլքներ տեսնում:

- Հիսուս Քրիստոսի Եկեղեցուն ինչո՞ւ են անհրաժեշտ այս վեց հատկանիշները:

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին Ամերիկաներում

Հարությունից հետո Հիսուսն այցելեց Ամերիկաների ժողովրդին և այնտեղ Իր Եկեղեցին կազմակերպեց նրանց մեջ՝ երեք օր մարդկանց ուսուցանելով և ապա դրանից որոշ ժամանակ անց հաճախ վերադառնալով այնտեղ (տես 3 Նեփի 11–28): Այնուհետև Նա թողեց նրանց և երկինք համբարձվեց: 200 տարուց ավելի նրանք արդար կյանք վարեցին և Աստծո ստեղծած ժողովուրդներից ամենաերջանիկն էին (տես 4 Նեփի 1.16):

Ուրացություն ճշմարիտ Եկեղեցուց

- Ի՞նչ է *ուրացություն* բառը նշանակում:

Պատմության ընթացքում չար մարդիկ փորձել են կործանել Աստծո աշխատանքը: Սա տեղի ունեցավ մինչ Առաքյալները դեռևս կենդանի էին և հսկում էին երիտասարդ, աճող Եկեղեցին: Որոշ անդամներ Հիսուսի ուսուցանած պարզ

ճշմարտությունների փոխարեն ուսուցանում էին գաղափարներ հին հեթանոսական կամ Հրեական հավատներից: Ոմանք էլ բացեիցաց ըմբոստացան: Բացի դա, Եկեղեցու անդամները դրսից հալածանքների էին ենթարկվում: Եկեղեցու անդամներին տանջում էին և սպանում իրենց համոզմունքների համար: Մեկ առ մեկ Առաքյալները սպանվեցին կամ այլ կերպ վերցվեցին երկրի վրայից: Թուլության կամ ուրացության պատճառով առաքելական իշխանությունը և քահանայության բանալիները վերցվեցին երկրի վրայից: Կազմակերպությունը, որ Հիսուս Քրիստոսը հիմնել էր, այլևս գոյություն չուներ, և քաոս էր տիրում: Ավելի ու ավելի շատ սխալներ սողոսկեցին Եկեղեցու վարդապետության մեջ, և շուտով Եկեղեցին լիովին քայքայվեց: Այն ժամանակահատվածը, երբ ճշմարիտ Եկեղեցին այլևս գոյություն չուներ երկրի վրա, կոչվեց Մեծ Ուրացություն:

Շուտով հեթանոսական համոզմունքները սկսեցին գերիշխել Քրիստոնյաների մտածելակերպում: Հռոմեական կայսրը ընդունեց այդ կեղծ Քրիստոնեությունը որպես պետական կրոն: Այդ եկեղեցին մեծապես տարբերվում էր Հիսուսի կազմակերպած եկեղեցուց: Այն ուսուցանում էր, որ Աստված անձև և աներևույթ էակ է:

Այդ մարդիկ դադարեցին ընկալել մարդկանց հանդեպ Աստծո սերը: Նրանք չգիտեին, որ մենք Նրա զավակներն ենք: Նրանք չէին հասկանում կյանքի իմաստը: Շատ արարողություններ փոխվեցին, որովհետև այլևս քահանայություն և հայտնություն չկար երկրի վրա:

Կայսրն էր ընտրում իր ղեկավարներին և երբեմն նրանց կոչում էր այն նույն պաշտոններով, որոնք կրում էին Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցու քահանայության ղեկավարները: Չկային Աստծո զորությամբ օժտված Առաքյալներ կամ քահանայության այլ ղեկավարներ, չկային նաև հոգևոր պարգևներ: Եսայիա մարգարեն կանխատեսել էր այդ վիճակը, մարգարեանալով. «Երկիրը պղծուած է լինելու իր բնակիչների տակին, որովհետև օրենքները զանց են արել, պատվիրանքը՝ փոխել, հավիտենական ուխտը՝ խափանել» (Եսայիա ԻԴ.5):

Դա այլևս Հիսուս Քրիստոսի Եկեղեցին չէր, դա մարդկանց եկեղեցին էր: Նույնիսկ անունն էր փոխվել: Ամերիկաներում ևս ուրացություն եղավ (տես 4 Նեփի):

Վերականգնում էր կանխատեսվել

- Հին և Նոր Կտակարանների ո՞ր մարգարեություններն են կանխատեսել Վերականգնումը:

Աստված կանխատեսել էր Ուրացությունը և պատրաստել էր ավետարանի վերականգնումը: Պետրոս Առաքյալը խոսեց այս մասին Հրեաների հետ. «Նա ուղարկեց առաջուց ձեզ համար քարոզուած Հիսուս Քրիստոսին. Որին երկինքը պետք է ընդունի, մինչև այն ամեն բաների հաստատուելու ժամանակները, որոնց համար խոսեց Աստուած իր բոլոր սուրբ մարգարեների բերանովը հավիտենից հետէ» (Գործք Գ.20–21):

Հովհաննես Հայտնիչը նույնպես կանխատեսել էր այն ժամանակը, երբ ավետարանը կվերականգնվի: Նա ասաց. «Եվ տեսա մի ուրիշ հրեշտակ թռչելիս երկնքի մեջ, որ հավիտենական ավետիք ուներ, որ ավետարաներ երկրի վրա բնակողներին. և ամեն ազգի և ցեղի և լեզուի և ժողովրդի» (Հայտնություն ԺԴ.6):

- Ինչո՞ւ էր Վերականգնումը անհրաժեշտ:
- Մտածեք այն օրհնությունների մասին, որոնք ստացել եք երկրի վրա Հիսուս Քրիստոսի Եկեղեցու վերականգնման շնորհիվ:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Եփեսացիս Բ.19 (անդամները կոչվեցին Սրբեր)
- Ա Կորնթացիս ԺԲ.12–31 (Եկեղեցին նման է մարմնի)
- Ղուկաս Ժ.1; Գործք ԺԴ.23; Տիտոս Ա.7; Ա Տիմոթեոս Բ.7 (Եկեղեցու պաշտոնյաների բնորոշումը)
- Հովհաննես Ը.26–29 (Հայրը սովորեցնում է Հիսուսին)
- Ղուկաս Թ.1; Հակոբոս Ա.17; Ե.4–15 (հոգևոր պարգևներ)
- Մոսիա 27.13 (զանցանքի արդյունքում ուրացություն է գալիս)

- Բ Պետրոս Բ.1; Մատթեոս ԻԴ.9–12; Հովհաննես ԺԶ.1–3; Ամովս 8.11; Բ Թեսաղոնիկեցիս Բ.3–4 (Ուրացություն է կանխատեսվում)
- Դանիել Բ.44–45; Մատթեոս ԻԴ.14; Գործք Գ.19–21; Միքիա Դ.1; Եսայիա Բ.2–4 (Վերականգնում է կանխատեսվում)

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին այսօր

Գլուխ 17

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերցվեց երկրի վրայից

- Ինչո՞ւ Փրկչի մահից ու Հարությունից շատ չանցած Հիսուս Քրիստոսի Եկեղեցին վերցվեց երկրի վրայից։

Երբ Հիսուսն ապրում էր երկրի վրա, Նա հաստատեց Իր Եկեղեցին՝ միակ ճշմարիտ Եկեղեցին։ Նա կազմակերպեց Իր Եկեղեցին, որպեսզի ավետարանի ճշմարտություններն ուսուցանվեն բոլոր մարդկանց և ավետարանի արարողությունները ճիշտ իշխանությամբ սպասավորվեն։ Այս կազմակերպության միջոցով Քրիստոսը կարողացավ փրկության օրհնությունները բերել մարդկությանը։

Փրկչի երկինք համբարձվելուց հետո, մարդիկ փոխեցին արարողություններն ու վարդապետությունները, որ Նա և Իր Առաքյալներն էին հաստատել։ Ուրացության պատճառով, ուղղակի հայտնություն չէր գալիս Աստծուց։ Ճշմարիտ Եկեղեցին այլևս երկրի վրա չէր։ Մարդիկ տարբեր եկեղեցիներ կազմակերպեցին, որոնք պնդում էին, թե ճշմարիտ են, սակայն հակասող վարդապետություններ էին ուսուցանում։ Կրոնի առումով համատարած քաոս էր և վիճաբանություններ էին տեղի ունենում։ Տերը կանխատեսել էր ուրացության այս իրավիճակը, ասելով, որ կլինի «սով երկրի վրա, ոչ թե հացի սով և ոչ ջրի ծարավ, այլ Տիրոջ խոսքը լսելու։ . . . Նրանք պիտի ման գան Տիրոջ խոսքը . . ., և պիտի չգտնեն» (Ամովս Ը.11–12)։

- Ինչպե՞ս է Ամովս Ը.11–12-ում ներկայացված սովը ազդում մարդկանց վրա։

Տերը խոստացավ վերականգնել Իր ճշմարիտ Եկեղեցին

• Նշեք աշխարհում ի՞նչ պայմաններ կային, որոնք ուղի պատրաստեցին ավետարանի Վերականգնման համար:

Փրկիչը խոստացավ վերջին օրերին վերականգնել Իր Եկեղեցին: Նա ասաց. «Ես այսուհետև զարմանալի բաներ եմ անելու այս ժողովրդի հետ՝ զարմանալիք և զարմանք» (Եսայիա ԻԹ.14):

Երկար տարիներ մարդիկ հոգևոր խավարի մեջ էին ապրում: Քրիստոսից 1700 տարի հետո մարդիկ ավելի ու ավելի էին հետաքրքրություն ցուցաբերում Աստծո և կրոնի վերաբերյալ ճշմարտությունը իմանալու համար: Նրանցից ոմանք հասկանում էին, որ Հիսուսի ուսուցանած ավետարանը այլևս երկրի վրա չէ: Ոմանք գիտակցում էին, որ հայտնություն չի գալիս և ճշմարիտ իշխանություն չկա, և Քրիստոսի կազմակերպած Եկեղեցին այլևս երկրի վրա չէ: Հիսուս Քրիստոսի Եկեղեցին երկրի վրա վերականգնելու ժամանակը եկել էր:

• Ինչպե՞ս է ավետարանի լրիվության Վերականգնումը «զարմանալի գործ»:

Նոր Հայտնություն Աստծուց

• Երբ Ջոզեֆ Սմիթը ստացավ իր Առաջին Տեսիլքը, ի՞նչ սովորեց Աստծո մասին:

1820թ. գարնանը աշխարհի պատմության մեջ տեղի ունեցավ ամենանշանակալից իրադարձություններից մեկը: Ժամանակը եկել էր զարմանալի աշխատանքի և զարմանալիքի, որի մասին Տերը խոսել էր: Ջոզեֆ Սմիթը լինելով պատանի, ցանկանում էր իմանալ, թե բոլոր եկեղեցիներից որն էր Հիսուս Քրիստոսի ճշմարիտ Եկեղեցին: Նա գնաց մոտակա անտառը և խոնարհ ու վճռական աղոթեց իր Երկնային Հորը՝ խնդրելով ցույց տալ, թե որ եկեղեցուն պետք է միանա: Այդ առավոտ զարմանալի բան տեղի ունեցավ: Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսը հայտնվեցին Ջոզեֆ Սմիթին: Փրկիչն ասաց նրան, որ չմիանա ոչ մի եկեղեցու, քանի որ ճշմարիտ Եկեղեցին երկրի վրա չէր: Նա նաև ասաց, որ գոյություն ունեցող եկեղեցիների դրույթները «զարշելի էին իր աչքում» (Ջոզեֆ

Սմիթ—Պատմություն 1.19; տես նաև հատվածներ 7–18, 20)։ Այդ դեպքից հետո, կրկին ուղղակի հայտնություն եղավ երկնքից։ Տերը նոր մարգարե էր ընտրել։ Այդ պահից ի վեր երկինքը չի փակվել։ Հայտնությունը շարունակվում է մինչ այսօր Իր ընտրյալ մարգարեների միջոցով։ Ջոզեֆը պետք է օգներ վերականգնել Հիսուս Քրիստոսի ճշմարիտ ավետարանը։

- Ինչո՞ւ էր Առաջին Տեսիլքը աշխարհի պատմության ամենակարևոր իրադարձություններից մեկը։

Աստվածային իշխանությունը վերականգնվեց

- Ինչո՞ւ էր անհրաժեշտ Ահարոնյան և Մելքիսեդեկյան Քահանայությունների վերականգնումը։

Ավետարանը վերականգնելիս Աստված կրկին քահանայությունը տվեց մարդկանց։ 1829թ. Հովհաննես Մկրտիչը եկավ, որպեսզի շնորհի Ահարոնյան Քահանայությունը Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին (տես ՎևՈւ 13; 27.8)։ Պետրոսը, Հակոբոսը և Հովհաննեսը, որոնք հնում Եկեղեցու նախագահություններն էին, եկան և Ջոզեֆ Սմիթին և Օլիվեր Քաուդերիին շնորհեցին Մելքիսեդեկյան Քահանայությունը և Աստծո արքայության բանալիները (տես ՎևՈւ 27.12–13)։ Հետագայում, քահանայության հավելյալ բանալիներ վերականգնվեցին երկնային սուրհանդակների միջոցով, որոնք էին՝ Մովսեսը, Եղիասը և Եղիան (տես ՎևՈւ 110.11–16)։ Վերականգնումով քահանայությունը վերադարձվեց երկիր։ Նրանք, ովքեր այսօր կրում են այս քահանայությունը, իշխանություն ունեն կատարելու, օրինակ մկրտության արարողությունը։ Նրանք նաև իշխանություն ունեն ղեկավարելու Տիրոջ արքայությունը երկրի վրա։

Քրիստոսի Եկեղեցին կրկին կազմակերպվեց

- Այդ իրադարձությունների արդյունքում Եկեղեցին կրկին կազմակերպվեց երկրի վրա։

1830թ. ապրիլի 6-ին Փրկիչը կրկին ղեկավարեց երկրի վրա Իր Եկեղեցու կազմակերպումը (տես ՎևՈւ 20.1)։ Նր ա Եկեղեցին կոչվում է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցի

Ուսուցիչներին. Վկայություն բերելը հրավիրում է Հոգին։ Որպես այս դասի մաս, վկայություն բերեք Վերականգնման մասին և մյուսներին էլ վկայելու հնարավորություն տվեք։

(տես ՎևՈւ 115.4)։ Քրիստոսը Իր Եկեղեցու գլուխն է, ճիշտ ինչպես հին ժամանակներում էր։ Տերն ասել է, որ սա «միակ ճշմարիտ և կենդանի եկեղեցին է ողջ երկրի երեսի վրա, որը, ես՝ Տերս, հավանում եմ» (ՎևՈւ 1.30)։

Ջոզեֆ Սմիթը հաստատվեց որպես Եկեղեցու մարգարե և «առաջին երեց» (տես ՎևՈւ 20.2–4)։ Ավելի ուշ Առաջին Նախագահությունը կազմակերպվեց, և նա հաստատվեց որպես Նախագահ։ Երբ Եկեղեցին առաջին անգամ կազմակերպվեց, միայն հիմնական կմախքը հիմնվեց։ Եկեղեցու աճին համընթաց կազմակերպությունը պետք է զարգանար։

Եկեղեցին կազմակերպվեց միևնույն պաշտոններով, որոնք կային հին Եկեղեցում։ Այդ կազմակերպության կազմում էին առաքյալները, մարգարեները, յոթանասունականները, ավետարանիչները (հայրապետերը), հովիվները (նախագահող պաշտոնյաները), քահանայապետերը, երեցները, եպիսկոպոսները, քահանաները, ուսուցիչները և սարկավագները։ Այդ նույն պաշտոնները կան Նրա Եկեղեցում այսօր (տես Հավատո Հանգանակ 1.6)։

Մարգարեն, որը գործում է Տիրոջ ղեկավարության ներքո, ղեկավարում է Եկեղեցին։ Այս մարգարեն նաև Եկեղեցու Նախագահն է։ Նա կրում է ողջ իշխանությունը, որն անհրաժեշտ է Տիրոջ աշխատանքը երկրի վրա ղեկավարելու համար (տես ՎևՈւ 107.65, 91)։ Երկու խորհրդականները աջակցում են Նախագահին։ Տասներկու Առաքյալները, որոնք Հիսուս Քրիստոսի անվան հատուկ վկաներն են, ուսուցանում են ավետարանը և Եկեղեցու աշխատանքը համակարգում աշխարհի բոլոր մասերում։ Եկեղեցու մյուս գերագույն պաշտոնյաները հատուկ հանձնարարություններով, որոնք են՝ Նախագահող Եպիսկոպոսությունը և Յոթանասունի Քվորումները, ծառայում են Առաջին Նախագահության և Տասներկուսի ղեկավարության ներքո։

Քահանայության պաշտոններն են՝ առաքյալները, յոթանասունականները, հայրապետերը, քահանայապետերը, եպիսկոպոսները, երեցները, քահանաները, ուսուցիչները և

սարկավագները: Սրանք այն նույն պաշտոններն են, որ գոյություն են ունեցել առաջին Եկեղեցում:

Եկեղեցին աճել է և այժմ ավելի մեծ է, քան Հիսուսի օրերում էր: Նրա աճի հետ մեկտեղ Տերը Եկեղեցու կազմակերպության հավելյալ միավորներ է հայտնել: Երբ Եկեղեցին լիովին կազմակերպվում է մեկ տարածքում, այն ունի տեղական բաժանմունքներ, որոնք կոչվում են ցցեր: Յուրաքանչյուր ցցում նախագահում են ցցի նախագահը և նրա երկու խորհրդականները: Ցիցն ունի 12 բարձրագույն խորհրդականներ, որոնք օգնում են կատարել Տիրոջ աշխատանքը տվյալ ցցում: Ցցում Մելքիսեդեկյան Քահանայության քվորումները կազմակերպվում են ցցի նախագահի ղեկավարության ներքո (տես այս գրքի գլուխ 14): Յուրաքանչյուր ցից բաժանված է փոքր տարածքների, որոնք կոչվում են ծխեր: Յուրաքանչյուր ծխում նախագահում են եպիսկոպոսն ու երկու խորհրդականները:

Աշխարհի այն տարածքներում, որտեղ Եկեղեցին իր զարգացման ընթացքում է, կան շրջաններ, որոնք նման են ցցերի: Շրջանները բաժանված են ճյուղեր կոչվող փոքր միավորների, որոնք նման են ծխերի:

Կարևորագույն ճշմարտություններ վերականգնվեցին

- Եկեղեցու Վերականգնման հետ միասին ի՞նչ կարևոր ճշմարտություններ են վերադարձել:

Այսօր Եկեղեցին ուսուցանում է նույն սկզբունքները և կատարում է նույն արարողությունները, որոնք կատարվել են Հիսուսի օրերին: Ավետարանի առաջնային սկզբունքները և արարողություններն են՝ հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս, ապաշխարություն, ընկղմամբ մկրտություն, և ձեռնադրում Սուրբ Հոգու պարգևի համար (տես Հավատո Հանգանակ 1.4): Երբ Եկեղեցին վերականգնվեց, այս թանկագին ճշմարտությունները ամբողջությամբ վերադարձան:

Աստծո պարգևի և զորության միջոցով, Ջոզեֆ Սմիթը թարգմանեց Մորմոնի Գիրքը, որը պարունակում է ավետարանի պարզ ու թանկ ճշմարտությունները: Շատ այլ հայտնություններ

հետևեցին և գրանցվեցին որպես Վարդապետություն և Ուխտեր և Թանկագին Մարգարիտ (տես այս գրքի գլուխ 10)։

Այլ կարևոր ճշմարտությունները, որ Տերը վերականգնեց, ներառում են հետևյալը.

1. Մեր Երկնային Հայրը իրական էակ է՝ շոշափելի, մսից և ոսկորից կատարյալ մարմնով, և Հիսուս Քրիստոսը՝ նույնպես։ Սուրբ Հոգին հոգեղեն անձնավորություն է։
2. Մենք գոյություն ենք ունեցել նախամահկանացու կյանքում որպես Աստծո հոգևոր զավակներ։
3. Քահանայությունն անհրաժեշտ է ավետարանի արարողությունները սպասավորելու համար։
4. Մենք կպատժվենք մեր անձնական մեղքերի և ոչ թե Ադամի գործած զանցանքի համար։
5. Երեխաները չպետք է մկրտվեն մինչև պատասխանատվության տարիքը (ութ տարեկանը)։
6. Երկնքում կան փառքի երեք թագավորություններ, և Տեր Հիսուս Քրիստոսի շնորհով, մարդիկ կհատուցվեն ըստ երկրի վրա կատարած իրենց գործերի և իրենց սրտերի ցանկությունների։
7. Ընտանեկան հարաբերությունները կարող են լինել հավերժական՝ քահանայության կնքող զորության շնորհիվ։
8. Արարողություններն ու ուխտերը անհրաժեշտ են փրկության համար և մատչելի են և ապրողների, և մահացածների համար։

• Ինչպե՞ս են այդ ճշմարտություններն ազդել ձեր և մյուսների վրա։

Հիսուս Քրիստոսի Եկեղեցին երբեք չի կործանվի

• Ո՞րն է Եկեղեցու առաքելությունը։

1830թ. վերականգնումից ի վեր Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամությունն աննախադեպ աճել է։ Անդամներ կան աշխարհի գրեթե բոլոր երկրներում։ Եկեղեցին կշարունակի աճել։ Քրիստոսն ասել է. «Արքայության այս Ավետարանը

պիտի քարոզվի ողջ աշխարհում, որպես վկայություն բոլոր ազգերի համար» (Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.31)։ Եկեղեցին այլևս չի վերցվի երկրի վրայից։ Նրա առաքելությունն է ճշմարտությունը հասցնել յուրաքանչյուր անձնավորության։ Հազարավոր տարիներ առաջ, Տերն ասել է, որ «մեկ թագավորություն է վերկացնելու, որ հավիտեանս չի ավերուիլ, և նորա տերությունը ուրիշ ազգի չի տրուիլ . . . և նա կմնա հավիտեանս» (Դանիել Բ.44)։

- Ինչպե՞ս եք դուք օգնել Աստծո արքայության աշխատանքին։ Ի՞նչ կարող եք անել այդ աշխատանքը շարունակելու համար։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Գործք Գ.19–21; Հայտնություն ԺԴ.6; Դանիել Բ.44–45; Եսայիա Բ.2–4; 2 Նեփի 3.6–15 (Վերականգնում է կանխագուշակվում)
- ՎևՈւ 110; 128.19–21; 133.36–39, 57–58 (Ավետարանի վերականգնումը)
- Եփեսացիս Բ.20 (Հիսուս Քրիստոսը Եկեղեցու անկյունաքարը)
- ՎևՈւ 20.38–67 (Եկեղեցու պաշտոնյաների պարտականությունները)
- Մատթեոս ԻԴ.14 (ավետարանը պետք է քարոզվի բոլոր ազգերին)

Հավատք առ Հիսուս Քրիստոս

Գլուխ 18

Ի՞նչ է հավատքը:

Առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքը ավետարանի առաջնային սկզբունքն է: Դա հոգևոր պարգև է, և այն անհրաժեշտ է մեր փրկության համար: Բենիամին թագավորը հայտարարել է. «Փրկությունը . . . ոչ մեկին չի գա, բացի դա լինի ապաշխարհության և առ Տեր Հիսուս Քրիստոս հավատքի միջոցով» (Մոսիա 3.12):

Հավատքը «հույս է բաների համար, որոնք տեսանելի չեն, որոնք ճշմարիտ են» (Ալմա 32.21; տես նաև Եբրայեցիս ԺԱ.1): Հավատքը գործի և զորության սկզբունք է, որը ուղղորդում է մեր ամենօրյա գործունեությունը:

Արդյոք կուսումնասիրեինք և կսովորեինք, եթե չհավատայինք, որ իմաստություն և գիտելիք կարող ենք ձեռք բերել: Արդյո՞ք ամեն օր կաշխատեինք, եթե հույս չունենայինք, որ դա անելով մենք ինչ-որ բանի կհասնենք: Արդյո՞ք հողագործը կտնկեր, եթե նա բերքահավաք չակնկալեր: Ամեն օր կատարելով գործեր, մենք հույս ունենք դրանց համար, չնայած չենք տեսնում վերջնական արդյունքը: Սա է հավատքը: (Տես Եբրայեցիս ԺԱ.3:)

Ուսուցիչներին. Այս գլուխը կազմված է չորս բաժիններից: Յուրաքանչյուր բաժնի ենթավերնագիրը հարց է հավատի մասին: Դուք կարող եք օգտագործել այդ հարցերը որպես ձեր դասի ուղեցույց: Եթե դասարանի չափը հնարավորություն է տալիս փոքր խմբերով քննարկումներ անցկացնել, կարող եք դասարանի անդամներին բաժանել երկու կամ չորս խմբի: Յուրաքանչյուր խմբին խնդրեք իրար մեջ բաժանել գլխի բաժինները: Այնուհետև խնդրեք յուրաքանչյուրին անել հետևյալը. (1) Կարդացեք ձեզ նշանակված բաժինը: (2) Գտեք սուրբ գրություններ, որոնք օգնում են պատասխանել տվյալ բաժնի ենթավերնագիր-հարցին: (3) Մտածեք տվյալ բաժնի հետ կապված ձեր անձնական փորձառությունների մասին: (4) Կիսվեք տվյալ բաժնի մասին ձեր մտքերով խմբի մյուս անդամների հետ:

Շատ սուրբ գրությունների պատմություններ պատմում են, թե որքան մեծ բաներ են կատարվել հավատքի միջոցով։

Նոյը հավատքով կառուցեց տապանը և փրկեց իր ընտանիքը ջրհեղեղից (տես Եբրայեցիս ԺԱ.7) Մովսեսը բաժանեց Կարմիր Ծովի ջրերը (տես Եբրայեցիս ԺԱ.29)։ Եղիան կրակ իջեցրեց երկնքից (տես Գ Թագավորաց ԺԸ.17–40)։ Նեփին սով աղերսեց (տես Հելաման 11.3–5)։ Նա նաև աղերսեց Տիրոջը սովը դադարեցնել (տես Հելաման 11.9–17)։ Ծովերը հանդարտվեցին, տեսիլքներ բացվեցին և աղոթքներ պատասխանվեցին, այդ ամենը հավատքի զորության շնորհիվ։

Ուշադիր ուսումնասիրելով սուրբ գրությունները, մենք սովորում ենք, որ հավատքը մեր հոգում ճշմարտության մասին ուժեղ համոզմունք է, որը դրդում է մեզ բարիք գործել։ Դա մեզ մոտ հարց է առաջացնում՝ ո՞ւմ պետք է մենք հավատանք։

- Խորհեք ձեր առօրյա գործերի մասին։ Ամեն օր ի՞նչ գործեր եք կատարում, որոնց արդյունքը չեք կարող տեսնել։ Ինչպե՞ս է հավատքը ձեզ գործի դրդում։

Ինչո՞ւ պետք է մենք առ Հիսուս Քրիստոս հավատք ունենանք։

Մենք պետք է մեր հավատքը կենտրոնացնենք Տեր Հիսուս Քրիստոսի վրա։

Առ Հիսուս Քրիստոս հավատք ունենալ նշանակում է այնպիսի վստահություն տածել Նրա հանդեպ, որ հնազանդվենք այն ամենին, ինչ Նա պատվիրում է։ Երբ մեր հավատքը Հիսուս Քրիստոսի վրա ենք դնում, Նրա հնազանդ աշակերտները դառնալով, Երկնային Հայրը կների մեր մեղքերն ու կպատրաստի մեզ Իր մոտ վերադառնալուն։

Պետրոս Առաքյալը քարոզում էր, որ «ուրիշ անուն էլ չկա երկնքի ներքև մարդկանց տրուած, որով կարելի լինի մեզ փրկուիլ» (Գործք Դ.12; տես նաև Մոսիա 3.17)։ Հակոբը սովորեցնում էր, որ մարդիկ պետք է ունենան «կատարյալ հավատք առ Իսրայելի Սուրբը [Հիսուս Քրիստոսը], այլապես նրանք չեն կարող փրկվել Աստծո արքայության մեջ» (2 Նեփի 9.23)։ Առ

Փրկիչ հավատքով և ապաշխարելով՝ մենք Նրա Քավությունը լիովին արդյունավետ ենք դարձնում մեր կյանքում: Հավատքով մենք նաև կարող ենք գայթակղություններին դիմակայելու ուժ ստանալ (տես Ալմա 37.33):

Մենք չենք կարող հավատ ունենալ առ Հիսուս Քրիստոս, եթե հավատ չունենք մեր Երկնային Հոր հանդեպ: Եթե մենք հավատում ենք Նրանց, մենք նաև հավատում ենք, որ Սուրբ Հոգին, որին Նրանք ուղարկել են, մեզ կուսուցանի ողջ ճշմարտությունը և կմխիթարի մեզ:

- Ինչպե՞ս կարող է առ Հիսուս Քրիստոս հավատքը ազդել մեզ վրա մեր Եկեղեցական կոչումներում, մեր ընտանեկան հարաբերություններում, մեր աշխատանքում: Ինչպե՞ս է առ Հիսուս Քրիստոս հավատքն ազդում հավերժական կյանք ունենալու մեր հույսի վրա:

Ինչպե՞ս կարող ենք մեծացնել մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս

Իմանալով, որ շատ օրինություններ են գալիս առ Հիսուս Քրիստոս հավատք գործադրելու արդյունքում, մենք պետք է ձգտենք ավելացնել Նրա հանդեպ ունեցած մեր հավատքը: Փրկիչն ասել է. «Եթե մանանեխի հատի չափ հավատք ունենաք, . . . ոչինչ անկարելի չի լինի ձեզ համար» (Մատթեոս ԺԷ.20): Մանանեխի սերմը շատ փոքր է, սակայն այն աճում, մեծ ծառ է դառնում:

Ինչպե՞ս կարող ենք մեծացնել մեր հավատքը: Նույն կերպ, ինչպես որ ավելացնում կամ զարգացնում ենք այլ ունակություններ: Ինչպե՞ս ենք զարգացնում փայտի վրա փորագրելու, հյուսելու, ներկելու, խոհարարական, բրուտագործական կամ որևէ երաժշտական գործիքի վրա նվագելու ունակությունները: Մենք սովորում, վարժվում և աշխատում ենք այդ ուղղությամբ: Այդպիսով մենք բարելավում ենք մեր ունակությունները: Նույնը վերաբերում է հավատքին: Եթե ցանկանում ենք մեծացնել մեր հավատքն առ Հիսուս Քրիստոս, մենք պետք է աշխատենք այդ ուղղությամբ: Ալմա մարգարեն Աստծո խոսքը համեմատում է սերմի հետ, որը պետք է հավատքով սնուցվի.

«Բայց ահա, եթե դուք արթնացնեք և զարթնեցնեք ձեր ունակությունները, մինչև անգամ իմ խոսքերի վրա մի փորձարկմամբ, և գործադրեք հավատքի մի մասնիկ, այո, նույնիսկ եթե դուք չեք կարող ավելին, քան ցանկանալ հավատալ, թողեք այդ ցանկությունը գործի ձեր մեջ, մինչև որ դուք հավատաք, այնպես որ դուք կարողանաք տեղ տալ իմ խոսքերի մի մասին։

Այժմ, մենք կհամեմատենք խոսքը սերմի հետ։ Այսպիսով, եթե դուք տեղ տաք, որ մի սերմ ցանվի ձեր սրտում, ահա, եթե այն լինի մի ճշմարիտ սերմ, կամ մի լավ սերմ, եթե դուք դուրս չգցեք այն ձեր անհավատությամբ, այնպես որ դուք չդիմադրեք Տիրոջ Հոգուն, ահա, այն կսկսի ուռչել ձեր կրծքում. և երբ դուք զգաք այդ ուռչելու շարժումները, դուք կսկսեք ասել ինքներդ ձեր մեջ. Պետք է որ անպայման սա լավ սերմ լինի կամ՝ խոսքը լավն է, քանզի այն սկսում է մեծացնել իմ հոգին. այո, այն սկսում է լուսավորել իմ հասկացողությունը։ . . .

Արդ, ահա, մի՞թե սա չի մեծացնի ձեր հավատքը» (Ալմա 32.27–29)։

Այսպիսով, մենք կարող ենք մեծացնել առ Աստված մեր հավատքը՝ գործելով Նրա հանդեպ հավատք ունենալու *ցանկությամբ*։

Մենք կարող ենք նաև մեծացնել մեր հավատքը՝ աղոթելով Երկնային Հորը մեր հույսերի, ցանկությունների և կարիքների համար (տես Ալմա 34.17–26)։ Բայց մենք չպետք է սահմանափակվենք միայն խնդրելով։ Սուրբ գրություններում ասվում է, որ «հավատքը, եթե գործ չունենա, ըստ ինքեան մեռած է» (Հակոբոս Բ.17)։ Հետևյալ պատմությունը մի մարդու մասին է, որի հավատքը իր գործերով արտահայտվեց։

Այս մարդը ցանկանում էր ուսումնասիրել սուրբ գրությունները, սակայն նա կարդալ չգիտեր։ Նա աղոթեց Երկնային Հորը, որ օգնի իրեն կարդալ սովորել։ Որոշ ժամանակ անց մի ուսուցիչ եկավ այդ գյուղ, և նա խնդրեց այդ ուսուցչին օգնել իրեն։ Նա սովորեց տառերը։ Նա սովորեց հնչյուններն ու տառերը միմյանց կապելով բառեր կազմելը։ Շուտով նա պարզ բառեր էր կարդում։ Որքան շատ էր պարապում, այնքան շատ էր

սովորում: Նա շնորհակալություն հայտնեց Տիրոջը ուսուցչին ուղարկելու և իրեն կարդալ սովորեցնելու համար: Այդ մարդը մեծացրեց իր հավատքը, հեզությունը և գիտելիքն այն աստիճանի, որ ծառայեց Եկեղեցում որպես ճյուղի նախագահ:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է. «Հավատքի հետ պետք է լինեն գործեր: Որքան անմիտ է Տիրոջը խնդրել մեզ գիտելիք *տալ*, սակայն որքան իմաստուն է Տիրոջ օգնությունը խնդրել գիտելիք ձեռք բերելու, գիտելիքի բազմակողմանի ուսումնասիրության, հստակ մտածելակերպի և սովորածը պահպանելու համար» (*Faith Precedes the Miracle* [1972], 205; շեղագրումն ավելացված է):

Հավատքը ներառում է՝ մեր ուժերի սահմանում աշխատել իրականացնել այն, ինչի համար մենք հույս ունենք և աղոթում ենք: Նախագահ Քիմբալն ասել է. «Հավատքով մենք սերմ ենք տնկում և շուտով տեսնում ենք ծաղկելու հրաշքը: Մարդիկ հաճախ չեն հասկացել և ետ են շրջել այդ ընթացքը»: Նա շարունակում է բացատրելով, որ մեզանից շատերը ցանկանում են առողջ և ուժեղ լինել, սակայն չեն պահում առողջության օրենքները: Մենք ցանկանում ենք բարգավաճել, սակայն չենք վճարում մեր տասանորդը: Մենք ցանկանում ենք մոտ լինել Տիրոջը, սակայն ծոմ չենք պահում և չենք աղոթում: Մենք ցանկանում ենք, որ անձրև գա իր ժամանակին և խաղաղություն տիրի երկրում, սակայն սուրբ չենք պահում Կիրակին և չենք պահում Տիրոջ օրենքները: (Տես *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 142:)

Մեր հավատքն ավելացնելու համար կարևոր է, որ լսենք և ուսումնասիրենք Տիրոջ խոսքը: Մենք լսում ենք Տիրոջ խոսքը մեր Եկեղեցու հավաքներին: Մենք կարող ենք ուսումնասիրել Նրա խոսքը սուրբ գրություններում: «Եվ քանի որ բոլորը չէ, որ հավատք ունեն, ջանասիրաբար փնտրեք և իմաստության խոսքեր ուսուցանեք միմյանց. այո՛, իմաստության խոսքեր փնտրեք լավագույն գրքերից. ուսում փնտրեք, այսինքն՝ ուսումնասիրելով և նաև հավատքով» (ՎԵՈՒ 88.118):

• Ի՞նչ կապ եք տեսնում մեր հավատքի և մեր գործերի միջև:

Նշեք հավատքի արդյունքում եկող մի քանի օրհնություններ:

Հավատքի պարգևով հրաշքներ են գործվում, հրեշտակներ են հայտնվում, Հոգու այլ պարգևներ են տրվում, աղոթքներ են պատասխանվում, և մարդիկ դառնում են Աստծո որդիներ (տես Մորոնի 7.25–26, 36–37):

«Հավատքի հետ միասին գալիս են . . . առաքյալներ, մարգարեներ, ավետարանիչներ, հովիվներ, ուսուցիչներ, պարգևներ, իմաստություն, գիտելիք, հրաշքներ, բուժումներ, լեզուներ, լեզուների թարգմանություն և այլն: Այս ամենը գալիս է, երբ հավատք է լինում երկրի վրա, իսկ երբ հավատք չի լինում երկրի վրա, այդ ամենը անհետանում է. քանզի դրանք հավատքի արդյունք են: . . . Եվ նա, ով հավատք ունի, հավատքով ձեռք է բերում ամեն անհրաժեշտ գիտելիք և իմաստություն, մինչև ճանաչում է Աստծուն և Տեր Հիսուս Քրիստոսին, որին նա ուղարկել է, որին ճանաչելը հավերժական կյանք է» (*Lectures on Faith* [1985], 83):

- Նշեք սուրբ գրություններից մի քանի պատմություններ, որտեղ մարդիկ դարձել են ավելի ուժեղ, որովհետև նրանք հավատացել են Հիսուս Քրիստոսին: Ինչպե՞ս է դա արտահայտվել ձեր կյանքում:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Եբրայեցիս ԺԱ.; Ալմա 32 (հավատքի նկարագրությունը)
- Ելից ԺԴ.19–22 (Կարմիր ծովի ջրերի բաժանումը)
- Ծննդոց Զ–Ը (Նոյը և ջրհեղեղը)
- Մատթեոս Ը.5–33 (հիվանդը բժշկվեց, դիվահարը հանդարտվեց, հավատքի հրաշքներ)
- Մարկոս 5.25–34 (հավատքով բուժված)
- Հռովմեացիս Ժ.17 (հավատքը գալիս է Աստծո խոսքը լսելու արդյունքում)

Ապաշխարություն

Գլուխ 19

Մենք բոլորս պետք է ապաշխարենք

- Ի՞նչ է մեղքը: Մեզ վրա ի՞նչ ազդեցություն են թողնում մեր մեղքերը:

Հավատքն առ Հիսուս Քրիստոս տանում է մեզ դեպի ապաշխարություն: Աշխարհում Ադամի ժամանակից ի վեր ապաշխարելու կարիք կա: Տերը պատվիրեց Ադամին. «Ուսուցանեք ձեր երեխաներին, որ բոլոր մարդիկ, ամենուրեք, պետք է ապաշխարեն, այլապես նրանք ոչ մի կերպ չեն ժառանգի Աստծո արքայությունը, քանզի ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել այնտեղ, կամ բնակվել նրա ներկայության մեջ» (Մովսես 6.57):

Մենք երկիր ենք գալիս աճելու և առաջադիմելու նպատակով: Սա տևում է ողջ կյանքի ընթացքում: Կյանքի ընթացքում մենք բոլորս մեղանչում ենք (տես Հռովմեացիս Գ.23): Մենք բոլորս պետք է ապաշխարենք: Երբեմն մենք մեղանչում ենք չիմանալով, երբեմն մեր թուլության պատճառով, իսկ երբեմն էլ չցանկանալով հնազանդվել: Աստվածաշնչում մենք կարդում ենք, որ «երկրի վրա արդար մարդ չկա, որ բարի գործե և չմեղանչէ» (Ժողովող Է.20), և որ «եթե ասենք թե մեղք չունինք, մեր անձերը խաբում ենք և ճշմարտությունը չկա մեզանում» (Ա Հովհաննես Ա.8):

Ի՞նչ է մեղքը: Հակոբոսն ասել է. «Ով որ բարին գիտենա և չանե, նորա համար մեղք է» (Հակոբոս Դ.17): Հովհաննեսը մեղքը նկարագրել է որպես «ամեն անիրավություն» (Ա Հովհաննես Ե.17) և «անօրենություն» (Ա Հովհաննես Գ.4):

Սհա թե ինչու է Տերն ասել. «Բոլոր մարդիկ, ամենուրեք, պետք է աապաշխարեն» (Մովսես 6.57): Հիսուս Քրիստոսից բացի, որը կատարյալ կյանքով ապրեց, երկրի վրա ապրած բոլոր

մարդիկ մեղանչել են: Մեր Երկնային Հայրն Իր մեծ սիրով մեր մեղքերից ապաշխարելու այս հնարավորությունը տվեց:

Ապաշխարությամբ մեր մեղքերից ազատվելը

• Ի՞նչ է ապաշխարությունը:

Ապաշխարությունը մեզ տրվել է, որպեսզի ազատվենք մեր մեղքերից և դրանց համար ներում ստանանք: Մեղքերը դանդաղեցնում են մեր հոգևոր առաջընթացը և կարող են նույնիսկ դադարեցնել այն: Ապաշխարությունը մեզ համար կրկին հնարավոր է դարձնում՝ մեր հոգևոր աճը և զարգացումը:

Ապաշխարելու արտոնությունը հնարավոր դարձավ Հիսուս Քրիստոսի Քավությամբ: Թեև մենք լիովին չենք հասկանում, Հիսուսը վճարեց մեր մեղքերի համար: Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն այդ մասին ասել է.

«Ես ցավ եմ զգացել, դուք ցավ եք զգացել, երբեմն դա բավականին սուր ցավ է եղել, սակայն ես չեմ կարող պատկերացնել ցավ . . . որի ժամանակ արյունը քրտինքի պես դուրս է գալիս մարմնից: Սա ինչ-որ սոսկալի, չափազանց սոսկալի բան է: . . .

. . . *Երբևէ չի եղել երկրի վրա ծնված մարդ, որը կարողանար դիմանալ այն բեռի տակ, որ Աստծո Որդու վրա էր, երբ նա կրում էր իմ և ձեր մեղքերը* և մեզ համար հնարավոր էր դարձնում մեղքերից խույս տալը» (*Doctrines of Salvation,* sel. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 1:130–31; շեղագիրը բնագրից):

Երբեմն ապաշխարությունը մեծ քաջություն, մեծ ուժ, շատ արցունքներ, անդադար աղոթքներ և Տիրոջ պատվիրաններով ապրելու անխոնջ ջանքեր է պահանջում:

Ապաշխարության սկզբունքները

• Որո՞նք են ապաշխարության սկզբունքները:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը հայտարարել է. «Չկա *ապաշխարելու արքայական ուղի,* ներման արտոնված ճանապարհ:

Ուսուցիչներին. Ցանկ կազմելը կարող է շարժել սովորողների հետաքրքրությունը և օգնել կենտրոնացնել նրանց ուշադրությունը: Դասարանի կամ ընտանիքի անդամների հետ ապաշխարության սկզբունքները քննարկելիս դուք կարող եք խնդրել որևէ մեկին գրատախտակի կամ մեծ թղթի վրա գրել սկզբունքները:

Ամեն ոք պետք է գնա նույն ճանապարհով՝ լինի հարուստ թե աղքատ, կրթված թե անկիրթ, բարձրահասակ թե կարճահասակ, արքայազն թե մուրացկան, թագավոր թե հասարակ մարդ» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 38; շեղագիրը բնագրից)։

Մենք պետք է գիտակցենք մեր մեղքերը

Ապաշխարելու համար մենք պետք է ընդունենք, որ մեղանչել ենք։ Եթե չընդունենք դա, մենք չենք կարող ապաշխարել։

Իր որդի Կորիանթոնին, որը հավատարիմ չէր իր միսիոներական կոչման մեջ և ծանր մեղքեր էր գործել, Ալման խորհուրդ տվեց. «Թող քո մեղքերը խոռվեն քեզ այնպիսի մի խոռվքով, որը կբերի քեզ վար՝ դեպի ապաշխարություն։ . . . Մի՛ ձգտիր արդարացնել ինքդ քեզ՝ նվազագույն իսկ չափով» (Ալմա 42.29–30)։ Սուրբ գրությունները խորհուրդ են տալիս մեզ այսուհետ չարդարացնել մեր մեղսավոր ընթացքը (տես Ղուկաս ԺԶ.15–16)։

Մենք չենք կարող ինքներս մեզանից կամ Տիրոջից թաքցնել մեր կյանքի որևէ գործողություն։

Մենք պետք է վշտանանք մեր մեղքերի համար

Բացի մեր մեղքերը ընդունելուց, մենք պետք է անկեղծորեն վշտանանք մեր կատարածի համար։ Մենք պետք է զգանք, որ մեր մեղքերը սոսկալի են։ Մենք պետք է ցանկանանք թողնել դրանք։ Սուրբ գրություններն ասում են մեզ. «Բոլոր նրանք, ովքեր իրենց խոնարհեցնում են Աստծո առաջ և ցանկանում են մկրտվել, և առաջ են գալիս կոտրված սրտով և փշրված հոգով, և . . . ճշմարտապես ապաշխարել են իրենց բոլոր մեղքերից . . . մկրտությամբ պիտի ընդունվեն իր եկեղեցին» (ՎևՈւ 20.37)։

- Ուսումնասիրեք Բ Կորնթացիս Է.9–10 և Մորմոն 2.10–14։ Ձեր կարծիքով, ինչպե՞ս է «աստվածային տրտմությունը» տարբերվում զղջումից։

Մենք պետք է թողնենք մեր մեղքերը

Մեր անկեղծ վշտանալը պետք է հանգեցնի մեր մեղքերը թողնելուն։ Եթե մենք գողացել ենք ինչ-որ բան, մենք պետք է այլևս

չգողանանք: Եթե մենք ստել ենք, մենք այլևս չպետք է ստենք: Եթե մենք շնություն ենք գործել, մենք պետք է դադարեցնենք դա: Մարգարե Ջոզեֆ Սմիթին Տերը հայտնել է. «Այս բանով դուք կարող եք իմանալ, թե արդյոք մարդն ապաշխարում է իր մեղքերից,– ահա նա կխոստովանի և կթողնի դրանք» (ՎևՈւ 58.43):

Մենք պետք է խոստովանենք մեր մեղքերը

Մեր մեղքերը խոստովանելը շատ կարևոր է: Տերը պատվիրել է մեզ՝ խոստովանել մեր մեղքերը: Խոստովանությունը թեթևացնում է մեղսագործի ծանր բեռը: Տերը խոստացել է. «Ես՝ Տերս, ներում եմ մեղքերը և ողորմած եմ նրանց հանդեպ, ովքեր խոնարհ սրտով խոստովանում են իրենց մեղքերը» (ՎևՈւ 61.2):

Մենք պետք է Տիրոջը խոստովանենք մեր բոլոր մեղքերը: Ինչպես նաև, մենք պետք է խոստովանենք մեր ծանր մեղքերը, ինչպիսիք են՝ շնությունը, պոռնկությունը, արվամոլությունը, կնոջ կամ երեխայի հանդեպ բռնությունը, և թմրանյութերի վաճառքն ու օգտագործումը, որը կարող է ազդել Եկեղեցում մեր դիրքի, քահանայության պատշաճ իշխանություն ունենալու վրա: Եթե մեղանչել ենք մեկ ուրիշի հանդեպ, մենք պետք է խոստովանենք այդ անձնավորությանը, որին վնաս ենք պատճառել: Որոշ ծանր մեղքեր կապված են միայն մեր և Տիրոջ հետ: Դրանք պետք է առանձին խոստովանել Տիրոջը:

Մենք պետք է փոխհատուցենք

Ապաշխարության մաս է փոխհատուցումը: Դա նշանակում է, որ որքան հնարավոր է մենք պետք է շտկենք մեր կատարած սխալը: Օրինակ, գողը պետք է վերադարձնի գողությունը: Ստախոսը պետք է ճշմարտությունը հայտնի: Բամբասողը, որը ինչ-որ մեկին զրպարտել է, պետք է աշխատի վերականգնել այդ մարդու բարի համբավը: Այդ ամենը անելով, Աստված չի հիշի մեր մեղքերը, երբ մենք դատաստանի առաջ կանգնենք (տես Եզեկիել ԼԳ.15–16):

Մենք պետք է ներենք մյուսներին

Ապաշխարության կարևոր մասն է՝ ներել նրանց, ովքեր մեղանչել են մեր հանդեպ: Տերը չի ների մեզ, եթե մեր սրտերը

լիովին չմաքրվեն մյուսների հանդեպ ունեցած ողջ ատելությունից և վատ զգացողություններից (տես 3 Նեփի 13.14–15): «Ուստի, ես ասում եմ ձեզ, որ դուք պետք է ներեք միմյանց. քանզի, ով իր եղբորը չի ներում նրա զանցանքները, դատապարտված կանգնած է Տիրոջ առաջ. քանզի նրա մեջ ավելի մեծ մեղք է մնում» (ՎևՈւ 64.9):

Մենք պետք է պահենք Աստծո պատվիրանները

Որպեսզի մեր ապաշխարությունը ամբողջական լինի, մենք պետք է պահենք Տիրոջ պատվիրանները (տես ՎևՈւ 1.32): Մենք լիովին չենք ապաշխարում, եթե չենք վճարում մեր տասանորդը, սուրբ չենք պահում Կիրակին կամ չենք հնազանդվում Իմաստության Խոսքին: Մենք ապաշխարած չենք լինի, եթե չհաստատենք Եկեղեցու իշխանություններին և չսիրենք Տիրոջը և մեր մերձավորներին: Եթե չենք աղոթում և բարյացկամ չենք ուրիշների հետ, մենք անշուշտ ապաշխարած չենք լինի: Երբ մենք ապաշխարում ենք, մեր կյանքը փոխվում է:

Նախագահ Քիմբալը ասել է. «Նախ, մարդը ապաշխարում է: Դրանից հետո, նա պետք է ապրի Տիրոջ պատվիրաններով, որպեսզի վերադառնա իր նախկին դիրքին: Սա անհրաժեշտ է լիակատար ներում ապահովելու համար» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball,* 43):

- Ինչպե՞ս են այս բաժնի ուսմունքները տարբերվում այն կեղծ գաղափարներից, որ ապաշխարությունը հասարակ քայլերի կամ սահմանված գործողությունների կատարում է:

Ինչպես է ապաշխարությունն օգնում մեզ

- Ինչպե՞ս է ապաշխարությունն օգնում մեզ:

Ապաշխարելիս Հիսուս Քրիստոսի Քավությունը լիովին գործում է մեր կյանքում, և Տերը ներում է մեր մեղքերը: Մենք ազատվում ենք մեր մեղքերից, և ուրախություն ենք գտնում:

Ալման պատմում է մեղսավոր անցյալից ապաշխարելու իր փորձից.

«Իմ հոգին ծայրաստիճան տակնուվրա էր եղել և պրկվել բոլոր իմ մեղքերից։

Այո, ես հիշեցի բոլոր իմ մեղքերը և անօրինությունները, որոնց համար ես տանջվում էի դժոխքի ցավերով. այո, ես տեսա, որ ես ապստամբել էի Աստծո դեմ, և որ ես չէի պահել նրա սուրբ պատվիրանները։

. . . Այնքան մեծ էին իմ անօրինությունները, որ միայն Աստծո ներկայության մեջ գալու միտքը պրկում էր իմ հոգին՝ աննկարագրելի սոսկումով։

. . . Եվ եղավ այնպես, որ երբ ես այսպես . . . մինչ ես տակնուվրա էի եղած իմ բազում մեղքերի հիշողությունից, ահա, ես հիշեցի նաև լսած լինելս՝ իմ հոր մարգարեանալը . . . մի Հիսուս Քրիստոսի, մի Աստծո Որդու գալստյան վերաբերյալ՝ քավելու համար աշխարհի մեղքերը։

Արդ, երբ դատողությունս որսաց այս միտքը, ես զգեցի իմ սրտում. Ո՜վ Հիսուս, դո՛ւ, Աստծո՛ Որդի, ողորմածություն ունեցիր ինձ վրա։ . . .

Եվ արդ, ահա, երբ ես մտածեցի այս, ես այլևս չկարողացա հիշել իմ ցավերը։ . . .

Եվ, Օ՜հ, ինչպիսի ուրախություն, և ինչ սքանչելի լույս ես տեսա. այո, իմ հոգին լցվեց ուրախությամբ՝ նույնքան սաստիկ, ինչպիսին իմ ցավն էր։

. . . Չէր կարող լինել ոչինչ այնպես ուժգին և քաղցր, ինչպիսին իմ ուրախությունն էր» (Ալմա 36.12–14, 17–21)։

- Ինչպե՞ս ապաշխարությունն ու ներումը Ալմային ուրախություն պարգևեց։

Մեր ապաշխարությունը հետաձգելու վտանգները

- Որո՞նք են մեր ապաշխարությունը հետաձգելու որոշ հնարավոր հետևանքները։

Մարգարեները հայտարարել են, որ «այս կյանքն է ժամանակը նախապատրաստվելու՝ հանդիպելու Աստծուն» (Ալմա 34.32)։ Մենք պետք է այժմ ապաշխարենք, ամեն օր։ Երբ առավոտյան

արթնանում ենք, մենք պետք է քննենք ինքներս մեզ, որպեսզի տեսնենք արդյոք Աստծո Հոգին մեզ հետ է: Գիշերը քնելուց առաջ, մենք պետք է վերանայենք այդ օրվա մեր գործերն ու խոսքերը, և խնդրենք Տիրոջը օգնել մեզ, որ տեսնենք այն բաները, որոնց համար մենք պետք է ապաշխարենք: Ամեն օր ապաշխարելով և խնդրելով Տիրոջը ներել մեր մեղքերը, մենք կմնանք կատարյալ դառնալու ուղու վրա: Ինչպես Ալմայի հետ տեղի ունեցավ, մեր երջանկությունն ու ուրախությունը կարող են լինել քաղցր և ուժգին:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Մատթեոս Թ.10–13; Ղուկաս ԺԳ.3; Եզեկիել ԺԸ.30 (ապաշխարել կամ կործանվել)
- Ալմա 7.21 (ոչ մի անմաքուր բան չի կարող բնակվել Աստծո ներկայության մեջ)
- Բ Կորնթացիս Է.9–10 (աստվածային տրտմություն)
- Մոսիա 4.10–12 (ապաշխարության տանող քայլերը)
- Եսայիա Ա.18; Մոսիա 26.28–32 (ապաշխարությունը ներում է բերում)
- ՎևՈւ 58.42 (մեղքերը այլևս չեն հիշվում)
- 2 Նեփի 9.23 (ապաշխարությունը կարևոր է փրկության համար)
- 2 Նեփի 2.21 (ապաշխարեք, քանի դեռ մարմնում եք)
- ՎևՈւ 19.15–20 (Տերը պատվիրել է մեզ ապաշխարել, որպեսզի Նրա պես չտառապենք)

Մկրտություն

Գլուխ 20

Մկրտվելու պատվիրանը

• Ինչո՞ւ մենք պետք է մկրտվենք:

Այսօր, ինչպեսև Հիսուսի օրերում, կան ավետարանի որոշակի սկզբունքներ և արարողակարգ,, որոնք մենք պետք է սովորենք և որոնց պիտի հնազանդվենք: Ավետարանի սկզբունքը ճշմարիտ համոզմունք է կամ ուսմունք: Արարողությունը ծես կամ հանդիսակարգ է: Ավետարանի առաջին երկու սկզբունքներն են՝ հավատք առ Տեր Հիսուս Քրիստոս և ապաշխարություն: Մկրտությունը ավետարանի առաջին արարողությունն է: Իր Առաքյալներին տրված Տիրոջ հրահանգներից մեկն էր. «Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք, նորանց մկրտելով Հոր և Որդու և Սուրբ Հոգու անունովը. Նորանց սովորեցնելով, որ ամեն ինչ որ ձեզ պատուիրեցի՝ պահեն» (Մատթեոս ԻԸ.19–20):

Մենք պետք է մկրտվենք մեր մեղքերի թողության համար

Երբ մեր հավատը դնում ենք Հիսուս Քրիստոսի վրա, ապաշխարում ենք և մկրտվում, մեր մեղքերը ներվում են Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ:

Սուրբ գրություններից մենք սովորում ենք, որ Հովհաննես Մկրտիչը «անապատում մկրտում էր, և ապաշխարության մրտություն քարոզում՝ մեղաց թողության համար» (Մարկոս Ա.4): Պետրոս Առաքյալն ուսուցանում էր. «Ապաշխարեցեք՝ և ձեզանից ամեն մեկը թող մկրտուի Հիսուս Քրիստոսի անունովը՝ մեղքերի թողության համար» (Գործք Բ.38): Պողոսի

Ուսուցիչներին. Օգտագործեք բաժնի սկզբում տրված հարցերը, որպեսզի քննարկում սկսեք և դասարանի կամ ընտանիքի անդամներին ուղղեք դեպի տեքստը՝ ավելի շատ տեղեկություն գտնելու համար: Օգտագործեք բաժնի վերջում տրված հարցերը, որպեսզի օգնեք դասարանի կամ ընտանիքի անդամներին խորհել ու քննարկել իրենց կարդացածի շուրջ և կիրառել այն իրենց կյանքում:

դարձի գալուց հետո, Անանիան ասաց նրան. «Վեր կաց մկրտուիր և քո մեղքերը լուա» (Գործք ԻԲ.16)։

Մենք պետք է մկրտվենք, որպեսզի Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամ դառնանք

«Բոլոր նրանք, ովքեր իրենց խոնարհեցնում են Աստծո առաջ և ցանկանում են մկրտվել, . . . որ . . . ճշմարտապես ապաշխարել են իրենց բոլոր մեղքերից . . . մկրտությամբ պիտի ընդունվեն իր եկեղեցին» (ՎևՈւ 20.37)։

Նախքան Սուրբ Հոգին ստանալը մենք պետք է մկրտվենք

Տերն ասաց. «Եթե դառնաս դեպի ինձ և . . . ապաշխարես քո բոլոր օրինազանցություններից և մկրտվես, այսինքն՝ ջրով, իմ Միածին Որդու անունով, . . . դու կստանաս Սուրբ Հոգու պարգևը» (Մովսես 6.52)։

Մենք պետք է մկրտվենք, որպեսզի հնազանդություն ցուցաբերենք

Հիսուս Քրիստոսն անմեղ էր, սակայն Նա մկրտվեց։ Նա ասաց, որ Իր մկրտությունը անհրաժեշտ էր, որ «ամեն արդարություն կատարվի» (Մատթեոս Գ.15)։ Նեփի մարգարեն բացատրել է, որ Տերն ասել է իրեն. «Հետևեք ինձ և արեք այն բաները, որոնք դուք տեսաք ինձ՝ անելիս . . . սրտի ողջ նվիրվածությամբ, գործելով ո՛չ կեղծավորություն, ո՛չ խաբեություն Աստծո առաջ, այլ իսկական վճռականությամբ, ապաշխարելով ձեր մեղքերից, վկայելով Հորը, որ դուք կամենում եք վերցնել ձեզ վրա Քրիստոսի անունը՝ մկրտվելով» (2 Նեփի 31.12–13)։

Մենք պետք է մկրտվենք, որպեսզի սելեստիալ արքայություն մտնենք

Հիսուսն ասել է. «Ով որ հավատում է ինձ և մկրտվում . . . պիտի ժառանգեն Աստծո արքայությունը։ Եվ ով որ չի հավատում ինձ և չի մկրտվում, նզովված պիտի լինի» (3 Նեփի 11.33–34)։ Մկրտությունը դարբաս է, որի միջով անցնելով կանգնում ենք սելեստիալ արքայություն տանող ուղու վրա (տես 2 Նեփի 31.17–18)։

Մկրտության ճիշտ ձևը

• Ինչպե՞ս մենք պետք է մկրտվենք։

Մկրտության միայն մեկ ճիշտ ձև գոյություն ունի։ Հիսուսը հայտնել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ մկրտելու համար քահանայության պատշաճ իշխանություն ունեցող մարդը «պետք է ջրի մեջ մտնի այն անձի հետ, որն իրեն ներկայացրել է մկրտության համար։ . . . Այնուհետև, նա պետք է ընկղմի նրան ջրի մեջ և կրկին դուրս բերի ջրից» (ՎևՈւ 20.73–74)։ Ընկղմումն անհրաժեշտ է։ Պողոս Առաքյալն ուսուցանել է, որ ջրի մեջ ընկղմվելը և կրկին ջրից դուրս գալը խորհրդանշում է մահը, թաղումն ու հարությունը։ Մկրտությունից հետո մենք նոր կյանք ենք սկսում։ Պողոսն ասել է.

«Չգիտե՞ք՝ թե քանիներս որ Հիսուս Քրիստոսով մկրտուեցանք՝ նորա մահվանը մկրտուեցանք։

Մկրտությունովը նորա հետ թաղուեցանք մահի մեջ. որ ինչպես Քրիստոսը Հոր փառքովը մեռելների միջից հարություն առավ, այնպես մենք էլ կյանքի նորոգության մեջ ման գանք։

Որովհետև եթե նորա մահի նմանությունովը նորա հետ տնկուեցանք, ապա նորա հարութեանն էլ նման կլինինք» (Հռովմեացիս Զ.3–5)։

Ընկղմամբ մկրտությունը մի մարդու կողմից, որը պատշաճ քահանայություն ունի, մկրտվելու միակ ճշմարիտ ձևն է։

• Ինչո՞ւ է մկրտություն կատարելու համար իշխանությունը կարևոր։

• Ինչպե՞ս է ընկղմամբ մկրտությունը նմանվում Փրկչի թաղմանը և Հարությանը։

Մկրտությունը պատասխանատվության տարիքում

• Ո՞վ պետք է մկրտվի։

Ամեն ոք, ում ութ տարեկանը լրացել է և ով պատասխանատու է իր արարքների համար, պետք է մկրտվի։ Որոշ եկեղեցիներ ուսուցանում են, որ փոքր երեխաները պետք է մկրտվեն։ Դա չի համապատասխանում Փրկչի ուսմունքներին։ Երբ Հիսուսը

խոսեց փոքր երեխաների հետ, Նա ասաց. «Այդպիսիներին է երկնքի արքայությունը» (Մատթեոս ԺԹ.14)։

Մորմոն մարգարեն ասաց, որ Աստծո առաջ ծաղր է փոքր երեխաներին մկրտելը, որովհետև նրանք չեն կարող մեղանչել։ Նույնկերպ, մկրտություն չի պահանջվում այն մարդկանցից, ովքեր մտավոր առումով անկարող են ճիշտը սխալից զատել (տես Մորոնի 8.9–22)։

Մնացած բոլոր մարդիկ պետք է մկրտվեն։ Մենք պետք է մկրտության արարողությունը ստանանք և հավատարիմ մնանք այդ ժամանակ կապած ուխտերին։

- Ի՞նչ կարող եք ասել ընկերոջը, որը հավատում է, որ նորածինները պետք է մկրտվեն։

Մկրտվելիս մենք ուխտեր ենք կապում

Շատ սուրբ գրություններ ուսուցանում են մկրտության մասին։ Այդ սուրբ գրություններից մեկում մարգարե Ալման ուսուցանեց, որ հավատքն ու ապաշխարությունը քայլեր են, որոնք պատրաստում են մեզ մկրտությանը։ Նա ուսուցանել է, որ երբ մկրտվում ենք, մենք ուխտ ենք կապում Տիրոջ հետ։ Մենք խոստանում ենք, որ կանենք որոշ բաներ, իսկ Աստված խոստանում է դրա դիմաց օրհնել մեզ։

Ալման բացատրել է, որ մենք պետք է փափագենք կոչվել Աստծո ժողովուրդ։ Մենք պետք է ցանկանանք օգնել և սփոփել միմյանց։ Մենք պետք է կանգնենք որպես Աստծո վկա բոլոր ժամանակներում, բոլոր բաներում և բոլոր վայրերում։ Երբ մենք անենք այդ ամենը և մկրտվենք, Աստված կների մեր մեղքերը։ Ալման ասել է մարդկանց, որոնք հավատում էին ավետարանի մասին նրա ուսմունքներին.

«Նայե՛ք, ահա Մորմոնի ջրերը։ . . . Եվ այժմ, քանի որ դուք փափագում եք գալ Աստծո հոտը և կոչվել նրա ժողովուրդը, . . . ի՞նչ ունեք դուք դեմ Տիրոջ անունով մկրտվելուն՝ որպես մի վկայություն նրա առջև, որ դուք մտել եք նրա հետ ուխտի մեջ, որ դուք կծառայեք նրան և կպահեք նրա պատվիրանները, որ նա կարողանա իր Հոգին ավելի առատորեն դուրս թափել ձեզ վրա» (Մոսիա 18.8, 10)։ Մարդիկ ուրախությունից

ծափահարեցին և ասացին, որ իրենք ցանկանում են մկրտվել: Ալման մկրտեց նրանց Մորմոնի ջրերում: (Տես Մոսիա 18.7–17:)

Ալման ուսուցանեց, որ երբ մկրտվում ենք, մենք ուխտ ենք կապում Տիրոջ հետ, որ

1. Կմտնենք Աստծո հոտը:
2. Կկրենք միմյանց բեռը:
3. Որպես Աստծո վկա կկանգնենք բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում:
4. Կծառայենք Աստծուն և կպահենք Նրա պատվիրանները:

Երբ մենք մկրտվում ենք և պահում ենք մկրտության ուխտերը, Տերը խոստանում է, որ

1. Կների մեր մեղքերը (տես Գործք Բ.38; ՎևՈւ 49.13):
2. Իր Հոգին ավելի առատորեն կթափի մեզ վրա (տես Մոսիա 18.10):
3. Կտա Սուրբ Հոգին, որ ամեն օր մեզ առաջնորդի և օգնի (տես Գործք Բ.38; ՎևՈւ 20.77):
4. Մեզ առաջ կբերի Առաջին Հարության ժամանակ (տես Մոսիա 18.9):
5. Մեզ հավերժական կյանք կտա (տես Մոսիա 18.9):

- Ձեր կարծիքով, ի՞նչ է նշանակում կրել միմյանց բեռը, կանգնել որպես Աստծո վկա բոլոր ժամանակներում և բոլոր վայրերում:

Մկրտությունը մեզ նոր սկիզբ է տալիս

Մկրտությունով մենք նոր կյանքի ճանապարհ ենք սկսում: Այդ պատճառով ենք մենք այն կոչում վերածնունդ: Հիսուսն ասել է, որ եթե չծնվենք ջրից ու Հոգուց, մենք չենք կարող մտնել Աստծո արքայությունը (տես Հովհաննես Գ.3–5): Այս սկզբունքը պարզորոշ բացատրվել է Ադամին.

«Քանի որ դուք աշխարհում ծնվել եք ջրով և արյունով և ոգով, որն արարել եմ ես, և այդպես փոշուց կենդանի հոգի դարձավ, ճիշտ այդպես, դուք պետք է վերստին ծնվեք երկնքի

արքայության մեջ՝ ջրով և Հոգով, և մաքրվեք արյունով, այսինքն՝ իմ Միածնի արյունով» (Մովսես 6.59)։

Պողոս Առաքյալն ասել է, որ մկրտությունից հետո մենք պետք է նոր կյանք սկսենք. «Մկրտությունովը նորա հետ թաղուեցանք. . . . այնպես մենք էլ պետք է կյանքի նորոգության մեջ ման գանք» (Հռովմայեցիս Զ.4)։ Մկրտության մեծ օրհնություններից մեկն այն է, որ այն մեզ նոր սկիզբ է պարգևում մեր հավերժական նպատակ տանող ճանապարհին։

- Ինչպե՞ս է ձեր մկրտությունը, ձեզ համար նոր սկիզբ հանդիսացել։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- 2 Նեփի 31.4–7 (մկրտության նպատակն ու անհրաժեշտությունը)
- 3 Նեփի 11.21–27; ՎևՈւ 20.72–74 (ինչպես պետք է մկրտությունը կատարել)
- Գործք Բ.38–39 (մկրտվեք մեղքերի թողության համար)
- Մորոնի Ը.8–12; ՎևՈւ 20.71–72 (մկրտություն պետք չէ փոքր երեխաներին. մկրտություն պետք է նրանց, ովքեր ապաշխարել են)
- Ալմա 7.14–16 (մկրտությունը մաքրագործում է, հավերժական կյանքի ուխտի մեջ մտնելը)

Սուրբ Հոգու պարգևը

Գլուխ 21

Սուրբ Հոգին

7-րդ գլխում մենք սովորում ենք, որ Սուրբ Հոգին Աստվածագլխի անդամ է: Նա «ոգեղեն անձնավորություն է» (ՎևՈւ 130.22): Նա չունի մսից ու ոսկրից մարմին: Նրա ազդեցությունը միևնույն ժամանակ կարող է լինել ամենուր: Նրա առաքելությունն է վկայել Հոր և Որդու և ամենայն ճշմարտության մասին: Բացի այդ, Սուրբ Հոգին մաքրագործում կամ սրբագործում է մեզ՝ պատրաստելով մեզ բնակվելու Աստծո ներկայության մեջ: Սուրբ Հոգին մաքրագործում է մեր սիրտը, այնպես որ մենք այլևս ցանկություն չենք ունենում չարիք գործել:

Կա տարբերություն Սուրբ Հոգու և Սուրբ հոգու *պարգևի* միջև: Այս գլխում մենք կսովորենք, թե ինչ է Սուրբ Հոգու պարգևը, և թե ինչպես կարող ենք ստանալ այդ մեծ պարգևն Աստծուց:

Սուրբ Հոգու պարգևը

- Ո՞րն է տարբերությունը Սուրբ Հոգու և Սուրբ Հոգու պարգևի միջև:

Սուրբ Հոգու պարգևը առանձնաշորհ է, որը տրվում է մարդկանց, որոնք իրենց հավատքը կենտրոնացրել են Հիսուս Քրիստոսի վրա, մկրտվել են և հաստատվել են որպես Եկեղեցու անդամ, որպեսզի շարունակ առաջնորդություն և ոգեշնչում ստանան Սուրբ Հոգուց:

Ուսուցիչներին. Հնարավոր է դուք ցանկանաք հրավիրել դասարանի կամ ընտանիքի անդամներին կատարել հետևյալ հանձնարարություններից մեկը. (1) Կարդալ գլխի վերջում թվարկված լրացուցիչ սուրբ գրությունները և քննարկել, թե ինչպես է Սուրբ Հոգին օգնում մեզ մեր մահկանացու ճամփորդության ժամանակ: (2) Պատմել մի քանի օրինությունների մասին, որոնք ստացել են իրենց կյանքում Սուրբ Հոգու պարգևն ունենալու շնորհիվ: (3) Քննարկել, թե ինչ կարող են անել ծնողները, որպեսզի օգնեն իրենց երեխաներին հասկանալ Սուրբ Հոգու պարգևը և այն, թե ինչպես է Սուրբ Հոգին հաղորդակցվում մեզ հետ:

Ջոզեֆ Սմիթն ասել է, որ մենք հավատում ենք, որ կարող ենք վայելել Սուրբ Հոգու պարգևը մեր ժամանակներում նույնքան, որքան վայելում էին առաջին Առաքյալների ժամանակ: Մենք հավատում ենք այդ պարգևին իր ողջ լիությամբ, զորությամբ, մեծությամբ ու փառքով: (Տես *«Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ»* [2007], էջ 105:)

Առանց Սուրբ Հոգու պարգևը ստանալու մարդ կարող է ժամանակավորապես առաջնորդվել Սուրբ Հոգու կողմից (տես ՎևՈւ 130.23): Սակայն այդ առաջնորդությունը չի լինի շարունակական, մինչև որ մարդ չմկրտվի և ձեռնադրմամբ չստանա Սուրբ Հոգու պարգևը: Գործք Ժ գլխում կարդում ենք, որ հռովմեացի զինվոր Կոռնելիոսը ոգեշնչում ստացավ Սուրբ Հոգուց և իմացավ, որ Հիսուս Քրիստոսի ավետարանը ճշմարիտ է: Սակայն Կոռնելիոսը Սուրբ Հոգու պարգևը ստացավ միայն մկրտվելուց հետո: Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ եթե Կոռնելիոսը չմկրտվեր և չստանար Սուրբ Հոգու պարգևը, Սուրբ Հոգին կլքեր նրան (տես *«Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ»,* էջ 104):

Այսօր մարդիկ, ովքեր Եկեղեցու անդամ չեն, Սուրբ Հոգու զորությամբ սովորում են, որ Մորմոնի Գիրքը ճշմարիտ է (տես Մորոնի 10.4–5): Սակայն այդ նախնական վկայությունը նրանց լքում է, եթե նրանք չեն ստանում Սուրբ Հոգու պարգևը: Նրանք չեն ստանում շարունակվող հաստատումը, որը կարող է գալ նրանց, ովքեր ունեն Սուրբ Հոգու պարգևը:

Սուրբ Հոգու պարգևը ստանալը

- Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի ստանանք Սուրբ Հոգու մշտական ընկերակցությունը:

Նրանից հետո, երբ մարդիկ մկրտվում են, նրանք հաստատվում են որպես Եկեղեցու անդամ և ձեռնադրմամբ ստանում են Սուրբ Հոգու պարգևը: Տերն ասել է. «նրանց, ովքեր հավատք ունեն, դուք պիտի հաստատեք իմ եկեղեցում, ձեռնադրմամբ, և ես նրանց կշնորհեմ Սուրբ Հոգու պարգևը: (ՎևՈւ 33.15):

Եկեղեցու յուրաքանչյուր արժանի երեց, երբ լիազորված է, կարող է մեկ ուրիշին շնորհել Սուրբ Հոգու պարգևը: Ինչևէ,

երաշխիք չկա, որ մարդ ոգեշնչում և առաջնորդություն կստանա Սուրբ Հոգու կողմից միայն որովհետև երեցները ձեռնադրել են նրան: Յուրաքանչյուր անձ պետք է «ստանա Սուրբ Հոգին»: Սա նշանակում է, որ Սուրբ Հոգին կգա մեզ մոտ միայն երբ մենք հավատարիմ ենք և օգնություն ենք ցանկանում այս երկնային սուրհանդակի կողմից:

Որպեսզի արժանի լինենք ստանալու Սուրբ Հոգու օգնությունը, մենք պետք է ջանասիրաբար ձգտենք հնազանդվել Աստծո պատվիրաններին: Մենք պետք է մաքուր պահենք մեր մտքերը և գործողությունները:

Ճանաչել Սուրբ Հոգու ներգործությունը

Սուրբ Հոգին սովորաբար մեզ հետ հաղորդակցվում է խաղաղ ձևով: Նրա ներգործությունը հաճախ նկարագրվում է որպես «մեղմ բարակ ձայն» (տես Գ Թագավորաց ԺԹ.9–12, Հելաման 5.30, ՎևՈւ 85.6): Նախագահ Բոյդ Ք. Փակերը բացատրել է. «Սուրբ Հոգին խոսում է մի ձայնով, որը ավելի շատ *զգում* ես, քան *լսում*:. . . Չնայած մենք ասում ենք «լսել» Հոգու շշունջները, շատ ավելի հաճախ մարդ նկարագրում է հոգևոր հուշումներն ասելով. «Ես զգացում ունեցա.. . .»»: Նա շարունակել է. «Հոգու այդ ձայնը խոսում է մեղմորեն, հուշելով քեզ՝ ինչ անես, ինչ ասես կամ այն կարող է հուշել, որ զգույշ կամ շրջահայաց լինես» (*in Conference Report, Oct.* 1994, 77; կամ Ensign*, Nov.* 1994, 60):

Աստծո ամենամեծ պարգևներից մեկը

- Ի՞նչ օրհնություններ կարող ենք ստանալ Սուրբ Հոգու պարգևի միջոցով:

Սուրբ Հոգու պարգևը Աստծո կողմից մեզ տրված ամենամեծ պարգևներից մեկն է: Սուրբ Հոգու միջոցով մենք կարող ենք իմանալ, որ Աստված ապրում է, որ Հիսուսը Քրիստոսն է, և որ Նրա Եկեղեցին վերականգնվել է երկրի վրա: Սուրբ Հոգին մեզ կարող է ցույց տալ բոլոր բաները, որոնք պետք է անենք (տես 2 Նեփի 32.5): Սուրբ Հոգին մեզ սրբագործում է՝ պատրաստելով Աստծո ներկայությանը: Մենք կարող ենք վայելել Հոգու

պարգևները (տես այս գրքի 22 գլուխը)։ Երկնային Հոր այս մեծ պարգևը կարող է նաև խաղաղություն բերել մեր սրտերին և հասկացողություն պարգևել Աստծո գործերի մասին (տես Ա Կորնթացիս Բ.9–12)։

- Ինչո՞ւ է Սուրբ Հոգու պարգևը Աստծո ամենամեծ պարգևներից մեկը։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ա Կորնթացիս Գ.16–17, ՎԵՈՒ 130.22–23 (Սուրբ Հոգին բնակվում է հավատարիմների հետ)
- Գործք ԺԹ.1–7 (հնում շնորհվում էր Սուրբ Հոգու պարգևը)
- Մորոնի 8.25–26 (ինչպես ստանալ Սուրբ Հոգին)
- Մորոնի 10.5 (Սուրբ Հոգին վկայում է ճշմարտության մասին)
- Մոսիա 5.2 (Սուրբ Հոգին փոխում է սրտերը)
- Ալմա 5.54 (Սուրբ Հոգին սրբագործում է)

Հոգու պարգևները

Գլուխ 22

Հոգու պարգևները

• Ինչպիսի՞ հոգևոր պարգևներ է Տերը շնորհում մեզ:

Մկրտությունից հետո մեզանից յուրաքանչյուրը ձեռնադրմամբ ստացել է Սուրբ Հոգու պարգև: Եթե մենք հավատարիմ լինենք, Նրա ներգործությունն անընդհատ մեզ հետ կլինի: Նրա միջոցով մեզանից յուրաքանչյուրը կարող է օրհնվել որոշակի հոգևոր զորություններով, որոնք կոչվում են Հոգու պարգևներ: Այդ պարգևները շնորհվում են նրանց, ովքեր հավատարիմ են Քրիստոսին: «Բոլոր այս պարգևները գալիս են Աստծուց՝ Աստծո զավակների օգտի համար» (ՎԵՌ 46.26): Դրանք մեզ օգնում են գիտենալ և ուսուցանել ավետարանի ճշմարտությունները: Դրանք կօգնեն մեզ օրհնել ուրիշներին: Դրանք մեզ կառաջնորդեն ետ՝ մեր Երկնային Հոր մոտ: Այդ պարգևներն իմաստությամբ օգտագործելու համար, մենք պետք է իմանանք, թե ինչ են դրանք, ինչպես կարող ենք զարգացնել դրանք և ինչպես ճանաչենք Սատանայի դրանց նմանակումները:

Սուրբ գրությունները հիշատակում են Հոգու պարգևներից շատերը: Այդ պարգևները տրված են եղել ճշմարիտ Եկեղեցու անդամներին, երբ այն եղել է երկրի վրա (տես Մարկոս ԺԶ.16–18): Հոգու պարգևների թվում են.

Լեզուների պարգևը (ՎԵՌ 46.24)

Երբեմն անհրաժեշտություն է առաջանում ավետարանով կիսվել մի լեզվով, որն անծանոթ է մեզ: Երբ հայտնվում

Ուսուցչին. Հարցրեք դասարանի կամ ընտանիքի յուրաքանչյուր անդամի ընթերցել այս գլխի հոգևոր պարգևների ցուցակը և ընտրել երկուսը, որոնց մասին կցանկանան ավելի շատ սովորել: Որպես դասի մի մաս, ժամանակ տվեք նրանց ինքնուրույն ուսումնասիրել իրենց ընտրած պարգևների վերաբերյալ պարբերությունները և սուրբ գրության հատվածները: Երբ ուսումնասիրելու ժամանակը լրանա, խնդրեք նրանց կիսվել, թե ինչ են իրենք սովորել:

ենք նման իրավիճակում, Տերը կարող է մեզ օրհնել այդ լեզվով խոսելու կարողությամբ: Շատ միսիոներների է տրվել լեզուների պարգևը (տես այս գլխի նկարը): Օրինակ՝ Երեց Ալոնզո Ա. Հինքլին միսիոներ էր Հոլանդիայում և շատ քիչ էր հասկանում Հոլանդերեն լեզուն, թեև շատ աղոթում էր և ուսումնասիրում: Երբ նա վերադարձավ մի տուն, որտեղ նախկինում եղել էր, մի օրիորդ բացեց դուռը և սկսեց հոլանդերեն շատ բարկացած խոսել նրա հետ: Ի զարմանս իրեն, նա կարողանում էր հասկանալ յուրաքանչյուր խոսք: Նա մեծ ցանկություն զգաց՝ կիսվելու իր վկայությամբ նրա հետ հոլանդերեն: Նա սկսեց խոսել, և խոսքերը դուրս էին գալիս շատ պարզ՝ հոլանդերենով: Սակայն երբ նա վերադարձավ իր միսիայի նախագահին ցույց տալու, որ կարող է խոսել հոլանդերեն, նրա կարողությունը հեռացել էր: Բազում հավատարիմ անդամներ օրհնվել են լեզուների պարգևով: (Տես Joseph Fielding Smith, *Answers to Gospel Questions,* comp. Joseph Fielding Smith Jr., 5 vols. [1957–66], 2:32–33):

Լեզուների թարգմանության պարգևը (ՎևՈ 46.25)

Այս պարգևը երբեմն տրվում է մեզ, երբ մենք չենք հասկանում տվյալ լեզուն և անհրաժեշտ է, որ կարևոր տեղեկություն ստանանք Աստծուց: Օրինակ՝ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյը Նոր Զելանդիայի Սրբերին դիմելիս մեծ ցանկություն զգաց խոսել առանց թարգմանիչի: Նա ասաց նրան, որ հույս ունի, որ Տերը կօրհնի նրանց, որպեսզի նրանք հասկանան իրեն: Նա խոսեց անգլերեն: Նրա ուղերձը տևեց մոտ 40 րոպե: Խոսելիս նա զգում էր շատերի դեմքի արտահայտությունից ու նրանց աչքերի արցունքներից, որ իր ուղերձը հասնում է նրանց: (Տես *Answers to Gospel Questions,* 2:30–31):

Թարգմանության պարգևը (ՎևՈ 5.4)

Երբ Եկեղեցու ղեկավարների կողմից մենք կանչվում ենք Աստծո խոսքը թարգմանելու, մենք կարող ենք ստանալ մեր բնական կարողություններից վեր թարգմանելու պարգև: Ինչպես բոլոր պարգևների դեպքում, մենք պետք է արդար ապրենք, ջանասիրաբար ուսումնասիրենք և աղոթենք, որպեսզի ստանանք այն: Երբ անենք այս բաները, Տերն

այնպես կանի, որ մենք մեր ներսում ջերմություն կզգանք թարգմանության ճշմարտացիության մասին (տես ՎևՈ 9.8–9)։ Ջոզեֆ Սմիթն ուներ թարգմանության պարգևը, երբ թարգմանում էր Մորմոնի Գիրքը։ Այդ պարգևը գալիս էր նրան միայն, երբ նա ներդաշնակ էր Հոգու հետ։

Իմաստության պարգևը (ՎևՈ 46.17)

Մեզանից ոմանք օրհնված են կարողությամբ՝ հասկանալու մարդկանց և ավետարանի սկաբունքները, ինչպես որ դրանք կիրառվում են մեր կյանքում։ Մեզ ասված է.

«Եթե մէկը ձեզանից իմաստության պակասություն ունի, թող խնդրի Աստծուց, որ ամենին տալիս է առատությամբ և չի նախատում. և կտրվի նրան։

Միայն թե թող հավատքով խնդրի, առանց երկմտելու։ Որովհետև երկմտողը նման է ծովի հողմակոծված և տատանված ալիքին։

Այն մարդը թող չկարծե, որ Տերիցը մի բան կառնե» (Հակոբոս Ա.5–7)։

Տերն ասել է. «Մի փնտրեք հարստություն, այլ իմաստություն, և ահա, Աստծո խորհուրդները կբացվեն ձեզ համար» (ՎևՈ 6.7)։

Գիտության պարգևը (ՎևՈ 46.18)

Ամեն մարդ, որը դառնում է Երկնային Հոր նման, ի վերջո, իմանում է բոլոր բաները։ Աստծո մասին և Նրա օրենքների մասին գիտելիքը հայտվում է Սուրբ Հոգու միջոցով (տես ՎևՈ 121.26)։ Մենք չենք կարող փրկվել, եթե գիտություն չունենանք այդ օրենքների մասին (տես ՎևՈ 131.6)։

Տերը հայտնի է դարձրել. «Եթե մի մարդ ավելի շատ գիտելիք և բանականություն ձեռք բերի այս կյանքում, իր ջանասիրության և հնազանդության միջոցով, քան մեկ ուրիշը, նա կունենա նույնքան առավելություն գալիք աշխարհում» (ՎևՈ 130.19)։ Տերը մեզ պատվիրել է որքան հնարավոր է շատ սովորենք Նրա աշխատանքի մասին։ Նա կամենում է, որ մենք սովորենք երկնքի և երկրի մասին, բաների մասին, որոնք եղել են կամ որոնք պիտի լինեն, բաներ, որոնք տանն են, բաներ, որոնք

դրսում են (տես ՎԿՈ 88.78–79)։ Ինչևէ, կան մարդիկ, ովքեր փորձում են միայն ինքնուրույն ուսումնասիրելով գիտելիք ձեռք բերել։ Նրանք չեն դիմում Սուրբ Հոգու օգնությանը։ Այդ նրանք են, որ ամեն ժամանակ սովորում են, բայց երբեք չեն գալիս ճշմարտության գիտությանը (տես Բ Տիմոթեոս Գ.7)։ Երբ մենք հայտնությամբ գիտելիք ենք ստանում Սուրբ Հոգուց, Նրա Հոգին խոսում է մեր մտքի և մեր սրտի հետ (տես ՎԿՈ 6.15, 22–24, 8.2, 9.7–9)։

Իմաստություն և գիտելիք սովորեցնելու պարգևը (Մորոնի 10.9–10)

Ոմանց տրված է հատուկ կարողություն՝ բացատրելու ավետարանի ճշմարտությունները և վկայելու դրանց մասին։ Այդ պարգևը կարող է օգտագործվել, երբ մենք դաս ենք ուսուցանում։ Այն կարող է օգտագործվել ծնողների կողմից՝ երեխաներին ուսուցանելու համար։ Այդ պարգևը նաև օգնում է մեզ ուրիշներին ուսուցանել, որպեսզի նրանք կարողանան հասկանալ ավետարանը։

Իմացության պարգևը, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է (ՎԿՈ 46.13)

Սա եղել է մարգարեների և առաքյալների պարգևը, ովքեր կանչվել են որպես Հիսուս Քրիստոսի հատուկ վկաներ։ Ինչևէ, ուրիշներին ևս տրվել է այս պարգևը։ Յուրաքանչյուր ոք կարող է վկայություն ստանալ Սուրբ Հոգու հուշումների միջոցով։ Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ուսուցանել է. «Ոմանց տրված է,– ասում է Տերը Վարդապետություն և Ուխտերում,– Սուրբ Հոգուց, իմանալ, որ Հիսուս Քրիստոսն Աստծո Որդին է, և որ նա խաչվեց աշխարհի մեղքերի համար [տես ՎԿՈ 46.13]։ Սրանց է, որ ես նկատի ունեմ, որ ամուր կանգնած են հայտնության վեմի վրա այն վկայությամբ, որը նրանք բերում են աշխարհին» (*Teachings of Presidents of the Church: David O. McKay* [2003], 166)։

Ուրիշների վկայությանը հավատալու պարգևը (ՎԿՈ 46.14)

Սուրբ Հոգու զորությամբ մենք կարող ենք իմանալ ճշմարտությունը բոլոր բաների մասին։ Եթե ցանկանում ենք իմանալ,

թե արդյոք մարդ ճշմարտությունն է խոսում, մենք պետք է հավատքով հարցնենք Աստծուն: Եթե այն բաները, որոնց մասին աղոթում ենք, ճշմարիտ են, Տերը խաղաղություն կխոսի մեր մտքերին (տես ՎԱՈՒ 6.22–23): Այս ձևով մենք կարող ենք իմանալ, երբ ինչ-որ մեկը, անգամ մարգարեն, հայտնություն է ստացել: Նեփիին հարցրեց Տիրոջը, որ թույլ տա իրեն տեսնել, զգալ և իմանալ, որ իր հոր երազը ճշմարիտ էր (տես 1 Նեփի 10.17–19):

Մարգարեության պարգևը (ՎԱՈՒ 46.22)

Նրանք, ովքեր ճշմարիտ վկայություն են ստանում անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ, ունեն մարգարեության պարգևը: Մարգարեներն ունեն այս պարգևը, սակայն մենք նույնպես կարող ենք այն ունենալ՝ որպես օգնություն մեր կյանքը կառավարելու համար (տես Ա Կորնթացիս ԺԴ.39): Մենք կարող ենք հայտնություններ ստանալ Աստծուց մեզ համար և մեր կոչումների համար, բայց ոչ Եկեղեցու կամ նրա ղեկավարների համար: Երկնքի կարգին հակառակ է այն, որ մարդ հայտնություն ստանա մեկ ուրիշի համար, որի վրա ինքը նախագահություն չունի: Եթե մենք իսկապես ունենք մարգարեության պարգևը, մենք չենք ստանա որևէ հայտնություն, որը համահունչ չէ սուրբ գրություններում Տիրոջ ասածների հետ:

Բժշկության պարգևը (ՎԱՈՒ 46.19–20)

Ոմանք հավատք ունենք բժշկելու, ոմանք էլ հավատք ունեն բժշկվելու: Մենք բոլորս կարող ենք գործածել բժշկվելու հավատքը, երբ հիվանդ ենք (տես ՎԱՈՒ 42.48): Շատ քահանայություն կրողներ հիվանդներին բժշկելու պարգև ունեն: Ոմանց էլ կարող է տրվել հիվանդություններ բուժելու գիտելիքը:

Հրաշքներ գործելու պարգևը (ՎԱՈՒ 46.21)

Տերը բազում անգամ օրհնել է իր ժողովրդին հրաշքների միջոցով: Երբ Յուտայի ռահվիրաները ցանեցին իրենց առաջին բերքը, մորեխների հարձակումը քիչ էր մնացել ոչնչացներ այն: Ռահվիրաներն աղոթեցին, որ Տերը փրկի նրանց բերքը, և Նա ուղարկեց ծովառորների, որպեսզի խժռեն մորեխներին: Երբ

մենք օգնության կարիք ունենանք և խնդրենք հավատքով, եթե դա մեր օգտի համար է, Տերը հրաշքներ կգործի մեզ համար (տես Մատթեոս ԺԷ.20, ՎևՈւ 24.13–14):

Հավատքի պարգևը (Մորոնի 10.11)

Հարեդի եղբայրը մեծ հավատք ուներ: Իր հավատքի շնորհիվ նրան ուրիշ պարգևներ տրվեցին: Նրա հավատքն այնքան մեծ էր, որ Փրկիչը հայտնվեց նրան (տես Եթեր 3.9–15): Առանց հավատքի, ուրիշ ոչ մի պարգև չի տրվի: Մորոնին խոստացել է. «Ով որ ոչ մի բանի չկասկածելով հավատում է Քրիստոսին, ինչ էլ նա խնդրի Հորը՝ Քրիստոսի անունով, կտրվի նրան» (Մորմոն 9.21): Մենք պետք է ձգտենք մեծացնել մեր հավատքը, հայտնաբերենք մեր պարգևները և օգտագործենք դրանք:

Որոշ մարդիկ հավատքի պակասություն ունեն և ժխտում են Հոգու պարգևների գոյությունը: Մորոնին ասել է նման մարդկանց.

«Եվ դարձյալ, ես խոսում եմ ձեզ հետ, որ ուրանում եք Աստծո հայտնությունները, և ասում, թե դրանք վերացել են, որ չկան ոչ մի հայտնություններ, ոչ էլ մարգարեություններ, ոչ պարգևներ, ոչ բժշկություններ, ոչ լեզուներով խոսել, ոչ էլ լեզուներով թարգմանել.

Ահա, ես ասում եմ ձեզ՝ նա, ով ուրանում է այս բաները, չգիտի Քրիստոսի ավետարանը. այո, նա չի կարդացել սուրբ գրքերը. եթե կարդացել է, նա չի հասկանում դրանք» (Մորմոն 9.7–8):

- Ինչո՞ւ է Տերը մեզ հոգևոր պարգևներ տալիս:

Մենք կարող ենք զարգացնել մեր պարգևները

- Ինչպես կարող ենք «հետամուտ [լինել] լավագույն պարգևներին»: (ՎևՈւ 46.8):

Տերն ասել է. «Քանզի բոլորին տրված չէ ամեն պարգև. քանզի կան շատ պարգևներ, և ամեն մարդու մի պարգև է տրված Աստծո Հոգուց: Ոմանց տրված է մի բան, ոմանց էլ տրված է մեկ ուրիշ բան, որպեսզի բոլորն այդպիսով օգտվեն» (ՎևՈւ 46.11–12):

Որպեսզի զարգացնենք մեր պարգևները, մենք պետք է հայտնաբերենք, թե ինչ պարգևներ մենք ունենք: Մենք դա անում ենք աղոթքով և ծոմապահությամբ: Մենք պետք է հետամուտ լինենք լավագույն պարգևներին (տես ՎևՈւ 46.8): Երբեմն հայրապետական օրհնությունները մեզ կօգնեն իմանալ, թե ինչ պարգևներ են մեզ տրվել:

Մենք պետք է հնազանդ և հավատարիմ լինենք, որպեսզի ստանանք մեր պարգևները: Այնուհետև, մենք պետք է օգտագործենք այդ պարգևները Տիրոջ գործը կատարելու համար: Դրանք չեն տրվում մեր հետաքրքրությունը բավարարելու համար, ոչ էլ մեր հավատքի պակասության պատճառով մեզ ինչ-որ բան ապացուցելու համար: Հոգևոր պարգևների մասին Տերն ասել է. «Դրանք տրված են նրանց օգտի համար, ովքեր սիրում են ինձ և պահում են իմ բոլոր պատվիրանները, և նրա համար, ով փնտրում է այդպես վարվել» (ՎևՈւ 46.9):

- Մտածեք որոշ հոգևոր պարգևների մասին, որոնք կամրացնեն ձեզ անհատապես կամ կօգնեն ձեզ ծառայելու Տիրոջը և ուրիշների: Ի՞նչ պետք է դուք անեք, որպեսզի հետամուտ լինեք այդ պարգևներին:

Սատանան նմանակում է Հոգու պարգևները

- Ինչպե՞ս կարող ենք զանազանել Հոգու ճշմարիտ պարգևները Սատանայի նմանակումներից:

Սատանան կարող է նմանակել լեզուների, մարգերության, տեսիլքների, բժշկումների և այլ հրաշքներ: Մովսեսը ստիպված էր մրցել Սատանայի նմանակումների հետ Փարավոնի գավիթում (տես Ելից Է.8–22): Սատանան ցանկանում է, որ մենք հավատանք իր կեղծ մարգարեներին, կեղծ բժշկողներին և կեղծ հրաշագործներին: Դրանք կարող են մեզ այնքան իրական թվալ, որ տարբերելու միակ ձևը զանազանելու պարգևը Աստծուց խնդրելն է: Ինքը դևը կարող է հայտնվել որպես լույսի հրեշտակ (տես 2 Նեփի 9.9):

Սատանան ցանկանում է մեզ կուրացնել ճշմարտության վերաբերյալ և մեզ ետ պահել Հոգու ճշմարիտ պարգևները փնտրելուց: Ոգեհարցները, աստղագուշակները, բախտագուշակները

և կախարդները ոգեշնչված են Սատանայի կողմից, նույնիսկ եթե նրանք հայտարարում են, որ հետևում են Աստծուն: Նրանց գործերը պիղծ են Տիրոջ առաջ (տես Եսայիա ԽԷ.12–14, Բ Օրինաց ԺԸ.9–10): Մենք պետք է խուսափենք Սատանայի զորություններից հետ գործ ունենալուց:

Մենք պետք է զգույշ լինենք Հոգու պարգևների հետ

- Ինչպե՞ս կարող ենք հարգել հոգևոր պարգևների սրբազան բնույթը:

Տերն ասել է. «Բայց ես պատվիրան եմ տալիս նրանց, որ նրանք չպիտի պարծենան այդ բաներով, ոչ էլ դրանք պատմեն աշխարհի առաջ. քանզի այդ բաները տրված են ձեզ՝ ձեր օգտի և փրկության համար»: (ՎևՈւ 84.73): Մենք պետք է հիշենք, որ հոգևոր պարգևները սրբազան են (տես ՎևՈւ 6.10):

Այս պարգևները մեզ տալու դիմաց Տերը մեզանից սպասում է, որ մենք «գոհություն [հայտնենք] Աստծուն, Հոգով, բոլոր օրհնությունների համար, որոնցով [մենք] օրհնված [ենք]» (ՎևՈւ 46.32):

Լրացուցիչ սուրբ գրություններ

- 3 Նեփի 29.6–7 (պարգևներն ուրացողների ճակատագիրը)
- Մորոնի 10.7–19 (պարգևները կախված են հավատքից)
- 3 Նեփի 26.17, 27.20, ՎևՈւ 84.64 (մկրտության ժամանակ տրվող պարգև)
- Ա Կորնթացիս ԺԲ (Հիսուս Քրիստոսի հին Եկեղեցու պարգևները)
- ՎևՈւ 46.9–26 (Հոգու պարգևներն այսօր՝ Եկեղեցում)

Simon Dewey

Հաղորդություն

Գլուխ 23

Քրիստոսը ներկայացրեց հաղորդությունը

- Ի՞նչ են մեզ սովորեցնում հաղորդության խորհրդանիշները Հիսուս Քրիստոսի քավության մասին։

Մեր Փրկիչը ցանկանում է, որ հիշենք Նրա մեծ քավիչ զոհաբերությունը և պահենք Նրա պատվիրանները։ Այդ հարցում մեզ օգնելու համար Նա մեզ պատվիրել է հաճախ հավաքվել և ճաշակել հաղորդությունից։

Հաղորդությունը սուրբ քահանայության արարողություն է, որը մեզ օգնում է հիշել Փրկչի Քավությունը։ Հաղորդության ժամանակ մենք ճաշակում ենք հացից և ջրից։ Մենք դա անում ենք ի հիշատակ Նրա մարմնի և Նրա արյան, որը նա տվեց որպես զոհաբերություն մեզ համար։ Ճաշակելով հաղորդությունից, մենք սրբազան ուխտեր ենք նորոգում մեր Երկնային Հոր հետ։

Իր Խաչելությունից ոչ շատ առաջ Հիսուս Քրիստոսը վերնատանն իր շուրջ հավաքեց Իր Առաքյալներին։ Նա գիտեր, որ շուտով մահանալու է խաչի վրա։ Իր մահից առաջ դա վերջին անգամն էր, որ Նա կարող էր հավաքվել իր այդ սիրված տղամարդկանց հետ։ Նա ցանկանում էր, որ նրանք միշտ հիշեին Իրեն, որ կարողանային ամուր և հավատարիմ լինել։

Նրանց օգնելու համար՝ Նա ներկայացրեց հաղորդությունը։ Նա հացը կտրտեց և օրհնեց այն։ Ապա նա ասաց. «Վերցրեք. կերեք. սա՝ ի հիշատակ իմ մարմնի, որը ես փրկագին տվեցի ձեզ համար» (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս ԻԶ.22)։ Այնուհետև, նա վերցրեց մի գավաթ գինի, օրհնեց այն, տվեց այն Իր Առաքյալներին, որ խմեն, և ասաց. «Սա՝ ի հիշատակ իմ արյան . . . որը թափվում է բոլոր նրանց համար, ովքեր կհավատան իմ անվանը՝ նրանց մեղքերի թողության

համար» (Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս 26.24. տես նաև Մատթեոս ԻԶ.26–28. Մարկոս ԺԴ.22–24, Ղուկաս ԻԲ.15–20)։

Իր հարությունից հետո Փրկիչը եկավ Ամերիկյան մայրցամաք և Նեփիացիներին ուսուցանեց միևնույն արարողությունը (տես 3 Նեփի 18.1–11, 20.1–9)։ Նրանից հետո, երբ Եկեղեցին վերականգնվեց վերջին օրերին, Հիսուսը կրկին պատվիրեց Իր ժողովրդին ճաշակել հաղորդությունից՝ ի հիշատակ Իրեն, ասելով. «Նպատակահարմար է, որ եկեղեցին հաճախ հավաքվի՝ ճաշակելու հացից և գինուց՝ ի հիշատակ Տեր Հիսուսի» (ՎևՈւ 20.75)։

Ինչպես է սպասավորվում հաղորդությունը

Սուրբ գրությունները հստակ բացատրում են, թե ինչպես պետք է սպասավորվի հաղորդությունը։ Յուրաքանչյուր հանգստության օր Եկեղեցու անդամները հավաքվում են՝ երկրպագելու և ճաշակելու հաղորդությունից (տես ՎևՈւ 20.75)։ Հաղորդությունը սպասավորվում է քահանայության անհրաժեշտ իշխանություն ունեցողների կողմից։ Քահանան կամ Մելքիսեդեկյան Քահանայության կրողը մանրացնում է հացը, ծնկի է իջնում և օրհնում այն (տես ՎևՈւ 20.76)։ Այնուհետև, սարկավագը կամ այլ քահանայության կրող մատուցում է հաղորդությունը ժողովին։ Ապա քահանան կամ Մելքիսեդեկյան Քահանայություն կրողը օրհնում է ջուրը, և այն նույնպես մատուցվում է անդամներին։ Երբ Հիսուսը ներկայացրեց հաղորդությունը, նա նրանց տվեց գինի։ Սակայն վերջին օրերի հայտնության մեջ Նա ասել է, որ նշանակություն չունի, թե ինչ ենք մենք ուտում կամ խմում հաղորդության ժամանակ, քանի դեռ մենք հիշում ենք Իրեն (տես ՎևՈւ 27.2–3)։ Այսօր Վերջին օրերի սրբերը գինու փոխարեն ջուր են խմում։

Հիսուսը հայտնել է հաղորդության երկու աղոթքների ճշգրիտ բառերը։ Մենք պետք է ուշադրությամբ լսենք այդ գեղեցիկ աղոթքները և փորձենք հասկանալ, թե ինչ ենք խոստանում և ինչ է մեզ խոստացվում։ Ահա հացը օրհնելու համար ասվող աղոթքը.

Ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, խնդրում ենք քեզ, քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, օրհնիր և սրբացրու այս հացը բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ճաշակում են այն, որ նրանք կարողանան ուտել, ի հիշատակ Որդուդ մարմնի, և վկայեն քեզ, ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, որ նրանք հոժար են իրենց վրա վերցնել անունը քո Որդու և միշտ հիշել նրան և պահել նրա պատվիրանները, որոնք նա տվել է իրենց. որպեսզի նրանք նրա Հոգին միշտ իրենց հետ ունենան: Ամեն: (ՎևՈւ 20.77):

Սիա ջուրը օրհնելու համար ասվող աղոթքը.

Ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, խնդրում ենք քեզ, քո Որդու՝ Հիսուս Քրիստոսի անունով, օրհնիր և սրբացրու այս գինին (ջուրը) բոլոր նրանց հոգիների համար, ովքեր ըմպում են այն, որ նրանք կարողանան անել այդ, ի հիշատակ Որդուդ արյան, որ հեղվել է իրենց համար. որ նրանք կարողանան վկայել քեզ, ո՜վ Աստված, Հա՛յր Հավերժական, որ նրանք միշտ հիշում են նրան, որպեսզի նրանք նրա Հոգին իրենց հետ ունենան: Ամեն: (ՎևՈւ 20.79):

Հաղորդության արարողությունը կատարվում է պարզությամբ և մեծ պատկառանքով:

- Ուշադիր վերընթերցեք հաղորդության աղոթքները: Մտածեք յուրաքանչյուր արտահայտության մասին:

Հաղորդության ժամանակ նորացվող ուխտերը

- Ի՞նչ ուխտեր ենք մենք նորացնում հաղորդության ժամանակ: Ի՞նչ օրհնություններ է մեզ խոստանում Տերը, երբ մենք պահում ենք այդ ուխտերը:

Ամեն անգամ, երբ ճաշակում ենք հաղորդությունից, մենք նորացնում ենք մեր ուխտերը Տիրոջ հետ: Ուխտը սրբազան խոստում է Տիրոջ և Նրա զավակների միջև: Մեր կապած ուխտերը պարզորոշ սահմանված են հաղորդության աղոթքներում: Կարևոր է իմանալ, թե որոնք են այդ ուխտերը և ինչ նշանակություն ունեն դրանք:

Մենք ուխտ ենք անում, որ պատրաստ ենք մեզ վրա վերցնել Հիսուս Քրիստոսի անունը: Դրանով մենք ցույց ենք տալիս, որ կամենում ենք լինել Նրա հետ և համարվել Նրա Եկեղեցուց: Մենք պարտավորվում ենք ծառայել Նրան և մեր մերձավորին: Մենք խոստանում ենք, որ ամոթ և անարգանք չենք բերի այդ անվանը:

Մենք ուխտ ենք անում միշտ հիշել Հիսուս Քրիստոսին: Մեր բոլոր մտքերը, զգացումները և գործերը կղեկավարվեն Նրանով և Նրա առաքելությամբ:

Մենք խոստանում ենք պահել Նրա պատվիրանները:

Մենք վերցնում ենք այդ պարտավորությունները մեզ վրա, երբ մկրտվում ենք (տես ՎևՈւ 20.37, Մոսիա 18.6–10): Այդպիսով, երբ ճաշակում ենք հաղորդությունից, մենք նորացնում ենք մկրտության ժամանակ կապած մեր ուխտերը: Հիսուսը մեզ տվել է հաղորդության ճաշակելու օրինակը (տես 3 Նեփի 18.1–12) և ասել է, որ երբ հետևենք այդ օրինակին, ապաշխարելով մեր մեղքերից և հավատալով Նրա անվանը, մենք թողություն կստանանք մեր մեղքերից (տես Ջոզեֆ Սմիթի Թարգմանություն, Մատթեոս ԻԶ.24):

Տերը խոստանում է, որ եթե մենք պահենք մեր ուխտերը, մենք միշտ կունենանք Նրա Հոգին մեզ հետ: Մարդը, որ առաջնորդվում է Հոգու կողմից, կունենա գիտելիք, հավատք, զորություն և արդարություն հավերժական կյանք ձեռք բերելու համար:

- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի հիշենք այդ խոստումները շաբաթվա ընթացքում:

Հաղորդությունը ճաշակելիս մեր վերաբերմունքը

- Ինչպե՞ս կարող ենք պատրաստվել հաղորդությունն ընդունելուն: Ի՞նչի մասին կարող ենք մտածել հաղորդության ժամանակ, որը մեզ կօգնի հիշել Փրկչի Քավությունը:

Նախքան հաղորդությունից ճաշակելը, մենք պետք է պատրաստվենք հոգևորապես: Տերը շեշտում է, որ ոչ ոք չպետք է

Ուսուցչին. Եթե ձեր ուսանողների մեծ մասը ծնողներ են, խնդրեք նրանց կիսվել մտքերով, թե ինչպես կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին, որ պատրաստվեն ակնածանքով ճաշակել հաղորդությունից:

անարժան ճաշակի հաղորդությունից: Դա նշանակում է, որ նախքան հաղորդությունից ճաշակելը մենք պետք է ապաշխարենք մեր մեղքերից: Սուրբ գրություններն ասում են. «Եթե մեկը զանցանք է գործել, թող նա չընդունի, մինչև հաշտություն չկնքի» (ՎԵՈՒ 46.4): Տերը հրահանգել է Իր տասներկու Նեփիացի աշակերտներին. «Դուք չպետք է թույլ տաք որևէ մեկին գիտակցաբար անարժանորեն ճաշակել իմ մարմնից ու արյունից, երբ դուք սպասավորեք այն. քանզի ով որ ուտում և խմում է իմ մարմինն ու արյունն անարժանորեն, ուտում և խմում է նզովք իր հոգուն» (3 Նեփի 18.28–29):

Հաղորդության ծառայության ժամանակ մենք պետք է հանենք բոլոր աշխարհիկ մտքերը: Մենք պետք է աղոթքի և ակնածանքի զգացում ունենանք: Մենք պետք է մտածենք մեր Փրկչի Քավության մասին և երախտապարտ լինենք դրա համար: Մենք պետք է քննենք մեր կյանքը և զարգանալու ձևեր փնտրենք: Մենք պետք է նաև նորացնենք պատվիրանները պահելու մեր վճռականությունը:

Պարտադիր չէ, որ մենք կատարյալ լինենք հաղորդությունը ճաշակելիս, սակայն պետք է ապաշխարող սիրտ ունենանք: Հաղորդությունը ճաշակելու վերաբերմունքը ազդում է մեր ունեցած փորձառության վրա: Եթե ճաշակում ենք հաղորդությունը մաքուր սրտով, մենք ստանում ենք Տիրոջ խոստացված օրհնությունները:

- Ինչո՞ւ եք կարծում, որ հաղորդությունից արժանիորեն ճաշակելը մեծացնում է մեր հոգևոր ուժը:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ա Կորնթացիս ԺԱ.27–29 (արժանիորեն ճաշակեք հաղորդությունից)
- Հովհաննես Դ.5–14 (Հիսուսը կենդանի ջուրն է)
- Հովհաննես Զ.30–35 (Հիսուսը կյանքի հացն է)

Հանգստության օրը

Գլուխ 24. Հանգստության օրը

Հանգստության օրվա իմաստը

• Ի՞նչ է հանգստության օրը:

«Հիշիր հանգստության օրը նրան սուրբ պահելու համար» (Ելից Ի.8, տես նաև ՎևՈւ 68.29):

Հանգստության օրը եբրայերեն *Շաբաթ* բառի թարգմանությունն է, որը նշանակում է *հանգիստ:* Նախքան Հիսուս Քրիստոսի Հարությունը Հանգստության օրը խորհրդանշում էր Աստծո հանգիստը՝ նրանից հետո, երբ Նա ավարտեց Ստեղծումը: Այն ուխտի նշան էր Աստծո և Իր ժողովրդի միջև: Ծննդոց գրքում կարդում ենք, որ Աստված ստեղծեց երկինքն ու երկիրը վեց ժամակաշրջանում, որոնք Նա կոչեց օրեր. «Եվ Աստուած կատարեց եօթներորդ օրումն իր գործքը որ արաւ. և եօթներորդ օրը հանգստացաւ իր բոլոր գործքիցը որ արաւ: Աստուած օրհնեց եօթներորդ օրը եւ սրբագործեց այն»: Աստուած օրհնեց եօթներորդ օրը եւ սրբագործեց այն» (Ծննդոց Բ.2–3): Այժմ Հանգստության օրը նաև Հիսուս Քրիստոսի Հարության տոնն է:

Հանգստության օրը կրկնվում է յուրաքանչյուր յոթերորդ օրը: Այն սուրբ օր է՝ Աստծո կողմից կարգված մեզ համար, որ հանգստանանք մեր առօրյա գործերից և երկրպագենք Նրան:

Հանգստության օրվա նպատակը

• Ինչպե՞ս կբացատրեիք Հանգստության օրվա նպատակը մեկին, որը չգիտի Հանգստության օրվա մասին:

Հիսուսն ուսուցանել է, որ Հանգստության օրը ստեղծվել էր մեր օգտի համար (տես Մարկոս Բ.27): Հանգստության օրվա նպատակը շաբաթվա մեջ մեզ որոշակի օր հատկացնելն է, որ մեր

մտքերն ու գործերն ուղղենք առ Աստված: Այն պարզապես մեր գործերից հանգստանալու համար չէ: Այն սրբազան օր է, որը պետք է անցկացնենք երկրպագությամբ ու ակնածանքով: Հանգստանալով մեր առօրյա գործերից՝ մեր մտքերը ազատվում են, որ խորհեն հոգևոր գործերի մասին: Այդ օրը մենք պետք է նորացնենք մեր ուխտերը Տիրոջ հետ և սնենք մեր հոգին Հոգու բաներով:

- Մտածեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի մտքում պահեք Հանգստության օրվա նպատակը, երբ պատրաստվում եք այդ օրվան ամեն օր:

Հանգստության օրվա պատմությունը

Յոթերորդ օրը Աստծո կողմից սրբագործվել է որպես Հանգստության օր երկրի ստեղծման սկզբում (տես Ծննդոց Բ.2–3): Դեռ վաղ ժամանակներից ի վեր յոթերորդ օրը սուրբ պահելու ավանդություն է պահպանվել երկրի տարբեր ժողովուրդների մոտ: Աստված նորացրեց այդ օրվան վերաբերող պատվիրանը Իսրայելացիներին՝ ասելով. «Հիշիր հանգստության օրը նրան սուրբ պահելու համար» (Ելից Ի.8): Հանգստության օրը պահելը նաև նշան էր, որ Իսրայելացիները նրա ուխտի ժողովուրդն են (տես Ելից ԼԱ.12–13, 16, Եսայիա ԾԶ.1–8, Երեմիա ԺԷ.19–27):

Ինչևէ, որոշ հրեա ղեկավարներ բազմաթիվ ոչ անհրաժեշտ կանոններ էին սահմանել Հանգստության օրվա համար: Նրանք որոշել էին, թե որքան կարող էին մարդիկ քայլել, ինչպիսի քարկապներ կարող էին նրանք կապել և այլն: Երբ որոշ հրեա ղեկավարներ քննադատեցին Հիսուս Քրիստոսին Հանգստության օրը հիվանդներին բուժելու համար, Հիսուսը նրանց հիշեցրեց, որ Շաբաթը մարդու համար է:

Նեփիացիները նույնպես պահում էին Հանգստության օրը՝ ըստ Աստծո պատվիրանների (տես Հարում 1.5):

Մեր ժամանակներում Տերը կրկնել է Իր պատվիրանը, որ մենք պետք է հիշենք Հանգստության օրը և սուրբ պահենք այն (տես ՎևՈւ 68.29):

Տիրոջ օրը

• Ինչո՞ւ է Հանգստության օրը յոթերորդ օրից տեղափոխվել առաջին օրը:

Մինչև Իր Հարությունը, Հիսուս Քրիստոսը և Նրա աշակերտները պատվում էին յոթերորդ օրը որպես Հանգստության օր: Նրա Հարությունից հետո Կիրակի օրն էր սուրբ պահվում՝ որպես Տիրոջ օր, ի հիշատակ այդ օրը Նրա Հարությանը (տես Գործք Ի.7, Ա Կորնթացիս ԺԶ.2): Այդ ժամանակից ի վեր Նրա հետևորդները շաբաթվա առաջին օրն էին պահում որպես Հանգստության օր: Երկու դեպքում էլ վեց օր կար աշխատելու համար և մեկ օր՝ հանգստի և երկրպագության համար:

Մեր օրերում Տերը մեզ հստակ պատվիրան է տվել, որ մենք ևս պետք է պատվենք Կիրակին՝ Տիրոջ օրը, որպես Հանգստության օր (տես ՎԵՈՒ 59.12):

• Ինչպե՞ս կարող է Հարության մասին հիշողությունը ազդել մեր երկրպագության վրա Հանգստության օրը:

Հանգստության օրը սուրբ պահելը

• Ի՞նչ է նշանակում Հանգստության օրը սուրբ պահել:

Նախ, Տերը մեզ խնդրում է, որ Հանգստության օրը սրբազործենք: 1831 թվականին Ջոզեֆ Սմիթին տված հայտնության մեջ Տերը Սրբերին պատվիրեց գնալ աղոթքի տուն և մատուցել իրենց հաղորդությունները, հանգստանալ իրենց աշխատանքներից և իրենց տուրքը մատուցել Բարձրյալին (տես ՎԵՈՒ 59.9–12):

Երկրորդը՝ նա խնդրել է, որ մենք հանգստանանք մեր առօրյա գործերից: Դա նշանակում է, որ մենք չպետք է այնպիսի աշխատանք կատարենք, որը մեր ուշադրությունը կշեղի հոգևոր գործերից: Տերը Իսրայելացիներին ասել է. «Ոչ մի գործ չգործես՝ ոչ դու, ոչ էլ քո որդին՝ ոչ քո աղջիկը, ոչ քո ծառան ու աղախինը, ոչ քո անասունը» (Ելից Ի.10): Մեր մարգարեները մեզ ասել են, որ այդ օրը մենք չպետք է առևտուր

Ուսուցիչներին. Դուք կարող եք օգնել դասարանի անդամներին կամ ընտանիքի անդամներին ավելի խորը մտածել հարցի մասին՝ նրանց ժամանակ տալով, որ խորհեն: Նրանց բավական ժամանակ տալուց հետո լսեք նրանց պատասխանները:

անենք, ոչ որս անենք, ոչ էլ ձուկ որսանք, ոչ սպորտային միջոցառումների գնանք, ոչ էլ նմանատիպ որևէ միջոցառման մասնակցենք։

Նախագահ Սփենսեր Վ. Քիմբալը, այնուամենայնիվ, զգուշացրել է, որ եթե մենք Հանգստության օրը պարզապես նստենք և ոչինչ չանենք, մենք այդ օրը սուրբ չենք պահի։ Հանգստության օրը կառուցողական մտքերի ու գործերի է դրդում։ (Տես *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 170։)

Ինչպիսի՞ բաներ *կարող* ենք մենք անել Հանգստության օրը։ Եսայիա մարգարեն առաջարկել է, որ մենք պետք է դադարենք մեր հաճույքով բաներ անել և պետք է «շաբաթը կոչենք հիացմունք, Տիրոջ նվիրվածը՝ պատվական» (Եսայիա ԾԸ.13)։

Մենք պետք է մտածենք Հանգստության օրը արդար բաներ անելու մասին։ Օրինակ՝ մենք կարող ենք Հանգստության օրը սուրբ պահել՝ հաճախելով Եկեղեցական ժողովները, կարդալով սուրբ գրությունները և Եկեղեցու ղեկավարների խոսքերը, այցելելով հիվանդներին, ծերերին և մեր հարազատներին, լսելով վեհացնող երաժշտություն և երգելով օրհներգեր, աղոթելով մեր Երկնային Հորը գովաբանությամբ ու գոհաբանությամբ, կատարելով Եկեղեցական ծառայություն, պատրաստելով ընտանեկան պատմության գրանցումներ և գրի առնելով անձնական պատմություններ, պատմելով հավատք ներշնչող պատմություններ, մեր վկայություններով ու հոգևոր փորձառություններով կիսվելով մեր ընտանիքի անդամների հետ, նամակ գրելով միսիոներներին և հարազատներին. նպատակով ծոմ պահելով, և երեխաների և ընտանիքի մյուս անդամների հետ ժամանակ անցկացնելով։

Որպեսզի որոշենք, թե ուրիշ ինչ գործեր պատշաճ կլինի կատարել Հանգստության օրը, մենք կարող ենք մեզ հարցնել. «Արդյո՞ք այս գործը վեհացում և ոգեշնչում կպարգևի»։ Արդյո՞ք այն ցույց է տալիս հարգանք Տիրոջ հանդեպ։ Արդյո՞ք այն ուղղում է իմ մտքերը դեպի նա։

Հնարավոր է ժամանակ լինի, որ մեզանից պահանջվի աշխատել Հանգստության օրը: Ամեն անգամ, երբ հնարավոր է, մենք պետք է խուսափենք դրանից, սակայն երբ բացարձակապես անհրաժեշտ է աշխատել, մենք պետք է, որքան որ հնարավոր է, պահենք Հանգստության օրվա երկրպագության ոգին մեր սրտում:

- Մտածեք ինչ-որ բանի մասին, որ կարող եք անել, որպեսզի բարելավեք Հանգստության օրը սուրբ պահելու ձեր ջանքերը: Եթե դուք ծնող եք կամ տատ կամ պապ, մտածեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի ձեր երեխաներին կամ թոռներին օգնեք ավելի լավ հասկանալ Հանգստության օրվա իմաստը:

Հանգստության օրը պահելու օրհնությունները

- Որո՞նք են Հանգստության օրը սուրբ պահելու օրհնություններից մի քանիսը:

Եթե մենք պատվում ենք Հանգստության օրը, մենք կարող ենք հոգևոր և նյութական մեծ օրհնություններ ստանալ: Տերն ասել է, որ եթե մենք պահենք Հանգստության օրը զոհունակությամբ ու զվարթ սրտով, մենք կլցվենք ուրախությամբ: Նա խոստացել է.

«Երկրի լիությունը ձերը կլինի. . . թե սնունդ և թե հագուստ, թե տներ, թե ամբարներ, թե պտղատու այգիներ, թե պարտեզներ և թե խաղողի այգիներ.

Այո, բոլոր բաները, որ բխում են երկրից, իր ժամանակին, ստեղծված են մարդու օգտի և գործածության համար՝ թե աչքը շոյելու և թե սիրտն ուրախացնելու համար.

Այո, սնունդի և հագուստի համար, համի և հոտի համար, մարմինն ամրացնելու և հոգու կենարարության համար» (ՎԵՌ 59.16–19):

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ելից ԼԱ.16–17 (Շաբաթը մնայուն ուխտ է Տիրոջ և Իր ժողովրդի միջև)

- Մոսիա 13.16–19, 18.23, Ելից ԼԵ.1–3, Ղևտացիս ԻԶ.2–4, 6, 12 (Հանգստության օրը սուրբ պահեք)
- Ղուկաս Զ.1–11 (օրինավոր է Հանգստության օրը բարիք գործել)
- Ղուկաս ԺԳ.11–17, Հովհաննես Ե.1–18 (Հանգստության օրը բարիք գործելու Հիսուսի օրինակը)

Ծոմապահություն

Գլուխ 25

Ինչպես պատշաճ ծոմ պահել

- Ի՞նչ կարող ենք անել, որ ծոմապահությունն ուրախ փորձառություն դառնա:

Ադամի ժամանակից ի վեր Աստծո մարդիկ ծոմ են պահել, որ Աստված օգնի նրանց մոտենալ Իրեն և երկրպագել: Հիսուսն իր իսկ օրինակով ցույց տվեց ծոմ պահելու կարևորությունը (տես Ղուկաս Դ.1–4): Վերջին օրերի հայտնությունների միջոցով մենք սովորում ենք, որ Տերը դեռևս ակնկալում է, որ Իր ժողովուրդը հաճախ ծոմ պահի ու աղոթի (տես ՎևՈւ 88.76):

Ծոմ պահել նշանակում է ուտելիք և ըմպելիք չօգտագործել: Ժամանակ առ ժամանակ ծոմ պահելը օգտակար է մեր մարմնի համար և մեր միտքը գործուն է դարձնում:

Փրկիչը մեզ ուսուցանել է, որ նպատակով ծոմ պահելն ավելին է, քան ուտելիք և ըմպելիք չօգտագործելը: Մենք պետք է նաև կենտրոնանանք հոգևոր գործերի վրա:

Երբ ծոմ ենք պահում, մենք պետք է աղոթենք:

Աղոթքը ծոմապահության անհրաժեշտ մասն է: Սուրբ գրություններում ամենուր աղոթքը և ծոմապահությունը միասին են նշվում: Մեր ծոմապահությունը պետք է ուղեկցվի անկեղծ աղոթքով, և մենք պետք է սկսենք և ավարտենք մեր ծոմապահությունը աղոթքով:

Ուսուցիչներին. Հնարավոր է, դուք ցանկանաք դասարանի կամ ընտանիքի անդամներին բաժանել երկուսից չորս հոգուց բաղկացած խմբերի և յուրաքանչյուր խմբին հնարավորություն տաք քննարկել ծոմապահությունը ավելի ուրախ փորձառություն դարձնելու ուղիները: Ապա աշխատեք միասին, որ, միգուցե, գրատախտակին կամ մեծ թղթի վրա մի ցուցակ կազմեք՝ ընդգրկելով յուրաքանչյուրի միտքը:

Մենք պետք է ծոմ պահենք նպատակով

Ծոմապահությունը կարող է բազմաթիվ նպատակներ ունենալ: Մենք կարող ենք թուլություններ կամ խնդիրներ հաղթահարել ծոմ պահելով և աղոթելով: Երբեմն մենք կարող ենք ցանկանալ ծոմ պահել և աղոթել ուրիշների համար օգնություն կամ առաջնորդություն հայցելու նպատակով, ինչպես օրինակ՝ ընտանիքի անդամի համար, որը հիվանդ է և օրհնության կարիք ունի (տես Մոսիա 27.22–23): Ծոմապահության միջոցով մենք կարող ենք իմանալ բաների ճշմարտությունը, ինչպես Ալմա մարգարեն Մորմոնի Գրքում: Նա ասել է. «Ես ծոմ եմ պահել ու աղոթել շատ օրեր, որ ես ինքս կարողանայի իմանալ այս բաները: Եվ այժմ, ես ինքս գիտեմ, որ դրանք ճշմարիտ են. քանզի Տեր Աստված դրանք հայտնի դարձրեց ինձ Սուրբ Հոգու միջոցով. և դա հայտնության ոգին է, որն իմ մեջ է» (Ալմա 5.46):

Մենք կարող ենք ծոմ պահել ուրիշներին օգնելու համար, որ ընդունեն ճշմարտությունը: Ծոմապահությունը կարող է մեզ մխիթարել վշտի և սգո ժամանակ (տես Ալմա 28.4–6): Ծոմապահությունը մեզ կարող է օգնել խոնարհ դառնալ և ավելի մոտ զգալ մեր Երկնային Հորը (տես Հելաման 3.35):

Ծոմապահության ժամանակ մեր նպատակը չպետք է լինի ուրիշների վրա տպավորություն թողնելը: Տերը խորհուրդ է տվել.

«Երբ ծոմ պահէք, տրտմերես մի՛ լինէք կեղծաւորների նման, որոնք իրենց երեսները տխրեցնում են, որպէսզի մարդկանց այնպէս երեւան, թէ ծոմ են պահում.

Ճշմարիտ եմ ասում ձեզ, ա՛յդ իսկ է նրանց վարձը:

Այլ երբ դու ծոմ պահես, օծի՛ր քո գլուխը եւ լուա՛ քո երեսը, որպէսզի չերեւաս մարդկանց որպէս ծոմ պահող» (Մատթեոս Զ.16–18):

Մենք պետք է ծոմ պահելիս զվարթ լինենք և մեր ծոմապահությունը չզովազդենք ուրիշներին:

- Ինչպե՞ս է մեր վերաբերմունքն ազդում ծոմի մեր փորձառության վրա:

Ծոմի օրը

Վերջին օրերի սրբերը յուրաքանչյուր ամսվա մեկ կիրակին պահում են որպես ծոմի օր: Այդ օրը երկու հաջորդական ճաշաժամի ընթացքում մենք հրաժարվում ենք ուտելիքից և ըմպելիքից: Եթե մենք ընթրում ենք շաբաթ երեկոյան, ապա ոչինչ չենք ուտի և չենք խմի մինչև կիրակի օրվա ընթրիքը:

Բոլոր անդամները, որոնք ֆիզիկապես ունակ են, պետք է ծոմ պահեն: Մենք պետք է քաջալերենք մեր երեխաներին, իրենց մկրտությունից հետո, որ ծոմ պահեն, սակայն երբեք չպետք է ստիպենք նրանց: Ծոմի օրը հատուկ օր է մեզ համար, որպեսզի Տիրոջ առաջ խոնարհվենք ծոմով ու աղոթքով: Դա մեր մեղքերից ներում և ուժ խնդրելու օր է, որպեսզի հաղթահարենք մեր թուլությունները և ներենք ուրիշներին:

Ծոմի կիրակի օրը Եկեղեցու անդամները հավաքվում են միասին և ճաշակում հաղորդությունից: Նրանք ամրանում են և միմյանց ամրացնում՝ վկայություն բերելով ծոմի և վկայության ժողովին:

- Ինչպե՞ս եք դուք օրհնվել՝ կիսվելով ձեր վկայությամբ ծոմի և վկայության ժողովին: Ինչպե՞ս եք դուք օրհնվել, երբ ուրիշներն են կիսվել իրենց վկայությամբ:

Ծոմի նվիրատվություններ

- Ինչո՞ւ ենք մենք ծոմի նվիրատվություններ վճարում:

Երբ մենք ամեն ամիս ծոմ ենք պահում, Տերը խնդրում է, որ մենք օգնենք կարիքավորներին: Մի ձևը, որով մենք անում ենք դա, քահանայության պատշաճ իշխանություն կրողի միջոցով այն գումարը նվիրելն է, որը մենք ծախսած կլինեինք երկու ճաշի համար: Մենք պետք է որքան կարող ենք շռայլ լինենք նվիրելիս: Ծոմի նվրատվության միջոցով մենք միանում ենք Տիրոջը՝ օժանդակելով մեր ավելի պակաս հաջողակ եղբայրներին ու քույրերին:

Մենք օրհնվում ենք, երբ ծոմ ենք պահում

- Ի՞նչ օրհնություններ կարող ենք ստանալ, երբ մենք պատշաճ ձևով ծոմ ենք պահում:

Եսայիան՝ Հին Կտակարանի մարգարեն, գրել է Տիրոջ հարուստ խոստումների մասին նրանց համար, ովքեր ծոմ են պահում և օգնում կարիքավորներին: Մեզ խոստացվում է խաղաղություն, բարելավված առողջություն և հոգևոր առաջնորդություն: Եսայիան մեզ ասում է այն օրհնությունների մասին, որոնք գալիս են, երբ ծոմ ենք պահում. «Այն ժամանակ այգաբացի պէս պիտի ծաւալուի քո լոյսը, եւ արագօրէն պիտի հասնի քո ապաքինումը, քո առջեւից պիտի ընթանայ քո արդարութիւնը, եւ Աստծու փառքը պիտի պահպանի քեզ: Այն ժամանակ պիտի կանչես, եւ Աստուած պիտի լսի քեզ. մինչեւ դու խօսես, նա պիտի ասի. Ահա ես» (Եսայիա ԾԸ.8–9):

Ծոմապահությունը բարելավում է մեր կյանքը և ավելացնում մեր ուժը: Այն օգնում է մեզ ապրել ավետարանի մյուս սկզբունքներով, որովհետև այն մեզ մոտեցնում է Տիրոջը:

Ծոմապահությունը ուսուցանում է ինքնատիրապետում:

Ծոմապահությունը մեզ օգնում է ամրացնել բնավորությունը: Երբ պատշաճ ձևով ծոմ ենք պահում, մենք կսովորենք կառավարել մեր ցանկություններն ու կրքերը: Մենք ավելի են ուժեղանում, ինքներս մեզ ապացուցելով, որ ինքնատիրապետում ունենք: Եթե մեր երեխաներին սովորեցնենք ծոմ պահել, նրանք հոգևոր ուժ կզարգացնեն, որպեսզի ավելի մեծ գայթակղություններ հաղթահարեն իրենց կյանքում:

Ծոմապահությունը մեզ հոգևոր ուժ է պարգևում

Երբ իմաստությամբ ու աղոթքով ծոմ ենք պահում, մենք զարգացնում ենք մեր հավատքը: Այդ հավատքով մենք ավելի մեծ հոգևոր զորություն կունենանք: Օրինակ՝ Ալման (Մորմոնի Գրքի մարգարեներից մեկը) պատմում է Մոսիայի որդիների զարմանահրաշ դարձի գալուց տարիներ հետո կրկին նրանց հանդիպելու մասին: Նա մեծ ուրախություն ապրեց, երբ իմացավ, որ նրանք ամրացրել էին իրենց հավատքը և մեծ հոգևոր ուժ էին զարգացրել: Նրանք այդ ուժը ձեռք էին բերել, որովհետև «նրանք նվիրվել էին շատ աղոթքի ու ծոմի. այդ պատճառով նրանք ունեին մարգարեության ոգին ու հայտնության ոգին» (Ալմա 17.3):

Մոսիայի որդիները 14 տարի ուսուցանել էին Լամանացիներին: Քանի որ Մոսիայի որդիները ծոմ էին պահել ու աղոթել, Տիրոջ Հոգին ավելացրել էր նրանց խոսքերի զորությունը: Դա նրանց մեծ հաջողություն էր տվել միսիոներական աշխատանքի մեջ: (Տես Ալմա 17.4):

Փրկիչն ասել է նրանց, ովքեր պատշաճ ձևով ծոմ են պահում. «Քո Հայրը, որ տեսնում է, ինչ որ ծածուկ է, կը հատուցի քեզ հայտնաբար» (Մատթեոս Զ.18):

- Ինչպե՞ս կարող ենք մեր հոգևոր ուժը մեծացնել, որպեսզի դիմակայենք գայթակղություններին, որպեսզի հայտնություն ստանանք, որպեսզի արդար գործեր անենք:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ղուկաս Բ.37, Ալմա 45.1 (ծոմապահության միջոցով Աստծուն երկրպագելը)
- Եսայիա ԾԸ.3–11 (պատշաճ ձևով ծոմ պահելը)
- Մոսիա 27.19, 23 (հիվանդների համար ծոմ պահելը)
- 3 Նեփի 27.1–3, Ելից ԼԴ.27–28 (հայտնության և վկայության համար ծոմ պահելը)
- Ալմա 6.6, 17.9 (Աստծուն չճանաչող մարդկանց համար ծոմ պահելը)
- Գործք ԺԳ.2–3 (Եկեղեցու ծառայողներ ընտրելու համար ծոմ պահելը)
- Մոսիա 4.26 (կարիքավորներին օգնելով մեղքերի թողությունը պահպանելը)

Զոհաբերություն

Գլուխ 26

Զոհաբերության իմաստը

Զոհաբերությունը նշանակում է Տիրոջը տալ մեր ժամանակից, մեր երկրային ունեցվածքից և մեր եռանդից այն, ինչ պահանջվում է Նրա աշխատանքի առաջխաղացման համար: Տերը պատվիրել է. «Նախ խնդրեցէ՛ք Աստծու արքայութիւնը եւ նրա արդարութիւնը» (Մատթեոս Զ.33): Զոհաբերելու մեր պատրաստակամությունը Աստծո հանդեպ մեր նվիրվածության ցուցանիշն է: Մարդիկ միշտ փորձվել և ստուգվել են՝ տեսնելու համար, թե արդյոք նրանք Աստծո գործերը առաջին տեղում կդնեն:

- Ինչո՞ւ է կարևոր զոհաբերել այնպես, ինչպես Տերն է խնդրում՝ առանց փոխարենը որևէ բան ակնկալելու:

Զոհաբերության օրենքը կիրառվել է հնում

- Ո՞րն էր հնում Տիրոջ ուխտի ժողովրդի կատարած զոհաբերությունների կարևորությունը:

Ադամի և Եվայի ժամանակից մինչև Հիսուս Քրիստոսը, Տիրոջ ժողովուրդը կիրառում էր զոհաբերության օրենքը: Նրանց պատվիրվել էր որպես զոհեր մատուցել իրենց հոտերի առաջնեկներին: Այդ կենդանիները պետք է լինեին կատարյալ և անբիծ: Տրվել էր մի արարողություն, որպեսզի ժողովրդին հիշեցվեր, որ Հիսուս Քրիստոսը՝ Հոր Անդրանիկը, պիտի զար աշխարհ: Նա բոլոր առումներով կատարյալ պիտի լիներ, և Նա իրեն զոհ պիտի մատուցեր մեր մեղքերի համար: (Տես Մովսես 5.5–8:)

Ուսուցիչներին. Դուք պարտադիր չէ, որ ուսուցանեք յուրաքանչյուր գլխի ամբողջ նյութը: Երբ աղոթքով պատրաստվում եք ուսուցանել, փնտրեք Հոգու առաջնորդությունը, որպեսզի իմանաք, թե տվյալ գլխի որ մասն ուսուցանեք և ինչ հարցեր տաք:

Հիսուսը եկավ և Իրեն զոհ մատուցեց, ճիշտ ինչպես մարդկանց ուսուցանել էին, որ Նա կանի: Նրա զոհաբերության շնորհիվ՝ Հարության միջոցով, բոլորը կփրկվեն ֆիզիկական մահից, և բոլորը կարող են փրկվել իրենց մեղքերից՝ Հիսուս Քրիստոսին հավատալով:

Քրիստոսի քավիչ զոհաբերությունը նշեց արյան հեղմամբ զոհաբերության վերջը: Այդ արտաքին զոհաբերությունը փոխարինվեց հաղորդության արարողությամբ: Հաղորդության արարողությունը տրվել էր, որպեսզի մեզ հիշեցվի Փրկչի մեծ զոհաբերությունը: Մենք պետք է հաճախ ճաշակենք հաղորդությունից: Հացի և ջրի խորհրդանիշները մեզ հիշեցնում են Փրկչի մարմինը և Նրա արյունը, որը Նա թափեց մեզ համար (տես այս գրքի 23-րդ գլուխը):

- Ինչո՞ւ է Քավությունը համարվում վերջին ու մեծ զոհաբերությունը:

Մենք դեռ պետք է զոհաբերենք:

- Ինչպե՞ս ենք մենք պահում զոհաբերության օրենքն այսօր:

Չնայած որ արյունահեղությամբ զոհաբերությանը վերջ տրվեց, Տերը դեռևս մեզանից զոհաբերություն է սպասում: Սակայն այժմ նա պահանջում է ուրիշ տեսակի զոհաբերություն: Նա ասել է. «Դուք այլևս ինձ չպետք է մատուցեք արյուն թափելը. . . ու ձեր ողջակեզները վերջ պիտի տրվեն: . . . Եվ որպես զոհ դուք պիտի մատուցեք ինձ կոտրված սիրտ և փշրված հոգի» (3 Նեփի 9.19–20): «Կոտրված սիրտ և փշրված հոգի» նշանակում է, որ մենք պետք է խորը զղջում մատուցենք մեր մեղքերի համար, երբ մենք խոնարհեցնում ենք մեզ և ապաշխարում դրանցից:

Մենք պետք է պատրաստակամ լինենք Տիրոջը զոհաբերելու ամեն բան, ինչ ունենք:

- Ինչո՞ւ են մարդիկ զոհաբերելու պատրաստակամություն ցուցաբերում:

Պողոս Առաքյալը գրել է, որ մենք պետք է դառնանք կենդանի պատարագ՝ Աստծո համար սուրբ և ընդունելի (տես Հռովմայեցիս ԺԲ.1)։

Եթե մենք պետք է կենդանի պատարագ լինենք, մենք պետք է պատրաստակամ լինենք տալու ամեն բան, ինչ ունենք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու համար, որպեսզի կառուցենք Աստծո արքայությունը երկրի վրա և ջանանք առաջ բերել Սիոնը (տես 1 Նեփի 13.37)։

Երիտասարդ մի հարուստ իշխան հարցրեց Փրկչին. «Ի՞նչ գործեմ, որ յավիտենական կեանքը ժառանգեմ»։ Հիսուսը պատասխանեց. «Պատուիրանները գիտես՝ մի՛ շնացիր, մի՛ սպանիր, մի՛ գողացիր, սուտ մի՛ վկայիր, մեծարի՛ր քո հօրը եւ մօրը»։ Եվ հարուստն ասաց. «Այդ բոլորը պահել եմ իմ մանկութիւնից»։ Երբ Հիսուսը լսեց այդ, Նա ասաց. «Դեռ մի բան պակաս է քեզ. ինչ որ ունես, վաճառի՛ր եւ տո՛ւր աղքատներին եւ երկնքում գանձեր կունենաս, և եկ հետևիր ինձ»։ Երբ երիտասարդը լսեց այս, տրտմեց։ Նա չափազանց հարուստ էր և նրա սիրտն իր հարստությունների վրա էր։ (Տես Ղուկաս ԺԸ.18–23, տես նաև այս գլխի նկարը։)

Երիտասարդ իշխանը լավ մարդ էր։ Սակայն երբ փորձության հանդիպեց, նա չկամեցավ զոհաբերել իր աշխարհիկ ունեցվածքը։ Մյուս կողմից՝ Տիրոջ աշակերտներ Պետրոսը և Անդրեասը պատրաստ էին զոհաբերելու ամեն ինչ հանուն Աստծո արքայության։ Երբ Հիսուսը նրանց ասաց. «Հետևեք ինձ. . . նրանք իսկոյն թողնելով ուռկանները՝ գնացին նրա յետեւից» (Մատթեոս Դ.19–20)։

Աշակերտների նման, մենք կարող ենք Տիրոջը զոհաբերել մեր ամենօրյա սովորությունները։ Մենք կարող ենք ասել. «Քո՛ կամքը կատարվի»։ Աբրահամն արեց այդ։ Նա ապրեց երկրի վրա Քրիստոսից առաջ՝ այն օրերում, երբ զոհերն ու ողջակեզները դեռ պահանջվում էին։ Որպես Աբրահամի հավատքի փորձություն, Տերը նրան պատվիրեց զոհ մատուցել իր որդուն՝ Իսահակին։ Իսահակը Աբրահամի և Սարրայի միակ որդին էր։ Նրան որպես զոհ մատուցելը չափազանց մեծ ցավ էր Աբրահամի համար։

Այնուամենայնիվ, նա և Իսահակը երկար ճանապարհ գնացին դեպի Մորիա սարը, որտեղ պետք է զոհ մատուցեին: Նրանք երեք օր ճամփորդեցին: Պատկերացրեք Աբրահամի մտքերը և նրա սրտի ցավը: Նրա որդին զոհ պիտի դառնար Տիրոջ համար: Երբ նրանք հասան Մորիա սարը, Իսահակը տանում էր փայտը, իսկ Աբրահամը տանում էր կրակը և դանակը դեպի այն վայրը, որտեղ նրանք զոհասեղան պիտի կառուցեին: Իսահակն ասաց. «Հա՛յր. . ., ահա կրակը, եւ ահա փայտը, հապա ո՞ւր է ողջակիզելու ոչխարը»: Աբրահամը պատասխանեց. «Աստուած կը հոգայ իր ողջակիզելու ոչխարի մասին, որդեա՛կ»: Ապա Աբրահամը զոհասեղան շինեց և վրան դրեց փայտը: Նա Իսահակին կապեց և դրեց փայտի վրա: Ապա վերցրեց դանակը, որ սպանի Իսահակին: Այդ պահին Տիրոջ հրեշտակը կանգեցրեց նրան՝ ասելով. «Աբրահա՛մ. . . ձեռք մի՛ տուր պատանուն, նրան որեւէ վնաս մի՛ պատճառիր. որովհետեւ այժմ համոզուեցի, որ դու երկիւղ ունես Աստծու նկատմամբ եւ ինձ համար չես խնայի քո որդուն»: (Տես Ծննդոց ԻԲ.1–14):

Աբրահամի ուրախությանը պետք է որ չափ չլիներ, երբ այլևս չէր պահանջվում զոհաբերել իր որդուն: Բայց նա այնքան էր սիրում Տիրոջը, որ պատրաստ էր անելու ինչ-որ Տերը կխնդրեր:

- Զոհաբերության ինչպիսի՞ օրինակի եք դուք ականատես եղել ձեր իմացած մարդկանց կյանքում: Զոհաբերության ի՞նչ օրինակ եք դուք տեսել ձեր նախնիների կյանքում: Ի՞նչ օրինակ գիտեք Եկեղեցու վաղ անդամների կյանից: Ի՞նչ օրինակ գիտեք սուրբ գրություններից: Ի՞նչ եք սովորել այդ օրինակներից:

Զոհաբերությունը մեզ պատրաստում է ապրելու Աստծո ներկայության մեջ

Միայն զոհաբերության միջոցով մենք կարող ենք արժանի դառնալ ապրելու Աստծո ներկայության մեջ: Միայն զոհաբերության միջոցով մենք կարող ենք հավերժական կյանք վայելել: Շատերը, ովքեր ապրել են մեզանից առաջ, զոհաբերել են ամեն բան, ինչ ունեցել են: Մենք պետք է պատրաստ լինենք

միևնույնն անելու, եթե կամենում ենք հարուստ վաստակ ունենալ, ինչպես իրենք։

Հնարավոր է, մեզանից չպանաջվի զոհաբերել բոլոր բաները։ Բայց Աբրահամի նման, մենք պետք է կամենանք զոհաբերել ամեն ինչ, որ արժանի դառնանք Տիրոջ ներկայության համար։

Տիրոջ ժողովուրդը միշտ զոհաբերող է եղել՝ մեծ և տարբեր ձևերով։ Ոմանք ավետարանի համար անցել են դժվարությունների ու ծաղրանքի միջով։ Եկեղեցու նորադարձների ընտանիքներից ոմանք երես են թեքել նրանցից։ Ոմանցից երես են թեքել հին ընկերները։ Որոշ անդամներ կորցրել է աշխատանքը. ոմանք զոհել են իրենց կյանքը։ Սակայն Տերը նկատում է մեր զոհաբերությունը. Նա խոստացել է. «Ամէն ոք, որ թողել է տուն կամ եղբայրներ, կամ քոյրեր, կամ հայր, կամ մայր, կամ կին, կամ որդիներ, կամ ագարակներ՝ իմ անուան համար, հարիւրապատիկ պիտի ստանայ եւ յաւիտենական կեանքը պիտի ժառանգի» (Մատթեոս ԺԹ.29)։

Երբ ավետարանի մեր վկայություններն աճում են, մենք ունակ են դառնում ավելի մեծ զոհաբերություններ անելու Տիրոջը։ Նկատեք այս իրական օրինակներում կատարված զոհաբերությունները.

Գերմանիայում Եկեղեցու անդամներից մեկը տարիներ շարունակ պահել էր իր տասանորդը, մինչև որ հանդիպեց քահանայության իշխանավորի, որը կարող էր վերցնել նրա տասանորդը։

Սփոփող Միության քույրերից մեկը 30 տարի առանց մեկ բացթողման կատարել էր այցելող քույրի իր հանձնարարությունը։

Հարավային Աֆրիկայում Սրբերի մի խումբ երեք օր շարունակ կանգնած ճանապարհ էր գնացել, որ կարողանար լսել և տեսնել մարգարեին։

Մեքսիկայում տարածքի համաժողովի ժամանակ Եկեղեցու անդամները քնել էին գետնի վրա և ծոմ պահել համաժողովի օրերի ընթացքում։ Նրանք օգտագործել էին իրենց ողջ զումարը համաժողովին հասնելու համար և ոչինչ չէր մնացել ուտելիքի և ապաստանի համար։

Մի ընտանիք վաճառեց իր մեքենան, որպեսզի ձեռք բերի այն գումարը, որն անհրաժեշտ էր ներդնել տաճարի կառուցման հիմնադրամին:

Մեկ այլ ընտանիք վաճառեց իր տունը, որ գումար ունենար տաճար հաճախելու համար:

Շատ հավատարիմ Վերջին օրերի սրբեր գոյատևելու բավական միջոցներ չունեն, այդուհանդերձ, նրանք վճարում են իրենց տասանորդը և նվիրատվությունները:

Մի եղբայր զոհաբերել էր իր աշխատանքը, որովհետև հրաժարվել էր աշխատել Կիրակի օրը:

Մի ճյուղում երիտասարդները անկաշկանդ և պատրաստակամորեն նվիրում էին իրենց ժամանակը, որպեսզի հոգ տանեին երեխաների համար, որոնց ծնողներն օգնում էին կառուցել ժողովատունը:

Երիտասարդ տղաները և աղջիկները միսիայում ծառայելու նպատակով թողել կամ հետաձգել են իրենց աշխատանքի, կրթության կամ սպորտով զբաղվելու հնարավորությունները:

Բազում մարդկանց շատ օրինակներ կարելի է թվարկել, ովքեր զոհաբերություն են անում Տիրոջ համար: Այնուամենայնիվ, տեղը մեր Երկնային Հոր թագավորությունում արժե ցանկացած զոհաբերություն, որ անում ենք մեր ժամանակից, շնորհներից, եռանդից և կյանքից: Զոհաբերության միջոցով մենք կարող ենք գիտելիք ձեռք բերել, որ մենք ընդունված ենք Տիրոջ կողմից (տես ՎևՈւ 97.8):

- Ինչ եք կարծում, ինչպե՞ս է զոհաբերելու մեր պատրաստակամությունը կապված Աստծո ներկայության մեջ ապրելու մեր պատրաստվածության հետ:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ղուկաս ԺԲ.16–34 (որտեղ ձեր գանձն է, այնտեղ էլ ձեր սիրտն է)
- Ղուկաս Թ.57–62 (զոհաբերությունը պետք է պատշաճ լինի Աստծո արքայության համար)

- ՎևՈւ 64.23, 97.12 (այսօր զոհաբերության օր է)
- ՎևՈւ 98.13–15 (նրանք, ովքեր զոհաբերում են իրենց կյանքը Տիրոջ համար, կգտնեն այն)
- Ալմա 24 (Ամմոնի ժողովուրդը նախընտրեց զոհաբերել իր կյանքը, քան խախտել իր երդումը Տիրոջ հետ)

Աշխատանք և անձնական պատասխա-նատվություն

Գլուխ 27

Աշխատանքը հավերժական սկզբունք է

- Ինչպիսի՞ փորձառություններ եք դուք ունեցել, որոնք ձեզ ցույց են տվել աշխատանքի կարևորությունը:

Մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսն իրենց օրինակով և ուսուցմամբ մեզ ցույց են տվել, որ աշխատանքը կարևոր է երկնքում և երկրի վրա: Աստված աշխատեց, որպեսզի ստեղծի երկինքներն ու երկիրը: Նա այնպես արեց, որ ծովերը մեկտեղ ժողովվեն և ցամաքը հայտնվի: Նա այնպես արեց, որ կանաչ խոտը, խոտաբույսերը և ծառերը աճեն հողի վրա: Նա ստեղծեց արևը, լուսինը և աստղերը: Նա ստեղծեց ամեն կենդանի բան ծովում և ցամաքում: Ապա նա Ադամին և Եվային դրեց երկրի վրա, որ հոգ տանեն և իշխանություն ունենան բոլոր կենդանիների վրա: (Տես Ծննդոց Ա.1–28:)

Հիսուսն ասել է. «Իմ Հայրը մինչեւ այժմ գործում է, ուրեմն ես եւս գործում եմ» (Հովհաննես Ե.17): Նա ասել է նաև. «Ես պէտք է կատարեմ գործերը նրա, ով ինձ ուղարկեց» (Հովհաննես Թ.4):

Ուսուցիչներին. Փորձեք օգնել դասարանի կամ ընտանիքի յուրաքանչյուր անդամի մասնակցել դասին: Մասնակիցները կարող են օգնել՝ դասավորելով աթոռները, ասել բացման և փակման աղոթքները, գրել գրատախտակին, կարդալ սուրբ գրությունները բարձրաձայն, պատասխանել հարցերին, կիսվել վկայությամբ կամ ամփոփել դասը:

Մեզ պատվիրված է աշխատել

Եդեմի պարտեզից Ադամի և Եվայի դուրս գալու ժամանակներից աշխատանքը եղել է ապրելու միջոց։ Տերն ասել է Ադամին. «Քո երեսի քրտինքով պիտի ուտես հացդ» (Ծննդոց Գ.19)։ Ադամը և Եվան մշակում էին հողը, որպեսզի հոգային իրենց և իրենց երեխաների կարիքները (տես Մովսես 5.1)։

Տերն ասել է Իսրայելի ժողովրդին. «Վեց օր պիտի աշխատես» (Ելից Ի.9)։

Վերականգնված Եկեղեցու վաղ օրերին Տերն ասել է Վերջին օրերի սրբերին. «Արդ, ես՝ Տերս, չեմ հավանում Սիոնի բնակիչներին, քանի որ նրանց մեջ կան ծույլեր» (ՎևՈւ 68.31)։

Աստծո մարգարեն ասել է. «Աշխատանքը պետք է գահաղրվի որպես Եկեղեցու անդամների կյանքի ղեկավարող սկզբունք» (Հեբեր Ջ. Գրանտ, *Teachings of Presidents of the Church: Heber J. Grant* [2002], 115)։

Ընտանեկան պատասխանատվություն

- Որո՞նք են տունը պահպանելու պարտականություններից մի քանիսը, որ ունեն հայրերը, մայրերը և երեխաները։ Ի՞նչ կարող են անել ընտանիքի անդամները, որպեսզի կիսեն աշխատանքի պարտականությունը։

Ծնողներն աշխատում են միասին, որպեսզի ապահովեն իրենց ընտանիքի ֆիզիկական և հուզական բարեկեցությունը։ Նրանք երբեք չպետք է սպասեն, որպեսզի ինչ-որ մեկն իրենց փոխարեն կատարի այդ պարտականությունը։ Պողոս Առայալը գրել է. «Իսկ եթէ մէկը իւրայիններին եւ մանաւանդ ընտանիքին խնամք չի տանում, հաւատն ուրացել է» (1 Տիմոթեոս Ե.8)։

Ամուսինները պետք է Տիրոջից ոգեշնչում փնտրեն և հետևեն մարգարեների խորհրդին, երբ հաստատում են անհատական պարտականություններ։ Տուն ստեղծելը, որտեղ ամեն օր ուսուցանվում են ավետարանի սկզբունքները և որտեղ տիրում է սիրո ու կարգապահության մթնոլորտ, նույնքան կարևոր է, որքան ուտելիքի և հագուստի հիմնական անհրաժեշտ կարիքները բավարարելը։

Անհրաժեշտ է, որ երեխաներն ընտանիքի գործերի իրենց մասն անեն: Անհրաժեշտ է, որ երեխաներն աշխատանքի այնպիսի հանձնարարություններ ունենան, որոնք համապատասխանում են նրանց կարողություններին: Նրանց անհրաժեշտ է գովաբանել իրենց հաջողությունների համար: Աշխատանքի նկատմամբ լավ վերաբերմունքը, սովորություններն ու հմտությունները ձեռք են բերվում տանը ունեցած փորձառությունից:

Երբեմն մարդիկ դժվարություններ են ունենում, երբ փորձում են բավարարել իրենց ընտանիքի կարիքները: Քրոնիկական հիվանդությունները, ամուսնու կորուստը կամ ծնողի խնամքի ավելացումը կարող են մեծացնել տնային պարտականությունների հոգսը: Մեր Երկնային Հայրը հիշում է ընտանիքներին այդ իրավիճակներում և նրանց ուժ է տալիս կատարելու իրենց պարտականությունները: Նա միշտ կօրհնի նրանց, եթե նրանք հավատքով խնդրեն Նրան:

Մենք կարող ենք վայելել մեր աշխատանքը

- Ինչպե՞ս է մեր վերաբերմունքն ազդում մեր աշխատանքի վրա:

Որոշ մարդիկ աշխատանքը բեռ են համարում: Մյուսների համար դա կյանքի ոգևորիչ մասն է: Կյանքի լիարժեք արտոնությունները վայելելու ձևերից մեկը սովորելն է՝ սիրել աշխատանքը:

Մեզանից ոչ բոլորն են ի վիճակի ընտրել այնպիսի աշխատանք, ինչպիսին ցանկանում են: Մեզանից ոմանք երկար ժամեր աշխատում են միայն գոյության չնչին միջոցների համար: Դժվար է հաճույք ստանալ նման աշխատանքից: Այնուամենայնիվ, ամենաերջանիկ մարդիկ սովորել են հաճույք ստանալ իրենց աշխատանքից, ինչպիսին էլ որ այն լինի:

Մենք կարող ենք մեկմեկու օգնել մեր աշխատանքի մեջ: Ամենածանր բեռն ավելի թեթև է դառնում, երբ ինչ-որ մեկը կիսում է այն:

Աշխատանքի հանդեպ մեր վերաբերմունքը շատ կարևոր է: Հետևյալ պատմությունը ցույց է տալիս, թե մի մարդ ինչ էր

տեսնում իր առօրյա աշխատանքի ետևում: Մի ճամփորդ անցնում էր քարհանքի մոտով և տեսավ երեք մարդու աշխատելիս: Նա յուրաքանչյուր մարդուց հարցրեց, թե ինչ է նա անում: Յուրաքանչյուրի պատասխանը տարբեր վերաբերմունք էր ցույց տալիս միևնույն աշխատանքի վերաբերյալ: «Ես քար եմ կտրում», - ասաց առաջին մարդը: Երկրորդը պատասխանեց. «Ես երեք տասանոց եմ վաստակում ամեն օր»: Երրորդ մարդը ժպտաց և ասաց. «Ես օգնում եմ Աստծո տունը կառուցել»:

Ցանկացած ազնիվ աշխատանքով մենք կարող ենք ծառայել Աստծուն: Բենիամին թագավորը՝ Նեփիացի մարգարեն, ասել է. «Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք» (Մոսիա 2.17): Եթե մեր աշխատանքը բավարարում է միայն մեզ և մեր ընտանիքներին, մենք դեռևս օգնում ենք Աստծո զավակներից մի քանիսին:

- Ինչպե՞ս կարող ենք մենք բարելավել մեր վերաբերմունքը աշխատանքի նկատմամբ:

Աստված դատապարտում է ծուլությունը

Տերը գոհ չէ նրանցով, ովքեր ծույլ են կամ պորտաբույծ: Նա ասել է. «Ծույլը տեղ չի ունենա եկեղեցում, եթե չապաշխարի և չուղղի իր ճանապարհները» (ՎևՈ 75.29): Նա նաև պատվիրել է. «Ծույլ մի եղիր. քանզի նա, ով ծույլ է, չպետք է ուտի աշխատողի հացը, ոչ էլ հագնի նրա հանդերձները» (ՎևՈ 42.42):

Եկեղեցու վաղ օրերից մարգարեներն ուսուցանել են Վերջին օրերի սրբերին անկախ և ինքնապահով լինել և խուսափել ծուլությունից: Ճշմարիտ Վերջին օրերի սրբերը իրենց ապահովելու բեռը կամավոր չեն դնի ուրիշների վրա: Որքան որ ի զորու են, նրանք իրենց և իրենց ընտանիքները կապահովեն կյանքի անհրաժեշտ միջոցներով:

Որքան որ ի զորու են, բոլոր Եկեղեցու անդամները պետք է պատասխանատվություն ստանձնեն հոգալու իրենց հարազատների համար, ովքեր ի զորու չեն հոգալու իրենց մասին:

- Ի՞նչ ազդեցություն է թողնում ծուլությունը անհատի վրա, ընտանիքի վրա, հասարակության վրա:

Աշխատանք, զվարճանք և հանգիստ

• Ինչո՞ւ է կարևոր հավասարակշռություն պահպանել աշխատանքի, զվարճանքի և հանգստի միջև:

Յուրաքանչյուրս պետք է պատշաճ հավասարակշռություն պահպանենք աշխատանքի, զվարճանքի և հանգստի մեջ: Կա մի հին ասացվածք. «Ոչինչ չանելը բոլոր աշխատանքներից ամենադժվարն է, որովհետև մարդ չի կարողանում դադար տալ հանգստանալուց»: Առանց աշխատանքի հանգիստն ու ուժերի վերականգնումն անիմաստ են:

Հանգիստը ոչ միայն հաճելի է և անհրաժեշտ, այլ մեզ պատվիրված է հանգստանալ Հանգստության օրը (տես Ելից Ի.10, ՎԵՈՒ 59.9–12): Վեց օրվա աշխատանքից հետո հանգստի այս օրը թարմություն է բերում հետևող օրերի համար: Տերը նաև խոստանում է «երկրի լիությունը» նրանց, ովքեր պահում են Հանգստության օրը (տես ՎԵՈՒ 59.16–20; տես նաև այս գրքի 24-րդ գլուխը):

Շաբաթվա մյուս օրերին, ի լրումն աշխատանքի, մենք կարող ենք ժամանակ անցկացնել մեր շնորհները զարգացնելու, մեր նախասիրությունները վայելելու կամ մեզ թարմացնող այլ միջոցառումների վրա:

• Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի լավ հավասարակշռություն պահպանենք աշխատանքի, զվարճանքի և հանգստի միջև: Ինչպե՞ս կարող են ծնողներն օգնել իրենց երեխաներին պահպանել այդ հավասարակշռությունը:

Աշխատանքի օրհնությունը

• Որո՞նք են այն օրհնություններից մի քանիսը, որոնք գալիս են ազնիվ աշխատանքից:

Աստված հայտնել է Ադամին. «Քո երեսի քրտինքով պիտի ուտես հացդ» (Ծննդոց Գ.19): Բացի ֆիզիկական օրենքից, սա նաև Ադամի հոգին փրկելու օրենք էր: Հոգևոր, մտավոր և ֆիզիկական աշխատանքի մեջ իրական բաժանում չկա: Աշխատանքն անհրաժեշտ է մեզանից յուրաքանչյուրի համար,

որպեսզի աճենք, զարգացնենք բնավորությունը և բավարարվածություն զգանք, որը ծույլը չի վայելում:

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է. «Եկեք գիտակցենք, որ աշխատելու արտոնությունը պարգև է, աշխատելու զորությունն օրհնություն է, աշխատելու սերը՝ հաջողություն (*Pathways to Happiness* [1957], 381):

«Մարդիկ կան, որպեսզի ունենան ուրախություն» (2 Նեփի 2.25): Աշխատանքը լիարժեք ուրախության բանալի է Աստծո ծրագրում: Եթե արդար լինենք, մենք կվերադառնանք ապրելու մեր Երկնային Հոր հետ, և մենք աշխատանք կունենանք անելու: Երբ մենք դառնանք նրա նման, մեր աշխատանքը կդառնա Նրա աշխատանքի նման: Նրա աշխատանքն է «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Մովսես 4.23–25 (Ադամն ասաց, որ իր ողջ կյանքում կաշխատի իր ուտելիքի համար)
- ՎևՈւ 56.16–17 (Աստված զգուշացնում է հարուստներին ու աղքատներին ժլատությունից, նախանձից և ծուլությունից)
- ՎևՈւ 58.26–29 (մարդիկ պետք է ջանասիրաբար ներգրավված լինեն բարիք գործելու մեջ)
- Մատթեոս ԻԵ.14–30 (քանքարների առակը)
- Եփեսացիս Դ.28 (Այլևս մի գողացեք, այլ աշխատեք)
- Ա Թեսաղոնիկեցիս Դ.11–12 (աշխատեք ձեր ձեռքերով)
- 2 Նեփի 5.17 (Նեփին ուսուցանեց իր ժողովրդին աշխատել և ջանասեր լինել)

Ծառայություն

Գլուխ 28

Ինչպես կարող ենք մենք ծառայել

- Մտածեք այն ուղիների մասին, որոնցով մարդիկ ծառայել են ձեզ և ձեր ընտանիքի անդամներին:

Հիսուսն ասել է. «Ես ձեր մէջ եմ իբրեւ ծառա» (Ղուկաս ԻԲ.27): Որպես ճշմարիտ հետևորդներ՝ մենք նույնպես պետք է ծառայենք ուրիշներին:

Ծառայելն օգնելն է նրանց, ովքեր օժանդակության կարիք ունեն: Քրիստոսանման ծառայությունը զարգանում է իսկական սիրուց Փրկչի հանդեպ և սիրուց ու հոգատարությունից նրանց հանդեպ, ում նա մեզ հնարավորություններ ու ուղղություն է տալիս օգնելու: Սերն ավելի շատ է, քան զգացումը. երբ մենք սիրում ենք ուրիշներին, մենք ցանկանում ենք օգնել նրանց:

Մենք բոլորս պետք է կամենանք ծառայել՝ անկախ նրանից, թե որքան ենք մենք վաստակում, ինչ տարիքի ենք կամ ինչ հասարակական դիրք ունենք: Որոշ մարդիկ հավատում են, որ միայն աղքատներն ու ցածր դիրք ունեցող մարդիկ պետք է ծառայեն: Մյուսներն էլ մտածում են, որ միայն հարուստները պետք է ծառայություն մատուցեն: Սակայն Հիսուսը սովորեցրել է այլ կերպ: Երբ իր աշակերտներից երկուսի մայրը խնդրեց Նրան պատվել իր որդիներին Իր թագավորությունում, Հիսուսը պատասխանեց. «Ձեզանից ով որ կամենայ մեծ լինել, թող ձեզ ծառա լինի. և ձեզանից ով որ կամենայ առաջին լինել, թող ձեզ ծառա լինի (Մատթեոս Ի.26–27):

Կան ծառայելու շատ ձևեր: Մենք կարող ենք ուրիշներին ծառայել տնտեսապես, հասարարական, ֆիզիկական և հոգևոր ծառայությամբ: Օրինակ՝ մենք կարող ենք կիսվել ուտելիքով կամ այլ պարագաներով նրանց հետ, ովքեր ունեն դրա կարիքը: Մենք կարող ենք օգնել կարիքավորներին, ծոմի

շռայլ նվիրատվություններ անելով: Մենք կարող ենք ընկեր լինել նոր այցելող անդամին: Մենք կարող ենք տարեց մարդուն օգնել պարտեզում կամ հոգալ հիվանդի մասին: Մենք կարող ենք ուսուցանել ավետարանն ինչ-որ մեկին, ով ճշմարտության կարիք ունի, կամ մխիթարել մեկին, ով սգում է:

Մենք կարող ենք ծառայության փոքր և մեծ գործեր անել: Մենք երբեք չպետք է չօգնենք ինչ-որ մեկին այն պատճառով, որ չենք կարող մեծ բաներ անել: Մի որբևայրի պատմել է երկու երեխաների մասին, ովքեր թակել էին նրա դուռը նոր քաղաք նրա տեղափոխվելուց կարճ ժամանակ անց: Երեխաները նրան բերեցին մի զամբյուղ ուտելիք և մի գրություն, որում ասվում էր. «Եթե օգնության կարիք ունենաք, զանգահարեք մեզ»: Որբևայրին ուրախացավ այդ փոքր բարությամբ և երբեք չմոռացավ այն:

Այնուամենայնիվ, երբեմն մեզանից մեծ զոհաբերություն է պահանջվում, որպեսզի ծառայենք ինչ-որ մեկին: Փրկիչը զոհեց Իր կյանքը՝ ծառայելով մեզ:

- Մտածեք մարդկանց մասին՝ ձեր ընտանիքում կամ համայնքում, ովքեր տնտեսական, հասարակական, ֆիզիկական և հոգևոր ծառայության կարիք ունեն: Խորհեք այն մասին, թե ինչ կարող եք անել, որ ծառայեք նրանց:

Ինչու է Փրկիչը ցանկանում, որ մենք ծառայենք ուրիշներին:

- Ինչո՞ւ է Տերը ցանկանում, որ մենք ծառայենք ուրիշներին:

Տղամարդկանց և կանանց, տղաների ու աղջիկների ծառայության միջոցով է կատարվում Աստծո աշխատանքը: Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալը բացատրել է. «Աստված նկատում է մեզ և գիտի մեր կարիքները: Սակայն նրա օգնությունը մեզ գալիս է, սովորաբար, մարդկանց ծառայությամբ» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 82):

Մեր ողջ կյանքի ընթացքում մենք բոլորս կախված ենք ուրիշների օգնությունից: Երբ մանուկ էինք, մեր ծնողներն են կերակրել, հագցրել և հոգացել մեր մասին: Առանց այդ հոգատարության, մենք կմահանայինք: Երբ մեծանում ենք,

ուրիշներն են մեզ ուսուցանում հմտություններ ու վերաբերմունք: Մեզանից շատերը խնամողի կարիք են ունեցել հիվանդության ժամանակ կամ դրամի կարիք՝ ֆինանսական ճգնաժամի պահերին: Մեզանից ոմանք Աստծուն խնդրում են օրհնել տառապյալներին և ապա ոչինչ չեն անում նրանց համար: Մենք պետք է հիշենք, որ Աստված գործում է մեր միջոցով:

Երբ օգնում ենք միմյանց, մենք ծառայում ենք Աստծուն: Բենիամին թագավորը՝ Մորմոնի Գրքի ժամանակների մեծ թագավորը, իր ժողովրդին ուսուցանեց այդ սկզբունքն իր ապրելակերպով: Ողջ կյանքի ընթացքում նա ծառայեց իր ժողովրդին, վաստակելով իր ապրուստը՝ նրանց կողմից աջակցվելու փոխարեն: Իր ոգեշնչված քարոզի ժամանակ նա բացատրեց, թե ինչու էր սիրում ծառայությունը՝ ասելով.

«Երբ դուք ձեր մերձավորների ծառայության մեջ եք, դուք սոսկ ձեր Աստծո ծառայության մեջ եք: . . .

Եվ եթե ես, որին դուք կոչում եք ձեր թագավոր, տքնում եմ ծառայելու ձեզ, ուրեմն պարտավոր չեք արդյոք դուք տքնել՝ ծառայելու մեկդ մյուսին» (Մոսիա 2.17–18):

- Ի՞նչ կարող ենք մենք անել, որպեսզի պատրաստ լինենք բավարարելու ուրիշների կարիքները:

Ծառայության միջոցով մենք օրհնություններ ենք ստանում

- Ինչպիսի՞ օրհնություններ ենք ստանում ուրիշներին ծառայելու միջոցով:

Երբ ծառայում ենք ուրիշներին, մենք կարևոր օրհնություններ ենք ձեռք բերում: Ծառայության միջոցով մենք ավելացնում ենք սիրելու մեր կարողությունը: Մենք դառնում ենք ավելի քիչ եսասեր: Երբ մտածում ենք ուրիշների խնդիրների մասին, մեր սեփական խնդիրներն այդքան լուրջ չեն թվում: Հավերժական կյանք ձեռք բերելու համար մենք պետք է ծառայենք ուրիշներին: Աստված ասել է, որ նրանք, ովքեր ապրում են Նրա հետ, պետք է սիրեն և ծառայեն Իր զավակներին (տես Մատթեոս ԻԵ.34–40):

Եթե մտածենք այն մարդկանց մասին, ովքեր անշահախնդիր ծառայություն են մատուցում մեզ, մենք կարող ենք տեսնել, որ նրանք ստանում են ավելի շատ, քան տալիս են: Այդպիսի անձանցից մեկը Փոլ անունով Վերջին օրերի մի սուրբ էր, որն ինչ-որ պատահարի ժամանակ կորցրել էր երկու ոտքը: Որոշ մարդիկ կարող է դառնացած լինեին և անօգտակար զգային, սակայն դրա փոխարեն, Փոլն ընտրեց ուրիշների մասին հոգալը: Նա մի մասնագիտություն սովորեց և այնքան գումար վաստակեց, որ կարողացավ տուն գնել: Իր կնոջ հետ նա այնտեղ սենյակ պատրաստեց տնանկ և լքված շատ երեխաների համար: Ոմանք ծանր հաշմանդամներ էին: 20 տարի անց, մինչև իր մահանալը, նա ծառայեց այդ երեխաներին և ուրիշներին: Փոխարենը նա մեծ սեր վաստակեց և նրա մտքերը հեռացան իր հաշմանդամ ոտքերից: Նա մոտեցավ Տիրոջը:

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է. «Մենք ավելի իրական ենք դառնում, երբ ծառայում ենք ուրիշներին. իսկապես, ավելի հեշտ ենք «գտնում» մեզ, որովհետև մեզ գտնելու դեռ շատ բան ունենք» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball,* 85–86):

Ծառայելու հնարավորությունները

Մեզանից ոմանք ծառայում են միայն նրանց, ում շրջապատում հաճելի է լինել, և խուսափում են մյուսներից: Սակայն Հիսուսը մեզ պատվիրել է սիրել և ծառայել յուրաքանչյուր մարդու: Ծառայելու հնարարվորություններ շատ կան (տես Մոսիա 4.15–19):

Մենք կարող ենք ծառայել մեր ընտանիքի անդամներին: Ամուսիններն ու կանայք պետք է տեղյակ լինեն միմյանց կարիքներից: Ծնողները պետք է ծառայեն իրենց երեխաներին ոչ միայն նրանց սնելով ու հագցնելով, այլ նաև ուսուցանելով , խաղալով ու աշխատելով նրանց հետ: Երեխաները կարող են ծառայել՝ օգնելով տան գործերում և հոգալով եղբայրների և քույրերի մասին:

Ամուսիններն ու կանայք ծառայում և օգնում են մեկմեկու: Նրանք կարող են միմյանց օգնել երեխաների մասին հոգալիս և կարող են միմյանց աջակցել իրենց անահատական հետաքրքրություններում և ձգտումներում: Մայրն ու հայրը կարող են զոհաբերել՝ իրենց երեխային միսիայի ուղարկելով: Ավագ եղբայրը կարող է հանգստացնել փոքր քրոջը, որը վախենում է մթից կամ կարող է օգնել նրան կարդալ սովորել: Մեր մարգարեները մեզ ասել են, որ ընտանիքը հասարակության ամենակարևոր միավորն է: Մենք պետք է լավ ծառայենք մեր ընտանիքներին (տես Մոսիա 4.14–15):

Մենք բազում հնարավորություններ ունենք ծառայելու մեր մերձավորներին, մեր ընկերներին և անգամ անծանոթներին: Եթե հարևանը դժվարանում է հավաքել բերքը փոթորկից առաջ, մենք կարող ենք օգնել: Եթե մի մայր հիվանդ է, մենք կարող ենք նայել նրա երեխաներին և օգնել տան գործերով: Եթե մի պատանի հեռանում է Եկեղեցուց, մենք կարող ենք նրան ետ վերադարձնել: Եթե մի երեխայի ծաղրում են, մենք կարող ենք ընկերանալ և մյուսներին համոզել, որ բարությամբ վերաբերվեն: Պարտադիր չէ, որ մենք ճանաչենք այն մարդկանց, ում ծառայում ենք: Մենք պետք է ուղիներ փնտրենք, որ ծառայենք մեր Երկնային Հոր զավակներից քանիսին որ կարող ենք:

Եթե մենք հատուկ շնորհներ ունենք, մենք պետք է դրանք օգտագործենք ուրիշներին ծառայելու համար: Աստված մեզ օրհնում է ուրիշների կյանքը բարելավել շնորհներով ու կարողությամբ:

Մենք հնարավորություններ ունենք ծառայելու Եկեղեցում: Եկեղեցու կազմակերպության նպատակներից մեկը միմյանց օգնելու հնարավորություն տալն է: Եկեղեցու անդամները ծառայում են՝ կատարելով միսիոներական աշխատանք, ընդունելով ղեկավարի հանձնարարություններ, այցելելով Եկեղեցու մյուս անդամներին, ուսուցանելով դասարաններում և եկեղեցական այլ գործեր անելով: Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում չկա վճարվող հոգևորականություն, այնպես որ Եկեղեցու բոլոր գործերը վարում են աշխարհիկ անդամները:

• Ինչպես կարո՞ղ ենք բավականաչափ ժամանակ հատկացնել մեր ընտանիքներին՝ Եկեղեցում և համայնքում ծառայելու այդքան հնարավորությունների հետ միասին:

Հիսուս Քրիստոսը ծառայության կատարյալ օրինակ է

• Նշեք սուրբ գրությունների ձեր սիրված պատմություններից մի քանիսը, որտեղ Փրկիչը ծառայության օրինակ է մեզ համար:

Փրկիչը ծառայության կատարյալ օրինակ եղավ: Նա բացատրեց, որ չի եկել երկիր, որպեսզի իրեն ծառայեն, այլ որ Ինքը ծառայի և Իր կյանքը զոհաբերի մեզ համար (տես Մատթեոս Ի.28):

Հիսուս Քրիստոսը սիրում է մեզ բոլորին ավելի շատ, քան կարող ենք ըմբռնել: Երբ երկրի վրա էր, Նա ծառայեց աղքատներին, անարգվածներին, մեղավորներին և արհամարհվածներին: Նա ուսուցանեց ավետարանը բոլորին, ովքեր կամենում էին լսել, կերակրեց սոված մարդկանց բազմություններ, ովքեր եկել էին Իրեն լսելու, բուժեց հիվանդներին և կենդանացրեց մահացածներին:

Նա երկրի Ստեղծողն է և մեր Փրկիչը, սակայն Նա ծառայության բազում խոնարհ գործեր կատարեց: Իր խաչելությունից քիչ առաջ նա հավաքվեց Իր առաքյալների հետ: Նրանց ուսուցանելուց հետո, Նա մի կոնքով ջուր վերցրեց ու մի սրբիչ և լվացավ նրանց ոտքերը (տես Հովհաննես ԺԳ.4–10. տես նաև այս գլխի նկարը): Այդ օրերին հյուրի ոտքերը լվանալը հարգանքի նշան էր և, սովորաբար, արվում էր ծառայի կողմից: Հիսուսը դա արեց որպես սիրո ու ծառայության օրինակ: Երբ մենք սիրո ոգով պատրաստակամորեն ծառայում ենք ուրիշներին, մենք ավելի շատ ենք նմանվում Քրիստոսին:

• Ի՞նչ կարող ենք սովորել ծառայելու Փրկչի օրինակից:

Ուսուցիչներին. Երբ կիսվում ենք Հիսուս Քրիստոսի մասին մեր վկայությամբ, մենք հրավիրում ենք Սուրբ Հոգու ազդեցությունը: Երբ պատրաստվում եք ուսուցանել, հաճախ ուղիներ փնտրեք վկայելու Փրկչի մասին և հրավիրեք ձեր ուսանողներին նույն կերպ վարվել:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Մոսիա 2 (Բենիամին թագավորի քարոզը ծառայության մասին)
- ՎևՈւ 81.5 (սատարիր, բարձրացրու, ամրացրու)
- Կողոսացիս Գ.23–24 (ծառայեք ուրիշներին, ինչպես որ կծառայեիք Տիրոջը)
- Ալմա 17–18 (Ամմոնը ծառայեց թագավորին)
- Գաղատացիս Ե.13 (սիրով ծառայեք միմյանց)

Առողջության Տիրոջ օրենքը

Գլուխ 29

Մեր մարմիններն Աստծո տաճար են

Երկրի վրա ստացած մեր ամենամեծ օրհնություններից մեկը ֆիզիկական մարմին ստանալն էր: Ֆիզիկական մարմինը մեզ անհրաժեշտ է մեր Երկնային Հորը նմանվելու համար: Մեր մարմիններն այնքան կարևոր են, որ Տերն այն կոչում է Աստծո տաճար (տես Ա Կորնթացիս Գ.16–17, Զ.19–20): Մեր մարմինները սուրբ են:

Քանի որ մեր մարմինները կարևոր են, մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք լավ հոգ տանենք դրանց մասին: Նա գիտի, որ մենք կարող ենք ավելի երջանիկ, ավելի լավ մարդիկ լինել, եթե առողջ լինենք: Սուրբ Հոգին կարող է մեզ հետ լինել, եթե մեր մարմիններն ու մտքերը մաքուր են: Մեր Հայրը գիտի, որ մենք հանդիպում ենք գայթակղությունների, որոնք դրդում են ոչ իմաստուն վարվել մեր մարմնի նկատմամբ և վնասակար նյութեր ընդունել մեր մարմնում: Այդ պատճառով նա մեզ ասել է, թե ինչ բաներ են օգտակար մեր առողջության համար և ինչ բաներ՝ վնասակար: Առողջության վերաբերյալ Աստծո տված տեղեկություններից շատերը գտնվում են Վարդապետություն և Ուխտեր 89 բաժնում: Այդ հայտնությունը կոչվում է Իմաստության Խոսք:

Մենք պետք է հնազանդվենք Իմաստության Խոսքին, որպեսզի արժանի լինենք մտնելու տաճար: Եթե մենք չհնազանդվենք Իմաստության Խոսքին, Տիրոջ Հոգին կհեռանա մեզանից: Եթե մենք պղծենք «Աստծո տաճարը», որը մեր մարմինն է, մենք ֆիզիկապես և հոգեպես կվնասենք մեզ:

Որոշակի բաներ կան, որոնք մեզ պատվիրված է չընդունել մեր մարմին:

• Ի՞նչ է պատվիրել Տերը չընդունել մեր մարմին:

Տերը մեզ պատվիրել է չօգտագործել գինի և թունդ խմիչքներ, այսինքն՝ ալկոհոլ պարունակող խմիչքներ: Առաջին Նախագահությունն ուսուցանել է, որ թունդ խմիչքները դաժանության, աղքատության, հիվանդության և աղետի պատճառ են դառնում ընտանիքում: Այն հաճախ ազնվության, բարոյականության, դատողության կորստի պատճառ է դառնում: Այն անեծք է բոլոր նրանց համար, ովքեր այն խմում են: (Տես «Message of the First Presidency», *Improvement Era,* Nov. 1942, 686:) Հղի մայրերը, ովքեր խմում են, կարող են իրենց երեխաներին ֆիզիկական և մտավոր վնաս հասցնել: Ամեն տարի բազմաթիվ ավտովթարներ են տեղի ունենում վարորդների խմիչք օգտագործելու պատճառով:

Տերը նաև մեզ ասել է, որ «ծխախոտը մարմնի համար չէ» (ՎԿՈ 89.8): Այն վնասակար է մեր մարմնի և մեր հոգու համար: Մենք չպետք է ծխախոտ կամ սիգար ծխենք, ոչ էլ պետք է ծխախոտ ծամենք: Գիտնականները ցույց են տվել, որ ծխախոտը շատ հիվանդություններ է առաջացնում և կարող է վնասել չծնված երեխաներին:

Տերը մեզ խորհուրդ է տվել նաև չօգտոգործել «տաք ըմպելիքներ» (ՎԿՈ 89.9): Եկեղեցու ղեկավարներն ասել են, որ դա վերաբերում է սուրճին և թեյին, որոնք վնասակար նյութեր են պարունակում: Մենք պետք է խուսափենք բոլոր խմիչքներից, որոնք վնասակար նյութեր են պարունակում:

Մենք չպետք է օգտագործենք թմրադեղեր, բացառությամբ երբ բժիշկն է նշանակել այն: Որոշ թմրադեղեր ավելի վնասակար են, քան ալկոհոլը և ծխախոտը (որոնք նույնպես թմրադեղեր են): Նրանք, ովքեր չարաշահում են թմրադեղերը, պետք է

Ուսուցիչների համար. Ցանկ կազմելը կարող է հետաքրքրություն առաջացնել և օգնել ուսանողներին կենտրոնացնել ուշադրությունը: Մինչ դասարանի կամ ընտանիքի անդամները քննարկում են այն նյութերը, որոնք մեզ Տերը պատվիրել է չընդունել մեր մարմնում, դուք, հնարավոր է, կամենաք ինչ-որ մեկին խնդրեք գրել պատասխանները գրատախտակի կամ թղթի մեծ կտորի վրա: Կարող եք նույն բանն անել, երբ նրանք քննարկում են այն բաները, որոնք օգտակար են մեր մարմնի համար:

օգնություն խնդրեն, աղոթեն ուժի համար և խորհրդակցեն եպիսկոպոսի հետ, որպեսզի լիովին ապաշխարեն և մաքրվեն:

Մենք պետք է խուսափենք ցանկացած բանից, որը գիտենք վնասակար է մեր մարմնի համար: Մենք չպետք է օգտագործենք որևէ նյութ, որը հակում է առաջացնում: Մենք պետք է խուսափենք չափից ավել ուտելուց: Իմաստության խոսքը մեզ չի ասում ամեն բան, որից պետք է խուսափենք կամ օգտագործենք, բայց մեզ տալիս է ուղղություններ: Այն արժեքավոր ֆիզիկական օրենք է: Այն նաև մեծ հոգևոր օրենք է: Ապրելով Իմաստության խոսքով, մենք ավելի ենք ամրանում հոգևոր առումով: Մենք մաքրագործում ենք մեր մարմինը, որպեսզի Տիրոջ Հոգին կարողանա բնակվել մեր մեջ:

- Թվարկեք մի քանի բաներ, որոնք հատուկ նշված չեն Իմաստության խոսքում, որոնցից պետք է խուսափենք:

Մեզ ուսուցանվում է, որ որոշ բաներ օգտակար են մեր մարմնի համար

- Ըստ Իմաստության խոսքի, որո՞նք են այն մի քանի բաները, որոնք Տերն ասում է, որ օգտակար են մեզ համար:

Մրգերը, բանջարեղենը և օգտակար խոտաբույսերը լավ են մեզ համար: Մենք պետք է օգտագործենք դրանք իմաստությամբ ու զոհունակությամբ:

Թռչունների և կենդանիների միսը նույնպես տրված է որպես ուտելիք: Սակայն, միսը մենք պետք է օգտագործենք խնայողաբար (տես ՎԿՈ 49.18, 89.12): Ձուկը նույնպես օգտակար է մեզ համար:

Հացահատիկներն օգտակար են մեզ համար: Ցորենն առանձնապես լավ է մեզ համար:

- Ինչպե՞ս է այս բաների օգտագործումն օրհնել ձեզ:

Աշխատանքը, հանգիստը և ֆիզիկական վարժությունները կարևոր են

- Ինչպե՞ս են աշխատանքը, հանգիստը և ֆիզիկական վարժությունները կապված Տիրոջ առողջության օրենքի հետ:

Ի լրումն Վարդապետություն և Ուխտեր 89 բաժնի, կան այլ սուրբ գրություններ, որոնք մեզ հուշում են ինչպես առողջ լինել: Դրանք մեզ սովորեցնում են. «Դադարեք ծույլ լինել. դադարեք անմաքուր լինել. դադարեք սխալներ գտնել միմյանց մեջ. դադարեք քնել ավելի շատ, քան անհրաժեշտ է. վաղ մտեք ձեր անկողինը, որպեսզի չհոգնեք. վաղ վեր կացեք, որ ձեր մարմինն ու միտքն առույգ լինեն» (ՎևՈւ 88.124): Մեզ նաև ասվել է. «Վեց օր պիտի աշխատես եւ պիտի կատարես քո բոլոր գործերը» (Ելից Ի.9): Տերը խորհուրդ է տալիս, որ չաշխատենք ավելի շատ, քան մեր ուժերն են (տես ՎևՈւ 10.4):

Մեր օրերի մարգարեն մեզ ասել է, որ պետք է առողջ պահենք մեր մարմինը: Նա խորհուրդ է տվել. «Մննդարար ուտելիքը, կանոնավոր մարզանքը և պատշաճ քունն անհրաժեշտ բաներ են ամուր մարմնի համար, ճիշտ ինչպես կանոնավոր սուրբ գրություններ ուսումնասիրելն ու աղոթելն ամրապնդում են միտքը և հոգին» (Thomas S. Monson, in Conference Report, Oct. 1990, 60; or *Ensign,* Nov. 1990, 46):

Տիրոջ առողջության օրենքով ապրելու համար խոստացված օրհնությունները

- Ինչպիսի օրհնություններ են գալիս, երբ հնազանդվում ենք Իմաստության խոսքին:

Մեր Երկնային Հայրը մեզ տվել է առողջության օրենքներ, որպեսզի մեզ ուսուցանի, թե ինչպես հոգանք մեր մարմնի մասին: Սուրբ գրությունները մեզ ասում են Աստծո օրենքների վերաբերյալ. «Ես չտվեցի . . . ֆիզիկական պատվիրան, քանզի իմ պատվիրանները հոգևոր են» (ՎևՈւ 29.35): Սա նշանակում է, որ ֆիզիկական մեր վիճակի վերաբերյալ Նրա պատվիրանները մեր հոգևոր բարիքի համար են:

Երբ մենք պահում ենք Տիրոջ առողջության օրենքը և հնազանդվում Նրա մյուս պատվիրաններին, Տերը խոստանում է օրհնել մեզ ֆիզիկականով և հոգևորով:

Ֆիզիկականով մեզ խոստացվում է լավ առողջություն: Որպես այդ լավ առողջության արդյունք՝ մենք «կվազենք և չենք հոգնի և կքայլենք ու չենք նվաղի» (ՎևՈւ 89.20): Սա մեծ օրհնություն է, սակայն մեզ խոստացած Նրա հոգևոր օրհնությունները նույնիսկ ավելի մեծ են, քան հոգևորները:

Տերը մեզ խոստանում է, որ մենք «պետք է գտնենք իմաստություն և գիտության մեծ գանձեր, նույնիսկ թաքնված գանձեր» (ՎևՈւ 89.19): Սուրբ Հոգու միջոցով հայտնությամբ մեզ կուսուցանվի կարևոր ճշմարտություններ: Նախագահ Բոյդ Ք. Փակերն ուսուցանել է. «Մեր ֆիզիկական մարմինը մեր հոգու գործիքն է»: Իմաստության խոսքի այդ զարմանահրաշ հայտնության մեջ մեզ ասվել է, թե ինչպես մեր մարմինն ազատ պահենք անմաքրություններից, որոնք կարող են բթացնել, նույնիսկ ոչնչացնել այն նուրբ ֆիզիկական զգացումները, որոնք անհրաժեշտ են հոգևոր հաղորդակցության համար: Իմաստության խոսքը բանալի է անձնական հայտնության համար (in Conference Report, Oct. 1989, 16; or *Ensign,* Nov. 1989, 14):

Տերը նաև խոստացել է, որ կործանիչ հրեշտակը չի վնասի մեզ: Նախագահ Հեբեր Ջ. Գրանտն ասել է. «Եթե ես և դուք ցանկանում ենք կյանքի, առողջության, մարմնով և մտքով առույգ լինելու օրհնությունները, եթե ցանկանում ենք, որ կործանիչ հրեշտակը մեզ չվնասի, ինչպես եղավ Իսրայելի զավակների հետ, մենք պետք է հնազանդվենք Իմաստության խոսքին. այդ ժամանակ Աստված պարտավորված կզգա և օրհնություններ կթափի մեր վրա» (*Teachings of Presidents of the Church: Heber J. Grant* [2002], 192):

- Մենք կարող ենք օգնել երեխաներին ու երիտասարդներին հասկանալ Իմաստության խոսքի հավերժական նշանակությունը:
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի օգնենք ընտանիքի անդամներին ու ընկերներին, որոնք դժվարանում են հնազանդվել Իմաստության խոսքին:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Դատավորաց ԺԳ.13–14, Առակաց Ի.1, Եսայիա Ե.11–12, Դանիել Ա (խուսափեք թունդ խմիչքներից)
- ՎևՈւ 59.16–20 (երկրի բաները մարդու օգտի համար են)
- Առակաց ԻԳ.20–21 (զգուշացում հարբեցողության, շատակերության, ծուլության դեմ)
- ՎևՈւ 136.24 (վերջ տվեք հարբեցողությանը)

Գթություն

Գլուխ 30

Ի՞նչ է գթությունը

• Ըստ ձեզ, ո՞րն է գթության սահմանումը:

Փրկչի կյանքն արտացոլում է Նրա մաքուր սերը բոլոր մարդկանց հանդեպ: Նա անգամ Իր կյանքն է տվել մեզ համար: Գթությունն այն մաքուր սերն է, որն ունի մեր Փրկիչը՝ Հիսուս Քրիստոսը: Նա մեզ պատվիրել է սիրել միմյանց ինչպես Նա է մեզ սիրում: Սուրբ գրությունները մեզ ասում են, որ գթությունը բխում է մաքուր սրտից (տես Ա Տիմոթեոս Ա.5): Մենք մաքուր սեր ունենք, երբ ի սրտե, անկեղծ հոգատարություն և կարեկցանք ենք ցուցաբերում բոլոր եղբայրների և քույրերի հանդեպ:

Գթությունն առաքինության հատկանիշներից ամենամեծն է

Մորմոն մարգարեն մեզ ասում է. «Ուստի, հարեք գթությանը, որը բոլորից մեծ է, քանզի բոլոր բաները պիտի խափանվեն, բայց գթությունը Քրիստոսի մաքուր սերն է, և այն տևում է հավերժ» (Մորոնի 7.46–47. տես նաև Ա Կորնթացիս ԺԳ, 2 Նեփի 26.30, Մորոնի 7.44–45, 48):

Փրկիչը մեզ Իր կյանքի օրինակն է տվել, որ հետևենք: Նա Աստծո Որդին էր: Նա կատարյալ սեր ուներ, և Նա մեզ ցույց տվեց ինչպես սիրել: Իր օրինակով Նա մեզ ցույց է տվել, որ մեր մերձավորի հոգևոր և ֆիզիկական կարիքները նույնքան կարևոր են, որքան մեր սեփականը: Նախքան Իր կյանքը մեզ համար տալը, Նա ասել է.

«Այս է իմ պատվիրանը. որ սիրէք միմեանց, ինչպէս որ ես սիրեցի ձեզ»:

«Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների համար» (Հովհաննես ԺԵ.12–13)։

Խոսելով Տիրոջ հետ, Մորոնին ասել է.

«Ես հիշում եմ, որ դու ասել ես, որ սիրեցիր աշխարհը, մինչև իսկ աշխարհի համար վայր դնելով քո կյանքը. . . .

Եվ այժմ ես գիտեմ, որ սերը, որ դու ունես մարդկանց զավակների համար, գթությունն է. ուստի, եթե մարդիկ գթություն չունենան, նրանք չեն կարող ժառանգել այն տեղը, որը դու պատրաստել ես քո Հոր ապարանքներում» (Եթեր 12.33–34)։

Հնարավոր է, որ մեզանից չպահանջվի մեր կյանքը տալ, ինչպես Փրկիչն արեց։ Սակայն մենք կարող ենք գթություն ունենալ, եթե դարձնենք Նրան մեր կյանքի առանձքային մասը և հետևենք Նրա օրինակին ու ուսմունքներին։ Ինչպես Փրկիչը, մենք նույնպես կարող ենք օրհնել մեր եղբայրների ու քույրերի կյանքն այստեղ՝ երկրի վրա։

• Ինչո՞ւ է գթությունը բոլոր առաքինություններից ամենամեծը։

Գթությունը ներառում է հիվանդներին, տառապյալներին ու աղքատներին օգնելը

Շատ ուսմունքներ Փրկիչը մեզ տվել է պատմությունների ու առակների ձևով։ Բարի Սամարացու առակը մեզ ուսուցանում է, որ մենք պետք է օգնենք կարիքավորներին, անկախ նրանից՝ մեր ընկերներն են, թե ոչ (տես Ղուկաս Ժ.30–37, տես նաև Ջեյմս Ի. Թալմեջ, *Jesus the Christ,* 3rd ed. [1916], 430–32)։ Առակում Փրկիչն ասել է, որ մի մարդ ճամփորդում էր մեկ ուրիշ քաղաք։ Ճանապարհին նրա վրա հարձակվեցին ավազակները։ Նրանք գողացան նրա հագուստները և գումարը և ծեծեցին նրան՝ թողնելով կիսամեռ վիճակում։ Մի քահանա էր անցնում՝ տեսավ նրան և թողեց անցավ։ Ապա մի ղևտացի անցավ նույն տեղով՝ տեսավ և թողեց անցավ։ Ինչևէ, մի Սամարացի, որին հրեաներն առհամարհում էին, անցնում էր նույն տեղով, և երբ տեսավ մարդուն, կարեկցանք զգաց (տես այս գլխի նկարը)։ Ծնկի իջնելով, բարի Սամարացին կապեց նրա վերքերը և ավանակի վրա տարավ նրան իջևանատուն։

Նա վճարեց իջևանատիրոջը, որ հոգ տանի այդ մարդու համար, մինչև որ նա ապաքինվի:

Հիսուսը մեզ ուսուցանել է, որ մենք պետք է կերակրենք սովածներին, ապաստան տանք տնանկներին և հագցնենք մերկերին: Երբ այցելում ենք հիվանդներին և բանտում գտնվողներին, դա կարծես նույնն է, ինչ մենք Նրա համար ենք անում: Նա խոստանում է, որ երբ մենք անենք այս բաները, մենք կժառանգենք Նրա արքայությունը: (Տես Մատթեոս ԻԵ.34–46:)

Կարիք չկա, որ մենք որոշենք, թե մարդ մեր կարիքն ունի, թե՞ ոչ (տես Մոսիա 4.16–24): Եթե մենք նախ հոգում ենք մեր իսկ ընտանիքի կարիքները, ապա մենք պետք է օգնենք նրանց, ովքեր օգնության կարիք ունեն: Այսպես մենք կնմանվենք մեր Երկնային Հորը, որն անձրև է բերում ինչպես արդարների, այնպես էլ անարդարների վրա (տես Մատթեոս Ե.44–45):

Նախագահ Թոմաս Ս. Մոնսոնը մեզ հիշեցրել է, որ կան մարդիկ, ովքեր ավելի շատ կարիք ունեն, քան նյութական իրերի.

«Եկեք մեզ հարց տանք. «Արդյոք այսօր ես արե՞լ եմ որևէ լավ բան աշխարհում: Արդյոք ես օգնե՞լ եմ որևէ կարիքավորի» [*Hymns,* no. 223]: Սա երջանկության հրաշալի բանաձև է: Սա՝ մեկ այլ մարդու մեջ ոգեշնչված երախտագիտություն առաջացնելու, բավարվածության, ներքին խաղաղության հրաշալի դեղատոմս է:

Մեր ունեցածից բաժին հանելու հնարավորություններն իսկապես անսահմանափակ են, սակայն դրանք նաև անցողիկ են: Կան սրտեր, որ պետք է ուրախացնել: Կան բարի խոսքեր, որ պետք է ասել: Կան պարգևներ, որ պետք է տալ: Կան գործեր, որ պետք է անել: Կան հոգիներ, որ պետք է փրկել» (in Conference Report, Oct. 2001, 72; or *Ensign,* Nov. 2001, 60):

- Բարի Սամարացու առակում ինչպե՞ս կնկարագրեիք վիրավորի կողքից անտարբեր անցնողներին: Ինչպե՞ս կնկարագրեիք Սամարացուն: Ի՞նչ ձևերով կարող ենք կիրառել այդ ուղերձը մեր կյանքում:

Գթությունը բխում է սրտից

• Ինչպե՞ս կարող ենք սիրել մարդկանց, անկախ նրանց մեղքերից ու սխալներից։

Նույնիսկ եթե մենք օգնում ենք կարիքավորին, եթե մենք դա չենք անում կարեկցանքով, մենք գթություն չունենք (տես Ա Հովհաննես Գ.16–17)։ Պողոս Առաքյալն ուսուցանել է, որ երբ մենք գթություն ունենք, մենք լցված ենք բարի զգացումներով բոլոր մարդկանց նկատմամբ։ Մենք համբերատար ենք և բարի։ Մենք չենք պարծենում, ոչ էլ հպարտանում, ոչ եսասեր ենք, ոչ էլ կոպիտ։ Երբ լցված ենք գթությամբ, մենք չենք հիշում ուրիշների գործած չարիքը, ոչ էլ ուրախանում ենք դրանով։ Ոչ էլ բարիք ենք գործում միայն նրա համար, որովհետև օգուտ ունենք դրանից։ Փոխարենը, մենք կիսում ենք նրանց ուրախությունը, ովքեր ապրում են ճշմարտությամբ։ Երբ գթություն ունենք, մենք հավատարիմ ենք, մենք հավատում ենք մյուսների մեջ լավագույնին և բարի ենք նրանց հանդեպ։ Սուրբ գրություններն ուսուցանում են, որ «գթությունը երբեք չի խափանվում»։ (Տես Ա Կորնթացիս ԺԳ.4–8։)

Փրկիչը մեր օրինակն էր, թե ինչպես պետք է զգանք ուրիշների հանդեպ և վերաբերվենք ուրիշներին։ Նա արհամարհում էր ամբարշտությունը, սակայն Նա սիրում էր մեղավորներին անկախ նրանց մեղքերից։ Նա կարեկցանք ուներ երեխաների, ծերերի, աղքատների և կարիքավորների հանդեպ։ Նա այնպիսի մեծ սեր ուներ, որ կարող էր խնդրել մեր Երկնային Հորը՝ ներել զինվորներին, որոնք բևեռներ էին խփել իր ձեռքերին ու ոտքերին (տես Ղուկաս ԻԳ.34)։ Նա մեզ ուսուցանել է, որ եթե չներենք ուրիշներին, մեր Երկնային Հայրը չի ների մեզ (տես Մատթեոս ԺԸ.33–35)։ Նա ասել է. «Ես ձեզ ասում եմ. սիրեցէ՛ք ձեր թշնամիներին . . . որովհետև եթէ սիրէք միայն նրանց, ովքեր ձեզ են սիրում, ձեր վարձն ի՞նչ է» (Մատթեոս Ե.44, 46)։ Մենք պետք է սովորենք ուրիշների հանդեպ զգալ այն, ինչ Հիսուսն էր զգում։

Զարգացնել գթության հատկանիշը

• Ինչպե՞ս կարող ենք ավելի գթասիրտ դառնալ:

Գթասիրտ դառնալու ձևերից մեկը Հիսուս Քրիստոսի կյանքն ուսումնասիրելն է և Նրա պատվիրանները պահելը: Մենք կարող ենք ուսումնասիրել, թե ինչպես էր Նա վարվում տարբեր իրավիճակներում և անենք միևնույն բաները նման իրավիճակներում:

Երկրորդ, երբ մենք անգութ ենք , մենք կարող ենք աղոթել, որ դառնանք ավելի գթառատ: Մորմոնը մեզ հորդորում է. «Ուստի, իմ սիրելի եղբայրներ, աղոթեք Հորը, սրտի ողջ կորովով, որ դուք կարողանաք լցված լինել այդ սիրով [գթությամբ], որը նա շնորհել է բոլոր նրանց, ովքեր նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի ճշմարիտ հետևորդներն են» (Մորոնի 7.48):

Երրորդ՝ մենք կարող ենք սովորել սիրել մեզ, ինչը նշանակում է, որ մենք հասկանում ենք մեր ճշմարիտ արժեքը որպես մեր Երկնային Հոր զավակներ: Փրկիչն ուսուցանել է, որ մենք պետք է սիրենք ուրիշներին *ինչպես սիրում ենք մեզ* (տես Մատթեոս ԻԲ.39): Մեզ սիրելու համար, մենք պետք է հարգենք և վստահենք մեզ: Սա նշանակում է, որ մենք պետք է հնազանդ լինենք ավետարանի սկզբունքներին: Մենք պետք է ապաշխարենք ամեն մի սխալի համար: Մենք պետք է ներենք մեզ, երբ ապաշխարում ենք: Մենք պետք է ավելի շատ սիրենք մեզ, երբ կարողանում ենք զգալ խորը, մխիթարող հավաստիացումը, որ Փրկիչն իսկապես սիրում է մեզ:

Չորրորդ՝ մենք կարող ենք խուսափել այն մտքից, որ մենք ավելի լավն ենք, քան ուրիշները: Մենք կարող ենք համբերատար լինել նրանց սխալների նկատմամբ: Ջոզեֆ Սմիթն ասել է. «Որքան ավելի շատ ենք մոտենում մեր Երկնային Հորը, այնքան ավելի ենք տրամադրվում կարեկցանքով նայելու կորած

Ուսուցիչներին. «Զարգացնել գթության առաքինի հատկանիշը» վերնագրով բաժնի առաջին չորս պարբերություններում ուսուցանվում է մի ձև, թե ինչպես կարող ենք ավելի գթասիրտ դառնալ: Եթե իրավիճակը թույլ է տալիս փոքր խմբերով քննարկումներ կազմակերպել, մտածեք դասարանի կամ ընտանիքի անդամներին բաժանել չորս խմբի: Յուրաքանչյուր խմբին նշանակեք այդ պարբերություններից մեկը: Հրավիրեք մասնակիցներին անհատապես ուսումնասիրել նշանակված պարբերությունը: Խնդրեք նրանց հիշել օրինակներ իրենց կյանքից, իրենց իմացած մարդկանց կյանքից կամ սուրբ գրություններից, որոնք ներկայացնում են այդ ձևով գթասրտություն զարգացնելը: Ապա խնդրեք նրանց կիսվել հիշած օրինակներով խմբի անդամների հետ:

հոգիների վրա, մենք ցանկություն ենք զգում վերցնել նրանց մեր ուսերին և գցել նրանց մեղքերը մեր ետևը» (*«Եկեղեցու Նախագահների ուսմունքները. Ջոզեֆ Սմիթ»* [2007], էջ 456)։

Մորմոնի Գրքում մենք կարդում ենք Ենովսի՝ երիտասարդ տղայի մասին, որը ցանկանում էր իմանալ, որ իր մեղքերը ներվել են։ Նա մեզ պատմում է.

«Իմ հոգին քաղցում էր. և ես ծնկի իջա իմ Արարչի առջև, և ես աղաղակեցի առ նա՝ զորեղ աղոթքով և աղաչանքով իմ սեփական հոգու համար. և ողջ օրվա ընթացքում ես աղաղակեցի առ նա, այո, և երբ եկավ գիշերը ես դեռ բարձրացնում էի իմ ձայնը վեր, այնպես որ այն հասավ երկինքներին։

Եվ մի ձայն եկավ ինձ՝ ասելով. Ենովս, քո մեղքերը ներված են քեզ, և դու պիտի օրհնվես» (Ենովս 1.4–5)։

Տերը Ենովսին բացատրեց, որ Քրիստոսի հանդեպ իր հավատքի շնորհիվ նրա մեղքերը ներվել են։ Երբ Ենովսը լսեց այս խոսքերը, նա այլևս մտահոգված չէր իր մասին։ Նա գիտեր, որ Տերը սիրում էր նրան և կօրհներ նրան։ Փոխարենը, նա սկսեց մտահոգվել իր ընկերների և հարազատների՝ Նեփիացիների մասին։ Նա դուրս թափեց իր ողջ հոգին առ Աստված նրանց համար։ Տերը պատասխանեց և ասաց, որ նրանք կօրհնվեն իրենց տրված պատվիրանները պահելու մեջ իրենց արդարության համաձայն։ Այդ խոսքերից հետո Ենովսի սերն ավելի շատացավ, և նա աղոթեց ավելի մեծ ճիգեր թափելով՝ Լամանացիների համար, ովքեր Նեփիացիների թշնամիներն էին։ Տերը բավարարեց նրա ցանկությունները և նա իր մնացած կյանքն անցկացրեց փորձելով փրկել Նեփիացիների և Լամանացիների հոգիները։ (Տես Ենովս 1.6–26։)

Ենովսն այնքան երախտապարտ էր Տիրոջ սիրո և ներողամտության համար, որ կամեցավ անցկացնել իր կյանքի մնացած մասը՝ օգնելով, որ ուրիշները ևս ստանան այդ պարգևը։ Ենովսն իսկապես գթասիրտ դարձավ։ Մենք նույնպես կարող ենք գթասիրտ դառնալ։ Իրականում, մենք պետք է անենք դա, որպեսզի Հոր արքայությունում ժառանգենք այն տեղը, որը պատրաստվել է մեզ համար։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Կողոսացիս Գ.12–14 (գթությունը կատարելության կապն է)
- Ալմա 34.28–29 (մեր աղոթքները զուր կլինեն, եթե մենք չվարվենք գթությամբ)
- Ա Կորնթացիս ԺԲ.29–ԺԳ.3 (գթության սահմանումը)
- ՎևՈւ 121.45–46 (եկեք գթությամբ լցված լինենք բոլոր մարդկանց հանդեպ)

Ազնվություն

Գլուխ 31

Ազնվությունը փրկության սկզբունք է

- Ինչպիսի՞ն կլիներ հասարակությունը, եթե բոլորը կատարյալ ազնիվ լինեին:

Հավատո 13-րդ հանգանակն ասում է. «Մենք հավատում ենք ազնիվ լինելուն»: Մորմոնի Գիրքը պատմում է մեզ մարդկանց մի խմբի մասին, ովքեր «տարբերվում էին իրենց ջերմեռանդությամբ առ Աստված և նաև՝ հանդեպ մարդկանց. քանզի նրանք կատարելապես ազնիվ և ուղղամիտ էին բոլոր բաներում. և նրանք հաստատուն էին Քրիստոսի հավատքում, նույնիսկ՝ մինչև վերջ» (Ալմա 27.27): Իրենց ազնվության շնորհիվ, այդ մարդիկ ուշադրության արժանացան իրենց ընկերների և Աստծո կողմից: Կարևոր է սովորել, թե ինչ է ազնվությունը, ինչպես ենք գայթակղվում լինել անազնիվ, և ինչպես կարող ենք հաղթահարել այդ գայթակղությունը:

Լիարժեք ազնվությունը կարևոր է մեր փրկության համար: Նախագահ Բրիգամ Յանգն ասել է. «Եթե մենք ընդունենք փրկությունը այնպես, ինչպես այն տրվել է մեզ, մենք պետք է ազնիվ լինենք մեր յուրաքանչյուր մտքով, մեր մտորումներում, մեր մտքի խորհուրդներում, մեր անձնական շրջապատում, մեր գործարքներում, մեր հայտարարություններում և մեր կյանքի ամեն գործում» (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 293):

Աստված ազնիվ է և արդար ամեն ինչում (տես Ալմա 7.20): Մենք նույնպես պետք է ազնիվ լինենք ամեն ինչում, որպեսզի Նրան նմանվենք: Հարեդի եղբայրը վկայել է. «Այո՛, Տե՛ր, ես գիտեմ, որ դու . . . ճշմարտության Աստված ես և չես կարող ստել» (Եթեր 3.12): Ի տարբերություն, դևը ստախոս է: Իրականում, նա ստերի հայրն է (տես 2 Նեփի 9.9): «Նրանք, ովքեր

ընտրում են խաբել և ստել, խորամանկել և խեղաթյուրել, դառնում են նրա գերիները» (Mark E. Petersen, in Conference Report, Oct. 1971, 65; or *Ensign,* Dec. 1971, 73):

Ազնիվ մարդիկ սիրում են ճշմարտությունն ու արդարությունը: Նրանք ազնիվ են իրենց խոսքում և գործում: Նրանք չեն ստում, չեն գողանում , չեն խաբում:

Ստելը անազնվություն է

Ստելը մյուսներին միտումնավոր խաբելն է: Սուտ վկայությունը՝ ստելու մի տեսակ է: Իսրայելի զավակներին Տերը այս պատվիրանն է տվել. «Քո դրացու դեմ սուտ վկայություն մի անիր» (Ելից Ի.16): Հիսուսը նաև ուսուցանել է սա, երբ նա երկրի վրա էր (տես Մատթեոս ԺԹ.18): Կան ստելու շատ այլ դրսևորումներ: Երբ ճշմարտությունը չենք ասում, մենք դառնում ենք մեղավոր ստելու մեջ: Մենք կարող ենք նաև միտումնավոր խաբել մյուսներին ձեռքի շարժումով կամ հայացքով, լռությամբ, կամ ճշմարտության մի մասը ասելով: Երբ մենք մարդկանց շեղում ենք, որ հավատան ինչ-որ բանի, որը ճիշտ չէ, մենք ազնիվ չենք գործում:

Տերը դժգոհ է այսպիսի անազնվությունից, և մենք պատասխան ենք տալու մեր ստերի համար: Սատանան մեզ ստիպում է հավատալ, որ ստելը նորմալ բան է: Նա ասում է. «Այո՛, ստե՛ք մի քիչ . . . սրանում ոչ մի վնաս չկա» (2 Նեփի 28.8): Սատանան խրախուսում է մեզ, որ արդարացնենք մեր ստերը: Ազնիվ մարդիկ գիտակցելով սատանայի գայթակղությունները, ողջ ճշմարտությունն են ասում, նույնիսկ, եթե այն իրենց օգտին չէ:

Գողանալը անազնվություն է

Հիսուսն ուսուցանել է. «Մի գողանար» (Մատթեոս ԺԹ.18): Գողանալը վերցնելն է մի բան, որը մեզ չի պատկանում: Մենք գողանում ենք, եթե առանց թույլտվության վերցնում ենք այն,

Ուսուցիչներին. Այս գլուխը պարունակում է երեք բաժին, որտեղ նկարագրվում են անազնվության դրսևորումները՝ ստելը, գողանալը և խաբելը: Կարող եք դասարանի կամ ընտանիքի անդամներին բաժանել երեք խմբի: Յուրաքանչյուր խմբին հանձնարարեք այդ բաժիններից յուրաքանչյուրը: Յուրաքանչյուր խմբի անդամներին խնդրեք, որ մտքում կարդան իրենց հանձնարարված բաժինը և խորհեն տվյալ բաժնում նկարագրված անազնվության տեսակների շուրջ: Ապա դասարանով կամ ընտանիքով քննարկեն տվյալ բաժինը: Հարցրեք, թե ինչպես կարող ենք ազնիվ լինել նկարագրված յուրաքանչյուր իրավիճակում:

ինչը պատկանում է ինչ-որ մեկին, խանութին կամ համայնքին: Գողանալ է գործատուից ապրանք վերցնելը: Առանց իրավունքի թույլտվության երաժշտություն, կինոնկար, նկար կամ ինչ-որ մեկի կողմից գրված տեքստը կրկնօրինակելը անազնվություն է և գողության տեսակ: Անազնվություն է ավել դրամի մանր կամ ապրանք վերցնելը: Ցանկացած հարցում մեզ հասանելիք բաժնից ավելին վերցնելը գողություն է:

Խաբելը անազնվություն է

Մենք խաբում ենք, երբ տալիս ենք ավելի քիչ, քան պետք է, կամ երբ վերցնում ենք մի բան, որին արժանի չենք: Որոշ աշխատողներ խաբում են իրենց գործատուներին իրենց հասանելիք լրիվ դրույքը չաշխատելով, չնայած որ ստանում են լրիվ աշխատավարձը: Որոշ գործատուներ արդարացի չեն վերաբերվում իրենց աշխատողներին. նրանք վճարում են ավելի քիչ, քան պետք է վճարեին: Սատանան ասում է. «Օգո՛ւտ քաղեք մեկից իր խոսքերի պատճառով, փո՛ս փորեք ձեր հարևանի համար» (2 Նեփի 28.8): Անազնվության դրսևորում է անարդար ձևով առիթից օգտվելը: Ցածրորակ ծառայություն կամ ապրանք մատուցելը խաբել է:

Մենք չպետք է արդարացնենք մեր անազնվությունը

- Հոգևոր առումով ի՞նչ է տեղի ունենում մեզ հետ, երբ մենք արդարանցում ենք մեր անազնվությունը:

Մարդիկ իրենց անազնվության համար տարբեր արդարացումներ են գտնում: Մարդիկ ստում են, որպեսզի պաշտպանվեն և մյուսների մոտ իրենց մասին լավ կարծիք ստեղծեն: Ոմանք իրենք իրենց արդարացնում են գողանալու համար, մտածելով, որ իրենք արժանի են այդ գողունին, մտադրվելով վերադարձնել այն, մտածում են, որ իրենք դրա կարիքն ավելի շատ ունեն, քան տվյալ ապրանքի տերը: Ոմանք խաբեության են դիմում դպրոցում ավելի լավ գնահատական ստանալու համար, կամ մտածում են՝ «բոլորն էլ անում են դա», կամ էլ որպեսզի հավասարվեն մյուսներին:

Այս և այլ արդարացումները տրվում են որպես անազնվության պատճառներ: Տիրոջ համար ընդունելի պատճառներ չկան: Երբ մենք արդարանում ենք, մենք խաբում ենք մեզ և Աստծո Հոգին այլևս մեզ հետ չի լինում: Մենք դառնում ենք ավելի ու ավելի անարդար:

Մենք կարող ենք լիովին ազնիվ լինել

• Ի՞նչ է նշանակում լիովին ազնիվ լինել:

Լիովին ազնիվ լինելու համար մենք պետք է ուշադիր զննենք մեր կյանքը: Եթե կան բաներ, որոնցում մենք նվազագույն իսկ չափի անազնիվ ենք, մենք պետք է անմիջապես ապաշխարենք այդ ամենի համար:

Երբ մենք լիովին ազնիվ ենք, չենք կարող ապականվել: Մենք հավատարիմ ենք ամեն վստահության, պարտականության կամ ուխտի, նույնիսկ եթե պետք է զրկվենք զումարից, ընկերներից կամ մեր կյանքից: Այդ դեպքում մենք կարող ենք առանց ամաչելու նայել Տիրոջը, ինքներս մեզ և մյուսներին: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը խորհուրդ է տվել. «Թող ամեն մարդու կյանք այնպես լինի, որ նրա բնավորությունը մանրազննին քննության առնվի, որ այն լինի բաց գիրք, այնպես որ նա ոչնչից չխորշի կամ չամաչի» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 252):

• Ինչպե՞ս է մեր ազնվությունը կամ անազնվությունը ազդում մեր մասին ունեցած մեր կարծիքի վրա:

Լրացուցիչ սուրբ գրություններ

• ՎևՈ 50.17 (միայն ճշմարտության ոգով խոսեք)

• ՎևՈ 76.103–6 (ստախոսների վերջնական հանգրվանը)

• ՎևՈ 42.27 (հարևաններին չչարախոսելու պատվիրան)

• Ելից Ի.15–16 (չգողանալու և սխալ չվկայելու պատվիրան)

• ՎևՈ 42.20, 84–85; 59.6 (չի կարելի գողանալ)

• ՎևՈ 3.2 (Աստված ազնիվ է)

• ՎևՈ 10.25–28 (սատանան խաբում է)

Տասանորդ և նվիրատվություններ

Գլուխ 32

Վճարել տասանորդ և նվիրատվություններ

- Ինչպե՞ս է տասանորդ և նվիրատվություններ վճարելու մեր պատրաստակամությունը մեր Երկնային Հոր հանդեպ երախտագիտություն արտահայտում մեզ տված Նրա բոլոր օրհնությունների համար:

Մեզ տրված պատվիրաններն օգնում են մեզ պատրաստվել, մշտապես ապրելու մեր Երկնային Հոր հետ: Նա մեզ միջոց է տվել շնորհակալություն հայտնել Նրան մեր օրհնությունների համար: Տասանորդն ու նվիրատվությունները պատրաստակամորեն վճարելը Նրան շնորհակալություն հայտնելու մի եղանակ է: Այս նվիրատվությունները վճարելով մենք ցույց ենք տալիս, որ սիրում ենք Նրան և հնազանդվում ենք Նրա խորհրդին:

- Ինչպե՞ս է տասանորդ և նվիրատվություններ վճարելը օգնում մեզ շնորհակալություն հայտնել մեր Երկնային Հորը:

Հնազանդվել տասանորդի օրենքին

- Ի՞նչ է ազնիվ տասանորդը:

Հնում Աբրահամն ու Հակոբը հնազանդվեցին իրենց եկամտի մեկ տասներորդը վճարելու պատվիրանին (տես Եբրայեցիս Է.1–10; Ծննդոց ԺԴ.19–20; ԻԸ.20–22):

Ուսուցիչներին. Օգտագործեք բաժնի սկզբում տրված հարցերը, որպեսզի քննարկում սկսեք և դասարանի կամ ընտանիքի անդամներին ուղղեք դեպի տեքստը ավելի շատ տեղեկություն գտնելու համար: Օգտագործեք բաժնի վերջում տրված հարցերը, որպեսզի օգնեք դասարանի կամ ընտանիքի անդամներին խորհել ու քննարկել իրենց կարդացածի շուրջ և կիրառել այն իրենց կյանքում:

Մեր ժամանակներում Մարգարե Ջոզեֆ Սմիթը աղոթեց. «Ո՜վ Տեր, ցույց տուր քո ծառաներին, թե որքան ես դու պահանջում քո ժողովրդի ունեցվածքից, որպես տասանորդ» (ՎևՈ119, բաժնի ներածություն)։ Տերը պատասխանել է. «Դա կլինի իմ ժողովրդի տասանորդ տալու սկիզբը։ Եվ դրանից հետո, նրանք, ովքեր այդպես տասանորդ են տվել, պետք է վճարեն իրենց տարեկան ամբողջ եկամուտի մեկ տասներորդը. և սա մնայուն օրենք պիտի լինի նրանց համար հավիտյան» (ՎևՈ 119.3–4)։ Առաջին Նախագահությունը բացատրել է, որ «տարեկան ամբողջ եկամտի մեկ տասներորդը» վերաբերում է մեր եկամտին (տես First Presidency letter, Mar. 19, 1970)։

Տասանորդ վճարելով մենք մեր հավատարմությունն ենք ցույց տալիս Տիրոջը։ Մենք նաև ուսուցանում ենք մեր երեխաներին այս օրենքի արժեքը։ Նրանք ցանկություն կունենան հետևել մեր օրինակին և տասանորդ վճարել իրենց ողջ վաստակած գումարից։

- Ինչպե՞ս է տասանորդն ավելի շատ հավատքի սկզբունք, քան ֆինանսական սկզբունք։
- Ի՞նչ կարող են ծնողներն անել, որ ուսուցանեն իրենց երեխաներին տասանորդ վճարելու և դրա կարևորության մասին։

Մենք պետք է պատրաստակամորեն վճարենք

- Ինչո՞ւ է մեր վերաբերմունքը կարևոր տասանարոդ վճարելիս։

Կարևոր է պատրաստակամորեն տալը։ «Երբ մեկն իր տասանորդը հաճույքով չի վճարում, նա զրկվում է օրհնության մի մասից։ Նա պետք է սովորի ուրախությամբ և պատրաստակամորեն տալ, և նրա նվերը կօրհնվի» (Stephen L Richards, *The Law of Tithing* [pamphlet, 1983], 8)։

Պողոս Առաքյալն ուսուցանել է, որ կարևոր է ոչ միայն այն, թե ինչ ենք տալիս, այլև ինչպես ենք տալիս։ Նա ասել է. «Ամեն մեկը թող տա ոչ թե սրտի տրտմությունով, կամ հարկադրությունով. որովհետև Աստված սիրում է ուրախ տվողին» (Բ Կորնթացիս Թ.7)։

- Ի՞նչ է նշանակում ձեզ համար լինել «ուրախ տվող»։

Տասանորդ և այլ նվիրատվություններ

- Ինչպե՞ս է Եկեղեցին օգտագործում տասանորդի ֆոնդերը և այլ նվիրատվությունները:

Որպես Եկեղեցու անդամներ մենք տասանորդ և այլ նվիրատվություններ ենք տալիս Տիրոջը:

Տասանորդ

Տասանորդը օգտագործվում է Եկեղեցու կողմից տարբեր նպատակներով: Դրանցից են՝

1. Կառուցել, պահպանել և գործարկել տաճարներ, հավաքատներ և այլ կառույցներ:
2. Գործող ֆոնդեր ստեղծել Եկեղեցու ցցերի, ծխերի և այլ միավորների համար: (Այս միավորները ֆոնդերն օգտագործում են Եկեղեցու եկեղեցական ծրագրերն իրականացնելու համար, որոնցից են՝ ավետարանն ուուցանելը և միջոցառումներ անցկացնելը:)
3. Օգնել միսիոներական ծրագրին:
4. Կրթել երիտասարդներին Եկեղեցու դպրոցներում, սեմինարիաներում և ինստիտուտներում:
5. Տպել և բաժանել դասերի նյութերը:
6. Օգնել ընտանիքի պատմության և տաճարային աշխատանքում:

Այլ նվիրատվություններ

Ծոմի նվիրատվություններ: Ամեն ամիս Եկեղեցու անդամները ծոմ են պահում ՝ չուտելով և չխմելով երկու հաջորդական ճաշերի ընթացքում: Նրանք նվիրաբերում են առնվազն այն դրամը, որը պետք է ծախսեին այդ ճաշերի վրա: Նրանք իրենց կարողության չափով առատորեն նվիրաբերում են: Այս նվիրատվությունը կոչվում է ծոմի նվիրատվություն: Եպիսկոպոսները ծոմի նվիրատվություններն օգտագործում են ուտելիք, ապաստան, հագուստ և բժշկական օգնություն տրամադրելով կարիքավորներին: (Տես այս գլխի գլուխ 25-ը:)

Որպես ծոմի օրվա մաս, անդամները հաճախում են ծոմի և վկայության հավաքին, որտեղ նրանք միմյանց հետ կիսվում են Քրիստոսի և Նրա ավետարանի մասին իրենց վկայություններով։

Այլ նվիրատվություններ: Եկեղեցու անդամները կարող են նվիրատվություն կատարել Եկեղեցու այլ ծրագրերում, օրինակ, միսիոներական աշխատանքի, Մշտական Կրթական Ֆոնդի, տաճարի կառուցման և մարդասիրական օգնության համար։

Ծառայություն: Անդամները նաև տրամադրում են իրենց ժամանակը, հմտություններն ու իրերը մյուսներին օգնելու համար։ Այս ծառայությունը հնարավորություն է տալիս Եկեղեցուն օգնել ողջ աշխարհում կարիքավոր անդամներին և ոչ անդամներին համայնքային, ազգային և միջազգային մակարդակներով, հատկապես աղետների ժամանակ։

Մենք օրհնվում ենք տասանորդ և նվիրատվություններ տալով

Տերը խոստանում է օրհնել մեզ, եթե մենք հավատարմորեն վճարենք մեր տասանորդն ու նվիրատվությունները։ Նա ասել է. «Բոլոր տասանորդը տարեք գանձատունը, որ իմ տանը պաշար լինի. և ինձ մեկ փորձեցեք սորանով . . . թե արդյոք չե՞մ բանալ ձեզ համար երկնքի պատուհանները և օրհնություն թափել ձեզ համար՝ մինչև որ նորա համար տեղ չլինի» (Մաղաքիա Գ.10)։

Վերջին օրերի հայտնությունն ասում է տասանորդ վճարողների մեկ այլ օրհնության մասին. «Ճշմարիտ որ, սա զոհաբերության օր է, և իմ ժողովրդի տասանորդ տալու օր. քանզի նա, ով տասանորդ է տալիս, չի այրվի նրա գալստի ժամանակ» (ՎևՈւ 64.23)։

Մեզ խոստացվել են և նյութական և հոգևոր օրհնություններ։ Եթե մենք պատրաստակամորեն ենք տալիս, Երկնային Հայրը կօգնի մեզ հոգալ մեր ամենօրյա ուտելիքի, հագուստի և ապաստանի հարցերը։ Ֆիլիպիններում խոսելով Վերջին Օրերի Սրբերի հետ, Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է,

որ եթե մարդիկ «ընդունեն ավետարանը և ապրեն դրանով, վճարեն իրենց տասանորդն ու նվիրատվությունները, թեպետ այն չնչին գումար կազմի, Տերը կպահի իր վաղեմի խոստումը իրենց համար, և նրանք բրինձ կունենան իրենց ամաններում, հագուստ իրենց հագին և ծածկ գլխավերևում: Ես չեմ տեսնում այլ լուծում: Նրանք ցանկացած երկրային զորությունից վեր զորության կարիքն ունեն, որը կբարձրացնի և կօգնի նրանց» (“Inspirational Thoughts,” *Ensign,* Aug. 1997, 7): Տերը նաև կօգնի մեզ աճել «Աստծո գիտելիքի, վկայության և ավետարանով ապրելու զորության մեջ և կը ոգեշնչի մեր ընտանիքներին նույն կեր պ ապրել» (*Teachings of Presidents of the Church: Heber J. Grant* [2002], 124):

Մեծապես օրհնվում են նրանք, ովքեր վճարում են իրենց տասանորդն ու նվիրատվությունները: Նրանք լավ զգացողություն են ունենում, որ օգնում են կառուցել Աստծո թագավորությունը երկրի վրա:

- Ի՞նչ օրհնություններ եք դուք, ձեր ընտանիքի անդամները կամ ձեր ընկերները ստացել տասանորդ և այլ նվիրատվություններ վճարելու արդյունքում:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- ՎևՈւ 119.1–4 (տասանորդի օրենքը)
- Ծննդոց ԺԴ.18–20; Ալմա13.13–16 (Աբրահամը տասանորդ էր վճարում)

Միսիոներական աշխատանք

Գլուխ 33

Տիրոջ Եկեղեցին Միսիոներական Եկեղեցի է

- Ինչպե՞ս է միսիոներական աշխատանքը Աստծո ծրագրի մաս Նրա զավակների համար։

Տերը հայտնել է ավետարանի ծրագիրը Ադամին. «Եվ այդպես, Ավետարանը սկսեց քարոզվել ի սկզբանե» (Մովսես 5.58)։ Ավելի ուշ Ադամի արդարակյաց հետնորդները ուղարկվեցին քարոզելու ավետարանը. «Նրանք . . . բոլոր մարդկանց, ամենուրեք, կոչ արեցին ապաշխարել. և մարդկանց զավակներին հավատք էին ուսուցանում» (Մովսես 6.23)։

Բոլոր մարգարեները միսիոներներ են եղել։ Նրանցից յուրաքանչյուրին պատվիրվել է քարոզել ավետարանի պատգամը։ Երբ էլ որ քահանայությունը երկրի վրա է եղել, Տիրոջը անհրաժեշտ են եղել միսիոներներ՝ քարոզելու ավետարանի հավերժական սկզբունքները Իր զավակներին։

Տիրոջ Եկեղեցին միշտ եղել է միսիոներական եկեղեցի։ Երբ Փրկիչը ապրում էր երկրի վրա, Նա Առաքյալներ և Յոթանասունականներ կարգեց, և նրանց ավետարանը քարոզելու իշխանություն և պատասխանատվություն տվեց։ Նրանք հիմնականում քարոզում էին իրենց ժողովրդին՝ Հրեաներին (տես Մատթեոս Ժ.5–6)։ Հիսուսը հարություն առնելուց հետո, ուղարկեց Առաքյալներին, որ ավետարանը քարոզեն հեթանոսներին։ Նա պատվիրեց Առաքյալներին. «Գնացեք բոլոր աշխարհք, ավետարանը քարոզեցեք ամեն արարածի» (Մարկոս ԺՁ.5)։

Ուսուցիչներին. Ավետարանի սկզբունքներով կիսվելը Հոգին է հրավիրում։ Դուք կարող եք նախորոք կապվել դասարանի կամ ընտանիքի անդամների հետ, խնդրելով նրանց պատրաստվել կիսվելու իրենց համար կարևոր փորձառություններով, որոնք կարող են օգնել մյուսներին։

Պողոս Առաքյալը հեթանոսների մոտ ուղարկված մեծ միսիոներ էր: Եկեղեցուն միանալուց հետո, նա իր կյանքի մնացած մասն անցկացրեց նրանց ավետարանը քարոզելով: Իր միսիայի ընթացքում, տարբեր ժամանակներ նրան մտրակել են, քարկոծել և բանտարկել: Բայց նա շարունակում էր ավետարանը քարոզել (տես Գործք ԻԳ.10–12; ԻԶ):

Միսիոներական աշխատանքը կրկին սկսվեց, երբ Տիրոջ Եկեղեցին վերականգնվեց Մարգարե Ջոզեֆ Սմիթի միջոցով: Այսօր Առաքյալներին և Յոթանասունականներին մեծ պատասխանատվություն է տրված ավետարանը քարոզելու և հետևելու, որ այն քարոզվի ամբողջ աշխարհում: Տերը պատվիրեց Ջոզեֆ Սմիթին. «Հռչակիր իմ ավետարանը՝ երկրից երկիր և քաղաքից քաղաք: . . . Վկայություն բեր ամենուր, բոլոր մարդկանց մեջ» (ՎԿՈ 66.5, 7): 1830թ. հունիսին Սամուել Հարիսոն Սմիթը՝ Մարգարեի եղբայրը, սկսեց Եկեղեցու համար առաջին միսիոներական ճանապարհորդությունը:

Այդ ժամանակից ի վեր, մեկ միլիոնից ավելի միսիոներներ կանչվել և ուղարկվել են ավետարանը քարոզելու: Նրանք աշխարհ են տանում ուղերձը, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է և մեր Փրկիչը: Նրանք վկայում են, որ ավետարանը վերականգնվել է երկրի վրա Աստծո մարգարեի միջոցով: Միսիոներներին պատասխանատվություն է տրված քարոզելու ավետարանը բոլոր ժողովուրդներին, մկրտելու նրանց և ուսուցանելու անել այն ամենը, ինչ Տերը պատվիրել է (տես Մատթեոս ԻԸ.19–20): Վերջին Օրերի Սուրբ միսիոներներն իրենց հաշվին գնում են աշխարհի տարբեր մասեր՝ քարոզելու ավետարանի ուղերձը:

Ավետարանը կքարոզվի ողջ աշխարհին

- Ավետարանով կիսվելու ի՞նչ տարբեր ուղիներ է Տերը պատրաստել մեզ համար:

Վերջին օրերի հայտնության մեջ մեզ ասվել է, որ պետք է վերականգնված ավետարանը տանենք բոլոր ազգերին և ժողովուրդներին (տես ՎԿՈ 133.37): Տերը երբեք մեզ պատվիրան չի տալիս առանց մեզ համար ուղի պատրաստելու, որ

կատարենք այն (տես 1 Նեփի 3.7)։ Տերը մեզ համար ուղիներ է պատրաստել, որոնք մի ժամանակ փակ էին մեր առաջ ավետարանը ազգերի մեջ քարոզելու համար։ Երբ մենք շարունակում ենք աղոթել և հավատք գործադրել, Տերը բացում է ուղիներ այլ ազգերի միսիոներական աշխատանքի համար։

Տերը նաև «ոգեշնչում է մեծազույն մարդկանց հայտնագործություններ կատարել, որոնք աշխարհին երբևէ անհայտ ուղիներով առաջ են մղում Տիրոջ աշխատանքը» (Russell M. Nelson, in "Computerized Scriptures Now Available," *Ensign,* Apr. 1988, 73)։ Օրաթերթերը, ամսագրերը, հեռուստատեսությունը, ռադիոն, արբանյակային կապերը, համակարգիչները, ինտերնետը և այլ տեխնոլոգիաներն օգնում են ավետարանի ուղերձը հասանելի դարձնել միլիոնավոր մարդկանց։ Մենք, որ ունենք ավետարանի լրիվությունը, պետք է օգտագործենք այս հայտնագործությունները, որպեսզի իրագործենք Տիրոջ պատվիրանը. «Քանզի, ճշմարիտ, ձայնն առաջ պիտի գնա այստեղից դեպի ողջ աշխարհը, և դեպի երկրի ծայրամասերը,– ավետարանը պիտի քարոզվի ամեն [մարդու]» (ՎևՈ 58.64)։

- Ի՞նչ ուղիներ եք տեսել, որոնցով նորագույն տեխնոլոգիաներն արդյունավետորեն օգտագործվել են ավետարանը հռչակելու համար։

Միսիոներական աշխատանքը կարևոր է

- Ինչո՞ւ է կարևոր յուրաքանչյուր մարդու համար ավետարանը լսելն ու հասկանալը ։

«Որպես Եկեղեցի մեր առաջնային նպատակն է՝ փրկություն և վեհացում բերել մարդկանց զավակների հոգիներին» (Ezra Taft Benson, in Conference Report, Apr. 1974, 151; կամ *Ensign,* May 1974, 104)։ Միսիոներական աշխատանքը կարևոր է, որպեսզի աշխարհի ժողովուրդներին հնարավորություն տրվի լսելու և ընդունելու ավետարանը։ Նրանց անհրաժեշտ է սովորել ճշմարտությունը, դառնալ դեպի Տերը և իրենց մեղքերից ներում ստանալ։

Երկրի վրա մեր եղբայրներից և քույրերից շատերը կուրացել են կեղծ ուսմունքներից և «ճշմարտությունից հեռու են մնացել,

միայն որովհետև չգիտեն որտեղ գտնեն այն» (ՎևՈւ 123.12)։ Միսիոներական աշխատանքի շնորհով, մենք կարող ենք նրանց բերել դեպի ճշմարտություն։

Տերը պատվիրել է. «Տքնեք իմ այգում վերջին անգամ,– վերջին անգամ կոչ արեք երկրի բնակիչներին» (ՎևՈւ 43.28)։ Մեր եղբայրներին և քույրերին ավետարանը ուսուցանելով մենք ճանապարհ ենք պատրաստում Փրկչի Երկրորդ Գալստի համար (տես ՎևՈւ 34.6)։

Մենք բոլորս պետք է միսիոներներ լինենք

- Ինչպե՞ս կարող ենք մշտապես մյուսների հետ ավետարանով կիսվելու հնարավորություններ փնտրել։ Ինչպե՞ս կարող ենք պատրաստվել նման հնարավորություններին։

Եկեղեցու յուրաքանչյուր անդամ միսիոներ է։ Մենք պետք է միսիոներներ լինենք, նույնիսկ եթե մենք պաշտոնապես չենք կանչվել և ձեռնադրվել։ Մենք պատասխանատու ենք ավետարանը ուսուցանելու մեր Երկնային Հոր բոլոր զավակներին՝ թե խոսքով և թե գործով։ Տերն ասել է մեզ. «Ամեն մարդ, ով զգուշացվել է, պետք է զգուշացնի իր մերձավորին» (ՎևՈւ 88.81)։ Մարգարեի կողմից մեզ ասվել է, որ նախքան մեր հարևաններին զգուշացնելը, մենք պետք է ցույց տանք, որ սիրում ենք նրանց» (see *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 262)։ Նրանք պետք է զգան մեր ընկերությունն ու ընկերակցությունը։

Մոսիայի որդիները պատրաստակամորեն ընդունեցին ավետարանն ուսուցանելու իրենց պատասխանատվությունը։ Երբ նրանք դարձի եկան Եկեղեցի, նրանց սրտերը լի էին կարեկցանքով մյուսների հանդեպ։ Նրանք ցանկանում էին ավետարանը քարոզել իրենց թշնամիներին՝ Լամանացիներին. «Քանզի նրանք չէին կարող տանել, որ որևէ մարդկային հոգի ոչնչանար. այո, նույնիսկ սոսկ այն միտքը, որ որևէ հոգի պիտի տաներ անվերջ տանջանք, ստիպում էր նրանց ցնցվել ու դողալ» (Մոսիա 28.3)։ Երբ ավետարանը մեր կյանքը լցնի ուրախությամբ, մենք նման սեր և կարեկցանք կզգանք մեր եղբայր-

ների և քույրերի հանդեպ: Մենք ցանկություն կունենանք ավետարանով կիսվելու ամեն մեկի հետ, ով ցանկանում է լսել:

Ավետարանով կիսվելու բազմաթիվ եղանակներ կան. Ահա մի քանի առաջարկություն.

1. Մենք կարող ենք ընկերներին և ուրիշներին ցույց տալ ավետարանի ճշմարտություններով ապրելու մեր ուրախությունը: Այդպես մենք կլինենք լույս աշխարհի համար (տես Մատթեոս Ե.16):
2. Մենք կարող ենք հաղթահարել մեր բնական ամաչկոտությունը լինելով ընկերական մյուսների հետ և բարի գործեր կատարելով մյուսների համար: Մենք կօգնենք նրանց տեսնել, որ մենք անկեղծորեն հետաքրքրված ենք իրենցով և անձնական շահ չենք հետապնդում:
3. Մենք կարող ենք ավետարանը բացատրել ոչ անդամ ընկերներին և մյուսներին:
4. Մենք կարող ենք ավետարանի մասին ավելին սովորելու ցանկություն ունեցող ընկերներին տուն հրավիրել միսիոներների կողմից ուսուցանվելու համար: Եթե մեր ոչ անդամ ընկերները հեռու են ապրում, մենք կարող ենք խնդրել, որ նրանց տարածքի միսիոներները այցելեն նրանց:
5. Մենք կարող ենք մեր երեխաներին սովորեցնել ավետարանով կիսվելու կարևորության մասին, և մենք կարող ենք հոգևոր և ֆինանսական հարցերում աջակցել՝ պատրաստելով նրանց միսիա գնալուն: Մենք կարող ենք նաև պատրաստվել լիաժամկետ միսիա ծառայել թոշակի անցնելուց հետո:
6. Մենք կարող ենք վճարել մեր տասանորդը և նվիրատվություն կատարել միսիոներական ֆոնդին: Այդ նվիրատվությունները օգտագործվում են միսիոներական աշխատանքն ընդլայնելու նպատակով:
7. Մենք կարող ենք նվիրատվություն կատարել ծխին, ճյուղին կամ ընդհանուր միսիոներական ֆոնդին՝ ֆինանսական օժանդակություն ցուցաբերելով այն միսիոներներին, որոնց ընտանիքները չեն կարող նրանց աջակցել:

8. Մենք կարող ենք ընտանեկան պատմության հետազոտություն և տաճարային աշխատանք կատարել օգնելով մեր նախնիներին ստանալ ավետարանի լրիվ օրհնությունները:
9. Մենք կարող ենք հրավիրել ոչ-անդամներին մասնակցել ընտանեկան երեկոներին և Եկեղեցու միջոցառումներին, համաժողովներին և հավաքներին:
10. Մենք կարող ենք Եկեղեցու ամսագրեր տալ նրանց: Մենք կարող ենք նաև ավետարանի ուղերձներով կիսվել, օգտագործելով Եկեղեցու պաշտոնական ինտերնետային *LDS.org* և *Mormon.org* կայքերում զետեղված մատչելի նյութերը:

Մեր Երկնային Հայրը կօգնի մեզ արդյունավետ միսիոներներ լինել, եթե ավետարանով կիսվելու և առաջնորդության համար աղոթելու ցանկություն ունենք: Նա մեզ կօգնի ավետարանով կիսվելու ուղիներ գտնել մեր շրջապատի մարդկանց հետ:

- Մտածեք, թե ում հետ կարող եք ավետարանով կիսվել: Որոշեք, թե ինչպես եք անելու դա: Կարող եք նպատակադրվել, նրանց հետ որոշակի օր ավետարանով կիսվելու:

Տերը մեզ օրհնություններ է խոստանում միսիոներական աշխատանքը կատարելու համար

Տերն ասել է Մարգարե Ջոզեֆ Սմիթին, որ միսիոներները մեծ օրհնություններ կստանան: Խոսելով միսիայից վերադարձած միսիոներների հետ՝ Տերն ասել է. «Օրհնված եք դուք, քանզի վկայությունը, որ դուք բերել եք, արձանագրվել է երկնքում, հրեշտակների համար, որ կարդան. և նրանք ցնծում են ձեր համար» (ՎևՈւ 62.3): Նա նաև ասել է, որ ովքեր աշխատում են մյուսների փրկության համար, նրանց մեղքերը կներվեն և փրկություն կգա իրենց հոգիներին (տես ՎևՈւ 4.4; 31.5; 84.61):

Տերն ասել է մեզ.

«Եթե լինի այնպես, որ դուք տքնեք ձեր բոլոր օրերում, ապաշխարություն աղաղակելով այս ժողովրդին, և ինձ մոտ բերեք գեթ մեկ հոգի, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը նրա հետ իմ Հոր արքայությունում:

Եվ արդ, եթե ձեր ուրախությունը մեծ կլինի մեկ հոգու հետ, որին դուք բերել եք ինձ մոտ՝ իմ Հոր արքայություն, որքա՜ն մեծ կլինի ձեր ուրախությունը, եթե դուք շատ հոգիներ բերեք ինձ մոտ» (ՎևՈւ 18.15–16):

- Ե՞րբ եք միսիոներական աշխատանքից ուրախություն զգացել:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- ՎևՈւ 1.17–23 (Ջոզեֆ Սմիթին պատվիրվում է քարոզել)
- ՎևՈւ 24.12 (Տերը ամրացնում է նրանց, ովքեր միշտ ձգտում են հայտարարել Նրա ավետարանը)
- ՎևՈւ 38.41 (հեզությամբ և մեղմությամբ կիսվեք ավետարանով)
- ՎևՈւ 34.4–6; Գործք Ե.42 (պետք է քարոզել ավետարանը)
- ՎևՈւ 60.1–2 (Տերը զգուշացնում է նրանց, ովքեր վախենում են ավետարանը քարոզել)
- ՎևՈւ 75.2–5 (նրանք, ովքեր քարոզում են ավետարանը և հավատարիմ են, կօրհնվեն հավերժական կյանքով)
- ՎևՈւ 88.81–82 (նրանք, ում զգուշացվել է, պետք է զգուշացնեն իրենց մերձավորներին)
- Մատթեոս ԻԴ.14 (ավետարանը պետք է մինչև վերջ քարոզվի)
- Աբրահամ 2.9–11 (ավետարանը և քահանայությունը տրվել են բոլոր ժողովուրդներին)

Զարգացնենք մեր տաղանդները

Գլուխ 34

Մենք բոլորս ունենք տարբեր տաղանդներ և ունակություններ

Մենք բոլորս մեր Երկնային Հոր կողմից մեզ տրված հատուկ պարգևներ, տաղանդներ և ունակություններ ունենք: Երբ մենք ծնվեցինք, այդ պարգևները, տաղանդները և ունակությունները բերեցինք մեզ հետ (տես այս գրքի գլուխ 2):

Մովսես մարգարեն մեծ ղեկավար էր, սակայն նա իր եղբոր Ահարոնի կարիքն ուներ, որ օգներ իրեն որպես խոսնակ (տես Ելից Դ.14–16): Մեզանից ոմանք լավ ղեկավարներ են Մովսեսի պես կամ լավ խոսնակներ Ահարոնի պես: Մեզանից ոմանք կարող են լավ երգել կամ երաժշտական գործիքի վրա նվագել: Մյուսները հնարավոր է լավ են սպորտում կամ կարող են ձեռքի լավ աշխատանք կատարել: Այլ տաղանդներ էլ կարող ենք ունենալ՝ ուրիշներին հասկանալ, համբերություն, կենսուրախություն կամ մյուսներին ուսուցանելու ունակություն:

• Ինչպե՞ս եք օգուտ քաղել ուրիշների տաղանդներից:

Մենք պետք է օգտագործենք և բարելավենք մեր տաղանդները

• Ինչպե՞ս կարող ենք զարգացնել մեր տաղանդները:

Մենք մեզ տրված տաղանդները զարգացնելու պատասխանատվություն ենք կրում: Երբեմն մենք կարծում ենք, թե չունենք շատ տաղանդներ կամ մյուսներն ավելի շատ

Ուսուցիչներին. Որպեսզի դասարանի անդամներին ցույց տաք, որ հոգ եք տանում իրենց համար անհատապես, նրանց դիմեք իրենց անուններով: Սովորեք նրանց անունները: Երբ դասարանի նոր անդամ է հաճախում դասարան, նրան ներկայացրեք մյուսներին:

ունակություններով են օրհնվել, քան մենք: Երբեմն մենք չենք օգտագործում մեր տաղանդները, որովհետև վախենում ենք ձախողվելուց կամ մյուսների կողմից քննադատվելուց: Մենք չպետք է թաքցնենք մեր տաղանդները: Մենք պետք է օգտագործենք դրանք: Ապա մյուսները կտեսնեն մեր բարի գործերը և կփառավորեն մեր Երկնային Հորը (տես Մատթեոս Ե.16):

Կան որոշ բաներ, որ մենք պետք է անենք մեր տաղանդները զարգացնելու համար: Առաջինը, մենք պետք է հայտնաբերենք մեր տաղանդները: Մենք պետք է քննենք մեզ, որպեսզի գտնենք մեր ուժեղ կողմերը և ունակությունները: Մեր ընտանիքը և ընկերները կարող են օգնել մեզ դա անել: Մենք նաև պետք է խնդրենք մեր Երկնային Հորը, որ օգնի մեզ իմանալ մեր տաղանդների մասին:

Երկրորդ, մենք պետք է ցանկանանք ժամանակ տրամադրել և ջանքեր գործադրել մեր տաղանդը զրաագացնելու համար:

Երրորդ, մենք պետք է հավատանք, որ մեր Երկնային Հայրը կօգնի մեզ, և պետք է հավատանք ինքներս մեզ:

Չորրորդ, մենք պետք է սովորենք մեզ անհրաժեշտ հմտություններ, որպեսզի զարգացնենք մեր տաղանդները: Մենք կարող ենք անել դա դասի գնալով, ընկերոջը խնդրելով, որ ուսուցանի մեզ, կամ գիրք կարդալով:

Հինգերորդ, մենք պետք է գործնականում օգտագործենք մեր տաղանդը: Յուրաքանչյուր տաղանդ զարգացնելու համար ջանքեր և աշխատանք է պահանջվում: Պետք է վարպետանալ տաղանդի մեջ:

Վեցերորդ, մենք պետք է կիսվենք մեր տաղանդով մյուսների հետ: Մեր տաղանդներն օգտագործելով է, որ դրանք աճում են (տես Մատթեոս ԻԵ.29):

Այս բոլոր քայլերը հեշտ է կատարել, եթե մենք աղոթենք և Տիրոջ օգնությունը փնտրենք: Նա ցանկանում է, որ մենք զարգացնենք մեր տաղանդները, և Նա կօգնի մեզ:

Մեր թուլությունների հետ մեկտեղ մենք կարող ենք զարգացնել մեր տաղանդները

- Ինչպե՞ս կարող ենք զարգացնել մեր տաղանդները անկախ մեր թուլություններից:

Քանի որ մենք մահկանացու ենք և ընկած, մենք թուլություններ ունենք: Տիրոջ օգնությամբ, մեր թուլություններն ու ընկած էությունը կարելի է հաղթահարել (տես Եթեր 12.27, 37): Բեթհովենն իր ամենահրաշալի ստեղծագործությունը գրել է, երբ խուլ էր: Ենովքն իր ծանր խոսելը հաղթահարեց և դարձավ զորավոր ուսուցիչ (տես Մովսես 6.26–47):

Որոշ հայտնի մարզիկներ հաղթահարել են որոշ թերություններ, մինչև որ հաջողության են հասել իրենց տաղանդները զարգացնելով: Նման օրինակ է հանդիսանում Շելլի Մանը: «Հինգ տարեկանում նա պոլիոմելիտով էր հիվանդացել: . . . Նրա ծնողները նրան ամեն օր տանում էին լողավազան և հույս ունեին, որ ջրի մեջ նա կկարողանա, իր ձեռքերը վեր պահելով, փորձել կրկին օգտագործել դրանք: Երբ նա կարողանում էր իր ուժով ձեռքը բարձրացնել ջրի միջից, նա ուրախությունից բացականչում էր: Ապա նա նպատակ դրեց լողալ լողավազանի լայնությամբ, ապա երկարությամբ, ապա՝ կրկին մի քանի անգամ՝ երկարությամբ: Նա շարունակ փորձում էր, լողանում էր, տոկում էր, օրեց օր, մինչև որ ստացավ [Օլիմպիական] ոսկե մեդալ բատերֆլյայ լողաձևում, որը բոլոր լողաձևերից ամենադժվարն է» (Marvin J. Ashton, in Conference Report, Apr. 1975, 127; or *Ensign,* May 1975, 86):

Հեբեր Ջ. Գրանտը շատ թուլություններ հաղթահարեց և դրանք վերածեց տաղանդների: Նրա նշանաբանն էր. «Այն, ինչ մենք հաստատակամորեն անում ենք, ավելի հեշտ է դառնում անել. ոչ թե դրա էությունն է փոխվում, այլ այն անելու մեր կարողությունն է մեծանում» (in *Teachings of Presidents of the Church: Heber J. Grant* [2002], 35):

Տերը կօրհնի մեզ, եթե մենք իմաստուն ձևով օգտագործենք մեր տաղանդները

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է. «Աստծո յուրաքանչյուր որդի և դուստր որոշակի տաղանդ է ստացել, և յուրաքանչյուրը խիստ պատասխանատվության կենթարկվի, թե ինչպես է օգտագործել այն» (*Gospel Doctrine,* 5th ed. [1939], 370)։ Տաղանդը տնտեսվարման մի տեսակ է (պատասխանատվություն Աստծո արքայության մեջ)։ Տաղանդների առակը մեզ պատմում է, որ երբ մենք լավ ենք ծառայում մեր պատասխանատվության մեջ, մեզ ավելի մեծ պատասխանատվություններ են տրվում։ Եթե մենք լավ չենք ծառայում, մեր պատասխանատվությունն, ի վերջո, վերցվում է մեզանից։ (Տես Մատթեոս ԻԵ.14–30։)

Մեզ նաև ասվել է սուրբ գրություններում, որ մենք կդատվենք մեր գործերի համաձայն (տես Մատթեոս ԺԶ.27)։ Զարգացնելով և կիրառելով մեր տաղանդները մյուսների համար, մենք լավ գործեր ենք կատարում։

Տերը գոհանում է, երբ մենք իմաստուն ձևով ենք օգտագործում մեր տաղանդները։ Նա կօրհնի մեզ, եթե մենք օգտագործենք մեր տաղանդները հօգուտ մյուսների և կառուցենք Նրա արքայությունը այստեղ երկրի վրա։ Այստեղ երկրի վրա մեր եղբայրներին և քույրերին ծառայելով մենք որպես օրհնություն ուրախություն և սեր կստանանք։ Մենք նաև ինքնատիրապետում ենք սովորում։ Այս ամենը անհրաժեշտ է, եթե մենք արժանի ենք դառնում կրկին մեր Երկնային Հոր հետ ապրելու համար։

- Ո՞ւմ կարող եք օրինակ բերել, որոնց տաղանդները մեծարվել են, քանի որ նրանք իմաստուն ձևով են օգտագործել դրանք։ (Կարող եք որպես օրինակ բերել ձեր ծանոթներին կամ սուրբ գրություններից կամ էլ Եկեղեցու պատմությունից որոշ մարդկանց։)

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Հակոբոս Ա.17 (պարգևներն Աստծուց են գալիս)
- ՎևՈւ 46.8–11; Ա Տիմոթեոս Դ.14 (տաղանդներ գտեք և զարգացրեք)
- Բ Կորնթացիս ԺԲ.9 (թույլերը ուժեղ կդարձվեն)
- Հայտնություն Ի.13; 1 Նեփի 15.33; ՎևՈւ 19.3 (կդատվենք ըստ մեր գործերի)
- Եբրայեցիս ԺԳ.21 (լավ գործեր ցույց տվեք)

Հնազանդություն

Գլուխ 35

Մենք պետք է պատրաստակամորեն հնազանդվենք Աստծուն

- Ի՞նչ տարբերություն կա պատրաստակամորեն և դժկամորեն հնազանդվելու միջև:

Երբ Հիսուսը երկրի վրա էր, մի օրինագետ Նրան հարց ուղղեց.

«Վարդապետ, ո՞ր պատվիրանքն է մեծ օրենքումը:

Հիսուսն էլ ասեց նորան. Սիրիր քո Տեր Աստծուն քո բոլոր սրտովը քո բոլոր անձովը և քո բոլոր մտքովը:

Սա է առաջին և մեծ պատվիրանքը:

Երկրորդն էլ սորան նման. Սիրիր քո ընկերին քո անձի պես:

Այս երկու պատվիրանքից կախված են բոլոր օրենքը և մարգարեքը» (Մատթեոս ԻԲ.36–40):

Այս սուրբ գրությունից մենք սովորում ենք, թե որքան կարևոր է մեզ համար Տիրոջը և մեր մերձավորներին սիրելը: Բայց ինչպե՞ս ենք մենք ցույց տալիս մեր սերը Տիրոջ հանդեպ:

Հիսուսը պատասխանել է այս հարցին՝ ասելով. «Ով որ իմ պատվիրանքներն ունի և նորանց պահում է, նա է ինձ սիրողը. և ինձ սիրողն իմ Հորիցը կսիրուի» (Հովհաննես ԺԴ.21):

Մեզանից յուրաքանչյուրը պետք է ինքն իրեն հարց տա՝ ինչո՞ւ ենք մենք հնազանդվում Աստծո պատվիրաններին: Որովհետև մենք վախենում ենք պատժի՞ց: Որովհետև մենք ցանկանում ենք վարձք լավ ապրելու համա՞ր: Որովհետև մենք սիրում ենք Աստծուն և Հիսուս Քրիստոսին, և ցանկանում ենք ծառայե՞լ Նրանց:

Ուսուցիչներին. Դուք կարող եք դասարանի կամ ընտանիքի անդամներին օգնել ավելի խորը մտածել այս հարցի շուրջ՝ նրանց մտածելու համար ժամանակ տրամադրելով: Բավականին ժամանակ տրամադրելուց հետո, նրանց խնդրեք պատասխանել:

Ավելի լավ է հնազանդվել պատվիրաններին պատժից վախենալով, քան ամենևին չհնազանդվել դրանց: Բայց մենք ավելի երջանիկ կլինենք, եթե հնազանդվենք Աստծուն, որովհետև մենք սիրում ենք Նրան և ցանկանում ենք հնազանդվել Նրան: Երբ մենք հոժարակամ հնազանդվում ենք Նրան, Նա կարող է հոժարակամ օրհնել մեզ: Նա ասել է. « Ես՝ Տերս, . . . բերկրանքով պատվում եմ նրանց, ովքեր արդարությամբ և ճշմարտությամբ ծառայում են ինձ մինչև վերջ» (ՎևՈւ 76.5): Հնազանդությունը նաև օգնում է մեզ առաջադիմել և ավելի նմանվել մեր Երկնային Հորը: Բայց նրանք, ովքեր ոչինչ չեն անում, մինչև չեն պատվիրվում և ապա դժկամորեն են պահում պատվիրանները, կորցնում են իրենց վարձքը (տես ՎևՈւ 58.26–29):

- Ինչպե՞ս կարող ենք հնազանդվելու մեր ցանկությունը մեծացնել:

Մենք կարող ենք հնազանդվել առանց պատճառը հասկանալու

- Ինչո՞ւ հնազանդ լինելու համար միշտ չէ, որ անհրաժեշտ է հասկանալ Տիրոջ նպատակները:

Պահելով Աստծո պատվիրանները մենք պատրաստվում ենք հավերժական կյանքին և վեհացմանը: Երբեմն մենք չենք իմանում, թե ինչու է տվյալ պատվիրանը մեզ տրվել: Ինչևէ, մենք մեր հավատն ու վստահությունն ենք ցույց տալիս Աստծուն, երբ հնազանդվում ենք Նրան առանց պատճառն իմանալու:

Ադամին ու Եվային պատվիրվեց զոհ մատուցել Աստծուն: Մի օր հրեշտակը հայտնվեց Ադամին և հարցրեց, թե ինչու է զոհեր մատուցում: Ադամը պատասխանեց, որ չգիտի պատճառը: Նա անում էր դա, որովհետև Տերն էր պատվիրել իրեն: (Տես Մովսես 5.5–6 և այս գլխի նկարը:)

Այնուհետև հրեշտակը ուսուցանեց Ադամին ավետարանը և պատմեց նրան Փրկչի մասին, որը պետք է գար: Սուրբ Հոգին իջավ Ադամի վրա, և Ադամը մարգարեացավ երկրի բնակիչների մասին՝ մինչև վերջին սերունդը: (Տես Մովսես 5.7–10;

ՎԿՈ 107.56:) Այս գիտելիքը և մեծ օրհնություններ եկան Ադամին, որովհետև նա հնազանդ էր:

Աստված ուղի կպատրաստի

Մորմոնի Գիրքն ասում է մեզ, որ Նեփին և նրա եղբայրները շատ դժվար հանձնարարություն ստացան Տիրոջից (տես 1 Նեփի 3.1–6): Նեփիի եղբայրները դժգոհեցին ասելով, որ Տերն իրենցից դժվար բան էր պահանջում: Սակայն Նեփին ասաց. «Ես կգնամ ու կանեմ այն բաները, որոնք Տերը պատվիրել է, քանզի գիտեմ, որ Տերը չի տալիս պատվիրաններ մարդկանց զավակներին՝ առանց ուղի պատրաստելու նրանց համար, որպեսզի նրանք կարողանան իրագործել այն, ինչ նա պատվիրել է իրենց» (1 Նեփի 3.7): Երբ զգանք, որ Տիրոջ պատվիրանին հնազանդվելը դժվար է, մենք պետք է հիշենք Նեփիի խոսքերը:

- Ե՞րբ է Տերը ուղի պատրաստել ձեզ համար, որ հնազանդվեք Իրեն:

Ոչ մի պատվիրան հնազանդվելու համար շատ փոքր կամ շատ մեծ չէ

Երբեմն մենք կարող ենք մտածել, որ տվյալ պատվիրանը այդքան էլ կարևոր չէ: Սուրբ գրությունները պատմում են Նէեմանի մասին, որն այդպես էր մտածում: Նէեմանը սոսկալի հիվանդություն ուներ, և նա ճամփորդեց Սիրիայից Իսրայել, որպեսզի խնդրերի մարգարե Եղիսեյին բժշկեր իրեն: Նէեմանը իր երկրում կարևոր մարդ էր, և վիրավորվեց, երբ Եղիսեն անձնապես չդիմավորեց իրեն, այլ ծառային ուղարկեց: Նէեմանը նույնիսկ ավելի շատ վիրավորվեց, երբ ստացավ Եղիսեյի պատգամը՝ յոթ անգամ լվացվիր Հորդան գետում: «Մի՞թե Դամասկոսի գետերը Իսրայելի բոլոր ջրերիցը լավ չեն: մի՞թե նորանցում չէի լվացուիլ և մաքրուիլ»,- հարցրեց նա: Նա բարկացած ետ դարձավ: Բայց նրա ծառաները ասացին նրան. «Եթե մարգարեն քեզ մի մեծ բան ասած լիներ, չէի՞ր անիլ. ո՞ւր մնաց որ քեզ ասեց. Լուացուիր և կմաքրուիս»: Նէեմանն իմաստուն գտնվեց հասկանալով, որ պետք է հնազանդվել Աստծո

մարգարեին, թեկուզ դա թվում է փոքր բան։ Նա լվացվեց Հորդանանում և բժշկվեց։ (Տես Դ Թագավորաց Ե.1–14։)

Երբեմն մենք կարող ենք մտածել, թե տվյալ պատվիրանին անչափ դժվար է հնազանդվել։ Նեփիի եղբայրների պես մենք կարող ենք ասել. «Դժվար բան է Աստված պահանջում մեզանից»։ Սակայն Նեփիի պես մենք կարող ենք վստահ լինել, որ Աստված մեզ պատվիրան չի տա առանց մեզ համար Իրեն հնազանդվելու ուղի պատրաստելու։

«Դժվար բան էր», երբ Տերը պատվիրեց Աբրահամին իր միակ որդուն, Իսահակին, որպես զոհ մատուցել (տես Ծննդոց ԻԲ.1–13; տես նաև այս գրքի գլուխ 26)։ Աբրահամը շատ տարիներ էր սպասել Իսահակի ծնունդին, որդի, որին Աստված խոստացել էր իրեն։ Ինչպե՞ս կարող էր նա այդպես կորցնել իր որդուն։ Այդ պատվիրանը պետք է որ անչափ դժվար լիներ Աբրահամի համար։ Սակայն նա ընտրեց Աստծուն հնազանդվելը։

Մենք նույնպես պետք է պատրաստակամ լինենք կատարելու այն, ինչ Աստված պահանջում է։ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Ես ինձ համար կանոն եմ ստեղծել. *Երբ Տերը պատվիրում է, կատարիր այն*» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 160)։ Սա կարող է նաև մեր կանոնը լինել։

- Ե՞րբ եք օրհնություններ ստացել որպես փոքր թվացող պատվիրաններին հնազանդվելու արդյունք։

Հիսուս Քրիստոսը հնազանդվեց Իր Հորը

- Ի՞նչ օրինակներ են գալիս ձեր միտքը, երբ մտածում եք Իր Հորը Հիսուս Քրիստոսի հնազանդվելու մասին։

Հիսուս Քրիստոսը մեր Երկնային Հորը հնազանդվելու մեծ օրինակ էր։ Նա ասաց. «Ես իջա երկնքիցը, որ ոչ թե իմ կամքն անեմ, այլ ինձ ուղարկողի կամքը» (Հովհաննես Զ.38)։ Նա իր ողջ կյանքը նվիրեց Իր Հորը հնազանդվելուն, չնայած դա միշտ չէ որ հեշտ էր իր համար։ Նա ամեն կերպ զայթակղվեց, ինչպես մյուս մահկանացուները (տես Եբրայեցիս Դ.15)։

«Գեթսեմանի այգում Նա աղոթեց՝ ասելով. «Իմ Հայր, եթե կարելի է, թող այս բաժակն ինձանից անցնի. սակայն ոչ թե ինչպես ես եմ կամենում, այլ ինչպես դու» (Մատթեոս ԻԶ.39):

Քանի որ Հիսուսը հնազանդվեց Հոր կամքին բոլոր բաներում, Նա հնարավոր դարձրեց փրկությունը բոլորիս համար:

- Ինչպե՞ս կարող է Փրկչի օրինակը հիշելը օգնել մեզ հնազանդ լինել:

Հնազանդվելու և չհնազանդվելու արդյունքները

- Որո՞նք են Տիրոջ պատվիրաններին հնազանդվելու և չհնազանդվելու հետևանքները:

Երկնային արքայությունը օրենքով է կառավարվում, և երբ մենք որևէ օրհնություն ենք ստանում, դա այն օրենքին հնազանդվելու արդյունքն է, որի վրա այդ օրհնությունը հիմնված է (տես ՎևՈւ 130.20–21; 132.5): Տերն ասել է մեզ, որ մեր հնազանդության և ջանասիրության շնորհիվ կարող ենք գիտելիք և բանականություն ձեռք բերել (տես ՎևՈւ 130.18–19): Մենք նաև կարող ենք հոգևոր աճ ապրել (տես Երեմիա Է 23–24): Մյուս կողմից, անհնազանդության արդյունքում հիասթափություն ենք ապրում և զրկվում ենք օրհնություններից: «Ո՞վ եմ ես, ասում է Տերը, որ խոստացել եմ և չեմ կատարել: Ես պատվիրում եմ, և մարդիկ չեն հնազանդվում. ես չեղյալ եմ համարում, և նրանք չեն ստանում օրհնությունը: «Ապա նրանք ասում են իրենց սրտում. Սա Տիրոջ աշխատանքը չէ, քանզի նրա խոստումները չեն կատարվում» (ՎևՈւ 58.31–33):

Երբ մենք պահում ենք Աստծո պատվիրանները, Նա կատարում է Իր խոստումները, ինչպես Բենիամին Թագավորն է ասել իր ժողովրդին. «Նա պահանջում է, որ դուք անեք, ինչպես նա է պատվիրել ձեզ. որի համար, եթե դուք անեք, նա անմիջապես օրհնում է ձեզ» (Մոսիա 2.24):

Հնազանդ մարդը հավերժական կյանք է ստանում

Տերը խորհուրդ է տալիս. «Եթե պահեք իմ պատվիրանները և համբերեք մինչև վերջ, դուք կունենաք հավերժական կյանք,

պարգև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից» (ՎևՈւ 14.7)։

Տերը նկարագրել է այլ օրհնություններ, որոնք կգան նրանց, ովքեր մինչև վերջ կհնազանդվեն Իրեն արդարությամբ և ճշմարտությամբ։

«Այսպես է ասում Տերը,– Ես՝ Տերս, ողորմած և բարեգութ եմ նրանց հանդեպ, ովքեր վախենում են ինձանից, և բերկրանքով պատվում եմ նրանց, ովքեր արդարությամբ և ճշմարտությամբ ծառայում են ինձ մինչև վերջ։

Մեծ պիտի լինի նրանց վարձքը և հավերժական պիտի լինի նրանց փառքը։

Եվ նրանց ես կհայտնեմ բոլոր խորհուրդները, այո՛, բոլոր հնուց ի վեր թաքցված խորհուրդներն իմ արքայության, և գալիք դարերի ընթացքում ես նրանց հայտնի կդարձնեմ բարեհաճությունն իմ կամքի՝ բոլոր բաների առնչությամբ, որոնք վերաբերում են իմ արքայությանը։

Այո՝, նույնիսկ հավերժության զարմանալիքները կիմանան նրանք, և գալիք բաները ես ցույց կտամ նրանց, նույնիսկ բաներ՝ շատ սերունդների վերաբերյալ։

Եվ նրանց իմաստությունը մեծ պիտի լինի, և նրանց հասկացողությունը կհասնի երկինք։ . . .

Քանզի իմ Հոգով ես կլուսավորեմ նրանց, և իմ զորությամբ ես նրանց հայտնի կդարձնեմ իմ կամքի գաղտնիքները,– այո, նույնիսկ այն բաները, որոնք աչք չի տեսել, և ականջ չի լսել, և մարդու սիրտ չի թափանցել» (ՎևՈւ 76.5–10)։

- Ի՞նչ է ձեզ համար նշանակում «մինչև վերջ համբերել» արտահայտությունը։
- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի հավատարիմ մնանք ավետարանի սկզբունքներին, երբ դա հասարակության մեջ հիմնականում անընդունելի է։ Ինչպե՞ս կարող ենք օգնել երեխաներին և երիտասարդներին հավատարիմ մնալ ավետարանի սկզբունքներին։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Աբրահամ 3.25 (մենք աշխարհ ենք եկել, որպեսզի ապացուցենք մեր հնազանդությունը)
- Ա Թագավորաց ԺԵ.22 (հնազանդությունը ավելի լավ է, քան զոհաբերությունը)
- Ժողովող ԺԲ.13; Հովհաննես ԺԴ.15; Հռովմայեցիս Զ.16; ՎԵՈՒ 78.7; 132.36; Երկրորդ Օրինաց Դ.1–40 (մենք պետք է հնազանդվենք Աստծուն)
- 2 Նեփի 31.7 (Հիսուս Քրիստոսը հնազանդ էր)
- Առակաց Գ.1–4; Զ.20–22; Է.1–3; Եփեսացիս Զ.1–3; Կողոսացիս Գ.20 (երեխաները պետք է հնազանդվեն իրենց ծնողներին)
- ՎԵՈՒ 21.4–6 (հնազանդվեք մարգարեին)
- Հովհաննես Ը.29–32; Մոսիա 2.22, 41; ՎԵՈՒ 82.10; 1 Նեփի 2.20 (օրհնություններ հնազանդության համար)
- ՎԵՈՒ 58.21–22; 98.4–6; 134.5–7 (հնազանդվեք այդ երկրի օրենքներին)
- Եսայիա Կ.12; ՎԵՈՒ 1.14; 93.39; 132.6, 39 (անհնազանդության հետևանքները)
- 2 Նեփի 31.16; ՎԵՈՒ 53.7; Մատթեոս ԻԴ.13; Ղուկաս Թ.62 (համբերել մինչև վերջ)

Ընտանիքը կարող է հավերժական լինել

Գլուխ 36

Ընտանիքի կարևորությունը

- Ինչո՞ւ է մեր Երկնային Հայրը մեզ ուղարկել երկիր որպես ընտանիքի անդամներ։

«Տղամարդու և կնոջ ամուսնությունը հաստատվել է Աստծո կողմից։ . . . Ընտանիքն ամենակարևոր դերն ունի Արարչի ծրագրում՝ Իր զավակների հավերժական ճակատագրի համար» («Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», *Ensign,* Nov. 1995, 102)։

Երբ Երկնային Հայրը Ադամին և Եվային միասին ամուսնացրեց, Նա պատվիրեց նրանց զավակներ ունենալ (տես Ծննդոց Ա.28)։ Նա հայտնեց, որ ամուսնության նպատակներից մեկն է մահկանացու մարմիններ տալ Իր հոգևոր զավակներին։ Ծնողները գործակցում են մեր Երկնային Հոր հետ։ Նա ցանկանում է, որ Իր բոլոր հոգևոր զավակները ֆիզիկական մարմին ստանան և ապրեն երկրային կյանքով։ Երբ տղամարդն ու կինը երեխաներ են ունենում այս աշխարհում, նրանք օգնում են մեր Երկնային Հորը իրագործել իր ծրագիրը։

Յուրաքանչյուր նոր երեխա պետք է ուրախությամբ ընդունվի ընտանիքում։ Յուրաքանչյուրը Աստծո զավակն է։ Մենք պետք է ժամանակ տրամադրենք և ուրախանանք մեր երեխաներով, խաղանք նրանց հետ և ուսուցանենք նրանց։

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է. «Իմ ողջ սրտով ես հավատում եմ, որ հավերժական կյանքին պատրաստվելու համար լավագույն վայրը . . . տունն է» (“Blueprint for Family

---

Ուսուցիչներին. Ընտանիքի մասին այս և հաջորդ երկու գլուխներն ուսուցանելիս ուշադիր եղեք չվիրավորեք նրանց զգացումները, ում տանը կանոնավոր իրավիճակ չէ։

Living," *Improvement Era,* Apr. 1963, 252)։ Տանը, մեր ընտանիքներով, մենք կարող ենք սովորել ինքնատիրապետման, զոհաբերության, հավատարմության և աշխատանքի արժեքի մասին։ Մենք կարող ենք սովորել սիրել, կիսվել և ծառայել միմյանց։

Հայրերն ու մայրերը պատասխանատու են իրենց զավակներին Երկնային Հոր մասին սովորեցնելու համար։ Նրանք պետք է օրինակով ցույց տան, որ սիրում են Նրան, որովհետև պահում են Նրա պատվիրանները։ Ծնողները նաև պետք է ուսուցանեն իրենց զավակներին աղոթել և պատվիրաններին հնազանդվել (տես Առակաց ԻԲ.6)։

- Ինչո՞ւ է տունը հավերժական կյանքին պատրաստվելու լավագույն վայրը։
- Ինչպե՞ս կարող ենք օգնել Եկեղեցու երիտասարդներին հասկանալ ընտանիքի և ամուսնական ուխտի սրբությունը։

Հավերժական ընտանիք

Ընտանիքները կարող են հավերժ միասին լինել։ Այս օրհնությունն ունենալու համար մենք պետք է ամուսնանանք տաճարում։ Երբ մարդիկ ամուսնանում են տաճարից դուրս, ամուսնությունն ավարտվում է, երբ ամուսիններից մեկը մահանում է։ Երբ մենք ամուսնանում ենք տաճարում Մելքիսեդեկյան Քահանայության իշխանությամբ, մենք ամուսնանում ենք ժամանակի և հավերժության համար։ Եթե մենք պահում ենք Տիրոջ հետ կապած մեր ուխտերը, մեր ընտանիքները հավերժ միասին կլինեն որպես ամուսին, կին և երեխաներ։ Մահը չի կարող մեզ բաժանել։

Ընտանեկան սիրալիր հարաբերություններ

- Ինչպե՞ս կարող ենք մեր տներն առավել ներդաշնակ դարձնել։

Ամուսիններն ու կանայք պետք է խոհեմ և բարյացակամ լինեն միմյանց հանդեպ։ Նրանք երբեք չպետք է անեն կամ ասեն այն, ինչը կվիրավորի մյուսի զգացումները։ Նրանք

պետք է նաև փորձեն անել հնարավորինս ամեն ինչ, որպեսզի երջանկացնեն միմյանց։

Երբ ծնողները ճանաչում են Աստծուն և ձգտում են լինել Նրա նման, նրանք կուսուցանեն երեխաներին սիրել միմյանց։ Մորմոնի Գրքում Բենիամին թագավորը բացատրել է.

«Դուք չեք հանդուրժի, որ ձեր զավակները . . . կռվեն ու վիճեն մեկը մյուսի հետ։ . . .

Բայց դուք կսովորեցնեք նրանց՝ քայլել ճշմարտության և լրջամտության ուղիներով. դուք կսովորեցնեք նրանց՝ սիրել մեկը մյուսին ու ծառայել մեկը մյուսին» (Մոսիա 4.14–15)։

Որպես ընտանիքներ մենք կարող ենք օգնել միմյանց վստահություն ձեռք բերել՝ քաջալերելով և անկեղծ գովասանքով։ Յուրաքանչյուր երեխա պետք է զգա, որ ինքը կարևոր է։ Ծնողները պետք է ցույց տան, որ նրանք հետաքրքրված են այն ամենով, ինչ երեխաներն անում են, և սեր ու հոգածություն ցուցաբերեն իրենց զավակների հանդեպ։ Երեխաներն էլ պետք է իրենց սերն արտահայտեն իրենց ծնողների համար։ Նրանք պետք է լինեն հնազանդ և փորձեն ապրել այնպես, որ պատիվ բերեն իրենց ծնողներին և իրենց ընտանիքին։

- Ի՞նչ կարող են ծնողներն անել, որպեսզի քաջալերեն իրենց որդիներին և դուստրերին լավ ընկերներ լինել միմյանց համար։ Ի՞նչ կարող են եղբայրներն ու քույրերն անել, որպեսզի ընկերություն զարգացնեն միմյանց միջև։
- Ի՞նչ կարող են ամուսիններն ու կանայք անել, որպեսզի օգնեն միմյանց երջանիկ լինել։

Ինչպես ունենալ հաջողակ ընտանիք

- Ի՞նչ եք դուք անում, որպեսզի օգնեք ամրապնդել ձեր ընտանիքը, դարձնելով այն հաջողակ։

Նախագահ Հարոլդ Բ. Լին ուսուցանել է. «Տիրոջ աշխատանքում ամենակարևոր բանը, որ երբևէ կանեք, կլինի ձեր տան պատերի ներսում» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 134)։

Սատանան գիտի, թե որքան կարևոր դեր ունեն ընտանիքները մեր Երկնային Հոր ծրագրում: Նա փորձում է կործանել դրանք, մեզ թույլ չտալով մոտենալ Տիրոջը: Նա կգայթակղի մեզ անել բաներ, որոնք կբաժանեն մեր ընտանիքները:

Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հայտարարել են. «Հաջողակ ամուսնություններն ու ընտանիքները հիմնվում և պահպանվում են հավատի, աղոթքի, ապաշխարության, ներողամտության, հարգանքի, սիրո, կարեկցանքի, աշխատանքի և առողջ ու ստեղծարար միջոցառումների սկզբունքներով» (*Ensign,* Nov. 1995, 102):

Մենք բոլորս ցանկանում ենք ունենալ երջանիկ, հաջողակ ընտանիքներ: Հետևյալ խորհուրդները կօգնեն մեզ հասնել դրան.

1. Ամեն առավոտ և երեկոյան ընտանիքով աղոթեք (տես 3 Նեփի 18.21): Միասին աղոթեք որպես ամուսին և կին:
2. Ամեն շաբաթ ընտանեկան երեկոյի ընթացքում երեխաներին ավետարանը ուսուցանեք:
3. Ընտանիքով կանոնավոր ուսումնասիրեք սուրբ գրությունները:
4. Ընտանիքով միասին որոշ աշխատանքներ կատարեք, օրինակ աշխատանքային ծրագրեր կազմեք, զբոսանքներ կազմակերպեք և որոշումներ կայացրեք:
5. Սովորեք լինել բարի, համբերատար, երկայնամիտ և գթառատ (տես Մորոնի 7.45–48):
6. Կանոնավոր հաճախեք Եկեղեցու հավաքներին (տես ՎևՈւ 59.9–10):
7. Հետևեք Տիրոջ խորհրդին, որ տրված է ՎևՈւ 88.119-ում. «Կազմակերպվեք. նախապատրաստեք ամեն անհրաժեշտ բան. և հաստատեք մի ատուն, այսինքն՝ աղոթքի տուն, ծոմապահության տուն, հավատքի տուն, ուսման տուն, փառքի տուն, կարգ ու կանոնի տուն, Աստծո տուն»:
8. Ընտանիքի պատմություն կազմեք, տաճարային աշխատանք կատարեք և տաճարային կնքող արարողություններ ստացեք:

Ընտանիքն ամենակարևոր միավորն է Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցում: Եկեղեցին գոյություն ունի, որպեսզի օգնի ընտանիքներին հավերժական օրհնություններ և վեհացում ստանալ: Եկեղեցու կազմակերպություններն ու ծրագրերը նախատեսված են ամրացնելու մեզ անհատապես և օգնելու մեզ հավերժ ապրել որպես ընտանիք:

- Ի՞նչ կարող են անել ընտանիքները դժվար ժամանակներում, աշխատելով դուրս գալ այդ վիճակից:
- Ի՞նչ փաստեր գիտեք, երբ ջանքերը, ինչպիսիք են՝ ընտանեկան աղոթքը, ընտանիքով սուրբ գրություններն ուսումնասիրելը, ընտանեկան խորհուրդները, ընտանեկան ճաշի ժամերը, և ընտանեկան երեկոները, փոփոխություն են բերել այդ ընտանիք:

Լրացուցիչ սուրբ գրություններ և այլ նյութեր

- Մովսես 2.27–28 (տղամարդն ու կինը արարվեցին և օրհնվեցին)
- Ծննդոց Բ.24 (տղամարդը պետք է հարի իր կնոջը)
- ՎևՈւ 49.15–16 (Աստված հաստատել է ամուսնությունը)
- Եփեսացիս Զ.4 (կրթիր երեխային արդարակեցության մեջ)
- ՎևՈւ 132.15–21 (հավերժական ամուսնություն)
- ՎևՈւ 88.119–26 (հրահանգներ հաջողակ ընտանիք ունենալու համար)
- ՎևՈւ 93.40–50 (Տերը պատվիրում է ծնողներին իրենց երեխաներին մեծացնել լույսի և ճշմարտության մեջ)
- «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին» (մատչելի է *LDS.org* կայքում և Եկեղեցու տարբեր հրատարակություններում, ներառյալ *Ensign,* Nov. 1995, page 102; *Երիտասարդներին զորացնելու համար. Կատարել մեր պարտականությունն Աստծո հանդեպ* [item number 36550], էջ 44; և *Հավատքին հավատարիմ. Ավետարանի վկայակոչում* [item number 36863], էջեր 59–61)

Ընտանեկան պատաս-խանատվություններ

Գլուխ 37

Ծնողների պատասխանատվությունները

- Ի՞նչ համատեղ պարտականություններ ունեն ամուսիններն ու կանայք իրենց երեխաներին մեծացնելիս:

Յուրաքանչյուր մարդ կարևոր տեղ ունի իր ընտանիքում: Մարգարեների միջոցով Տերը բացատրել է, թե ինչպես պետք է հայրերը, մայրերը և երեխաները պետք է իրենց պահեն և վերաբերվեն միմյանց: Որպես ամուսիններ, կանայք և երեխաներ, մենք պետք է իմանանք, թե ինչ է Տերը մեզանից ակնկալում անել, որպեսզի իրականացնենք մեր նպատակը որպես ընտանիք: Եթե մենք բոլորս կատարենք մեր մասը, մենք հավերժորեն կմիավորվենք:

Ըստ ծնողական սուրբ պատասխանատվության, «հայրերն ու մայրերը պարտավոր են օգնել միմյանց որպես հավասար գործընկերներ» («Ընտանիք՝ հայտարարություն աշխարհին», *Ensign,* Nov. 1995, 102): Նրանք պետք է միասին աշխատեն, որպեսզի ապահովեն ընտանիքի հոգևոր, էմոցիոնալ, ինտելեկտուալ և ֆիզիկական կարիքները:

Որոշ պատասխանատվություններ ամուսինը և կինը պետք է համատեղ կատարեն: Ծնողները պետք է ավետարանը ուսուցանեն իրենց երեխաներին: Տերը զգուշացրել է, որ եթե ծնողները չեն ուսուցանում իրենց զավակներին հավատքի, ապաշխարության, մկրտության և Սուրբ Հոգու պարգևի մասին, մեղքը կլինի ծնողների գլխին: Ծնողները նաև պետք է

Ուսուցիչներին. Ինչպես գլուխ 36-ում, ուշադիր եղեք չվիրավորելու նրանց, ում տանը կանոնավոր իրավիճակ չէ: Շեշտեք, որ Տիրոջ առաջնորդությամբ և ընտանիքի անդամների և Եկեղեցու օգնությամբ, միայնակ ծնողները կարող են հաջողությամբ մեծացնել իրենց երեխաներին:

ուսուցանեն իրենց զավակներին աղոթել և Տիրոջ պատվիրաններին հնազանդվել: (Տես ՎևՈւ 68.25, 28:)

Լավագույն ձևերից մեկը, որ ծնողները կարող են ուսուցանել իրենց զավակներին, օրինակն է: Ամուսինները և կանայք պետք է սեր և հարգանք ցուցաբերեն միմյանց և իրենց զավակների հանդեպ՝ թե խոսքով և թե գործով: Կարևոր է հիշել, որ ընտանիքի յուրաքանչյուր անդամ Աստծո զավակն է: Ծնողները պետք է իրենց զավակներին սիրով և հարգանքով վերաբերվեն՝ նրանց նկատմամբ լինելով վճռական, սակայն բարի:

Ծնողները պետք է հասկանան, որ նույնիսկ ճշմարտությունը սովորեցնելուց հետո երեխաները երբեմն սխալ ընտրություններ կկատարեն: Երբ դա տեղի է ունենում, ծնողները չպետք է անձնատուր լինեն: Նրանք պետք է շարունակեն ուսուցանել իրենց զավակներին, նրանց հանդեպ սեր ցուցաբերելով, նրանց համար լավ օրինակ ծառայելով և նրանց համար ծոմ պահելով ու աղոթելով:

Մորմոնի Գիրքը պատմում է մեզ, թե ինչպես հոր աղոթքներն օգնեցին ըմբոստ որդուն վերադառնալ Տիրոջ ուղու վրա: Ալմա Կրտսերը հեռացել էր իր արդարակյաց հոր, Ալմայի, ուսմունքներից և ձգտում էր կործանել Եկեղեցին: Հայրը հավատքով աղոթեց իր որդու համար: Ալմա Կրտսերին այցելեց հրեշտակը, և նա ապաշխարեց իր չար ապրելակերպից: Նա դարձավ Եկեղեցու մեծ ղեկավար: (Տես Մոսիա 27.8–32:)

Ծնողները կարող են ակնածալից և հարգալից մթնոլորտ ստեղծել տանը, եթե նրանք սիրով ուսուցանում և առաջնորդում են իրենց զավակներին: Ծնողները պետք է նաև ուրախ փորձառություններ ստեղծեն իրենց երեխաների համար:

- Ինչպե՞ս կարող են ամուսինները և կանայք աջակցել միմյանց իրենց այդ դերում: Ո՞ւմ կարող են միայնակ ծնողները դիմել օգնության համար:

Հոր պատասխանատվությունները

- Իրենց երեխաներին մեծացնող հայրերի ի՞նչ դրական օրինակներ եք տեսել:

«Աստվածային ծրագրով, հայրերը իրենց ընտանիքում պետք է սիրով և արդարակեցությամբ նախագահեն, և պատասխանատու լինեն կյանքի համար անհրաժեշտ կարիքները հոգալու և իրենց ընտանիքին պաշտպանություն ապահովելու գործում» (*Ensign,* Nov. 1995, 102)։ Արժանի հայրը, որը Եկեղեցու անդամ է, քահանայություն կրելու հնարավորություն ունի, որը նրան դարձնում է իր ընտանիքի քահանայության ղեկավարը։ Նա պետք է առաջնորդի իր ընտանիքը խոնարհությամբ և բարությամբ, ոչ թե ուժով կամ դաժանորեն։ Սուրբ գրություններն ուսուցանում են, որ քահանայություն կրողը պետք է առաջնորդի մյուսներին համոզումով, մեղմորեն, սիրով և բարությամբ (տես ՎևՈւ 121.41–44; Եփեսացիս Զ.4)։

Հայրը քահանայության օրհնություններ է տալիս իր ընտանիքի անդամներին։ Երբ տղամարդը կրում է Մելքիսեդեկյան Քահանայություն, նա կարող է օրհնություններ տալ՝ հիվանդներին սպասավորելով և քահանայության հատուկ օրհնություններ տալով։ Քահանայության նախագահող ղեկավարի ղեկավարության ներքո, նա կարող է երեխաներին օրհնել, մկրտել, հաստատել և քահանայության արարողություններ կատարել։ Նա պետք է լավ օրինակ ծառայի իր ընտանիքի համար՝ պատվիրանները պահելով։ Նա պետք է նաև հավաստիանա, որ ընտանիքը միասին աղոթում է օրը երկու անգամ և ընտանեկան երեկոներ է անցկացնում։

Հայրը պետք է անհատապես ժամանակ անցկացնի յուրաքանչյուր երեխայի հետ։ Նա պետք է իր երեխաներին սովորեցնի ճիշտ սկզբունքները, զրուցի նրանց հետ իրենց խնդիրների և մտահոգությունների շուրջ և սիրով խորհուրդ տա։ Մի քանի լավ օրինակներ են տրված Մորմոնի Գրքում (տես 2 Նեփի 1.14–3:25; Ալմա 36–42)։

Նաև հոր պարտականությունն է իր ընտանիքի ֆիզիկական կարիքները հոգալը, հավաստիանալով, որ նրանք ունեն անհրաժեշտ սնունդը, տունը, հագուստը և կրթությունը։ Նույնիսկ եթե նա անկարող է ինքնուրույն այդ ամենը ապահովել, նա չպետք է թողնի իր ընտանիքի համար հոգալու պատասխանատվությունը։

Մոր պատասխանատվությունները

- Իրենց երեխաներին մեծացնող մայրերի ի՞նչ դրական օրինակներ եք տեսել:

Նախագահ Դեյվիդ Օ. Մակքեյն ասել է, որ մայրությունը ամենավեհ կոչումն է (տես *Teachings of Presidents of the Church: David O. McKay* [2003], 156): Դա սուրբ կոչում է, Աստծո հետ համագործակցություն՝ Նրա հոգևոր զավակներին աշխարհ բերելու համար: Երեխաներ ծնելը բոլոր օրհնություններից ամենամեծ օրհնությունն է: Եթե հայր չկա տանը, մայրն է նախագահում ընտանիքում:

Նախագահ Բոյդ Ք. Փաքերը գովաբանում է կանանց, որոնք չեն կարողացել ունենալ իրենց երեխաները, սակայն ձգտել են հոգ տանել ուրիշների համար: Նա ասել է. «Երբ ես խոսում եմ մայրերի մասին, ես խոսում եմ ոչ միայն այն կանանց մասին, ովքեր երեխաներ են ծնել, այլ նրանց մասին, ովքեր խնամել են ուրիշների ունեցած երեխաներին, և այն բազմաթիվ կանանց մասին, ովքեր չունենալով իրենց սեփական երեխաները մայր են եղել ուրիշների երեխաների համար» (*Mothers* [1977], 8):

Վերջին Օրերի մարգարեները ուսուցանել են. «Մայրերը հիմնականում պատասխանատու են իրենց երեխաներին դաստիարակելու համար» (*Ensign,* Nov. 1995, 102): Մայրը պետք է ժամանակ անցկացնի իր երեխաների հետ և նրանց ավետարանը ուսուցանի: Նա պետք է խաղա և աշխատի նրանց հետ, որպեսզի նրանք ճանաչեն իրենց շրջապատող աշխարհը: Նա նաև պետք է օգնի, որ իր ընտանիքը իմանա, ինչպես դարձնի տունը հաճելի վայր: Լինելով ջերմ և սիրալիր, նա օգնում է իր երեխաներին լավ կարծիք ունենալ իրենց մասին:

Մորմոնի Գիրքը նկարագրում է 2000 երիտասարդների մի խումբ, որոնք իրենց մայրերի դաստիարակության շնորհիվ դարձել էին հրաշալի երիտասարդներ (տես Ալմա 53.16–23): Հելաման մարգարեի առաջնորդությամբ նրանք զնացին ճակատամարտելու իրենց թշնամիների դեմ: Նրանք իրենց մայրերից սովորել էին ազնվություն, քաջություն և

հուսալիություն: Նրանց մայրերը նաև սովորեցրել էին, որ եթե իրենք չկասկածեն, Աստված կազատեր իրենց (տես Ալմա 56.47): Նրանք բոլորը գոյատևեցին այդ ճակատամարտում: Նրանք հավատացին իրենց մայրերի ուսմունքներին, ասելով. «Մենք չենք կասկածում, մեր մայրերը գիտեին դա» (Ալմա 56.48): Յուրաքանչյուր մայր, ով վկայություն ունի, կարող է մեծ ազդեցություն գործել իր երեխաների վրա:

Երեխաների պատասխանատվությունները

- Ինչպե՞ս են երեխաները օգնում իրենց ծնողներին երջանիկ տուն կառուցել:

Երեխաները կիսում են երջանիկ տուն կառուցելու իրենց ծնողների պատասխանատվությունները: Նրանք պետք է հնազանդվեն պատվիրաններին և համագործակցեն ընտանիքի մյուս անդամների հետ: Տիրոջը հաճելի չէ, երբ երեխաները վիճում են (տես Մոսիա 4.14):

Տերը պատվիրել է երեխաներին պատվել իրենց ծնողներին: Նա ասել է. «Պատուիր քո հորը և մորը, որ քո օրերը երկարանան երկրի վրա» (Ելից Ի.12): Ծնողներին պատվել նշանակում է սիրել և հարգել նրանց, ինչպես նաև հնազանդվել նրանց: Սուրբ գրությունները պատվիրում են երեխաներին՝ «հնազանդ եղեք ձեր ծնողներին Տերովը. որ այն է արժանը» (Եփեսացիս Զ.1):

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ասել է, որ երեխաները պետք է սովորեն աշխատել և կիսել տան և բակի հետ կապված պարտականությունները: Նրանց պետք է հանձնարարություններ տրվեն, որպեսզի պահեն տունը կոկիկ ու մաքուր: (Տես *Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 120:)

- Ի՞նչ պետք է երեխաները անեն, որպեսզի պատվեն և հարգեն իրենց ծնողներին:
- Ի՞նչ են արել ձեր ծնողները, որի արդյունքում դուք պատվել և հարգել եք նրանց:

Պատասխանատվություններ ստանձնելը օրհնություններ է բերում

- Ի՞նչ կարող է ընտանիքի յուրաքանչյուր անդամն անել, որպեսզի տունը ուրախությամբ լցվի:

Սիրող և երջանիկ ընտանիքը պատահական չի ստեղծվում: Ընտանիքի յուրաքանչյուր անդամ պետք է կատարի իր մասը: Տերը պատասխանատվություններ է տվել և ծնողներին և երեխաներին: Սուրբ գրություններն ուսուցանում են, որ մենք պետք է լինենք հոգատար, ուրախ և քաղաքավարի մյուսների հանդեպ: Երբ մենք զրուցում, աղոթում, երգում կամ աշխատում ենք միասին, մենք կարող ենք վայելել ներդաշնակության օրհնությունները մեր ընտանիքում: (Տես Կողոսացիս Գ:)

- Նշեք մի քանի ավանդույթներ և սովորույթներ, որոնք տունը ուրախությամբ են լցնում:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Առակաց ԻԲ.6 (կրթիր երեխային)
- Եփեսացիս Զ.1–3 (երեխաները պետք է հնազանդվեն ծնողներին)
- ՎԿՈ 68.25–28; Եփեսացիս Զ.4 (ծնողների պատասխանատվությունները)
- «Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին», (մատչելի է *LDS.org* կայքում և Եկեղեցու հրապարակումներում, ներառյալ *Ensign,* Nov. 1995, էջ 102; *Երիտասարդներին զորացնելու համար* [item number 36550], էջ 44; և *Հավատքին հավատարիմ* [item number 36863], էջեր 59–61)
- *Ընտանեկան ուղեցույց* (item number 31180)

Հավերժական ամուսնություն

Գլուխ 38

Ամուսնությունը սահմանված է Աստծո կողմից

Տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը Աստծո ծրագրի կարևոր մասն է: Տերն ասել է. «Նա, ով արգելում է ամուսնանալը, կարգված չէ Աստծո կողմից, քանզի ամուսնությունն Աստծո կողմից է կարգված մարդու համար» (ՎԵՌՈՒ 49.15): Ի սկզբանե, ամուսնությունը եղել է ավետարանի օրենքը: Ամուսնությունները նախատեսված են լինելու ոչ միայն մեր մահկանացու կյանքի համար, այլև՝ հարատև:

Ադամն ու Եվան ամուսնացան Աստծո կողմից, երբ մահ չկար աշխարհում: Նրանք հավերժական ամուսնություն կնքեցին: Նրանք հավերժական ամուսնության մասին ուսուցանեցին իրենց երեխաներին և իրենց երեխաների երեխաներին: Տարիներ անցան, ամբարշտությունը մուտք գործեց մարդկանց սրտերը և այս սուրբ արարողությունը կատարելու իշխանությունը վերցվեց երկրի վրայից: Ավետարանի Վերականգմամբ հավերժական ամուսնությունը վերականգնվեց երկրի վրա:

- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը սահմանվել է Աստծո կողմից:

Հավերժական ամուսնությունը կարևոր է վեհացման համար

- Ո՞րն է ամուսնության Տիրոջ վարդապետությունը, և ինչպե՞ս է այն տարբերվում աշխարհի տեսակետներից:

Աշխարհում շատ մարդիկ ամուսնությունը համարում են սոցիալական սովորույթ՝ իրավական համաձայնագիր համատեղ գոյակցող տղամարդու և կնոջ միջև: Բայց Վերջին Օրերի

Սրբերի համար ամուսնությունն ավելին է: Մեր վեհացումը կախված է ամուսնությունից, մյուս սկզբունքների և արարողությունների հետ միասին, ինչպիսիք են՝ հավատքը, ապաշխարությունը, մկրտությունը և Սուրբ Հոգու պարգևը ստանալը: Մենք հավատում ենք, որ ամուսնությունն ամենասուրբ հարաբերությունն է, որ կարող է գոյություն ունենալ տղամարդու և կնոջ միջև: Այս սուրբ հարաբերությունն ազդում է մեր երջանկության վրա այժմ և հավերժություններում:

Երկնային Հայրը մեզ տվել է հավերժական ամուսնության օրենքը, որպեսզի մենք կարողանանք նմանվել Իրեն: Տերն ասել է.

«Մելեստիալ փառքի մեջ կա երեք երկինք կամ աստիճան.

Եվ ամենաբարձրին հասնելու համար մարդ պետք է մտնի քահանայության այս կարգի մեջ [որն է՝ ամուսնության նոր և հավիտենական ուխտը].

Եվ եթե նա չմտնի, չի կարող հասնել դրան» (ՎևՈւ 131.1–3):

Հավերժական ամուսնությունը պետք է կատարվի տաճարում պատշաճ իշխանությամբ

- Ինչո՞ւ ամուսնությունը պետք է կատարվի տաճարում պատշաճ իշխանությամբ, որպեսզի հավերժական լինի:

Հավերժական ամուսնությունը պետք է կատարվի նրա կողմից, ով կնքման զորությունն է կրում: Տերը խոստացել է. «Եթե մի տղամարդ ամուսնանա մի կնոջ հետ . . . հավիտենական ուխտով . . . նրա կողմից, ով օծվել է, . . . և եթե [նրանք] մնան [Տիրոջ] ուխտի մեջ, . . . այն . . . ամբողջությամբ ուժի մեջ կլինի, երբ նրանք աշխարհից դուրս են» (ՎևՈւ 132.19):

Ոչ միայն հավերժական ամուսնությունը պետք է կատարվի քահանայության համապատասխան իշխանությամբ, այլև այն պետք է նաև կատարվի մեր Տիրոջ սուրբ տաճարներից մեկում:

Ուսուցիչներին. Բոլոր անդամները, լինեն ամուսնացած, թե ամուրի, պետք է հասկանան հավերժական ամուսնության վարդապետությունը: Ինչևէ, դուք պետք է զգայուն լինեք չամուսնացած չափահասների զգացումների հանդեպ: Անհրաժեշտության դեպքում օգնեք դասարանի կամ ընտանիքի անդամներին հասկանալ, որ Երկնային Հոր բոլոր զավակները, ովքեր հավատարիմ են իրենց ուխտերին այս կյանքում, հնարավորություն կունենան ստանալ ավետարանի բոլոր օրհնությունները հավերժություններում, ներառյալ հավերժական ընտանիք ունենալու հնարավորությունը:

Տաճարը միակ վայրն է, որտեղ այս սուրբ արարողությունը կարող է կատարվել:

Տաճարում Վերջին Օրերի Սուրբ զույգերը ծնկի են իջնում սուրբ զոհասեղաններից մեկի առաջ տաճարային օժտում ստացած իրենց ընտանիքների և ընկերների ներկայությամբ: Նրանք իրենց ամուսնական ուխտերն են կապում Աստծո առաջ: Նրանք հայտարարվում են ամուսին և կին ժամանակի և ողջ հավերժության համար: Սա կատարվում է Աստծո սուրբ քահանայությունը կրողի կողմից, որին այս սուրբ արարողությունը կատարելու իշխանություն է տրված: Նա գործում է Տիրոջ ղեկավարության ներքո և զույգին խոստանում է վեհացման օրհնությունները: Նա նրանց ուսուցանում է այն, ինչ պետք է իմանան այդ օրհնությունները ստանալու համար: Նա հիշեցնում է նրանց, որ բոլոր օրհնությունները կախված են Աստծո օրենքների հանդեպ հնազանդությունից:

Եթե մենք ամուսնանում ենք ոչ թե քահանայության զորությամբ տաճարում, այլ մեկ ուրիշ իշխանությամբ, այդ ամուսնությունը լինում է միայն այս կյանքի համար: Մահից հետո, ամուսինները ոչ մի կապ չեն ունենում միմյանց կամ իրենց երեխաների հետ: Հավերժական ամուսնությունը մեզ հնարավորություն է տալիս շարունակել միասին լինել որպես ընտանիքներ, այս կյանքից հետո:

Հավերժական ամուսնության օգուտները

- Որո՞նք են հավերժական ամուսնության օրհնություններն այս կյանքում և հավերժության մեջ:

Որպես Վերջին Օրերի Սրբեր, մենք ապրում ենք ոչ թե պահի, այլ հավերժության հեռանկարով: Ինչևէ, մենք կարող ենք օրհնություններ ստանալ այս կյանքում որպես հավերժության համար ամուսնացածներ : Այդ օրհնություններից են՝

1. Մենք գիտենք, որ մեր ամուսնությունը կարող է հարատև լինել: Մահը կարող է մեզ միայն ժամանակավորապես բաժանել: Ոչինչ չի կարող մեզ հավետ բաժանել, բացի մեր իսկ անհնազանդությունից: Այս գիտելիքն օգնում է մեզ

ավելի տքնաջան աշխատել՝ երջանիկ, հաջողակ ամուսնություն ունենալու համար։

2. Մենք գիտենք, որ մեր ընտանեկան հարաբերությունները կարող են հավերժ շարունակվել։ Այս գիտելիքը օգնում է մեզ լինել զգույշ՝ մեր երեխաներին ուսուցանելիս։ Այն նաև օգնում է մեզ նրանց հետ համբերատար և սիրալիր լինել։ Արդյունքում, մենք կունենանք ավելի երջանիկ տուն։
3. Քանի որ ամուսնացել ենք Աստծո սահմանած ձևով, արժանի մնալու դեպքում մենք Հոգու զեղումները կունենանք մեր ամուսնության վրա։

Հավերժ մենք կարող ենք վայելել օրհնություններ, ինչպիսիք են՝

1. Մենք կարող ենք ապրել Աստծո սելեստիալ արքայության բարձրագույն աստիճանում։
2. Մենք կարող ենք վեհացում ստանալ, ինչպես Աստված, և ստանալ լիակատար ուրախություն։

- Ինչպե՞ս կարող է հավերժության հեռանկարն ազդել ամուսնության և ընտանիքի հանդեպ մեր մոտեցումների վրա։

Մենք պետք է պատրաստվենք հավերժական ամուսնությանը

- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի օգնենք երիտասարդներին պատրաստվել հավերժական ամուսնությանը։

Նախագահ Սպենսեր Վ. Քիմբալն ուսուցանել է. «Ամուսնությունը, հավանաբար, բոլոր որոշումներից ամենակարևորն է և կրում է ամենահեռուն գնացող հետևանքներ, քանզի դրանով է պայմանավորված ոչ միայն անմիջական երջանկությունը, այլև հավերժական ուրախությունները։ Այն ազդում է ոչ միայն դրանում ընդգրկված երկու մարդկանց վրա, այլև նրանց ընտանիքների և հատկապես նրանց երեխաների և թոռների վրա՝ մինչև շատ սերունդներ։ Կյանքի և հավերժության համար զուգընկեր ընտրելիս անշուշտ պետք է ամենայն զգուշությամբ պլանավորել և մտածել, աղոթել և ծոմ պահել, վստահ լինելով, որ բոլոր

որոշումներից այս մեկը պետք է սխալ չլինի» (*Teachings of Presidents of the Church: Spencer W. Kimball* [2006], 193)։

Հավերժական ամուսնությունը պետք է լինի յուրաքանչյուր Վերջին Օրերի Սրբի նպատակը։ Սա վերաբերում է նույնիսկ նրանց, ովքեր արդեն ամուսնացել են քաղաքացիական օրենքով։ Հավերժական ամուսնության համար պատրաստվելիս շատ խորհրդածություն և աղոթք է պահանջվում։ Միայն Եկեղեցու արդարակյաց անդամներին է թույլատրվում մտնել տաճար (տես ՎԿՈ 97.15–17)։ Մենք հանկարծակի մի օր չենք որոշում, որ ցանկանում ենք ամուսնանալ տաճարում, ապա այդ նույն օրը գնում տաճար և ամուսնանում։ Մենք պետք է նախ որոշ պահանջներ բավարարենք։

Նախքան տաճար գնալը մենք պետք է առնվազն մեկ տարի Եկեղեցու ակտիվ, արժանի անդամներ լինենք։ Տղամարդիկ պետք է Մելքիսեդեկյան Քահանայություն կրեն։ Մենք պետք է հարցազրույց անցնենք ճյուղի նախագահի կամ եպիսկոպոսի հետ։ Եթե նա գտնի, որ մենք արժանի ենք, նա մեզ տաճարային երաշխավորագիր կտա։ Եթե արժանի չենք, նա խորհուրդ կտա մեզ և կօգնի նպատակներ դնել տաճար գնալուն արժանի դառնալու համար։

Եթե մենք երաշխավորագիր ենք ստանում մեր եպիսկոպոսից կամ ճյուղի նախագահից, մենք պետք է հարցազրույց անցնենք ցցի նախագահի կամ միսիայի նախագահի հետ։ Տաճարային երաշխավորագրի համար անցկացվող հարցազրույցի ժամանակ մեզ հետևյալ հարցերի պես հարցեր են տրվում.

1. Դուք հավատո՞ւմ եք Աստծուն, Հավերժական Հորը, Նրա Որդուն, Հիսուս Քրիստոսին, և Սուրբ Հոգուն, և վկայություն ունե՞ք նրանց մասին։ Դուք ամուր վկայություն ունե՞ք վերականգնված ավետարանի մասին։
2. Դուք հաստատո՞ւմ եք Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Նախագահին որպես մարգարե, տեսանող և հայտնող։ Դուք ընդունո՞ւմ եք նրան որպես միակ մարդ երկրի վրա, որը լիազորված է գործադրելու քահանայության բոլոր բանալիները։

3. Դուք ապրո՞ւմ եք մաքրաբարոյության օրենքով:
4. Դուք լրիվ տասանորդ վճարո՞ղ եք:
5. Դուք պահո՞ւմ եք Իմաստության Խոսքը:
6. Դուք ազնի՞վ եք մյուսների հետ ձեր հարաբերություններում:
7. Դուք ձգտո՞ւմ եք պահել ձեր կապած ուխտերը, հաճախել ձեր հաղորդության և քահանայության ժողովներին, և ավետարանի օրենքներին և պատվիրաններին ներդաշնակ կյանք վարել:

Երբ դիմում եք տաճարային երաշխավորագրի համար, դուք պետք է հիշեք, որ տաճար մտնելը սուրբ արտոնություն է: Դա լ ուրջ քայլ է, որին չի կարելի թեթևամտորեն վերաբերվել:

Մենք պետք է լրջորեն ձգտենք հետևել տաճարում կապած յուրաքանչյուր ուխտին: Տերն ասել է, որ եթե ճշմարիտ և հավատարիմ լինենք, մենք կմտնենք մեր վեհացման մեջ: Մենք կդառնանք մեր Երկնային Հոր պես: (Տես ՎևՈւ 132.19–20:) Տաճարային ամուսնության համար արժե կատարել ցանկացած զոհաբերություն: Դա չափազանց շատ հավերժական օրհնություններ ձեռք բերելու ուղի է:

- Ի՞նչ կարող ենք անել, որպեսզի քաջալերենք երիտասարդներին տաճարում ամուսնանալու նպատակ դնել: Ինչպե՞ս կարող ենք մենք դրանում օգնել նրանց:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ծննդոց Ա.26–28 (մենք պետք է բազմանանք և լցնենք երկիրը)
- Ծննդոց Բ.21–24 (առաջին ամուսնությունը կատարվեց Աստծո կողմից)
- Մատթեոս ԺԹ.3–8 (ինչ Աստված միացրել է)
- ՎևՈւ 132 (ամուսնական օրենքի հավերժական բնույթը)
- ՎևՈւ 42.22–26 (ամուսնական երդումները պետք է պահել)
- Հակոբ 3.5–7 (ամուսինները և կանայք պետք է հավատարիմ լինեն միմյանց)

Մաքրաբարոյության օրենքը

Գլուխ 39

Զգուշացում ծնողներին

Այս գլուխը պարունակում է մասեր, որոնք փոքր երեխաների համար չեն: Նախքան այս գլխի այդ մասերը նրանց ուսուցանելը, լավ կլինի, որ սպասեք երեխաներն այնքան մեծանան, որ հասկանան ինչ է սեքսուալ հարաբերությունները և վերարտադրությունը: Մեր Եկեղեցու ղեկավարներն ասել են մեզ, որ ծնողները պատասխանատու են ուսուցանելու իրենց երեխաներին վերարտադրության մասին (բեղմնավորման և երեխաներ ունենալու ընթացքի մասին): Ծնողները պետք է նաև ուսուցանեն մաքրաբարոյության օրենքը, որը բացատրվում է այս գլխում:

Ծնողները կարող են սկսել ուսուցանել երեխաներին ճիշտ ձևով վերաբերվել իրենց մարմնին, երբ երեխաները շատ փոքր են: Երեխաների հետ անկեղծորեն, սակայն ակնածանքով խոսելը և իրենց մարմնի օրգանների ու ֆունկցիաների ճիշտ անունները օգտագործելը, կօգնի նրանց մեծանալ իրենց մարմնի համար առանց ավելորդ շփոթության:

Երեխաները բնությամբ հետաքրքրասեր են: Նրանք ցանկանում են իմանալ, ինչպես է իրենց մարմինն աշխատում: Նրանք ցանկանում են իմանալ, որտեղից են երեխաները գալիս: Եթե ծնողները պատասխանեն բոլոր նման հարցերին անմիջապես և այնքան պարզ, որ երեխաները հասկանան, նրանք կշարունակեն իրենց հետաքրքրող հարցերն ուղղել իրենց ծնողներին: Իսկ եթե ծնողները այնպես են պատասխանում հարցերին, որ երեխաները զգում են շփոթված, մերժված կամ չբավարարված, նրանք, հավանաբար, իրենց հարցերով կգնան մեկ ուրիշի

մոտ և գուցե ստանան ոչ ճիշտ մտքեր կամ արժանանան ոչ պատշաճ վերաբերմունքի:

Ինչևէ, խելամիտ չէ և կարիք չկա երեխաներին միանգամից ամեն ինչ պատմել: Ծնողները պետք է միայն տան այն տեղեկությունը, ինչի մասին երեխան հարցրել է և կարող է հասկանալ: Պատասխանելով այդ հարցերին ծնողները կարող են ուսուցանել երեխաներին իրենց մարմինը և ուրիշների մարմինը հարգելու կարևորության մասին: Ծնողները պետք է ուսուցանեն երեխաներին համեստ հագնվել: Նրանք պետք է ուղղեն կեղծ գաղափարները և գռեհիկ արտահայտությունները, որ երեխաները սովորում են մյուսներից:

Երբ երեխաները հասունանում են, ծնողները պետք է նրանց հետ անկեղծորեն քննարկեն վերարտադրության մասին: Երեխաները պետք է հասկանան, որ այդ զորությունները բարի են և մեզ են տրվել Տիրոջ կողմից: Նա ակնկալում է մեզանից, որ դրանք օգտագործենք այն սահմաններում, որ Ինքն է տվել մեզ:

Փոքր երեխաները Երկնային Հոր մոտից մաքուր ու անմեղ են գալիս երկիր: Երբ ծնողները աղոթեն առաջնորդության համար, Տերը նրանց կոգեշնչի երեխաներին ուսուցանել ճիշտ ժամանակին և ճիշտ ձևով:

Վերարտադրության զորությունը

- Ինչո՞ւ պետք է ծնողները ուսուցանեն իրենց զավակներին վերարտադրության և մաքրաբարոյության մասին: Ինչպե՞ս կարող են նրանք ճիշտ ձևով անել դա:

Աստված պատվիրել է յուրաքանչյուր կենդանի էակի վերարտադրել իր տեսակին (տես Ծննդոց Ա.22): Վերարտադրությունը Նրա ծրագրի մասն էր, որպեսզի կյանքի բոլոր տեսակները շարունակեին գոյություն ունենալ երկրի վրա:

Այնուհետև Նա Ադամին և Եվային դրեց երկրի վրա: Նրանք տարբերվում էին Նրա այլ ստեղծագործություններից, որովհետև նրանք Իր հոգևոր զավակներն էին: Եդեմի Պարտեզում, Նա Ադամին և Եվային ամուսնական կապով միացրեց և պատվիրեց նրանց բազմանալ և լցնել երկիրը (տես Ծննդոց

Ա.28)։ Ինչևէ, նրանց կյանքը պետք է ղեկավարվեր ոչ թե բնազդով, այլ բարոյական օրենքներով։

Աստված ցանկացավ, որ Իր հոգևոր զավակները ծնվեին ընտանիքներում, որպեսզի նրանց համար պատշաճ ձևով հոգ տարվեր և նրանք ուսուցանվեին։ Մենք Ադամի և Եվայի նման պետք է ֆիզիկական մարմին տանք այդ հոգևոր զավակներին։ Առաջին Նախագահությունը և Տասներկու Առաքյալների Քվորումը հաստատել է. «Մենք հայտարարում ենք, որ երկրի վրա կյանքի ստեղծման ուղիները ղեկավարվում են Աստծո կողմից» («Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին, *Ensign,* Nov. 1995, 102)։ Աստված պատվիրել է մեզ, որ միայն տղամարդու և կնոջ միջև ամուսնության ժամանակ կարող են սեռական հարաբերություններ լինել։ Այս պատվիրանը կոչվում է մաքրաբարոյության օրենք։

Մաքրաբարոյության օրենքը

• Ի՞նչ է մաքրաբարոյության օրենքը։

Մենք պետք է սեռական հարաբերություններ ունենանք միայն օրինական ամուսնացած մեր ամուսնու հետ։ Ոչ ոք, տղամարդ թե կին, չպետք է սեռական հարաբերություններ ունենա ամուսնությունից առաջ։ Ամուսնությունից հետո, սեռական հարաբերությունները թույլատրվում են միայն կողակցի հետ։

Իսրայելցիներին Տերն ասել է. «Շնություն մի անիր» (Ելից Ի.14)։ Այն Իսրայելցիները, որոնք խախտում էին այս պատվիրանը, ծանր պատժի էին ենթարկվում։ Տերը կրկնել է այս պատվիրանը վերջին օրերին (տես ՎևՈւ 42.24)։

Մեզ ուսուցանվել է, որ մաքրաբարոյության օրենքը ավելին է, քան սեռական կապը։ Առաջին Նախագահությունը զգուշացրել է երիտասարդներին այլ սեռական մեղքերի համար.

«Ամուսնությունից առաջ, մի արեք այնպիսի բաներ, որոնք ուժեղ զգացումներ կառաջացնեն, դրանք պետք է արտահայտվեն միայն ամուսնության ժամանակ։ Կրքոտ մի համբուրվեք, մյուս անձնավորության վրա մի պառկեք կամ մեկ ուրիշի մարմնի սեռական, սուրբ մասերին մի դիպչեք՝ լինի հագուստով կամ առանց հագուստի։ Թույլ մի տվեք մեկ ուրիշին դա

անել ձեզ հետ: Նման զգացումներ մի առաջացրեք ձեր մարմնում» (*Երիտասարդներին զորացնելու համար»* [բրոշյուր, 2001], 27):

Ինչպես մաքրաբարոյության օրենքի այլ խախտումներ, համասեռամոլությունը ծանր մեղք է: Վերջին օրերի մարգարեները խոսել են համասեռամոլության վտանգների մասին, և Եկեղեցին իր մտահոգությունն է հայտնել նման շեղումներ ունեցող մարդկանց համար: Նախագահ Գորդոն Բ. Հինքլին ասել է.

«Նախևառաջ, մենք հավատում ենք, որ տղամարդու և կնոջ միջև ամուսնությունը սահմանված է Աստծո կողմից: Մենք հավատում ենք, որ ամուսնությունը կարող է լինել հավերժական՝ Տիրոջ տանը հավիտենական քահանայության զորությունը գործադրելու շնորհիվ:

Մարդիկ հետաքրքրվում են, թե ինչպիսին է մեր վերաբերմունքը նրանց հանդեպ, ովքեր իրենց համարում են գեյեր և լեզբիաններ: Իմ պատասխանն է՝ մենք սիրում ենք նրանց որպես Աստծո որդիներ և դուստրեր: Նրանք հնարավոր է ունեն որոշակի շեղումներ՝ ուժգին արտահայտված և դժվար կառավարելի: Շատերը տարբեր ժամանակներում տարբեր տեսակի շեղումներ են ունենում: Եթե նրանք չեն վարվում ըստ իրենց շեղումների, ապա կարող են առաջ գնալ ինչպես Եկեղեցու մյուս բոլոր անդամները: Եթե նրանք խախտում են մաքրաբարոյության օրենքը և Եկեղեցու բարոյական չափանիշները, ապա նրանք մյուսների պես ենթարկվում են Եկեղեցու կարգապահության պատժին :

Մենք ցանկանում ենք օգնել այդ մարդկանց, ամրացնել նրանց, աջակցել նրանց իրենց խնդիրներում և օգնել նրանց իրենց դժվարություններում: Սակայն մենք չենք կարող անուշադրության մատնել, եթե նրանք անբարո արարքներ են կատարում, եթե նրանք փորձում են պահել, պաշտպանել և ապրել այսպես կոչված համասեռ ամուսնության վիճակում: Նման բան թույլ տալը, կնշանակի խարխլել Աստծո կողմից հաստատված ամուսնության և դրա բուն նպատակի, ընտանիք ստեղծելու անչափ լուրջ ու սուրբ հիմքը» (*in Conference Report, Oct.* 1998, 91; or *Ensign,* Nov. 1998, 71):

Սատանան ցանկանում է, որ մենք խախտենք մաքրաբարոյության օրենքը

- Ինչպե՞ս է սատանան գայթակղում մարդկանց խախտել մաքրաբարոյության օրենքը։

Սատանայի ծրագիրն է խաբել մեզանից որքան հնարավոր է շատերին, որպեսզի կանխի մեր Երկնային Հոր մոտ վերադառնալն ու Նրա հետ ապրելը։ Ամենավնասակար բանը, որ նա կարող է անել՝ հրապուրել մեզ խախտել մաքրաբարոյության օրենքը։ Նա խորամանկ է և զորավոր։ Նա ցանկանում է մենք հավատանք, որ այս օրենքը խախտելը մեղք չէ։ Շատերն են խաբվել։ Մենք պետք է պաշտպանվենք չարի ազդեցություններից։

Սատանան գրոհում է համեստության չափանիշները ։ Նա ցանկանում է, որ մենք հավատանք, որ քանի որ մարդկային մարմինը գեղեցիկ է, այն պետք է ցուցադրել։ Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ մեր մարմինը փակ պահենք, որպեսզի մյուսների մոտ անպատշաճ մտքերի տեղիք չտանք։

Սատանան ոչ միայն քաջալերում է մեզ անհամեստ հագնվել, նաև խրախուսում է մեզ անհամեստ կամ անպատշաճ մտքեր ունենալ։ Նա դա անում է անբարոյական բնույթ կրող նկարներով, կինոնկարներով, պատմություններով, հումորով, երաժշտությամբ և պարերով։ Մաքրաբարոյության օրենքը պահանջում է, որ մեր մտքերը, ինչպես նաև մեր վարքը մաքուր լինեն։ Ալմա մարգարեն ուսուցանել է, որ երբ մենք դատվենք Աստծո կողմից, «մեր մտքերը նույնպես կդատապարտեն մեզ. և այդ սոսկալի վիճակում մենք չենք համարձակվի նայել վեր՝ առ Աստված» (Ալմա 12.14)։

Հիսուսն ուսուցանեց. «Լսել եք, որ ասուեցավ առաջիններին, թե Շնություն մի՛ անիր։

Բայց ես ասում եմ ձեզ, թե Ամեն ով որ մի կնկա վրա մտիկ տա նրան ցանկանալու համար, նա արդեն շնացավ նրա հետ իր սրտի մեջ» (Մատթեոս Ե.27–28)։

Նախագահ Գորդոն Բ. Հինքլին զգուշացրել է. «Դուք ապրում եք սոսկալի գայթակղությունների աշխարհում։ Պոռնոգրաֆիան,

իր նուրբ գարշելիությամբ, տարածվել է երկրի վրա սոսկալի, կլանող մակընթացության պես: Դա թույն է: Մի դիտեք այն, ոչ էլ՝ կարդացեք: Այլապես այն կկործանի ձեզ: Այն կխլի ձեր ինքնահարգանքը: Այն կկողոպտի կյանքի գեղեցկությունների ձեր ընկալումը: Այն կտապալի ձեզ և կքաշի չար մտքերի և գուցե չար արարքների ճահիճը: Հետու մնացեք դրանից: Խույս տվեք դրանից, ինչպես ժանտախտից, քանի որ այն նույնքան մահացու է: Եղեք առաքինի մտքով և գործով: Աստված հատուկ նպատակով ձեր մեջ դրել է աստվածային մղում, որը կարող է հեշտությամբ խորտակվել ունենալով չար ու կործանիչ ավարտ: Երբ դուք պատանի եք, մշտապես մի ժամադրվեք: Երբ հասնում եք այն տարիքին, որ կարող եք մտածել ամուսնության մասին, այդ ժամանակ սկսեք ժամադրվել: Իսկ դուք, տղաներ, որ դեռևս դպրոցի բարձր դասարանում եք սովորում, դրա կարիքը չունեք, ոչ էլ աղջիկները դրա կարիքն ունեն» (in Conference Report, Oct. 1997, 71–72; or *Ensign,* Nov. 1997, 51):

Սատանան երբեմն գայթակղում է մեզ մեր զգացմունքներով: Նա գիտի, որ երբ մենք միայնակ ենք, շփոթված ենք կամ ճնշված: Նա ընտրում է թուլության այդ ժամանակը, որպեսզի գայթակղի մեզ խախտել մաքրաբարոյության օրենքը: Մեր Երկնային Հայրը կարող է մեզ ուժ տալ, որպեսզի անվնաս անցնենք այդ փորձությունների միջով:

Սուրբ գրությունները պատմում են մեզ մի երիտասարդի մասին, որի անունը Հովսեփ էր, և նրան շատ էր վստահում իր տերը՝ Պետափրեսը: Պետափրեսը Հովսեփին կառավարիչ էր դրել իր ողջ ունեցվածքի վրա: Պետափրեսի կինը տենչում էր Հովսեփին և գայթակղում էր նրան, դրդելով իր հետ անառակության: Սակայն Հովսեփը դիմադրեց նրան և փախավ նրանից: (Տես Ծննդոց ԼԹ.1–18:)

Պողոսն ուսուցանել է. «Ձեզ ուրիշ փորձություն չէ պատահել բացի մարդկային փորձությունից. բայց Աստուած հավատրիմ է, որ չի թողիլ ձեզ ձեր կարողությունիցը վեր փորձուելու, այլ փորձության հետ ելքն էլ կպատրաստե, որ կարողանաք համբերել» (Ա Կորնթացիս Ժ.13): Ալման շեշտել է, որ մենք չենք «փորձվի ավելի, քան կարող ենք դիմանալ», եթե

«Խոնարհեցնենք [մեզ] Տիրոջ առաջին, և կանչենք նրա սուրբ անունը, և արթուն կենանք ու շարունակ աղոթենք» (Ալմա 13.28):

- Ինչպե՞ս են համեստությունն ու մաքրաբարոյությունը կապված: Ինչպե՞ս կարող են ծնողներն ուսուցանել իրենց զավակներին համեստ լինել հագուստով, խոսքով և վարքով:
- Ինչպե՞ս կարող ենք պայքարել պոռնոգրաֆիայի տարածման և ազդեցության դեմ:
- Ի՞նչ խոստումներ է տվել Տերը մեզ, որպեսզի օգնի դիմակայել սատանայի գայթակղություններին:

Մաքրաբարոյության օրենքը խախտելը անչափ լուրջ է

Ալմա մարգարեն վշտացած էր, որովհետև նրա որդիներից մեկը խախտում էր մաքրաբարոյության օրենքը: Ալման ասաց իր որդի Կորիանթոնին. «Չգիտե՞ս, որդիս, որ այս բաները պղծություն են Տիրոջ աչքում. այո, ամենապիղծը՝ բոլոր մեղքերից, բացի դա լինի անմեղ արյուն թափելը կամ Սուրբ Հոգին ուրանալը» (Ալմա 39.5): Անառակությունը իր լրջությամբ մարդասպանությունից հետո հաջորդն է:

Եթե տղամարդը և կինը խախտում են մաքրաբարոյության օրենքը, և դրա արդյունքում կինը հղիանում է, նրանք կարող են գայթակղվել կատարելու մեկ այլ նողկալի մեղք՝ արհեստական վիժեցում: Հազվադեպ է պատահում, որ վիժեցումը արդարացնող պատճառ է ունենում: Եկեղեցու ղեկավարները ասել են, որ երբեմն բացառիկ հանգամանքներ կարող են արդարացնել արհեստական վիժեցումը, օրինակ, երբ հղիությունը արյունապղծության կամ բռնաբարության արդյունք է, երբ գիտակ բժշկի ախտորոշմամբ մոր կյանքը կամ առողջությունը լրջորեն վտանգված է, կամ երբ կրկին գիտակ բժշկի ախտորոշմամբ պտուղը այնպիսի լուրջ արատներ ունի, որոնց պատճառով երեխան չի կարող ապրել ծնվելուց հետո: Ամեն

Ուսուցիչներին. Համեստության և մաքրաբարոյության մասին հարցերի համար կարող եք օգտվել *Երիտասարդներին զորացնելու համար* բրոշյուրից (*item number* 36550), որը մատչելի է բաշխման կենտրոններում և *LDS.org* կայքում, և որը հավանաբար կլինի ձեր հավաքատան գրադարանում:

դեպքում նույնիսկ այդ հանգամանքները չեն արդարացնում արհեստական վիժեցումը: Նրանք, ովքեր նման իրավիճակում են հայտնվել, պետք է արհեստական վիժեցման գնան միայն Եկեղեցու իրենց տեղական ղեկավարների հետ խորհրդակցելուց և անկեղծ աղոթքով հատատում ստանալուց հետո:

«Երբ տղամարդը և կինը դեռևս չամուսնացած հղիության հարցի առջև են կանգնել, ամեն ջանք պետք է գործադրվի, որպեսզի նրանց խրախուսվի ամուսնանալ: Երբ հաջողակ ամուսնության հավանականությունը պայմանավորված է անհամապատասխան տարիքով կամ որոշակի հանգամանքներով, չամուսնացած ծնողներին պետք է խորհուրդ տալ երեխային տալ որդեգրման ՎՕՍ ընտանեկան ծառայությունների միջոցով, վստահ լինելով, որ երեխան կկնքվի տաճարին արժանի ծնողների հետ» (First Presidency letter, June 26, 2002, and July 19, 2002):

Չափազանց կարևոր է մեր Երկնային Հոր համար, որ Իր զավակները հնազանդվում են մաքրաբարոյության օրենքին: Եկեղեցու անդամները, ովքեր խախտում են այս օրենքը կամ ազդում են մյուսների վրա չհետևել այդ օրենքին, ենթարկվում են Եկեղեցու կարգապահական պատժին:

Նրանք, ովքեր խախտում են մաքրաբարոյության օրենքը, կարող են ներվել

Խաղաղություն կարող է գալ նրանց, ովքեր խախտել են մաքրաբարոյության օրենքը: Տերն ասել է մեզ. «Ամբարիշտը, երբ որ դարձի գա իր բոլոր մեղքերիցը որ արել էր, և պահե իմ բոլոր օրենքները . . . նորա արած բոլոր հանցանքները պիտի չհիշուին նորան» (Եզեկիել ԺԸ.21–22): Խաղաղություն գալիս է միայն ներման միջոցով:

Նախագահ Քիմբալն ասել է. «Յուրաքանչյուր ներման համար պայման կա: . . . Ծոմը, աղոթքները, խոնարհությունը պետք է հավասարվեն կամ զերազանցեն մեղքը: Պետք է լինի կոտրված սիրտ և փշրված հոգի: . . . Պետք է լինեն արցունքներ և սրտի անկեղծ փոփոխություն: Պետք է լինեն մեղքից

հրաժարում, չարից հեռացում, սխալի խոստովանություն պատշաճ ձևով կանչված Տիրոջ իշխանավորներին» (*The Miracle of Forgiveness* [1969], 353)։

Շատերի համար, խոստովանությունը ապաշխարության ամենադժվար մասն է։ Մենք պետք է խոստովանենք ոչ միայն Տիրոջը, այլև այն մարդուն, որին վիրավորել ենք, օրինակ ամուսնուն կամ կնոջը, և պատշաճ ձևով կանչված քահանայության իշխանավորին։ Քահանայության ղեկավարը (եպիսկոպսը կամ ցցի նախագահը) կդիտարկի Եկեղեցում մեր դիրքը։ Տերն ասաց Ալմային. «Ով որ օրինազանցի իմ դեմ . . . եթե նա խոստովանի իր մեղքերն իմ և քո առաջ, և ապաշխարի իր սրտի անկեղծությամբ, նրա՛ն պիտի դու ներես, և ես կներեմ նրան նույնպես» (Մոսիա 26.29)։

Սակայն Նախագահ Քիմբալը զգուշացրել է. «Թեպետ ներումն այնքան առատորեն է խոստացվում, խոստում կամ ներման նշույլ անգամ չի տրվում ոչ մի հոգու, ով լիովին չի ապաշխարում։ . . . Մենք չենք կարող ավելի համոզիչ հիշեցնել մարդկանց, որ նրանք չեն կարող մեղանչել և ներվել և ապա մեղանչել կրկին ու կրկին և կրկին անգամ ներվել» (*The Miracle of Forgiveness,* 353, 360)։ Նրանք, ովքեր ներում են ստանում և ապա կրկնում այդ մեղքը, պատասխանատու են դառնում իրենց նախկին մեղքերի համար (տես ՎևՈւ 82.7; Եթեր 2.15)։

Նրանք, ովքեր պահում են մաքրաբարոյության օրենքը, մեծապես օրհնվում են

- Ի՞նչ օրհնություններ ենք ստանում, երբ պահում ենք մաքրաբարոյության օրենքը։

Երբ հնազանդվում ենք մաքրաբարոյության օրենքին, մենք կարող ենք ապրել առանց մեղքի կամ ամոթի։ Մեր կյանքը և մեր երեխաների կյանքն օրհնվում է, երբ մենք մեզ մաքուր և անբիծ ենք պահում Տիրոջ առաջ։ Երեխաները կարող են տեսնել մեր օրինակը և մեր քայլերին հետևել։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Մատթեոս ԺԹ.5–9; Ծննդոց Բ.24 (ամուսնական հարաբերությունը սուրբ է)
- Տիտոս Բ.4–12 (մաքրաբարոյության հրահանգներ)
- Ա Կորնթացիս Է.2–5; Եփեսացիս Ե.28 (ամուսնու հանդեպ հավատարմություն)
- Հայտնություն ԺԴ.4–5 (օրհնություններ մաքրաբարոյության օրենքի հանդեպ հնազանդության համար)
- Առակաց ԼԱ.10 (զովաբանվում է առաքինությունը)
- Ալմա 39.9 (մի գնացեք ձեր աչքերի տենչանքների ետևից)
- ՎևՈւ 121.45 (թող առաքինությունն անընդհատ զարդարի քո մտքերը)
- Ալմա 42.16 (ապաշխարություն չի գալիս առանց պատժի)
- Ալմա 42.30 (մի արդարացրեք ինքներդ ձեզ մեղանչելու համար)
- ՎևՈւ 58.42–43 (ապաշխարողները խոստովանում և թողնում են իրենց մեղքերը)

Տաճարային աշխատանք և ընտանեկան պատմություն

Գլուխ 40

Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր զավակները վերադառնան Իր մոտ

Հիսուս Քրիստոսի Քավությունը հավաստիացնում է մեզանից յուրաքանչյուրին, որ մենք հարություն կառնենք և հավերժ կապրենք: Սակայն եթե մենք պետք է ապրենք հավերժ մեր ընտանիքների հետ Երկնային Հոր ներկայությամբ, մենք պետք է անենք այն ամենը, ինչ Փրկիչը պատվիրում է մեզ: Սա ներառում է մկրտվելը, հաստատվելը և տաճարային արարողությունները ստանալը:

Որպես Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու անդամներ, մենք յուրաքանչյուրս մկրտվել ենք և հաստատվել պատշաճ քահանայության իշխանություն կրողի կողմից: Մեզանից յուրաքանչյուրը նաև կարող է գնալ տաճար, ստանալու այնտեղ կատարվող քահանայության փրկող արարողությունները: Սակայն Աստծո զավակներից շատերը չեն ունեցել այդ հնարավորությունները: Նրանք ապրել են մի ժամանակ կամ մի վայրում, երբ ավետարանը մատչելի չի եղել նրանց համար:

Երկնային Հայրը ցանկանում է, որ Իր բոլոր զավակները վերադառնան և ապրեն Իր հետ: Նրանց համար, ովքեր մահացել են առանց մկրտվելու կամ տաճարային արարողությունների,

Նա միջոց է տրամադրել դա կատարելու համար: Նա խնդրել է մեզ տաճարում արարողություններ կատարել մեր նախնիների համար:

Տիրոջ Տաճարներ

• Ինչո՞ւ են տաճարները կարևոր մեր կյանքում:

Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցու Տաճարները Տիրոջը նվիրագործված հատուկ շինություններ են: Եկեղեցու արժանի անդամները կարող են գնալ այնտեղ, որպեսզի ստանան սուրբ արարողությունները և ուխտեր կապեն Աստծո հետ: Մկրտության պես, այդ արարողություններն ու ուխտերը անհրաժեշտ են մեր փրկության համար: Դրանք պետք է կատարվեն Տիրոջ տաճարներում:

Մենք նաև տաճար ենք գնում ավելին սովորելու Երկնային Հոր և Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի մասին: Մենք ավելի լավ ենք հասկանում կյանքում մեր նպատակը, և Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ մեր հարաբերությունը: Մեզ ուսուցանվում է մեր նախամահկանացու գոյության, երկրային կյանքի նշանակության և մահից հետո մեր կյանքի մասին:

Տաճարային արարողությունները ընտանիքները հավերժ միասին են կնքում

• Ի՞նչ է նշանակում կնքվել:

Բոլոր տաճարային արարողությունները կատարվում են քահանայության զորությամբ: Երկրի վրա այդ զորությամբ կատարված արարողությունները կնքվում են կամ կապվում են երկնքում: Փրկիչն ուսուցանեց Իր Առաքյալներին. «Այն որ կապես երկրի վրա, կապուած կլինի երկնքում» (Մատթեոս ԺԶ.19; տես նաև ՎևՈւ 132.7):

Միայն տաճարում կարող ենք մենք որպես ընտանիք հավերժ միասին կնքվել: Տաճարային ամուսնությունը տղամարդուն և կնոջը հավերժ միացնում է որպես ամուսին և կին, եթե

Ուսուցիչներին. Նկարները կարող են հետաքրքրություն շարժել և օգնել սովորողներին իրենց հասկացողությունը խորացնել: Կարող եք խնդրել դասարանի կամ ընտանիքի անդամներին՝ դիտել այս գլխի տաճարի նկարը և խորհել, թե ինչպիսի զգացումներ ունեն նրանք տաճարային աշխատանքի վերաբերյալ:

նրանք պատվում են իրենց ուխտերը: Մկրտությունը և մյուս բոլոր արարողությունները պատրաստում են մեզ այդ սուրբ իրադարձությանը:

Երբ տղամարդը և կինը ամուսնանում են տաճարում, նրանց երեխաները, որոնք ծնվում են դրանից հետո, նույնպես դառնում են նրանց հավերժական ընտանիքի մասը: Քաղաքացիական ամուսնությամբ պսակված զույգերը կարող են այդ օրհնությունները ստանալ՝ պատրաստվելով և պատրաստելով իրենց երեխաներին տաճար գնալու և միմյանց հետ կնքվելու համար: Ծնողները, որոնք երեխաներ են որդեգրում, կարող են օրինապես իրենց կնքել այդ երեխաներին:

- Ի՞նչ պետք է զույգն անի, որպեսզի կնքման զորությունը արդյունավետ գործի իրենց ամուսնության մեջ:

Մեր նախնիները մեր օգնության կարիքն ունեն

- Ի՞նչ պատասխանատվություններ մենք ունենք մեր նախնիների հանդեպ, ովքեր մահացել են առանց քահանայության արարողությունները ստանալու:

Մարիո Կանամելան ամուսնացել է Մարիա Վիտայի հետ 1882թ.: Նրանք ապրել են Տրիպանիում, Իտալիա, որտեղ ընտանիք են ստեղծել և հրաշալի երկար տարիներ ապրել միասին: Մարիոն և Մարիան չէին լսել Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանի ուղերձը իրենց կյանքի ընթացքում: Նրանք չէին մկրտվել: Նրանք հնարավորություն չեն ունեցել տաճար գնալու և որպես հավերժական ընտանիք միասին կնքվելու: Մահով նրանց ամուսնությունը ավարտվեց:

Մոտ մեկ դար հետո մեծ վերամիավորում տեղի ունեցավ: Մարիոյի և Մարիայի հետնորդները գնացին Լոս Անջելես Տաճար, որտեղ ծոռը և նրա կինը ծնկի իջան զոհասեղանի մոտ և որպես փոխանորդներ ծառայեցին Մարիոյի և Մարիայի կնքման համար: Արցունքները պատեցին նրանց աչքերը, երբ նրանք կիսեցին Մարիոյի և Մարիայի ուրախությունը:

Մեր նախնիներից շատերը նրանց շարքում են, ովքեր մահացել են երկրի վրա չլսելով ավետարանի մասին: Նրանք այժմ ապրում են հոգևոր աշխարհում (տես այս գրքի գլուխ 41):

Այնտեղ նրանց ուսուցանվում է Հիսուս Քրիստոսի ավետարանը: Նրանք, ովքեր ընդունել են ավետարանը, սպասում են տաճարային արարողություններին, որ պետք է իրենց համար կատարվեն: Տաճարում մեր նախնիների համար այդ արարողությունները կատարելիս մենք կարող ենք կիսել այդ ուրախությունը:

- Ինչպե՞ս է մահացածների համար փրկության վարդապետությունը ցույց տալիս Աստծո արդարադատությունը, կարեկցանքը և ողորմածությունը:
- Ի՞նչ փորձառություններ եք դուք ունեցել ձեր նախնիների համար տաճարային աշխատանք կատարելիս:

Ընտանեկան պատմություն—Ինչպես ենք մենք սկսում օգնել մեր նախնիներին

- Որո՞նք են ընտանեկան պատմության աշխատանքը կատարելու կարևոր քայլերը:

Վերջին Օրերի Սրբերին քաջալերվում է մասնակցել ընտանեկան պատմության միջոցառումներին: Այդ միջոցառումների շնորհիվ մենք սովորում ենք մեր նախնիների մասին, և որ մենք կարող ենք արարողություններ կատարել նրանց համար: Ընտանեկան պատմությունը ներառում է երեք հիմնական քայլեր.

1. Գտնել մեր նախնիներին:
2. Պարզել, թե որ նախնիները տաճարային արարողությունների կարիքն ունեն:
3. Հավաստիանալ, որ արարողությունները կատարվել են նրանց համար:

Հիմնականում ծխերն ու ճյուղերը ունեն ընտանեկան պատմության խորհրդատուներ, որոնք կարող են պատասխանել հարցերին և մեզ ուղղել մեզ համար անհրաժեշտ աղբյուրներին: Եթե ծուխը կամ ճյուղը չունի ընտանեկան պատմության խորհրդատու, եպիսկոպոսը կամ ճյուղի նախագահը կարող են ուղղություն տալ:

Գտնել մեր նախնիներին

Մեր նախնիների համար տաճարային արարողություններ կատարելու համար մենք պետք է գտնենք նրանց անունները: Շատ հրաշալի աղբյուրներ կան այսօր մատչելի, որոնք կարող են օգնել մեզ գտնել մեր նախնիների անունները:

Մեր նախնիների մասին տեղեկություն հավաքելու լավ միջոց է պարզել, թե ինչ մենք ունենք մեր տներում: Մենք կարող ենք ունենալ ծննդյան, ամուսնության կամ մահվան վկայականներ: Մենք կարող ենք նաև գտնել ընտանեկան Աստվածաշունչ, մահախոսական, ընտանեկան պատմություններ կամ օրագրեր ու մատյաններ: Ինչպես նաև, մենք կարող ենք հարցնել մեր բարեկամներին, թե ինչ տեղեկություն իրենք ունեն: Մեր տանը մեր նախնիներից ունեցած տեղեկությունը հավաքելուց հետո, մենք կարող ենք փնտրել այլ աղբյուրներում, օրինակ FamilySearch.org կայքում: Մենք կարող ենք նաև այցելել Եկեղեցու տեղական ընտանեկան պատմության կենտրոններից մեկը:

Ինչ կիմանանք, կախված կլինի, թե ինչ տեղեկություն է մեզ մատչելի: Մենք կարող ենք ունենալ միայն մի փոքր ընտանեկան տեղեկություն և հնարավոր է միայն ունենանք մեր ծնողների և տատիկների, պապիկների անունները: Եթե մենք արդեն ունենք ընտանեկան գրառումների մի մեծ հավաքածու, հնարավոր է կարողանանք պարզել տարբեր սերունդների մեր նախնիների անունները:

Մենք կարող ենք գրանցել մեր հավաքած տեղեկությունը ընտանեկան խմբի գրառումների վրա և տոհմաբանական աղյուսակներում:

Պարզեք, թե որ նախնիները տաճարային արարողությունների կարիքն ունեն:

Տաճարային արարողություններ են կատարվել մահացածների համար Եկեղեցու վաղ օրերից ի վեր: Հետևաբար, մեր նախնիների համար որոշ արարողություններ հնարավոր է արդեն կատարվել են: Որպեսզի պարզենք, թե որ նախնիները տաճարային արարողությունների կարիքը ունեն, մենք

կարող ենք նայել երկու տեղ: Մեր անձնական ընտանեկան գրառումներում հնարավոր է տեղեկություն լինի կատարված արարողությունների վերաբերյալ: Եթե ոչ, Եկեղեցին գրանցում է տաճարում կատարված բոլոր արարողությունները: Ձեր ծխի կամ ճյուղի ընտանեկան պատմության խորհրդատուն կարող է օգնել ձեզ այդ հարցում:

Հավաստիացեք, որ արարողությունները կատարվել են

Մեր նախնիներից շատերը հոգևոր աշխարհում հնարավոր է անհամբեր սպասում են իրենց տաճարային արարողություններին: Երբ գտնում ենք այդ նախնիների անունները, մենք պետք է արագ կազմակերպենք այդ աշխատանքը նրանց համար:

Ընտանեկան պատմության աշխատանքի օրհնություններից մեկը գալիս է տաճար գնալու և մեր նախնիների համար արարողություններ կատարելու արդյունքում: Մենք պետք է պատրաստվենք տաճարային երաշխավորագիր ստանալուն, որպեսզի հնարավորության դեպքում կարողանանք կատարել այդ աշխատանքը: Եթե մեր երեխաները 12 տարեկան կամ ավել են, նրանք կարող են կիսել այդ օրհնությունները՝ մկրտվելով և հաստատվելով իրենց նախնիների համար:

Եթե մեզ համար հնարավոր չէ տաճար գնալ և արարողություններին մասնակցել, տաճարը կկազմակերպի արարողություններ կատարելը՝ Եկեղեցու այլ անդամների միջոցով:

- Ինչպե՞ս է Տերը օգնել ձեզ կամ ձեր ընտանիքի անդամներին տեղեկություն գտնել ձեր նախնիների մասին:

Ընտանեկան Պատմության լրացուցիչ հնարավորությունները

- Նշեք մի քանի պարզ ուղիներ, թե ինչպես կարող է բազմաթիվ այլ պարտականություններ ունեցող մարդը ընտանեկան պատմության աշխատանքին մասնակցել:

Նախնիների համար տաճարային արարողություններ կատարելուց բացի, մենք կարող ենք շատ այլ միջոցներով օգնել նրանց, ովքեր հոգևոր աշխարհում են: Մենք պետք է փնտրենք

Հոգու առաջնորդությունը, երբ աղոթքով մտածում ենք, թե ինչ կարող ենք անել: Մեր պայմաններից կախված մենք կարող ենք կատարել հետևյալը.

1. Որքան հնարավոր է հաճախակի գնալ տաճար: Մեզ համար տաճար գնալուց հետո, մենք կարող ենք փրկող արարողություններ կատարել մյուսների համար, որոնք սպասում են հոգևոր աշխարհում:
2. Կատարել հետազոտություն, որպեսզի գտնենք նախնիների անուններ, որոնց ամենադժվարն է գտնել: Ընտանեկան պատմության խորհրդատուները կարող են մեզ հղել տարբեր աղբյուրների:
3. Օգնություն Եկեղեցու ցուցչային ծրագրից: Այդ ծրագրով, անդամները պատրաստում են տոհմաբանական տեղեկություն Եկեղեցու ընտանեկան պատմության համակարգչային ծրագրերում օգտագործելու համար: Այդ ծրագրերը մեզ համար հեշտացնում են մեր նախնիներին գտնելը:
4. Ընտանիքի պատմության տեղեկություն տրամադրեք Եկեղեցու ներկայիս համակարգչային ծրագրերին ընտանեկան պատմության համար: Այս ծրագրերը պարունակում են ողջ աշխարհի մարդկանց կողմից տրամադրված տոհմաբանություններ: Դրանք թույլ են տալիս մարդկանց կիսվել իրենց ընտանիքի տեղեկությամբ: Ընտանեկան պատմության խորհրդատուները կարող են ավելի շատ տեղեկություն տրամադրել Եկեղեցու համակարգչային ծրագրերի վերաբերյալ:
5. Մասնակցեք ընտանեկան կազմակերպություններում: Մենք կարող ենք շատ ավելին կատարել մեր նախնիների համար, երբ աշխատենք ընտանիքի մյուս անդամների հետ միասին:

- Մտածեք, թե ինչ կարող եք անել, որպեսզի առավելագույնս մեծացնեք ձեր մասնակցությունը տաճարային և ընտանեկան պատմության աշխատանքում:

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ա Պետրոս Դ.6 (ավետարանը քարոզվեց մահացածներին)
- Մաղաքիա Դ.5–6; ՎևՈւ 2.2; 3 Նեփի 25.5–6 (Եղիայի առաքելությունը)
- Ա Կորնթացիս ԺԵ.29; ՎևՈւ 128.15–18 (մահացածների համար աշխատանք)
- ՎևՈւ 138 (մահացածների փրկագնում)

Հետմահկանացու հոգևոր աշխարհ

Գլուխ 41

Կյանք մահից հետո

• Ի՞նչ է պատահում մեզ հետ մահանալուց հետո։

Երկնային Հայրը ծրագիր է պատրաստել մեր փրկության համար։ Որպես այդ ծրագրի մաս, Նա ուղարկեց մեզ Իր ներկայությունից՝ ապրելու երկրի վրա և ստանալու մսից և արյունից մահկանացու մարմիններ։ Ի վերջո, մեր մահկանացու մարմինները կմահանան, և մեր հոգիները կգնան հոգևոր աշխարհ։ Հոգևոր աշխարհը մի վայր է, որտեղ սպասում, աշխատում, սովորում են, իսկ արդարները հանգստանում են հոգսից և վշտից։ Մեր հոգիները կապրեն այնտեղ, մինչև մենք պատրաստ լինենք մեր հարությանը։ Այնուհետև մեր մահկանացու մարմինները մեկ անգամ ևս կմիավորվեն մեր հոգիների հետ, և մենք կստանանք փառքի աստիճան, որի համար պատրաստվել ենք (տես այս գրքի գլուխ 46-ը)։

Շատ մարդկանց հետաքրքիր է, թե ինչպիսին է հոգևոր աշխարհը։ Սուրբ գրությունները և վերջին օրերի մարգարեները մեզ տեղեկություն են տվել հոգևոր աշխարհի մասին։

• Ի՞նչ սփոփանք եք ստանում ձեր գիտելիքից, որ մահից հետո կյանք կա։ Ինչպե՞ս կարող եք օգտագործել հետմահկանացու հոգևոր կյանքի մասին ձեր հասկացողությունը ուրիշներին սփոփելու համար։

Որտե՞ղ է հետմահկանացու հոգևոր աշխարհը։

Վերջին օրերի մարգարեներն ասել են, որ նրանց հոգիները, ովքեր մահացել են, շատ հեռու չեն մեզանից։ Նախագահ Էզրա Թաֆթ Բենսոնն ասել է. «Երբեմն այս կյանքի և

հանդերձյալ կյանքի միջև վարագույրը շատ է բարականում: Մեր սիրելիները, ովքեր մահացել են, շատ հեռու չեն մեզանից» (in Conference Report, Apr. 1971, 18; or *Ensign,* June 1971, 33): Նախագահ Բրիգամ Յանգն ուսուցանել է, որ հետմահկանացու հոգևոր աշխարհը երկրի վրա է, մեր շուրջը (տես *Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 279):

Ինչպիսի՞ն է մեր հոգիների էությունը:

Հոգևոր էակները նույն մարմնական կազմվածքն ունեն ինչպես մահկանացուները, սակայն հոգևոր մարմինը կատարյալ կազմվածքով է (տես Եթեր Գ.16): Հոգիները իրենց հետ երկրից տանում են արդարակեցության հանդեպ իրենց նվիրվածությունը կամ թշնամությունը (տես Ալմա 34.34): Նրանք ունեն նույն ձգտումներն ու ցանկությունները, որ ունեին երկրի վրա ապրելիս: Բոլոր հոգիները հասուն տարիքի կազմվածքով են: Նրանք հասուն են եղել նախքան մահկանացու մարմին ստանալը, և նրանք հասուն տարիքի կազմվածքով են մահից հետո, նույնիսկ եթե նրանք մահանում են մանուկ կամ երեխա հասակում (տես *Teachings of Presidents of the Church: Joseph F. Smith* [1998], 131–32):

- Ինչո՞ւ է կարևոր իմանալ, որ մեր հոգիները կունենան նույն կեցվածքը հոգևոր աշխարհում, ինչ այժմ ունեն:

Ինչպիսի՞ն են հետմահկանացու հոգևոր աշխարհի պայմանները:

Մորմոնի Գրքում Մարգարե Ալման ուսուցանել է հոգևոր աշխարհում երկու մասերի կամ վիճակների մասին.

«Նրանց հոգիները, ովքեր արդար են, ընդունվում են երջանկության մի վիճակի մեջ, որը կոչվում է դրախտ՝ հանգստության մի վիճակ, խաղաղության մի վիճակ, որտեղ նրանք պիտի հանգստանան բոլոր իրենց տագնապներից և բոլոր մտահոգություններից, և վշտից:

Եվ հետո, պիտի լինի այնպես, որ հոգիներն ամբարիշտների, այո, ովքեր չար են, քանզի, ահա, նրանք չունեն մաս կամ բաժին՝ Տիրոջ Հոգուց, քանզի ահա, նրանք ընտրեցին, ավելի

շուտ, չար գործեր, քան՝ բարի. հետևաբար, դևի ոգին մտավ նրանց մեջ, և տիրեց նրանց տանը, և սրանք դուրս պիտի գցվեն դրսի խավարը, այնտեղ պիտի լինի լացն ու կոծը, և ատամների կրճտոցը, և այս, իրենց իսկ անօրինության պատճառով, լինելով տարված գերի՝ դևի կամքով:

Արդ, այս է վիճակն ամբարիշտների հոգիների, այո, խավարում, և ահավոր, զարհուրելի մի վիճակում՝ երկյուղով սպասելով իրենց վրա Աստծո ցասման բոցավառ զայրույթին, այսպիսով նրանք մնում են այս վիճակում, ինչպես և արդարները՝ դրախտում, մինչև իրենց հարության ժամանակը» (Ալմա 40.12–14):

Հոգիները դասակարգվում են ըստ երկրի վրա ապրած իրենց կյանքի մաքրության և Տիրոջ կամքին հնազանդվելու: Արդարները և ամբարիշտները առանձնացված են (տես 1 Նեփի 15.28–30), սակայն հոգիները կարող են առաջադիմել, եթե սովորեն ավետարանի սկզբունքները և ըստ դրանց ապրեն: Դրախտի հոգիները կարող են ուսուցանել բանտի հոգիներին (տես ՎևՈւ 138):

Դրախտ

Ըստ Ալմա մարգարեի, արդար հոգիները հանգստանում են երկրային հոգսից և վշտից: Այնուամենայնիվ, նրանք զբաղված են Տիրոջ աշխատանքը կատարելով: Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթը տեսիլքով տեսավ, որ Հիսուս Քրիստոսի խաչումից անմիջապես հետո, Նա այցելեց հոգևոր աշխարհի արդարներին: Նա սուրհանդակներ նշանակեց, նրանց զորություն և իշխանություն տվեց, և հանձնարարեց «տանել ավետարանի լույսը նրանց, ովքեր խավարի մեջ էին, այսինքն՝ բոլոր մարդկային հոգիներին» (ՎևՈւ 138.30):

Եկեղեցին կազմակերպվել է հոգևոր աշխարհում, և քահանայություն կրողները շարունակում են իրենց

Ուսուցիչներին. Որպեսզի օգնեք դասարանի կամ ընտանիքի անդամներին հասկանալ դրախտի և հոգևոր բանտի միջև տարբերությունները, կարող եք ուղղահայաց գիծ գծել գրատախտակի կամ մեծ թղթի վրա, ստեղծելով երկու սյունակ: Մի սյունակի վերևում գրեք *Արդարների վիճակը:* Մյուս սյունակի վերևում գրեք *Ամբարիշտների վիճակը:* Խնդրեք անդամներին նկարագրել հոգևոր աշխարհի յուրաքանչյուր վիճակը՝ այս բաժնի իրենց ընթերցածի վրա հիմնվելով: Նրանց մեկնաբանությունները ամփոփ գրեք համապատասխան սյունակում:

պարտականություններն այնտեղ (տես ՎևՈւ 138.30)։ Նախագահ Վիլֆորդ Վուդրուֆն ուսուցանել է. «Նույն Քահանայությունը գոյություն ունի վարագույրի մյուս կողմում։ . . . Յուրաքանչյուր Առաքյալ, յուրաքանչյուր Յոթանասունական, յուրաքանչյուր Երեց և այլն, որ մահացել է հավատի մեջ, վարագույրի մյուս կողմն անցնելուն պես լծվում է ծառայության գործին» (*Deseret News,* Jan. 25, 1882, 818)։

Ընտանեկան հարաբերությունները նույնպես կարևոր են։ Բրիգամ Յանգի խորհրդական՝ Նախագահ Ջեդեդիա Մ. Գրանտը, տեսավ հոգևոր աշխարհը և նկարագրեց Հեբեր Ս. Քիմբալին այնտեղ գոյություն ունեցող կազմակերպությունը. «Նա ասաց, որ իր տեսած մարդիկ կազմակերպված էին ընտանիքներով։ . . . Նա ասաց. «Երբ ես նայեցի ընտանիքներին, որոշ ընտանիքներում պակասություն կար, . . . քանի որ տեսա ընտանիքներ, որոնց թույլ չէր տրվել գալ և ապրել միասին, որովհետև նրանք չէին պատվել իրենց կոչումներն այստեղ» (*Deseret News,* Dec. 10, 1856, 316–17)։

Հոգևոր բանտ

Պետրոս Առաքյալը հետմահկանացու հոգևոր աշխարհը ներկայացրել է որպես բանտ՝ որոշ մարդկանց համար (տես Ա Պետրոս Գ.18–20)։ Հոգևոր բանտում են այն հոգիները, ովքեր դեռևս չեն ստացել Հիսուս Քրիստոսի ավետարանը։ Այդ հոգիները ունեն ընտրելու ազատություն և կարող են հրապուրվել բարու և չարի կողմից։ Եթե նրանք ընդունում են ավետարանը և տաճարներում արարողություններ են կատարվում նրանց համար, նրանք կարող են հեռանալ հոգևոր բանտից և ապրել դրախտում։

Հոգևոր բանտում են նաև նրանք, ովքեր մերժել են ավետարանը երկրի վրա կամ հոգևոր բանտում այն իրենց քարոզվելուց հետո։ Այդ հոգիները տառապում են դժոխք կոչվող վիճակում։ Նրանք հեռացել են Հիսուս Քրիստոսի ողորմածությունից, որն ասել է. «Քանզի ահա, ես՝ Աստվածս, տառապել եմ այս բաները բոլորի համար, որպեսզի նրանք չտառապեն, եթե ապաշխարեն. Բայց եթե չապաշխարեն, նրանք պետք է տառապեն, ճիշտ ինչպես ես. Տառապանք, որը ստիպեց ինձ,

նույնիսկ Աստծուս, բոլորից մեծագույնիս, ցավից դողալ և արյունահոսել ամեն մի ծակոտիից և տառապել՝ թե՛ մարմնով, թե՛ ոգով» (ՎևՈւ 19.16–18)։ Իրենց մեղքերի համար տառապելուց հետո, Հիսուս Քրիստոսի Քավության շնորհիվ նրանց թույլ կտրվի ժառանգել փառքի ամենացածր աստիճանը, որը թելեստիալ արքայությունն է։

- Հոգևոր աշխարհի պայմանները որքանո՞վ են նման այս կյանքի պայմաններին։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ա Պետրոս Դ.6 (ավետարանը քարոզվեց մահացածներին)
- Մովսես 7.37–39 (հոգիների բանտը պատրաստվել է ամբարիշտների համար)
- ՎևՈւ 76 (հայտնություն փառքի երեք աստիճանների մասին)
- Ղուկաս ԺԶ.19–31 (ողորմություն խնդրողի և հարուստի ճակատագիրը հոգևոր բանտում)

Իսրայելի տան հավաքումը

Գլուխ 42

Իսրայելի տունը Աստծո ուխտյալ ժողովուրդն է

- Ի՞նչ պատասխանատվություններ ունեն Աստծո ուխտյալ մարդիկ աշխարհի ազգերի հանդեպ:

Հակոբը մեծ մարգարե էր, որը Քրիստոսի ժամանակից հարյուրավոր տարիներ առաջ էր ապրել: Քանի որ Հակոբը հավատարիմ էր, Տերը նրան տվեց Իսրայել հատուկ անունը, որը նշանակում է՝ «նա, ով հաղթում է Աստծո հետ» կամ «թող Աստված հաղթի» (Bible Dictionary, “Israel,” 708): Հակոբը տասներկու որդի ուներ: Այդ որդիները և նրանց ընտանիքները հայտնի դարձան որպես Իսրայելի տասներկու ցեղեր կամ Իսրայելցիներ (տես Ծննդոց ԽԹ.28):

Հակոբը Աբրահամի թոռն էր: Տերը հավիտենական ուխտ կապեց Աբրահամի հետ, որը նորոգվեց Իսահակի հետ և Հակոբի ու նրա որդիների հետ (տես այս գրքի գլուխ 15-ը, տես նաև այս գրքի նկարը, որտեղ պատկերված է Հակոբը, որ օրհնում է իր որդիներին): Աստված խոստացել է, որ Իսրայելցիները կլինեն Իր ուխտյալ ժողովուրդը այնքան ժամանակ, քանի դեռ նրանք հնազանդվում են Նրա պատվիրաններին (տես Երկրորդ Օրինաց ԻԸ.9–10): Նրանք օրհնություն կլինեն աշխարհի բոլոր ազգերին՝ նրանց տանելով ավետարանը և քահանայությունը (տես Աբրահամ 2.9–11): Այդպիսով, նրանք կպահեն իրենց ուխտը Տիրոջ հետ, և Նա կպահի Իր ուխտը նրանց հետ:

Իսրայելի տունը ցրվեց

Կրկին ո կրկին Տիրոջ մարգարեները զգուշացրել են Իրայելի տանը, թե ինչ կպատահի, եթե նրանք ամբարիշտ լինեն:

Մովսեսը մարգարեացավ. «Եվ Եհովան քեզ պիտի ցրուէ բոլոր ազգերի մեջ երկրիս մեկ ծայրիցը մինչև մյուս ծայրը» (Երկրորդ Օրինաց ԻԸ.64)։

Չնայած այդ զգուշացմանը, Իսրայելցիները մշտապես խախտում էին Աստծո պատվիրանները։ Նրանք կռվեցին միմյանց հետ և բաժանվեցին երկու թագավորության՝ Հյուսիսային թագավորություն, որը կոչվեց Իսրայելի թագավորություն, և Հարավային թագավորություն, որը կոչվեց Հուդայի թագավորություն։ Իսրայելի տասներկու ցեղերից տասը ապրում էր Հյուսիսային թագավորությունում։ Պատերազմի ժամանակ նրանց թշնամիները հաղթեցին նրանց և գերության տարան։ Նրանցից ոմանք հետագայում փախան հյուսիսային երկրներ և կորան աշխարհում։

Հյուսիսային թագավորության գերությունից մոտ 100 տարի անց, Հարավային թագավորությունը գրավվեց։ Մայրաքաղաք Երուսաղեմը կործանվեց Ք.Ա.586թ., և Իսրայելի մնացած երկու ցեղերի շատ անդամներ գերության մատնվեցին։ Ավելի ուշ, այդ ցեղերի որոշ անդամներ վերադարձան և վերակառուցեցին Երուսաղեմը։ Նախքան Երուսաղեմի կործանվելը, Լեքին և նրա ընտանիքը, որոնք Իսրայելի տան անդամներ էին, հեռացան քաղաքից և բնակություն հաստատեցին Ամերիկաներում։

Քրիստոսի ժամանակից հետո, Երուսաղեմը կրկին կործանվեց, այս անգամ Հռոմեացի զինվորների կողմից։ Հրեաները ցրվեցին աշխարհով մեկ։ Այսօր Իսրայելցիները գտնվում են աշխարհի բոլոր երկրներում։ Այդ մարդկանցից շատերը չգիտեն, որ իրենք Իսրայելի հնագույն տան հետնորդներն են։

- Ի՞նչ օգուտներ են եկել Աստծո զավակներին Նրա ուխտյալ ժողովրդի աշխարհով մեկ ցրվելու հետևանքով։

Իսրայելի տունը պետք է հավաքվի

- Ինչո՞ւ է Տերը ցանկանում, որ Իր ժողովուրդը հավաքվի։
- Ինչպե՞ս կհավաքվի Իսրայելի տունը։

Տերը խոստացել է, որ Իր ուխտյալ ժողովուրդը մի օր կհավաքվի. «Ես պիտի ժողովեմ իմ հոտի մնացորդը այն ամեն երկիրներիցը, ուր որ նորանց աքսորեցի» (Երեմիա ԻԳ.3)։

Աստված հավաքում է Իր զավակներին միսիոներական աշխատանքի միջոցով: Երբ մարդիկ գալիս են Հիսուս Քրիստոսի գիտելիքին, ստանալով փրկության արարողությունները և պահելով դրանց հետ կապված ուխտերը, նրանք դառնում են «ուխտի զավակներ» (3 Նեփի 20.26): Նա Իր զավակներին հավաքելու կարևոր պատճառներ ունի: Նա հավաքում է նրանց, որպեսզի նրանք կարողանան սովորել ավետարանի ուսմունքները և պատրաստվեն հանդիպելու Փրկչին, երբ Նա կրկին կգա: Նա հավաքում է նրանց, որպեսզի նրանք կառուցեն տաճարներ և սուրբ արարողություններ կատարեն նախնիների համար, ովքեր մահացել են առանց այդ հնարավորությունն ունենալու: Նա հավաքում է նրանց, որպեսզի նրանք կարողանան ամրացնել միմյանց և միավորվեն ավետարանով՝ պաշտպանություն գտնելով աշխարհի անիրավ ազդեցություններից: Նա նաև հավաքում է նրանց, որպեսզի նրանք պատրաստվեն ավետարանով կիսվելու մյուսների հետ:

Իսրայելի տան հավաքման աշխատանքը ղեկավարելու զորությունն ու իշխանությունը տրվեց Ջոզեֆ Սմիթին Մովսես մարգարեի միջոցով, որը հայտնվեց 1836թ. Կիրթլանդի Տաճարում (տես ՎևՈւ 110.11): Այդ ժամանակից ի վեր, յուրաքանչյուր մարգարե կրել է Իսրայելի տան հավաքման բանալիները, և այս հավաքումը Եկեղեցու աշխատանքի կարևոր մասն է եղել: Այժմ ուխտյալ մարդիկ հավաքվում են ընդունելով վերականգնված ավետարանը, ծառայելով Աբրահամի, Իսահակի և Հակոբի Աստծուն (տես Երկրորդ Օրինաց Լ.1–5):

Իսրայելցիները պետք է հավաքվեն նախ հոգևոր ձևով, ապա ֆիզիկապես: Նրանք հավաքվել են հոգևոր ձևով՝ միանալով Հիսուս Քրիստոսի Վերջին Օրերի Սրբերի Եկեղեցուն կապելով և պահելով սրբազան ուխտեր: Այս հոգևոր հավաքումը սկսվել է Մարգարե Ջոզեֆ Սմիթի ժամանակից սկսած և առ այսօր շարունակվում է ամբողջ աշխարհում: Եկեղեցու նորադարձները Իսրայելցիներ են՝ արյունով կամ ընդունելով: Նրանք պատկանում են Աբրահամի և Հակոբի ընտանիքին (տես Աբրահամ 2.9–11; Գաղատացիս Գ.26–29):

Նախագահ Ջոզեֆ Ֆ. Սմիթն ասել է. «Շատ ազգերի ներկայացուցիչներ կան . . .Եկեղեցում: . . . Նրանք եկել են, որովհետև Տիրոջ Հոգին իջել է նրանց վրա, . . . ստանալով *հավաքման հոգին,* հանուն ավետարանի նրանք թողել են ամեն ինչ» (*Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 3:256; շեղագիրը բնագրից):

Իսրայելի ֆիզիկական հավաքում նշանակում է՝ ուխտյալ մարդիկ «կժողովվեն տուն՝ դեպի իրենց ժառանգության հողերը և կհաստատվեն բոլոր իրենց խոստումի երկրներում» (2 Նեփի 9.2): Եփրեմի և Մանասեի ցեղերը կհավաքվեն Ամերիկանեռում: Հուդայի ցեղը կվերադառնա Երուսաղեմ քաղաք և դրա շրջակայքը: Կորած տաս ցեղերը Եփրեմի ցեղից կստանան իրենց խոստացված օրհնությունները (տես ՎևՈւ 133.26–34):

Երբ Եկեղեցին առաջին անգամ հաստատվեց, Սրբերին հրահանգվեց հավաքվել Օհայոյում, ապա Միսսուրիում, ավելի ուշ՝ Սոլթ Լեյքի Հովտում: Ինչևէ, այսօր մեր օրերի մարգարեները ուսուցանել են, որ Եկեղեցու անդամները պետք է Աստծո արքայությունը կառուցեն իրենց երկրներում: Երեց Ռասել Մ. Նելսոնն ասել է. «Եկեղեցի գալու ընտրությունը ոչ թե ֆիզիկական տեղանքի, այլ անձնական պարտավորվածության հարց է: Մարդիկ կարող են «բերվել Տիրոջ իմացությանը», [3 Նեփի 20.13] առանց իրենց հայրենիքից հեռանալու: Իրոք, Եկեղեցու վաղ օրերին դարձի գալ հաճախ նշանակում էր նաև գաղթել: Իսկ այժմ հավաքումը տեղի է ունենում յուրաքանչյուր պետության մեջ: . . . Բրազիլացի Սրբերի համար հավաքման վայրը Բրազիլիան է, Նիգերիայի Սրբերի համար հավաքման վայրը՝ Նիգերիան, Կորեացի Սրբերի համար հավաքման վայրը՝ Կորեան, և այսպես շարունակ: Սիոնը «սրտով մաքուրներն են» [ՎևՈւ 97.21] Սիոնը այնտեղ է, որտեղ արդարակյաց Սրբերն են» (in Conference Report, Oct. 2006, 85; or *Ensign,* Nov. 2006, 81):

Իսրայելի ֆիզիկական հավաքումը չի ավարտվի մինչև Փրկչի Երկրորդ Գալուստը և կշարունակվի Հազարամյակում (տես Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.37): Այնուհետև Տիրոջ խոստումը կկատարվի.

«Ահա, օրերը կգան, ասում է Տերը, որ այլևս չի ասուիլ, թե՝ Կենդանի է Տերը, որ Իսրայելի որդկանցը վեր հանեց Եգիպտոսի երկրիցը,

Այլ թե՝ Կենդանի է Տերը, որ հանեց Իսրայելի որդկանցը հյուսիսի երկրիցը, և այն բոլոր երկրներիցը, ուր որ նրանց աքսորել էր. և ես պիտի ետ դարձնեմ նրանց դեպի իրանց երկիրը, որ տվել եմ իրանց հայրերին» (Երեմիա ԺԶ.14–15)։

- Ինչպե՞ս եք դուք հոգևոր ձևով հավաքվել որպես Տիրոջ ուխտյալ ժողովրդից մեկը։
- Ինչպե՞ս եք դուք մասնակցել ուրիշների հավաքմանը։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ծննդոց ԺԷ.1–8 (Աստծո ուխտը Աբրահամի հետ)
- Հռովմեացիս Թ.4–8; Գաղատացիս Գ.29 (նրանք, որ հետևում են Հիսուս Քրիստոսին և Նրա խոսքին, ուխտի զավակներն են)
- 2 Նեփի 30.2; Մոսիա 5.10–11 (նրանք, որ ապաշխարում են, հետևում են մարգարեներին, և հավատ ունեն առ Հիսուս Քրիստոսը, դառնում են Տիրոջ ուխտյալ ժողովուրդը)
- Դ Թագավորաց ԺԷ (Հյուսիսային թագավորությունը գերվեց)
- Բ Մնացորդաց ԼԶ.11–20 (Հարավային Թագավորությունը գերվեց)
- Հակոբոս Ա.1 (տասներկու ցեղերը ցրվեցին ուրիշ երկրներ)
- 1 Նեփի 10.12–13 (նեփիացիների զաղթը ցրման մի մասն էր)
- Երեմիա Գ.14–18 (մեկը՝ քաղաքից, երկուսը՝ ընտանիքից)
- Եզեկիել Ի.33–36 (Իսրայելը կհավաքվի բոլոր երկրներից)
- 3 Նեփի 20.29–46 (Հրեաները կհավաքվեն Երուսաղեմում)
- 1 Նեփի 15.13–18; 3 Նեփի 21.26–29 (հավաքումը սկսվում է ավետարանի Վերականգնումով)

Ուսուցիչներին. Երբ մարդիկ կիսվում են Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանին դարձի գալու իրենց պատմություններով, նրանք կիսվում են հոգևոր ձևով հավաքվելու պատմություններով։ Կարող եք մի քանիսին նախորոք խնդրել, որ պատմեն ինչպես են նրանք դարձի եկել դեպի ավետարանը։

- ՎևՈւ 38.31–33 (Տիրոջ ուխտյալ ժողովուրդը կփրկվի)
- Եսայիա ԺԱ.11–13 (Տերը ետ կբերի Իր ժողովրդին)
- Հայտնություն ԺԸ.4–8 (ձայնը կհոչակի հավաքումը)
- ՎևՈւ 133.6–15 (Հեթանոսները դեպի Սիոն, Հրեաները դեպի Երուսաղեմ)

Երկրորդ Գալստյան նշանները

Գլուխ 43

Հիսուս Քրիստոսը կվերադառնա երկիր

• Նշեք Երկրորդ Գալստյան մի քանի նշաններ։

Փրկիչն ասել է Ջոզեֆ Սմիթին. «Ես կհայտնվեմ երկնքից զորությամբ ու մեծ փառքով, նրա ողջ զորքով, և մարդկանց հետ արդարության մեջ կբնակվեմ երկրի վրա, հազար տարի, և ամբարիշտները կանգուն չեն մնա (ՎևՈւ 29.11; տես նաև այս գրքի 44 և 45 գլուխները)։ Հիսուսն ասել է մեզ, որ որոշ նշաններ և իրադարձություններ կզգուշացնեն մեզ, երբ Նրա Երկրորդ Գալստյան ժամանակը մոտենա։

Հազարավոր տարիներ շարունակ Հիսուս Քրիստոսի հետևորդները անհամբեր սպասել են Երկրորդ Գալստին որպես խաղաղության և ուրախության ժամանակ։ Բայց Փրկչի գալուց առաջ աղետներ կլինեն և երկրի մարդիկ մեծ փորձությունների կրենթարկվեն։ Մեր Երկնային Հայրը ցանկանում է, որ մենք պատրաստ լինենք այդ նեղություններին։ Նա նաև ակնկալում է մեզանից լինել հոգեպես պատրաստ, երբ Փրկիչը կգա Իր փառքով։ Հետևաբար, Նա տվել է մեզ նշաններ, իրադարձությունների տեսքով, որոնք կասեն մեզ, որ Փրկչի Երկրորդ Գալուստը մոտ է։ Դարերի ընթացքում Աստված հայտնել է այդ նշանները Իր մարգարեներին։ Նա ասել է, որ Քրիստոսի բոլոր հավատարիմ հետևորդները կիմանան, թե որոնք են նշանները և կհետևեն դրանց (տես ՎևՈւ 45.39)։ Եթե մենք հնազանդ ենք

Ուսուցիչներին. Կարող եք դասարանի կամ ընտանիքի յուրաքանչյուր անդամին հանձնարարել այս գլխում նկարագրված նշաններից մեկը կամ երկուսը (մեծ դասարաններում, որոշ նշաններ կհանձնարարվեն մեկից ավել մարդկանց)։ Որպես դասի մաս, նրանց ժամանակ տվեք ուսումնասիրելու այդ նշանների տեղեկությունը, մտածելով իրենց տեսած ապացույցի մասին, որ նշաններն այսօր իրականանում են։ Ապա խնդրեք նրանց միմյանց հետ կիսվել իրենց մտքերով։

և հավատարիմ, մենք կուսումնասիրենք սուրբ գրությունները և կիմանանք նշանները։

Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը կանխատեսող որոշ նշաններ արդեն եղել են կամ այժմ են կատարվում։ Մյուսները կլինեն ապագայում։

Ամբարշտություն, պատերազմ և խառնաշփոթ

Նշաններից շատերը ահաբեկող և սոսկալի են։ Մարգարեները զգուշացրել են, որ երկիրի վրա կլինի խառնաշփոթ, ամբարշտություն, պատերազմ և տառապանք։ Դանիել մարգարեն ասել է, որ Երկրորդ Գալստին նախորդող ժամանակը կլինի նեղության ժամանակ, որ երբևէ չի եղել երկիրի վրա (տես Դանիել ԺԲ.1)։ Տերն ասել է. «Եվ մարդկանց սերը կսառչի և անօրինությունը կշատանա» (ՎևՈւ 45.27)։ «Եվ բոլոր բաները կլինեն խառնաշփոթության մեջ. և . . . երկյուղը կպատի բոլոր մարդկանց» (ՎևՈւ 88.91)։ Կլինեն երկրաշարժեր, հիվանդություն, սով, մեծ փոթորիկներ, կայծակներ և ամպրոպ (տես Մատթեոս ԻԴ.7; ՎևՈւ 88.90)։ Կարկտահողմերը կավերեն երկրի բերքը (տես ՎևՈւ 29.16)։

Հիսուսն ասաց Իր աշակերտներին, որ պատերազմներ կլինեն երկրի վրա. «Պատերազմներ և պատերազմների համբավներ կլսեք։ . . . Որովհետև ազգ ազգի վրա վեր կկենա, և թագավորություն թագավորության վրա» (Մատթեոս ԻԴ.6–7)։ Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է. «Մի հուսահատվեք, երբ ձեզ ասում ենք վտանգավոր ժամանակների մասին, քանզի դրանք շուտով կգան, սուր, սով և համաճարակներ են մոտենում։ Կլինեն մեծ կործանումներ այս երկրի երեսին, չպետք է մտածել, որ բոլոր սուրբ մարգարեների մարգարեություններից անգամ մի կետ կամ բառ չի կատարվի, և դեռևս շատ բաներ կկատարվեն» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 252)։

Այդ նշաններից շատերը կատարվում են։ Ամբարշտությունն ամենուր է։ Ազգերը մշտապես պատերազմի մեջ են։ Երկրաշարժեր և այլ աղետներ են տեղի ունենում։ Շատ մարդիկ այժմ տառապում են ավերիչ փոթորիկներից, երաշտից, սովից ու հիվանդություններից։ Մենք կարող ենք վստահաբար

ասել, որ Տիրոջ գալստից առաջ այդ աղետներն ավելի կսաստկանան։

Ինչևէ, Երկրորդ Գալստյանը նախորդող ոչ բոլոր իրադարձությունները կլինեն սոսկալի։ Դրանցից շատերը ուրախություն են բերում աշխարհ։

Ավետարանի վերականգնումը

Տերն ասել է. «Լույս կծագի խավարում նստածների մեջ, և դա կլինի իմ ավետարանի լրիվությունը» (ՎԵՈՒ 45.28)։ Հին մարգարեները կանխատեսել են ավետարանի Վերականգնումը։ Հովհաննես Առաքյալը տեսավ, որ ավետարանը կվերականգնվի հրեշտակի կողմից (տես Հայտնություն ԺԴ.6–7)։ Ի կատարումն այս մարգարեության, Մորոնի հրեշտակը և այլ երկնային այցելուներ բերեցին Հիսուս Քրիստոսի ավետարանը Ջոզեֆ Սմիթին։

Մորմոնի Գրքի ի հայտ գալը

Տերն ասաց Նեփիացիներին մեկ այլ նշանի մասին՝ Մորմոնի Գիրքը կգա իրենց հետևորդներին (տես 3 Նեփի 21)։ Հին Կտակարանի ժամանակներում Եսայիա և Եզեկիել մարգարեները կանխատեսեցին Մորմոնի Գրքի ի հայտ գալը (տես Եսայիա ԻԹ.4–18; Եզեկիել ԼԷ.16–20)։ Այդ մարգարեություններն այժմ կատարվում են։ Մորմոնի Գիրքը ի հայտ է եկել և տարվում է ողջ աշխարհին։

Ավետարանը քարոզվում է ողջ աշխարհին

Վերջին օրերի մեկ այլ նշանն է, որ «արքայության ավետարանը բոլոր տիեզերքումը կքարոզուի ամեն ազգերին վկայություն լինելու համար» (Մատթեոս ԻԴ.14; տես նաև Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1.31)։ Բոլոր մարդիկ իրենց լեզվով կլսեն ավետարանի լրիվությունը (տես ՎԵՈՒ 90.11)։ Եկեղեցու Վերականգնումից ի վեր միսիոներները քարոզել են ավետարանը։ Միսիոներական ջանքերն ավելացել են մինչ այժմ՝ տասնյակ հազարավոր միսիոներներ են քարոզում աշխարհի շատ երկրներում տարբեր լեզուներով։ Մինչև Երկրորդ Գալուստը և Հազարամյակի ընթացքում, Տերը միջոցներ կտրամադրի ճշմարտությունը բոլոր ազգերին տանելու համար։

Եղիայի գալուստը

Մաղաքիա մարգարեն մարգարեացել է, որ նախքան Փրկչի Երկրորդ Գալուստը, Եղիա մարգարեն կուղարկվի երկիր: Եղիան պետք է վերականգներ կնքման զորությունները, որպեսզի ընտանիքները կնքվեին միասին: Նա նաև պետք է ոգեշնչեր մարդկանց հոգալ իրենց նախնիների և հետնորդների համար: (Տես Մաղաքիա Դ.5–6; ՎևՈւ 2:) Եղիա մարգարեն այցելեց Ջոզեֆ Սմիթին 1836թ. ապրիլին: Այդ ժամանակից ի վեր, տոհմաբանության և ընտանիքի պատմության հանդեպ հետաքրքրությունն ավելացել է: Մենք նաև կարող ենք կնքման արարողություններ կատարել տաճարներում՝ ապրողների և մահացածների համար:

Լեքիի հետնորդները կդառնան մեծ ժողովուրդ

Տերն ասել է, որ երբ Նրա գալուստը մոտենա, Լամանացիները կդառնան արդարակյաց և հարգված ժողովուրդ: Նա ասել է. «Նախքան Տիրոջ մեծ օրվա գալը, . . . Լամանացիները պիտի փթթեն, ինչպես վարդը» (ՎևՈւ 49.24): Լեքիի հետնորդների մեծ մասն այսօր ստանում են ավետարանի օրհնությունները:

Նոր Երուսաղեմի կառուցումը

Հիսուս Քրիստոսի գալստյանը մոտ, հավատարիմ Սրբերը կկառուցեն արդարակյաց քաղաք, Աստծո քաղաքը, որը կկոչվի Նոր Երուսաղեմ: Հիսուս Քրիստոսն Ինքը կկառավարի այնտեղ: (Տես 3 Նեփի 21.23–25; Մովսես 7.62–64; Հավատո Հանգանակներ 1.10:) Տերն ասել է, որ քաղաքը կկառուցվի Միացյալ Նահանգների Միսսուրիի նահանգում (տես ՎևՈւ 84.2–3):

Կան միայն մի քանի նշաններ, որ Տերը տվել է մեզ: Սուրբ գրությունները շատ ավելին են նկարագրում:

- Նշանների կատարվելու ի՞նչ ապացույցներ եք տեսնում:

Ժամանակների նշանները իմանալը կօգնի մեզ

- Ինչպե՞ս կարող ենք մենք հանգիստ և խաղաղ մնալ, նույնիսկ երբ որոշ նշաններ սարսափեցնում և ահաբեկում են մեզ:

Խոսելով Իր Երկրորդ Գալստի մասին, Տերն ասել է. «Ժամը և օրը ոչ մի մարդ չգիտի, ոչ էլ հրեշտակները երկնքում» (ՎևՈ 49.7)։ Նա ուսուցանել է դա թզենու առակով։ Նա ասել է, որ երբ մենք տեսնում ենք թզենին տերևներ է արձակում, կարող ենք ասել, որ ամառը մոտենում է։ Նմանապես, երբ մենք տեսնում ենք սուրբ գրություններում նկարագրված նշանները, կարող ենք ասել, որ Նրա գալուստը մոտ է։ (Տես Մատթեոս ԻԴ.32–33։)

Տերը տալիս է այս նշանները՝ մեզ օգնելու համար։ Մենք կարող ենք մեր կյանքը կարգավորել, պատրաստվել և մեր ընտանիքներին պատրաստել գալիք իրադարձություններին։

Մեզ նախազգուշացվել է աղետների մասին և կոչ է արվել, որ պատրաստվենք դրանց, սակայն մենք նաև անհամբեր սպասում ենք Փրկչի գալստյանը և ուրախանում ենք։ Տերն ասել է. «Մի՛ խռովվեք, քանզի, երբ բոլոր այս բաները տեղի ունենան, դուք կարող եք իմանալ, որ խոստումները, որոնք տրվել էին ձեզ, կկատարվեն» (ՎևՈ 45.35)։ Նա ասել է, որ երբ Ինքը գա արդարակյացները չեն կործանվի, «այլ պիտի մնան այդ օրը։ Եվ երկիրը պիտի տրվի նրանց, որպես ժառանգություն. և նրանք պիտի բազմանան ու զորանան, և նրանց զավակները պիտի մեծանան առանց մեղքի։ . . . Քանզի Տերը պիտի լինի նրանց մեջ, և նրա փառքը պիտի լինի նրանց վրա, և նա պիտի լինի նրանց թագավորն ու նրանց օրենսդիրը» (ՎևՈ 45.57–59)։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Ա Կորնթացիս ԺԵ.22–28 վերջը մոտենում է. մահը վերանում է)
- Մատթեոս ԺԶ.1–4 (տարբերեք ժամանակների նշանները)
- Մատթեոս ԻԴ; ՎևՈ 29.14–23; 45.17–57; 88.87–94; Ջոզեֆ Սմիթ—Մատթեոս 1 (Երկրորդ Գալստյան նշանները)
- Ա Թեսաղոնիկեցիս Ե.1–6 (հետևեք նշաններին և պատրաստվեք)
- ՎևՈ 38.30 (պատրաստվենք, որ չվախենանք)
- ՎևՈ 68.11 (մենք կարող ենք տարբերել նշանները)

Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը

Գլուխ 44

Անհամբեր սպասել Փրկչի Երկրորդ Գալստին

Իր Հարությունից քառասուն օր հետո, Հիսուսը և Նրա Առաքյալները միասին հավաքվեցին Ձիթենյաց սարի վրա: Հիսուսի համար եկել էր երկրից հեռանալու ժամանակը: Նա ավարտել էր ողջ աշխատանքը, որ պետք է աներ այդ ժամանակ: Նա պետք է վերադառնար մեր Երկնային Հոր մոտ, մինչև Նրա Երկրորդ Գալստի ժամանակը:

Իր Առաքյալներին հրահանգելուց հետո, Հիսուսը համբարձվեց երկինք: Մինչ Առաքյալները նայում էին երկինք, երկու հրեշտակներ կանգնեցին նրանց կողքին և ասացին. «Ով Գալիլեացի մարդիկ, ի՞նչ եք կանգնել և մտիք եք անում դեպի երկինքը. այս Հիսուսը, որ ձեզանից վերացավ երկինքը, այսպես կգա ինչպես նորան տեսաք երկինքը գնալիս» (Գործք Ա.11):

Այդ ժամանակից մինչ այժմ, Հիսուս Քրիստոսի հետևորդները անհամբեր սպասել են Երկրորդ Գալստին:

Ի՞նչ Հիսուսը կանի, երբ վերադառնա

Երբ Հիսուս Քրիստոսը կրկին գա երկիր, Նա կանի հետևյալը.

1. *Նա կմաքրի երկիրը:* Երբ Հիսուսը կրկին գա, Նա կգա զորությամբ և մեծ փառքով: Այդ ժամանակ ամբարիշտները կկործանվեն: Այն ամենը, ինչ ապականված է, կայրվի, և երկիրը կմաքրվի կրակով (տես ՎևՈւ 101.24–25):

Ուսուցիչներին. Կարող եք դասարանի կամ ընտանիքի յուրաքանչյուր անդամի հանձնարարել այս գլխի հինգ կետերից մեկը: Յուրաքանչյուրին խնդրեք անհատապես աշխատել, ուսումնասիրելով իրեն հանձնարարված մասը՝ ներառյալ սուրբ գրության հատվածները: Այնուհետև հրավիրեք յուրաքանչյուրին քննարկել իրենց սովորածը:

2. *Նա կդատի Իր ժողովրդին:* Երբ Հիսուսը գա, Նա կդատի ազգերին և արդարներին ամբարիշտներից կզատի (տես Մատթեոս ԻԵ.31–46; տես նաև այս գրքի գլուխ 46-ը): Հովհաննես Հայտնիչը գրել է այդ դատաստանի մասին. «Եվ տեսա աթոռներ, և նորանց վրա նստեցին. և դատավորություն տրուեցավ նրանց, և նրանց հոգիքը որ գլխատուել էին Հիսուսի վկայության համար և Աստուծո խոսքի համար, . . . և սրանք կենդանացան և Քրիստոսի հետ թագավորություն արին հազար տարի»: Նա տեսավ, որ ամբարիշտները «չկենդանացան, մինչև որ հազար տարին լրանար» (Հայտնություն Ի.4–5; տես նաև ՎևՈւ 88.95–98):

3. *Նա կբացի Հազարամյակը:* Հազարամյակը հազարամյա ժամանակահատված է, երբ Հիսուսը կկառավարի երկիրը: Արդարակյացները կհափշտակվեն վեր, որ Հիսուսին դիմավորեն Նրա գալստյան ժամանակ (տես ՎևՈւ 88.96): Նրա գալուստով կսկսվի հազարամյա կառավարումը: (Տես այս գրքի գլուխ 45-ը:)

Նախագահ Բրիգամ Յանգն ասել է.

«Հազարամյակին, երբ Աստծո Թագավորությունը զորությամբ, փառքով և կատարելությամբ կհաստատվի երկրի վրա, և կտապալվի երկարատև գերիշխող չարի թագավորությունը, Աստծո Սրբերը արտոնություն կունենան տաճարներ կառուցելու, և այնտեղ գնալու, դառնալով, ինչպես միշտ, Աստծո տաճարների սյուները [տես Հայտնություն Գ.12], և նրանք աշխատանքներ կկատարեն իրենց մահացածների համար: Այնուհետև մենք կտեսնենք մեր ընկերներն են գալիս, և մի զուցե մի քանիսին մենք ծանոթ ենք եղել այստեղ: . . . Եվ մենք հայտնություններ կունենանք իմանալու մեր նախահայրներին մինչև Հայր Ադամը և Մայր Եվան, և մենք կմտնենք Աստծո տաճարները և աշխատանք կկատարենք նրանց համար: Այնուհետև [երեխաները] կկնքվեն [ծնողներին], մինչև որ այդ շղթան կհասնի Ադամին, այնպես որ կլինի Քահանայության կատարյալ շղթա Ադամից մինչև վերջին ժանանակը» (*Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 333–34):

4. *Նա կավարտի Առաջին Հարությունը:* Նրանք, ովքեր արդարների հարության ժամանակ առաջ գալու արտոնություն են ստացել, դուրս կգան իրենց գերեզմաններից: Նրանք կհափշտակվեն դիմավորելու Փրկչին, երբ Նա իջնի երկնքից: (Տես ՎևՈւ 88.97–98.)

   Ինչպես Հիսուս Քրիստոսը բարձրացավ մեռելներից, այլ արդար մարդիկ, ովքեր մահացել էին, նույնպես հարություն առան: Նրանք հայտնվեցին Երուսաղեմում և նաև Ամերիկայի մայրցամաքում: (Տես Մատթեոս ԻԷ.52–53; 3 Նեփի 23.9–10:) Սա Առաջին Հարության սկիզբն էր: Դրանից հետո որոշ մարդիկ հարություն են առել: Նրանք, ովքեր արդեն հարություն են առել, և նրանք, ովքեր հարություն կառնեն Նրա գալստյան ժամանակ, բոլորը կժառանգեն սելեստիալ արքայության փառքը (տես ՎևՈւ 76.50–70):

   Նրանց հարությունից հետո, ովքեր ժառանգելու են սելեստիալ փառքը, մեկ այլ խումբ հարություն կառնի՝ ստանալու թերեստրիալ փառքը: Երբ այդ բոլոր մարդիկ հարություն առնեն, Առաջին Հարությունը կավարտվի:

   Տիրոջ Երկրորդ Գալստյան ժամանակ ապրող ամբարիշտները մարմնով կկործանվեն: Նրանք արդեն մահացած ամբարիշտների հետ միասին կսպասեն մինչև վերջին հարությունը: Մնացած բոլոր մահացածները վեր կբարձրանան դիմավորելու Աստծուն: Նրանք կամ կժառանգեն սելեստիալ արքայությունը կամ սատանայի հետ դուրս կգցվեն դրսի խավարը (տես ՎևՈւ 76.32–33, 81–112):

5. *Նա Իր օրինական տեղը կգրավի որպես երկնքի և երկրի Թագավոր:* Երբ Հիսուսը գա, Նա կհաստատի Իր կառավարությունը երկրի վրա: Եկեղեցին կդառնա այդ թագավորության մասը: Նա 1000 տարի խաղաղությամբ կկառավարի երկրի բոլոր մարդկանց:

   Երբ Հիսուս Քրիստոսը առաջին անգամ եկավ երկիր, Նա փառքով չեկավ: Նա ծնվեց սովորական ախոռում, և նրան դրեցին խոտով լի մսուրի մեջ: Նա չեկավ հզոր բանակներով, ինչպես Հրեաներն էին սպասում Իրենց Փրկչին: Փոխարենը Նա եկավ ասելու. «Սիրեցեք ձեր

թշնամիներին . . . բարի արեք ձեզ ատողներին. և աղոթք արեք ձեզ չարչարողների և ձեզ հալածողների համար» (Մատթեոս Ե.44)։ Նա մերժվեց և խաչվեց։ Բայց Նա չի մերժվի Իր Երկրորդ Գալստյան ժամանակ, «քանզի ամեն ականջ պիտի լսի դա, և ամեն ծունկ պիտի ծալվի, և ամեն լեզու պիտի խոստովանի», որ Հիսուսը Քրիստոսն է (ՎևՈւ 88.104)։ Նրան կդիմավորեն որպես «տերերի Տեր, և թագավորների Թագավոր» (Հայտնություն ԺԷ.14)։ Նա կկոչվի «Սքանչելի, Խորհրդական, Հզոր Աստուած, Հավիտենականության Հայր, Խաղաղության Իշխան» (Եսայիա Թ.6)։

- Ինչպիսի՞ մտքեր և զգացումներ ունեք, երբ խորհում եք Երկրորդ Գալուստի իրադարձությունների մասին։

Ինչպե՞ս կիմանանք, որ Փրկչի Գալուստը մոտ է

Երբ Հիսուս Քրիստոսը ծնվեց, շատ քիչ մարդիկ իմացան, որ Փրկիչը աշխարհ է եկել։ Երբ Նա կրկին գա, անկասկած կիմանան, թե ով է Նա։ Ոչ ոք չգիտի Փրկչի գալու ստույգ ժամանակը։ «Այն օրուա և ժամի համար ոչ ով չգիտե, ոչ էլ երկնքի հրեշտակները, բայց միայն իմ Հայրը» (Մատթեոս ԻԴ.36; տես նաև ՎևՈւ 49.7)։

Տերը առակ օգտագործեց, որ մեզ օգնի հասկանալ, թե երբ է Իր գալստյան ժամանակը.

«Թզենուցը սովորեցեք առակը. երբոր նորա ճղները արդեն կկակղին և տերևները կարձակուին, գիտեք թե ամառը մոտ է։

Այնպես էլ դուք, երբոր տեսնեք այս բոլորը լինելիս, իմացեք թե մոտիկ է դռներին» (Մարկոս ԺԳ.28–29)։

Տերը նաև մեզ մի քանի նշաններ է տվել, որպեսզի իմանանք երբ է Նրա մոտալուտ գալուստը։ Այդ նշանները հայտնելուց հետո, Նա զգուշացրել է.

«Արդ՝ արթուն կացեք. որ չգիտեք թե ո՞ր ժամում ձեր Տերը կգա։ . . .

. . . Դուք էլ պատրաստ կացեք որ այն ժամին, որ դուք չեք կարծում, մարդի Որդին կգա» (Մատթեոս ԻԴ.42, 44)։

Հիսուսի Երկրորդ Գալուստի մոտ լինելու մասին ավելի շատ տեղեկություն իմանալու համար, տես այս գրքի գլուխ 43-ը։

Ինչպե՞ս կարող ենք պատրաստ լինել Փրկչի Գալուստին

Փրկչի գալուստին պատրաստվելու լավագույն եղանակն է՝ ընդունել ավետարանի ուսմունքները և դրանք դարձնել մեր կյանքի մասը։ Մենք ամեն օր պետք է ապրենք որքան հնարավոր է լավ, ինչպես Հիսուսն է ուսուցանել, երբ Նա երկրի վրա էր։ Մենք կարող ենք առաջնորդության համար նայել մարգարեին և հետևել նրա խորհրդին։ Մենք կարող ենք արժանի ապրել, որպեսզի Սուրբ Հոգու առաջնորդությունն ունենանք։ Այնուհետև ուրախ ու անվախ մենք անհամբեր կսպասենք Փրկչի գալստին։ Տերն ասել է. «Մի վախեցիր, փո՛քր հոտ. արքայությունը քոնն է, մինչև որ ես գամ։ Ահա, ես շուտով գալիս եմ։ Ճիշտ այդպես։ Ամեն» (ՎևՈ 35.27)։

- Ինչո՞ւ պետք է մտահոգվենք ոչ թե Երկրորդ Գալուստի ստույգ ժամանակի, այլ մեր պատրաստվածության համար։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Հովհաննես ԺԴ.2–3; Մատթեոս ԻԶ.64 (Հիսուսը պետք է մի վայր պատրաստի և կրկին գա)
- Մաղաքիա Գ.2–3; Դ.1; ՎևՈ 64.23–24 (երկիրը կայրվի)
- ՎևՈ 133.41–51 (ամբարիշտները պիտի կործանվեն)
- Մատթեոս ԺԳ.40–43 (Դատաստան է կանխատեսվում)
- Ա Կորնթացիս ԺԵ.40–42; ՎևՈ 76; 88.17–35 (փառքի արքայությունները)
- ՎևՈ 43.29–30; 29.11 (Հիսուսի գալուստով կսկսվի Հազարամյակը)
- Հավատո Հանգանակ 1.10 (Հիսուսը պետք է կառավարի)
- Ալմա 11.43–44; 40.23 (բացատրվում է Հարությունը)
- ՎևՈ 88.96–98 (մահացածները կբարձրանան)
- Զաքարիա ԺԴ.9; Հայտնություն ԺԱ.15; 1 Նեփի 22.24–26 (Հիսուսը պետք է կառավարի որպես Թագավոր)

Հազարամյակ

Գլուխ 45

Մարդիկ երկրի վրա Հազարամյակի ընթացքում

• Ո՞վ է լինելու երկրի վրա Հազարամյակի ընթացքում:

Խաղաղության, սիրո և ուրախության հազար տարին երկրի վրա կսկսվի Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալստով: Այդ հազարամյա ժամանակահատվածը կոչվում է Հազարամյակ: Սուրբ գրություններն ու մարգարեները օգնում են մեզ հասկանալ, թե ինչպիսին կլինի կյանքը երկրի վրա Հազարամյակի ընթացքում:

Քանի որ Փրկչի Երկրորդ Գալուստի ժամանակ ամբարիշտները կործանվելու են, Հազարամյակի սկզբում միայն արդարակյաց մարդիկ կապրեն երկրի վրա: Նրանք կլինեն այն մարդիկ, ովքեր առաքինի և ազնիվ կյանքով են ապրել: Այդ մարդիկ կժառանգեն թերեստրիալ կամ սելեստիալ արքայությունը:

Հազարամյակի ընթացքում մահկանացուները դեռևս կապրեն երկրի վրա, և նրանք կշարունակեն երեխաներ ունենալ, ինչպես այժմ մենք ենք ունենում (տես ՎևՈւ 45.58): Ջոզեֆ Սմիթն ասել է, որ անմահ էակները հաճախ կայցելեն երկիր: Այդ հարություն առած էակները կօգնեն կառավարման և այլ գործերում: (Տես *Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 268:)

Մարդիկ դեռևս կունենան իրենց ազատ կամքը, և որոշ ժամանակով շատերը ազատ կլինեն հարելու իրենց կրոնական դավանանքներնին ու գաղափարներին: Ի վերջո, ամեն ոք կխոստովանի, որ Հիսուս Քրիստոսը Փրկիչն է:

Ուսուցիչներին. Հազարամյակի թեման երբեմն մարդկանց դրդում է ենթադրություններ անել այնպիսի գաղափարների շուրջ, որոնք չկան սուրբ գրություններում կամ վերջին օրերի մարգարեների ուսմունքներում: Այս դասը վարելիս, զգույշ եղեք և խուսափեք նման ենթադրություններից:

Հազարամյակի ընթացքում, Հիսուսը «անձամբ կթագավորի երկրի վրա» (Հավատո Հանգանակ 1.10)։ Ջոզեֆ Սմիթը բացատրել է, որ Հիսուսը «կթագավորի Սրբերի վրա և ներքև կգա ու կսովորեցնի» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 258)։

Եկեղեցու աշխատանքը Հազարամյակի ընթացքում

- Որո՞նք են այն երկու մեծ գործերը, որ կկատարվեն Հազարամյակի ընթացքում։

Հազարամյակի ընթացքում Եկեղեցու անդամների համար երկու մեծ աշխատանք կլինի կատարելու՝ տաճարային աշխատանքը և միսիոներական աշխատանքը։ Տաճարային աշխատանքը ներառում է արարողություններ, որոնք կարևոր են վեհացման համար։ Դրանք ներառում են՝ մկրտությունը, ձեռնադրումով Սուրբ Հոգու պարգևը և տաճարային արարողությունները, որոնք են օժտումը, տաճարային ամուսնությունը և որպես ընտանեկան միավոր միասին կնքվելը։

Շատ մարդիկ մահացել են առանց նման արարողություններ ստանալու։ Երկրի վրա մարդիկ պետք է կատարեն այդ արարողությունները նրանց համար։ Այս աշխատանքը այժմ կատարվում է Տիրոջ տաճարներում։ Շատ աշխատանք կա կատարելու նախքան Հազարամյակի սկսվելը, և Հազարամյակի ընթացքում ամբողջ աշխաատանքը պետք է ավարտվի։ Հարություն առած էակները կօգնեն մեզ շտկել մեր մահացած նախնիների համար արված հետազոտության ընթացքում կատարված սխալները։ Նրանք նաև կօգնեն մեզ գտնել անհրաժեշտ տեղեկություն՝ մեր գրառումներն ավարտելու համար։ (Տես Joseph Fielding Smith, *Doctrines of Salvation,* comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:167, 251–52:)

Հազարամյակի ընթացքում մյուս մեծ աշխատանքը կլինի միսիոներական աշխատանքը։ Ավետարանը մեծ զորությամբ կուսուցանվի բոլոր մարդկանց։ Ի վերջո, կարիք չի լինի մյուսներին ուսուցանել ավետարանի առաջին սկզբունքը, որովհետև «նրանք ամենքը պիտի ճանաչեն ինձ, նրանց փոքրերիցը մինչև նրանց մեծերը, ասում է Տերը» (Երեմիա ԼԱ.34)։

- Ինչպե՞ս կարող ենք այժմ պատրաստվել Հազարամյակի աշխատանքին:

Հազարամյակի պայմանները

- Ինչո՞վ է կյանքը Հազարամյակի ընթացքում տարբերվելու ներկայիս երկրային կյանքից:

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է, որ Հազարամյակի ընթացքում «երկիրը կնորանա և կընդունի իր դրախտային փառքը» (Հավատո Հանգանակ 1.10):

Սատանան կապված

Հազարամյակի ընթացքում սատանան կկապվի: Դա նշանակում է՝ նա զորություն չի ունենա գայթակղելու նրանց, ովքեր կապրեն այդ ժամանակ (տես ՎԵՈՒ 101.28): «Երեխաները պիտի մեծանան առանց մեղքի՝ ի փրկություն» (ՎԵՈՒ 45.58): «[Տիրոջ] ժողովրդի արդարակեցության պատճառով, Սատանան զորություն չունի. այդ պատճառով նա չի կարող արձակվել, շատ տարիների ընթացքում. քանի որ զորություն չունի մարդկանց սրտերի վրա, քանզի նրանք կենում են արդարության մեջ և Սուրբն է Իսրայելի թագավորում» (1 Նեփի 22.26):

Երկրի վրա խաղաղություն

Հազարամյակի ընթացքում պատերազմ չի լինի: Մարդիկ միմյանց հետ կապրեն խաղաղության և ներդաշնակության մեջ: Այն, ինչ օգտագործվում էր պատերազմի համար, օգտակար նպատակներով կօգտագործվի: «Նրանք կձուլեն իրանց սուրերը խոփեր, և իրանց նիզակները՝ հոտոցներ. ազգ ազգի վրա սուր չի բարձրացնիլ, և այլևս պատերազմի չեն վարժուիլ» (Եսայիա Բ.4; տես նաև Եսայիա ԺԱ.6–7; ՎԵՈՒ 101.26):

Արդար կառավարում

Նախագահ Ջոն Թեյլորն ուսուցանել է. «Տերը թագավոր կլինի ողջ երկրի վրա, և ողջ մարդկությունը բառացիորեն կլինի նրա ղեկավարության ներքո, և երկնքի տակ ամեն ազգ կընդունի նրա իշխանությունը, և կխոնարհվի նրա առաջ: Նրանք, ովքեր

արդարակեցորեն կծառայեն նրան, կհաղորդակցվեն Աստծո հետ, և Հիսուսի հետ, կունենան հրեշտակների սպասավորումը, և կիմանան անցյալը, ներկան և ապագան, իսկ նրանք, ովքեր ողջ հնազանդությամբ չեն ենթարկվի նրա օրենքներին, ոչ էլ լիովին կուսուցանվեն նրա ուխտերը, այնուամենայնիվ, լիովին կհնազանդվեն նրա կառավարմանը: Քանզի կլինի Աստծո թագավորումը երկրի վրա, և նա կկիրառի իր օրենքները և աշխարհի ազգերից կպահանջի այն հնազանդությունը, որը օրինական իր իրավունքն է» (*Teachings of Presidents of the Church: John Taylor* [2001], 225):

Մահ չի լինի

Հազարամյակի ընթացքում մահ չի լինի, ինչպես որ մենք գիտենք այն: Երբ մարդիկ ապրեն մինչև ծերություն, նրանք չեն մահանա և թաղվի: Այլ, «մեկ ակնթարթում» նրանք մահկանացու վիճակից կփոխվեն անմահ վիճակի: (Տես ՎևՈւ 63.51; 101.29–31:)

Բոլոր բաները կհայտնվեն

Որոշ ճշմարտություններ չեն հայտնվել մեզ: Բոլոր բաները կհայտնվեն Հազարամյակի ընթացքում: Տերը ասել է, որ Նա «հայտնի կդարձնի բոլոր բաները,–բաներ, որոնք անցած են, և թաքնված բաներ, որոնք ոչ մի մարդ չի իմացել, երկրի բաները, որոնցով այն արարվել էր, և նրա նպատակն ու վախճանը,–բաներ՝ շատ թանկարժեք, բաներ, որոնք վերևում են, և բաներ, որոնք ներքևում են, բաներ, որ երկրի մեջ են, և երկրի վրա, և երկնքում» (ՎևՈւ 101.32–34):

Այլ Հազարամյա ապրելակերպ

Շատ բաներով կյանքը նման կլինի այժմյան կյանքին, բացի այն որ ամեն ինչ կարվի արդարակեցության մեջ: Մարդիկ կուտեն և կխմեն, կհագնվեն: (Տես *Teachings of Presidents of the Church: Brigham Young* [1997], 333:) Մարդիկ կշարունակեն տնկել և բերք հավաքել, տներ կառուցել (տես Եսայիա ԿԵ.21):

- Որո՞նք են ձեր մտքերն ու զգացումները Հազարամյակի ընթացքում գոյություն ունեցող պայմանների վերաբերյալ:

Մեկ վերջին ճակատամարտ Հազարամյակից հետո

• Ի՞նչ է լինելու երկրի վերջնական ճակատագիրը։

1000 տարիների վերջում սատանան ազատ կարձակվի մի փոքր ժամանակով։ Որոշ մարդիկ կհեռանան Երկնային Հորից։ Սատանան կհավաքի իր բանակը, իսկ Միքայելը (Ադամ) կհավաքի երկնային զորքերը։ Այդ մեծ ճակատամարտում, սատանան և նրա հետևորդները հավիտյան դուրս կգցվեն։ Երկիրը կփոխվի սելեստիալ արքայության։ (Տես ՎևՈւ 29.22–29; 88.17–20, 110–15։)

Լրացուցիչ սուրբ գրություններ

• Զաքարիա ԺԴ.4–9; 1 Նեփի 22.24–25 (Հիսուսը կթագավորի երկրի վրա)

• Դանիել Է.27 (Սրբերին կտրվի թագավորությունը)

• ՎևՈւ 88.87–110 (Հազարամյակի պայմանները)

• Հայտնություն Ի.1–3; 1 Նեփի 22.26 (Սատանան կկապվի)

• ՎևՈւ 101.22–31 (թշնամությունը կդադարի, մահ չի լինի, սատանան գայթակղելու զորություն չի ունենա)

• Եսայիա ԺԱ.1–9 (գայլն ու գառը կապրեն միասին)

• ՎևՈւ 43.31; Հայտնություն Ի.7–10 (Սատանան կարձակվի մի փոքր ժամանակով)

Վերջին Դատաստան

Գլուխ 46

Վերջին Դատաստան

- Նշեք մի քանի տարբեր դատաստաններ, որոնք գալիս են նախքան Վերջին Դատաստանը: Ինչպե՞ս են այդ բոլոր դատաստանները կապված միմյանց հետ:

Սուրբ գրություններում հաճախ է մեզ ասվում, որ օրը կգա, երբ մենք կկանգնենք Աստծո առաջ և կդատվենք: Մենք պետք է հասկանանք, թե ինչպես է դատաստանը տեղի ունենալու, որպեսզի կարողանանք պատրաստվել այս կարևոր իրադարձությանը:

Սուրբ գրությունները սովորեցնում են, որ մենք բոլորս կդատվենք ըստ մեր գործերի. «Եվ տեսա մեռելները մեծ և փոքր կանգնած Աստծո աթոռի առաջին. և գրքեր բացուեցան, և մի ուրիշ գիրք էլ բացուեցավ, որ է կեանքի գիրքը, և մեռելները դատուեցան այն գրքերում գրուածներից իրանց գործերի համեմատ» (Հայտնություն Ի.12; տես նաև ՎԿՈ 76.111; 1 Նեփի 15.32; Աբրահամ 3.25–28): Մենք նաև կդատվենք «համաձայն [մեր] սրտերի ցանկությունների» (ՎԿՈ 137.9; տես նաև Ալմա 41.3):

Այստեղ երկրի վրա մենք հաճախ ենք դատվել մեր արժանիությունը հաստատելու համար, որպեսզի Աստծո արքայության մեջ հնարավորություններ ստանանք: Երբ մենք մկրտվել ենք, մենք դատվել ենք արժանի համարվելով այդ արարողությունը ստանալու համար: Մենք դատվել ենք, երբ կանչվել ենք ծառայելու Եկեղեցում կամ հարցազրույց ենք անցել քահանայության մեջ առաջադիմելու կամ տաճարային երաշխավորագիր ստանալու համար:

Ուսուցիչներին. Կարիք չունեք յուրաքանչյուր գլուխն ամբողջությամբ ուսուցանելու: Աղոթքով պատրաստվելով ուսուցանելուն, փնտրեք Հոգու առաջնորդությունը, որպեսզի իմանաք գլխի որ մասերը պետք է մատուցեք:

Ալման ուսուցանել է, որ երբ մենք մահանում ենք, մեր հոգիները ընդունվում են երջանկության կամ թշվառության վիճակում (տես Ալմա 40.11–15)։ Սա է դատաստանը։

Մեր խոսքերը, գործերը և մտքերը կօգտագործվեն մեզ դատելիս

- Պատկերացրեք, որ դատվում եք ձեր բոլոր մտքերի, գործերի և արարքների համար։

Ալմա մարգարեն վկայել է. «Մեր խոսքերը կդատապարտեն մեզ, այո, բոլոր մեր գործերը կդատապարտեն մեզ . . . և մեր մտքերը նույնպես կդատապարտեն մեզ» (Ալմա 12.14)։

Տերն ասել է. «Ամեն դատարկ խոսքի համար, որ մարդիկ խոսեն՝ դատաստանի օրը համար պիտի տան։ Որովհետև քո խոսքիցը՝ կարդարանաս, և քո խոսքիցը կդատապարտուիս» (Մատթեոս ԺԴ.36–37)։

Հավատն առ Հիսուս Քրիստոս օգնում է մեզ պատրաստվել Վերջին Դատաստանին։ Լինելով Նրա հավատարիմ աշակերտը և ապաշխարելով մեր բոլոր մեղքերից, մենք կարող ենք ներում ստանալ մեր բոլոր մեղքերից և դառնալ մաքուր ու սուրբ, այնպես որ կարող ենք ապրել Աստծո ներկայության մեջ։ Եթե ապաշխարենք մեր մեղքերից, հրաժարվելով ամեն անմաքուր մտքից և արարքից, Սուրբ Հոգին կփոխի մեր սրտերը, այնպես որ մենք այլևս չենք ցանկանա մեղանչել (տես Մոսիա 5.2)։ Այնուհետև երբ մենք դատվենք, պատրաստ կլինենք մտնելու Աստծո ներկայություն։

- Մտածեք, թե ինչ կարող եք անել բարելավելու համար ձեր մտքերը, խոսքերը և գործերը։

Մենք կդատվենք ըստ գրառումների

- Ո՞ր գրառումներից մենք կդատվենք։ Ո՞վ կդատի մեզ։

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ասել է, որ մահացածները կդատվեն երկրի վրա պահված գրառումներից։ Մենք նաև կդատվենք «կյանքի գրքից», որը պահվել է երկնքում (տես ՎևՈւ 128.6–8)։

«Զեզանից յուրաքանչյուրը . . . պետք է կանգնի «Իսրայելի Սուրբի ատյանի առջև . . . և հետո պետք է նրանք դատվեն՝ ըստ Աստծո սուրբ դատաստանի» (2 Նեփի 9.15)։ Եվ ըստ Հովհաննեսի տեսիլքի, «գրքեր բացուեցան, և մի ուրիշ գիրք էլ բացուեցավ, որ է կեանքի գիրքը, և մեռելները դատուեցան այն գրքերում գրվածներից իրանց գործերի համեմատ» (Հայտն. Ի.12)։ «Գրքերը», որոնց մասին խոսվում է, վերաբերվում են «[ձեր գործերի] գրանցումներին, որոնք կատարվում են երկրի վրա։ . . . Կյանքի գիրքն այն հիշատակարանն է, որ պահվում է երկնքում» (ՎևՈւ 128.7)» (*Teachings of Presidents of the Church: Harold B. Lee* [2000], 226–27)։

Կա մեկ այլ հիշատակարան, որը կօգտագործվի մեզ դատելու համար։ Պողոս Առաքյալն ուսուցանել է, որ մենք ինքներս մեր կյանքի մի հիշատակարան ենք (տես Հռովմեացիս Բ.15)։ Մեր մարմնում և մտքում պահված է մեր կատարած ամեն ինչի մասին մի լիակատար պատմություն։ Նախագահ Ջոն Թեյլորն ուսուցանել է այս ճշմարտությունը. «[Անհատը] ինքն է պատմում պատմությունը, և վկայություն է բերում իր դեմ։ . . . Այն գրառումը, որ գրանցվել է տվյալ մարդու կողմից իր մտքի տախտակների վրա, այդ գրառումը չի կարող խաբել այն օրը, երբ բացվի Աստծո, հրեշտակների և նրանց առաջ, ովքեր կնստեն որպես դատավորներ» (*Deseret News,* Mar. 8, 1865, 179)։

Հովհաննես Առաքյալն ուսուցանել է, որ «Հայրը ոչ մեկին էլ չի դատում, այլ ամեն դատաստանը տուավ Որդուն» (Հովհաննես Ե.22)։ Որդին, իր հերթին, կկանչի մյուսներին, որպեսզի օգնեն Դատաստանի ժամանակ։ Տասներկուսը, որ Նրա հետ էին Նրա ծառայության ժամանակ, կդատեն Իսրայելի տասներկու ցեղերին (տես Մատթեոս ԺԹ.28; Ղուկաս ԻԲ.30)։ Նեփիացի տասներկու աշակերտները կդատեն Նեփիացի և Լամանացի ժողովուրդներին (տես 1 Նեփի 12.9–10; Մորմոն 3.18–19)։

Փառքի թագավորությունում մի վայր ժառանգելը

- Երկրի վրա մեր կյանքի ընթացքում դրսևորած մեր հավատարմությունը ինչպե՞ս կազդի հավերժությունների ընթացքում մեր կյանքի վրա։

Վերջին Դատաստանի ժամանակ մենք կժառանգենք մի վայր այն թագավորությունում, որի համար պատրաստվել ենք: Սուրբ գրություններն ուսուցանում են փառքի երեք թագավորությունների մասին՝ սելեստիալ թագավորություն, թերեստրիալ թագավորություն և թելեստիալ թագավորություն (տես ՎևՈւ 88.20–32):

Վարդապետություն և Ուխտեր 76 բաժնում Տերը նկարագրել է, թե ինչպես ենք ընտրում ապրել մեր մահկանացու կյանքը: Նա բացատրել է, որ մեր ընտրությունները կորոշեն, թե որ թագավորության համար ենք մենք պատրաստվել: Մենք սովորում ենք այս հայտնությունից, որ նույնիսկ Եկեղեցու անդամները կժառանգեն տարբեր թագավորություններ, որովհետև նրանք հավասարապես հավատարիմ և անվեհեր չեն Քրիստոսին հնազանդվելիս:

Ստորև տրված են կյանքի տեսակները, որում մենք կարող ենք ընտրել ապրել, և այն թագավորությունները, որ կստանանք մեր ընտրությունների արդյունքում:

Սելեստիալ

«Այդ նրանք են, ովքեր ընդունեցին Հիսուսի մասին վկայությունը և հավատացին նրա անվանը, և մկրտվեցին . . . որպեսզի պատվիրանը պահելով՝ նրանք կարողանան լվացվել և մաքրվել իրենց բոլոր մեղքերից և ստանան Սուրբ Հոգին»: Այդ նրանք են, ովքեր իրենց հավատքով հաղթում են աշխարհը: Նրանք արդար են և ճշմարիտ, այնպես որ Սուրբ Հոգին կարող է կնքել նրանց օրհնությունները իրենց վրա: (Տես ՎևՈւ 76.51–53:) Նրանք, ովքեր ժառանգում են սելեստիալ թագավորության բարձրագույն աստիճանը, ովքեր դառնում են աստվածներ, պետք է նաև ամուսնանան հավերժության համար տաճարում (տես ՎևՈւ 131.1–4): Նրանք, ովքեր ժառանգում են սելեստիալ թագավորությունը, հավերժ կապրեն Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հետ (տես ՎևՈւ 76.62):

Տաճարներում կատարվող աշխատանքի շնորհիվ, բոլոր մարդիկ, ովքեր ապրել են երկրի վրա, կարող են ավետարանի լրիվությունը և փրկության արարողությունները ստանալու

հավասար հնարավորություն ունենալ, այնպես որ նրանք կարող են մի վայր ժառանգել սելեստիալ փառքի բարձրագույն աստիճանում:

Թերեստրիալ

Այդ նրանք են, ովքեր երկրի վրա մերժել են ավետարանը, սակայն ընդունել են այն հոգևոր աշխարհում: Նրանք երկրի վրա պատվավոր մարդիկ են, ովքեր մարդկանց խորամանկության պատճառով կուրացել են Հիսուս Քրիստոսի ավետարանի հանդեպ: Այդ նաև նրանք են, ովքեր ընդունել են ավետարանը և Հիսուսի վկայությունը, սակայն այնուհետև անվեհեր չեն եղել: Նրանց կայցելի Հիսուս Քրիստոսը, սակայն ոչ մեր Երկնային Հայրը: (See ՎևՈւ 76.73–79:)

Թելեստիալ

Այս մարդիկ չընդունեցին Հիսուսի ավետարանը կամ վկայությունը ոչ երկրի վրա, ոչ էլ հոգևոր աշխարհում: Նրանք դժոխքում կտառապեն իրենց մեղքերի համար մինչև Հազարամյակի ավարտը, երբ նրանք հարություն կառնեն: «Այդ նրանք են, ովքեր ստախոսներ են, և կախարդներ, և շնացողներ, և անառակներ, և ովքեր սուտն են սիրում և գործում»: Այդ մարդիկ այնքան անհամար են, որքան երկնքի աստղերը և ծովափի ավազը: Նրանց կայցելի Սուրբ Հոգին, սակայն ոչ Հայրը և ոչ էլ Որդին: (See ՎևՈւ 76.81–88, 103–6, 109:)

Դրսի խավար

Այդ նրանք են, ովքեր ունեին Հիսուսի մասին վկայություն Սուրբ Հոգու միջոցով և գիտեին Տիրոջ զորությունը, սակայն թույլ տվեցին, որ Սատանան հաղթի իրենց: Նրանք ուրացան ճշմարտությունը և արհամարհեցին Տիրոջ զորությունը: Նրանց համար ներում չկա, քանզի նրանք ուրացան Սուրբ Հոգին այն ստանալուց հետո: Նրանք չեն ունենա փառքի թագավորություն: Նրանք սատանայի և նրա հրեշտակների հետ հավերժ կապրեն հավերժական խավարի, տանջանքի և թշվառության մեջ: (Տես ՎևՈւ 76.28–35, 44–48:)

- Ըստ Վարդապետություն և Ուխտեր 76.50–53, 62–70 հատվածների, որո՞նք են այն մարդու հատկանիշները, որը հավատքով հաղթում է աշխարհին և անվեհեր է Հիսուսի վկայության մեջ:

Մենք այժմ պետք է պատրաստվենք Դատաստանին

- Ի՞նչ պետք է մենք անենք, որպեսզի պատրաստվենք Վերջին Դատաստանին:

Իրականում, ամեն օր դատաստանի օր է: Մենք խոսում ենք, մտածում և գործում ըստ սելեստիալ, թերեստրիալ կամ թելեստիալ օրենքի: Առ Հիսուս Քրիստոս մեր հավատքը, ինչպես ցույց են տալիս մեր ամենօրյա գործերը, որոշում է, թե որ թագավորությունը մենք կժառանգենք:

Մենք ունենք Հիսուս Քրիստոսի վերականգնված ավետարանն իր լրիվությամբ: Ավետարանը սելեստիալ թագավորության օրենքն է: Մեր առաջընթացի համար անհրաժեշտ քահանայության բոլոր արարողությունները հայտնվել են: Մենք մտել ենք մկրտության ջրերը և Քրիստոսանման կյանքով ապրելու ուխտ ենք կապել: Եթե մենք հավատարիմ ենք և պահում ենք մեր կապած ուխտերը, Տերն ասել է մեզ, թե ինչպիսին կլինի մեր դատաստանը: Նա կասի մեզ. «Եկեք, ով իմ Հոր օրհնածները, ժառանգեցեք աշխարհքի սկզբից ձեզ համար պատրաստուած թագավորությունը» (Մատթեոս ԻԵ.34):

Լրացուցիչ սուրբ գրություններ

- Հռովմայեցիս Բ.6–9; Հայտնություն Ի.12–13 (Դատաստանը)
- Ալմա 11.41, 45; Մորմոն 7.6; 9.13–14 (մենք կդատվենք հարություն առնելուց հետո)
- 2 Նեփի 29.11; 3 Նեփի 27.23–26 (Դատաստանի ժամանակ օգտագործվող գրքերը)
- Ալմա 41.2–7 (մեր դատաստանը որոշվում է մեր գործերով, մեր սրտերի ցանկություններով, ապաշխարությամբ, մինչև վերջ համբերելով)

- Մորմոն 3.22 (ապաշխարեք և պատրաստվեք կանգնելու դատաստանի ատյանի առաջ)
- Ղուկաս ԺԲ.47–48; ՎևՈւ 82.3 (ում շատ տրված է, նրանից շատ պահանջվում է)
- ՎևՈւ 88.16–33 (մենք յուրաքանչյուրս ստանում ենք այն, ինչին արժանի ենք)

Վեհացում

Գլուխ 47

Մեր առաջընթացի ծրագիրը

Երբ մենք ապրում էինք մեր Երկնային Հոր հետ, Նա մեզ մեր առաջադիմելու համար մի ծրագիր բացատրեց: Մենք կարող էինք դառնալ Նրա պես վեհացած էակ: Այդ ծրագիրը պահանջում էր, որ մենք բաժանվեինք Նրանից և երկիր գայինք: Այդ բաժանումը անհրաժեշտ էր, որպեսզի ստուգվեր, արդյոք մենք կհնազանդվենք մեր Հոր պատվիրաններին, չնայած որ մենք այլևս Նրա ներկայության մեջ չէինք լինելու: Ըստ այդ ծրագրի, երբ երկրային կյանքն ավարտվեր, մենք պետք է դատվեինք և վարձահատույց լինեինք ըստ մեր հավատի և հնազանդության աստիճանի:

Սուրբ գրություններից մենք սովորում ենք, որ երկնքում կան փառքի երեք թագավորություններ: Պողոս Առաքյալը հիշատակել է, որ նա ճանաչում էր մի մարդու, որը «հափշտակուեցավ մինչև երրորդ երկինքը» (Բ Կորնթացիս ԺԲ.2): Պողոսը անվանել է երկնքի երկու արքայությունները՝ արեգակի (սելեստիալ) և լուսնի (թերեստրիալ) (տես Ա Կորնթացիս ԺԵ.40–42): Սելեստիալը ամենաբարձրն է, իսկ թերեստրիալը՝ երկրորդը: Վերջին օրերի հայտնության միջոցով մենք սովորում ենք, որ երրորդ թագավորությունը թելեստիալ թագավորությունն է (տես ՎևՈւ 76.81): Մենք նաև սովորում ենք, որ կա երեք երկինք կամ աստիճաններ սելեստիալ թագավորության մեջ (տես ՎևՈւ 131.1):

Վեհացում

• Ի՞նչ է վեհացումը:

Վեհացումը հավերժական կյանքն է՝ այն կյանքը, ուր Աստված է ապրում: Նա ապրում է մեծ փառքի մեջ: Նա կատարյալ է: Նա

ունի ողջ գիտելիքն ու իմաստությունը: Նա հոգևոր զավակների Հայրն է: Նա արարիչն է: Մենք կարող ենք մեր Երկնային Հորը նմանվել: Սա է վեհացումը:

Եթե ապացուցում ենք Տիրոջ հանդեպ մեր հավատարմությունը, մենք կապրենք երկնային սելեստիալ թագավորության բարձրագույն աստիճանում: Մենք վեհացած կդառնանք, որպեսզի հավերժական ընտանիքներով ապրենք մեր Երկնային Հոր հետ: Վեհացումը մեծագույն պարգևն է, որ Երկնային Հայրը կարող է տալ Իր զավակներին (տես ՎևՈւ 14.7):

Վեհացման օրհնությունները

- Նշեք մի քանի օրհնություններ, որոնք կտրվեն նրանց, ովքեր վեհացում կստանան:

Մեր Երկնային Հայրը կատարյալ է, և Նա հպարտանում է այն փաստով, որ Իր զավակները կարող են Իր նման դառնալ: Նրա գործն ու փառքն է՝ «իրականացնել մարդու անմահությունն ու հավերժական կյանքը» (Մովսես 1.39):

Նրանք, ովքեր վեհացում են ստանում սելեստիալ արքայությունում Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատով, հատուկ օրհնություններ կստանան: Տերը խոստացել է. «Բոլոր բաները նրանցն են» (ՎևՈւ 76.59): Վեհացած մարդիկ ստանում են հետևյալ օրհնությունները:

1. Նրանք հավերժ կապրեն Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի ներկայությամբ (տես ՎևՈւ 76.62):
2. Նրանք կդառնան աստվածներ (տես ՎևՈւ 132.20–23):
3. Նրանք հավերժ կմիավորվեն իրենց արդարակյաց ընտանիքի անդամների հետ և կկարողանան ունենալ հավերժական աճ:
4. Նրանք կստանան լիակատար ուրախություն:
5. Նրանք կունենան այն ամենը, ինչ մեր Երկնային Հայրը և Հիսուս Քրիստոսն ունեն՝ ողջ զորությունը, փառքը, իշխանությունը և գիտելիքը (տես ՎևՈւ 132.19–20): Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթը գրել է. «Հայրը խոստացել է Որդու միջոցով, որ իր ողջ ունեցածը կտրվի նրանց, ովքեր

հնազանդ են Իր պատվիրաններին։ *Նրանք կավելանան գիտելիքով, իմաստությամբ և զորությամբ, գնալով շնորհից շնորհ, մինչև որ կատարյալ օրվա լիությունը կփայլատակի նրանց վրա»* (*Doctrines of Salvation*, comp. Bruce R. McConkie, 3 vols. [1954–56], 2:36; շեղագիրը բնագրից)։

Վեհացման պահանջները

Վեհացման համար պահանջները այժմ պետք է կատարել (տես Ալմա 34.32–34)։ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Որպեսզի վեհացում ձեռք բերենք, մենք պետք է ընդունենք ավետարանը և դրա բոլոր ուխտերը, ստանձնենք Տիրոջ առաջարկած պարտականությունները, քայլենք լույսի և ճշմարտության հասկացողության մեջ, և «ապրենք Աստծո բերանից դուրս եկող ամեն խոսքով» (*Doctrines of Salvation,* 2:43)։

Որպեսզի վեհանանք, մենք նախ պետք է հավատանք Հիսուս Քրիստոսին, իսկ հետո հավատքով համբերենք մինչև մեր կյանքի վերջ։ Նրա հանդեպ մեր հավատքը պետք է այնպես լինի, որ մենք ապաշխարենք մեր մեղքերից և հնազանդվենք Նրա պատվիրաններին։

Նա պատվիրում է մեզ բոլորիս ստանալ որոշակի արարողություններ.

1. Մենք պետք է մկրտվենք։
2. Մենք պետք է ձեռնադրվելով հաստատվենք Հիսուս Քրիստոսի Եկեղեցու անդամ և ստանանք Սուրբ Հոգու պարգևը։
3. Եղբայրները պետք է ստանան Մելքիսեդեկյան Քահանայություն և մեծարեն քահանայության իրենց կոչումները։
4. Մենք պետք է տաճարային օժտում ստանանք։
5. Մենք պետք ամուսնանանք հավերժության համար այս կամ հաջորդ կյանքում։

Բացի անհրաժեշտ արարողությունները ստանալը, Տերը պատվիրում է մեզ բոլորիս, որպեսզի մենք՝

1. Սիրենք Աստծուն և մեր մերձավորին։

2. Պահենք պատվիրանները։
3. Ապաշխարենք մեր կատարած սխալներից։
4. Փնտրենք մեր մահացած ազգականներին և նրանց համար ավետարանի փրկող արարողությունները ստանանք։
5. Որքան հնարավոր է կանոնավոր հաճախենք Եկեղեցու մեր հավաքներին, որպեսզի կարողանանք նորոգել մեր մկրտության ուխտերը՝ հաղորդությունը ճաշակելով։
6. Սիրենք մեր ընտանիքի անդամներին և ամրապնդենք նրանց Տիրոջ ուղու վրա։
7. Ամեն օր ընտանիքով և անհատապես աղոթենք։
8. Ավետարանը մյուսներին ուսուցանենք՝ խոսքով և օրինակով։
9. Ուսումնասիրենք սուրբ գրությունները։
10. Լսենք և հնազանդվենք Տիրոջ մարգարեների ոգեշնչված խոսքերին։

Ի վերջո, մեզանից յուրաքանչյուրը պետք է ստանա Սուրբ Հոգին և սովորի հետևել Նրա առաջնորդությանը մեր անձնական կյանքում։

- Ինչպե՞ս են արարողություններն ու ուխտերը պատրաստում մեզ վեհացմանը։
- Ինչպե՞ս է առ Հիսուս Քրիստոս հավատքը օգնում մեզ հնազանդվել պատվիրաններին։
- Ինչո՞ւ պետք է սովորենք հետևել Սուրբ Հոգու հրահանգներին, որպեսզի վեհացում ստանանք։

Երբ հավատարիմ լինենք և համբերենք մինչև վերջ

- Ի՞նչ է տեղի ունենում, երբ մենք համբերում ենք մինչև վերջ, լինելով Քրիստոսի հավատարիմ աշակերտները։

Տերն ասել է. «Եթե պահեք իմ պատվիրանները և համբերեք մինչև վերջ, դուք կունենաք հավերժական կյանք, պարգև, որը մեծագույնն է Աստծո բոլոր պարգևներից» (ՎևՈ 14.7)։ Նախագահ Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթն ասել է. «Եթե մենք շարունակենք

Աստծով, այսինքն՝ պահենք նրա պատվիրանները, երկրպագենք նրան և ապրենք նրա ճշմարտությունով, այնուհետև կգա ժամանակը, երբ մենք կցողվենք ճշմարտության լիությամբ, որը ավելի ու ավելի կպայծառանա մինչև որ կդառնա կատարյալ օր» (*Doctrines of Salvation,* 2:36)։

Մարգարե Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Երբ բարձրանում եք աստիճանով, դուք պետք է սկսեք ներքևից, և քայլ առ քայլ բարձրանաք, մինչև կհասնեք գագաթին։ Նույնը վերաբերում է ավետարանի սկզբունքներին, դուք պետք է սկսեք առաջինից, և առաջ գնաք, մինչև կսովորեք վեհացման բոլոր սկզբունքները։ Սակայն հրաշալի կլինի, որ մինչև վարագույրի այն կողմ անցնելը [մահանալը], սովորեիք այդ ամենը։ Ամեն ինչ չէ, որ հնարավոր է հասկանալ այս աշխարհում, մեր փրկության և վեհացման մասին սովորելու մեծ աշխատանք կկատարվի նույնիսկ գերեզմանից այն կողմ» (*Teachings of Presidents of the Church: Joseph Smith* [2007], 268)։

Ջոզեֆ Սմիթն ուսուցանել է. «Ավետարանի առաջին սկզբունքն է՝ հաստատապես իմանալ Աստծո Բնավորությունը։ . . . Նա ինչ-որ ժամանակ մեզ նման մարդ է եղել, . . .Աստված, մեր բոլորի Հայրը, ապրել է երկրի վրա, ինչպեսև ինքը՝ Հիսուս Քրիստոսը» (*Teachings of the Prophet Joseph Smith,* sel. Joseph Fielding Smith [1976], 345–46)։

Մեր Երկնային Հայրը գիտի մեր փորձությունները, մեր թուլությունները և մեր մեղքերը։ Նա կարեկցանք և ողորմածություն ունի մեր հանդեպ։ Նա ցանկանում է, որ մենք հաջողություն ունենանք, ինչպես Նա է ունեցել։

Պատկերացրեք այն ուրախությունը, որ մեզանից յուրաքանչյուրը կապրի, երբ վերադառնա մեր Երկնային Հոր մոտ, եթե մենք կարողանանք ասել. «Հայր, ես ապրեցի Քո կամքի համաձայն։ Ես հավատարիմ եմ եղել և պահել եմ Քո պատվիրանները։ Ես երջանիկ եմ կրկին տուն գալու համար»։ Այն ժամանակ Նա մեզ կասի. «Լավ . . .քիչ բաների վրա հավա-

տարիմ էիր, ես քեզ շատ բաների վրա կդնեմ. մտիր քո տիրոջ ուրախությունը» (Մատթեոս ԻԵ.23)։

- Վերանայեք Մատթեոս ԻԵ.23։ Մտածեք, թե ինչպես կզգաք, եթե լսեք Տիրոջը, որը կասի ձեզ այդ խոսքերը։

Լրացուցիչ սուրբ գրություններ

- ՎևՈւ 132.3–4, 16–26, 37 (վեհացմանը պատկանելը)
- ՎևՈւ 131.1–4 (հավերժական ամուսնությունը վեհացման բանալի է)
- ՎևՈւ 76.59–70 (բացատրվում են սելեստիալ փառքի օրհնությունները)
- ՎևՈւ 84.20–21 (աստվածության զորությունը դրսևորվում է քահանայության արարողությունների միջոցով)

Ուսուցիչներին. Երբ դասարանի կամ ընտանիքի անդամներին ժամանակ եք տալիս խորհելու ավետարանի ճշմարտությունների, իրենց կյանքի կամ Երկնային Հոր և Հիսուս Քրիստոսի հանդեպ իրենց սիրո մասին, դուք նրանց հնարավորություն եք տալիս Սուրբ Հոգու կողմից ուսուցանվելու համար։

Նկարների ցանկ

Կազմ. *Կենդանի ջուր,* Սայմոն Դյու, © Simon Dewey. Ֆոն © Artbeats

Էջ 5. Լուսանկարը © NASA and STScI

Էջ 10. Լուսանկարը © NASA and STScI

Էջ 16. Հատված *Քրիստոսը Էմմաուսում* նկարից, Կառլ Հեյնրիխ Բլոխ: Օգտագործվել է Դանիայի, Հիլերոդում Ֆրեդերիխսբորգի Ազգային Պատմության Թանգարանի թույլտվությամբ:

Էջ 22. Լուսանկարը Դմիտրի Վերվիցիոտիսի/Digital Vision/Getty Images

Էջ 28. Լուսանկար © Corbis

Էջ 32. *Եդեմի պարտեզից հեռանալը,* Ջոզեֆ Բրիքի: © 1998 Joseph Brickey

Էջ 46. *Ջոզեֆ Սմիթ,* անհայտ նկարիչ, տրամադրել է Քրիստոսի Համայնքի Պահոցները: *Բրիգամ Յանգ,* Դանքարտ Անտոն Վեգլանդի, տրամադրել է Եկեղեցու Պատմության Թանգարանը: *Ջոն Թեյլոր,* անհայտ նկարիչ, տրամադրել է Եկեղեցու Պատմության Գրադարանը և Պահոցները: *Վիլֆորդ Վուդրուֆ,* Հ. Ե. Պիտերսոնի: *Լորենզո Սնոու,* Լյուիս Ռամսեի, տրամադրել է Եկեղեցու Պատմության Թանգարանը: *Ջոզեֆ Ֆ. Սմիթ,* Ա. Սալզբրեների, © IRI. *Հերբեր Ջ. Գրանտ,* Ս. Ջ. Ֆոքսի, © IRI. *Ջորջ Ալբերտ Սմիթ,* Լի Գրին Ռիչարդսի, © IRI. *Դեյվիդ Օ. Մակքեյ,* Էվերեթ Քլարկ Թորփի, © Everett Clark Thorpe. *Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթ,* Շունա Քուք Քլինգերի, © 1983 IRI. *Հարոլդ Բ. Լի,* Գրանտ Ռոմնի Քլոուսոնի, © IRI. Էզրա Թաֆթ Բենսոնի լուսանկարը © Busath Photography Թոմաս Ս. Մոնսոնի լուսանկարը © Busath Photography

էջ 60. *Քրիստոսը վերակենդանացնում է Հայրոսի դստերը,* Գրեգ Կ. Օլսենի: © 1990 IRI

էջ 70. *Ոչ թե իմ, այլ Քո կամքը կատարվի,* Հենրի Անդերսոնի: © Seventh-day Adventist Church. Մի բազմացրեք

էջ 96. Հատված *Աբրահամը Մամբրէի տափաստաններում* նկարից, Հարի Անդերսոնի: © IRI

էջ 102. Հատված *Քրիստոսը կարգում է Տասներկու Առաքյալներին* նկարից, Հարի Անդերսոնի: © IRI

էջ 110. Հատված *Իմ սրտի ցանկությունները* նկարից, Վոլտեր Ռեյնի: Տրամադրել է Եկեղեցու Պատմության Թանգարանը

էջ 118. Հատված *Jesus Christ,* by Հարի Անդերսոնի**:** © IRI

էջ 154. *Վերջին ընթրիքը,* Սայմոն Դյուի: © Simon Dewey

էջ 174. Հատված *Քրիստոսը և հարուստ երիտասարդ իշխանը* նկարից, Հենրիխ Հոֆմանի: Տրամադրել է C. Harrison Conroy Co., Inc

էջ 188. Հատված *Հիսուսը լվանում է Առաքյալների ոտքերը* նկարից, Դել Փարսոնի: © 1983 IRI

էջ 196. Լուսանկարը © Getty Images

էջ 204. Հատված *Բարի Սամարացին* նկարից, Ջոզեֆ Բրիքի: © 2001 Joseph Brickey

էջ 212. Լուսանկարը by George Doyle/Stockbyte/Getty Images

էջ 222. Հատված *Ուրեմն գնացեք բոլոր ազգերը աշակերտեցեք* նկարից, Հարի Անդերսոնի: © IRI

էջ 236. *Ադամը և Եվան զոհ են մատուցում,* Քեյթ Լարսոնի: © 1996 Keith Larson

էջ 258. Լուսանկարը Ռոբերտ Քեյսիի: © 2004 Robert Casey

էջ 264. Լուսանկարը Ռոբերտ Քեյսիի: © 2004 Robert Casey

էջ 290. Հատված *Հակոբը օրհնում է Հովսեփին* նկարից, Հարի Անդերսոնի: © IRI

էջ 298. *Երկրորդ Գալուստը,* Հարի Անդերսոնի: © IRI

էջ 304. Հատված *Երկրորդ Գալուստը* նկարից, Հարի Անդերսոնի: © IRI

էջ 316. Հատված *Առանց որևէ ցաւման* նկարից, Ենսի Գլեյզեր-Կոհլերի: © 1984 Nancy Glazier-Koehler

էջ 316. Հատված *Վերջին դատաստանը* նկարից, Ջոն Սքոթի: © 1974 IRI

էջ 324. Հատված որմնանկարչությունից, Դան Բաքսթերի

Ցուցիչ

Ա

Աբրահամ, Աստծո ուխտը, 97
Ադամը և Եվան
  Անկումը, 34-35
  Սուրբ Հոգին այցելեց, 37-38
  ամուսնությունը, 31
  անվեհեր հոգիներ, 31
  առաջինը եկան երկիր, 31
  բաժանումը, Աստծուց, 34-35
  պատվիրվեց երեխաներ ունենալ, 34
Ազնվություն, 211-215
  սահմանում, Բրիգամ Յանգի կողմից, 211
  սահմանում, Մարկ Ե. Պիտերսոնի կողմից, 211
  սահմանում, Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից, 215
Ահարոնյան Քահանայություն
  պաշտոնները և պարտակա-նությունները, 87-89
  քվորումները, 91
  Տես նաև Մելքիսեդեկյան Քահանայություն; Քահանայություն
Աղոթք, 41-45
  երբ աղոթել, 42-43
  ինչու ենք մենք աղոթում, 41-42
  ինչպես աղոթել, 43
  ինչպես են աղոթքները պատասխանվում, 44-45
Ամուսնություն
  հավերժական, 257-263
  սահմանում, Սպենսեր Վ. Քիմբալի կողմից, 261
Անկում, , 34-36
  հետևանքները, 35-36
Անհատականություններ, զար-գացած նախամահկանացու կյանքում, 11-12
Անհնազանդություն, հետևանքները, 239-240
Աշխատանք, 181-88, 200
  սահմանում, Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից, 188
  սահմանում, Հեբեր Ջ. Գրանտի կողմից, 184
Ապաշխարություն
  այժմ է ժամանակը, 132
  անհրաժեշտ է, 125
  սահմանումը, 127
  սահմանումներ, Սպենսեր Վ. Քիմբալի կողմից, 127, 130-31, 273
  սկզբունքները, 127-131
  օրհնություններ են գալիս, 131
Առաջընթաց, երկրային կյանքն անհրաժեշտ է, 12-13
Առաջին Նախագահություն, 114-15
Առաջին սկզբունքներ և արարողություններ, 105

ամբողջությամբ ետ բերվեցին Վերականգնման միջոցով, 115-17
Առաքյալ, պաշտոն և պարտականություններ, 91, 114
Տես նաև Տասներկու Առաքյալներ
Առողջություն, Տիրոջ օրենքը. *Տես* Իմաստության Խոսք
Աստծո դատաստանները, 315
Աստված. *Տես* Երկնային Հայր
Աստվածաշունչ, 53-54
Ավետարանի վերականգնված ճշմարտությունները , 115-117
Արարողություններ
ճշմարիտ Եկեղեցու առանձնահատկություն, 105-106
վերականգնված, 115-117
Արարում
Հիսուս Քրիստոսի կողմից, 27-29
իրագործումը, 27-29
ցույց է տալիս Աստծո սերը, 30

Բ

Բանջարեղեն, 200
Բժշկում, պարգև, 150
Բույսեր, 200

Գ

Գայթակղություններ, հաղթահարելը, սահմանում, Գորդոն Բ. Հինքլիի կողմից, 268
Գթություն, 203-210
սահմանումը, Թոմաս Ս. Մոնսոնի կողմից, 206
սահմանումը, Ջոզեֆ Սմիթի կողմից, 208-209
Գինի, 197, 199
Գիտելիքի պարգև, 148
Գողություն, 214
Գործեր, մենք կդատվենք դրանցով, 317
Գրառումներ, մենք կդատվենք ըստ գրառումների, 317-18

Դ

Դատաստան
Հիսուս Քրիստոսի կողմից, 318
Վերջին, 315-322
գրառումներ կօգտագործվեն, 317-18
խոսքեր, գործեր և մտքեր կօգտագործվեն, 315-17
պատրաստվել , 321
Դրախտ
հոգևոր աշխարհում, 288
սահմանում, Ջեդեդիա Մ. Գրանտի կողմից, 288
սահմանում, Վիլֆորդ Վուդրուֆի կողմից, 288
Դրսի խավար, 320
Դև. *Տես* Սատանա

Ե

Եդեմի պարտեզ, 33
Եկեղեցու Նախագահ, 47
ապրող մարգարե այսօր, 48-49
հաստատել, 49
ղեկավարում է Եկեղեցին, 115
սահմանում, Վիլֆորդ Վուդրուֆի կողմից, 49
օրհնություններ հնազանդվելու համար, 50
Տես նաև Մարգարեներ

Եկեղեցու վերականգնում
Ջոզեֆ Սմիթի կողմից, 112-116
կանխատեսվել է, 108, 111-112
Եղիա, գալուստը, 301
Եպիսկոպոս, պաշտոն և պարտականություն, 89
Եվա. *Տես* Ադամ և Եվա
Երեխաներ
Ադամին և Եվային պատվիրվեց ունենալ, 34
պատասխանատվություններ, 251
Երեց, պաշտոն և պարտականություններ, 90
Երկնային Հայր
Նրա հետ մեր հարաբերության սահմանումը, Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից, 12
Նրան նմանվելու մեր ներուժը, 13
աշխատանքը և փառքը, 8
բոլոր բաների Արարիչ, 7
բոլոր բաների Կառավարիչ, 7
իմանալ, 8-9
իրականությունը, 7-8
հայրություն, 11
հատկանիշները, 8
մարդիկ արարվեցին Նրա պատկերով, 8
մարմինը, 8
որպես մեր Հայր դերի մասին սահմանումը, Ջոզեֆ Սմիթի կողմից, 8-9
ցանկություն, որ զարգացնենք այն հատկանիշները, որ Նա ունի , 13-14

Զ

Զոհաբերություն, 173-180

Ը

Ընդունել մեղքերը, ապաշխարության մաս, 128
Ընտանեկան պատմություն, 275-83
Ընտանիք
ապահովում է , 183
կարևորությունը, 245, 249
հաջողակ, 249-50
հավերժական, 245-250
հարաբերություններ, 248-49
պատասխանատվություններ, 251-256
սահմանում, Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից, 245
սահմանում, Հարոլդ Բ. Լիի կողմից, 249
Ընտանիք՝ Հայտարարություն աշխարհին, 12, 251, 252, 253, 254, 256
Ընտրելու ազատություն. *Տես* Ազատ կամք

Թ

Թանկագին Մարգարիտ, 56
Թարգմանություն, պարգև, 147
Թելեստիալ փառք, 320
Թեյ, 199
Թերեստրիալ փառք, 320
Թմրանյութեր, չարաշահումը, 199
Թողնել մեղքը, ապաշխարության մաս, 129

Ժ

Ժամանակների նշանները. *Տես* Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը

Ի

Իմանալ, որ Հիսուս Քրիստոսը Աստծո Որդին է, պարգև, 149
Իմաստության Խոսք, 197-202
սահմանում, Հեբեր Ջ. Գրանտի կողմից, 201
Իմաստություն, պարգև, 148
Իշխանություն
ճշմարիտ Եկեղեցու առանձնահատկություն, 103
վերականգնված, 113
Իսրայել
Իսրայելի տան հավաքումը, 291-296
Իսրայելի տան ցրումը, 292
Հակոբի անունը փոխվեց, 291
հավաքման վերաբերյալ սահմանում Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից, 292-93
հավաքման վերաբերյալ սահմանում Ռասել Մ. Նելսոնի կողմից, 294
Իսրայելցիներ, 291

Լ

Լեզուներ, պարգև, 145,147
Լեզուների թարգմանություն, պարգև, 147
Լյուցիֆեր. *Տես* Սատանա

Խ

Խաբել, 214-15
Խոստովանություն, ապաշխարության մաս, 129-30
Խոսքեր, մենք կդատվենք դրանցով, 317
Խորհուրդ Երկնքում, 13

Ծ

Ծառայություն, 189-196, 219
սահմանում, Սպենսեր Վ. Քիմբալի կողմից, 191
Ծխախոտ, 199
Ծխեր, 115
Ծնողներ, պատասխանատվություններ, 183, 251-56
Ծնունդ, մեր ժամանակը և վայրը, ընտրված Երկնային Հոր կողմից, 12
Ծոմապահություն, 167-168
պատշաճ, 167-168
օրհնություններ, 170-172
Ծոմի նվիրատվություններ, 170, 219
Ծոմի օր, 170
Ծուլություն, 185-86

Կ

Կամքի ազատություն
Սատանան ձգտում էր խլել, 21
անհրաժեշտություն փրկության ծրագրում, 21, 24
գործադրելը, առանց նախաերկրային կյանքի մասին հիշողության, 13
հավերժական սկզբունք, 21

պահանջում է ընտրություն, 24-25
Կիրակի, 161-166
Կիրակի, 163
նպատակը, 161-62
պատմությունը, 162
սահմանում, 161
սուրբ պահելը, 163-65
օրհնություններ պահելու համար, 165
Կիրակի, 161-63
Կնքելը, զորությունը, վերականգնվեց Եղիայի կողմից, 299

Հ

Հազարամյակ, 309-314
սահմանում, Բրիգամ Յանգի կողմից, 305
սահմանում, Ջոն Թեյլորի կողմից, 312-13
Հակոբ
Աստծո ուխտը Հակոբի հետ, 291
անունը փոխվեց Իսրայել, 291
Հաղորդություն, 155-59
Քրիստոսը ներկայացրեց, 155, 157
ուխտերը վերանորոգվում են, 157
սպասավորումը, 156-57
վերաբերմունքը ընդունելիս, 158-59
Համբերել մինչև վերջ, արդյունքում եկող օրհնություններ, 327-29
Հայտնություն, ճշմարիտ Եկեղեցու առանձնահատկություն, 101, 103
Հայր Երկնային. *Տես* Երկնային Հայր
Հայրապետ, պաշտոն և պարտականություններ, 90
Հայրապետական
օրհնություններ, 12, 90, 151
սահմանում, Թոմաս Ս. Մոնսոնի կողմից, 12
Հայրեր, պատասխանատվություններ, 252-54
Հանգիստ, 161
Հանգիստ, 161, 181
Հաստատում. *Տես* Սուրբ Հոգու պարգև
Հավատալ մյուսների վկայությանը, պարգև, 149
Հավատք առ Հիսուս Քրիստոս, 119-124
ինչու է մեզ պետք, 121
ինչպես կարող ենք մեծացնել, 121-124
հետևող օրհնությունները, 123-24
հոգևոր պարգև, 119, 151
սահմանումը, 119, 121
սահմանում հավատքի ազդեցության մասին, *Lectures on Faith*, 123-24
սահմանումներ հավատքով կատարված գործերի անհրաժեշտության մասին, Սպենսեր Վ. Քիմբալի կողմից, 123
Հիսուս Քրիստոս
Արարիչ, 27-29
Հոր Միածին Որդին, 62
Փրկիչ և ղեկավար երկրային կյանքում, 17

Քավության միջոցով մեզ համար մատչելի դարձրեց օրհնություններ, 65
Քրիստոսի տառապանքի մասին Օրսոն Ֆ. Վիթնիի տեսիլքը, 66
գթության օրինակ, 206-207
զոհաբերությունը, 66, 175, 177
ծառայության օրինակ, 191-92
կազմակերպեց Եկեղեցին, 65
կանխատեսվեց ծնունդը և առաքելությունը, 59-61
կատարյալ կյանքը, 62-63
կյանքը, 59-68
հնազանդվեց Հորը, 240
նախակարգվեց նախամահկանացու կյանքում, 11
ներկայացրեց հաղորդությունը, 155, 157
ուսմունքները, 64-65
սերը, 64-65
ցանկանում է, որ ծառայենք միմյանց, 189
փրկագնումը, 65-66
Տես նաև Հավատ առ Հիսուս Քրիստոս; Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը; Քավություն
Հիսուս Քրիստոսի Եկեղեցի
Ամերիկաներում, 106
այսօր, 111-117
առանձնահատկությունները, 101-106
դառնալ անդամ, մկրտվելով, 133
իշխանություն, 103, 113
կազմակերպություն, 104-105, 113-114
կազմակերպված Ջոզեֆ Սմիթի կողմից, 113-114
հայտնություն, 101, 103
հնում, 101-108
ուրացություն, 106-108
վերականգնումը, կանխատեսված, 108, 111-112
վերականգնվեց, երբեք այլևս չի կործանվի, 115-117
Հիսուս Քրիստոսի Երկրորդ Գալուստը, 303-308
նշանները, 297-301, 219
Հնազանդություն, 237
մկրտությունը ցույց է տալիս, 135
սահմանում, Ջոզեֆ Սմիթի կողմից, 239
Հոգի, պարգևներ. *Տես* Հոգևոր պարգևներ
Հոգիներ, մարմնական կազմվածքով, 286
Հոգու պարգևները. *Տես* Հոգևոր պարգևներ
Հոգևոր աշխարհ, 285-89
ուսուցում Բրիգամ Յանգի կողմից, 285-86
սահմանում, Էզրա Թաֆտ Բենսոնի կողմից, 285
Հոգևոր բանտ, 288
Հոգևոր պարգևներ, 145-153
Սատանան նմանակում է, 152
զարգացումը, 151-52
զգուշորեն օգտագործել, 153
ճշմարիտ Եկեղեցու առանձնահատկությունը, 106
նկարագրությունը, 145-151
Հրաշքներ, գործելու պարգև, 150-51

Մ

Մահացած, արարողություններ, ճշմարիտ Եկեղեցու առանձնահատկությունը, 105-106
Մայրեր
  պատասխանատվություններ, 254-255
  սահմանում, Բոյդ Ք. Փաքերի կողմից, 254
Մարգարեներ, 47-51
  Աստծո ներկայացուցիչները երկրի վրա, 47
  Աստված կանչել է դարերի ընթացքում, 48
  խոսքերը, սուրբ գրություններ են, 57
  նախակարգված, 11-12
Մարգարեություն, պարգև, 150
Մարդ
  Աստծո զավակ, 11
  Աստծո պատկերով ստեղծված, 8
  կառավարել Աստծո արարածների վրա, 7
  սահմանում Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից աստվածային ծնող լինելու մասին, 11
Մաքրաբարոյություն, 265-74
Մելքիսեդեկյան Քահանայություն
  պաշտոններ ու պարտականություններ, 89-91
  քվորումներ, 91-93
  Տես նաև Ահարոնյան Քահանայություն; Քահանայություն
Մեծ Խորհուրդ, 13
Մեղք
  բոլորը մեղավոր են, 125
  սահմանում, 125
Մեղքերի թողություն, մկրտություն, 133
Միս, 190
Միսիոներական աշխատանք, 223-229
  սահմանում, Էզրա Թաֆտ Բենսոնի կողմից, 225
Մկրտություն, 113-139
  անհրաժեշտ է, 133-35
  ձևը, 136
  նոր սկիզբ, 138-39
  ով պետք է մկրտվի, 136-37
  ուխտերը, 137-38
Մորմոնի Գիրքը, 54-55
Մտքեր, մենք կդատվենք դրանցով, 317

Յ

Յոթանասունական, պաշտոն և պարտականություններ, 90

Ն

Նախակարգում, 12-13
  սահմանում, Ջոզեֆ Սմիթի կողմից, 13
Նախնիներ, օգնել, 277-82
Ներել մյուսներին, ապաշխարության մաս, 130
Ներում
  դրանից բխող ուրախություն, 131
  մաքրաբարոյության օրենքը խախտելու համար, 272
  սահմանումներ, Սպենսեր Վ. Քիմբալի կողմից, 272
Նոր և հավիտենական ուխտ, 85
Նվիրատվություններ, 217-221
  սահմանում, Գորդոն Բ. Հինքլիի կողմից, 220-21

սահմանում, Հեբեր Ջ. Գրանտի կողմից, 220-21
սահմանում, Ստեֆան Լ. Ռիչարդսի կողմից, 218

Ռ

Ռգելից ըմպելիքներ, 197, 199
Ռգելից խմիչք, 197, 199
Ուխտ
Աբրահամյան, 97-98
հաղորդությամբ նորոգված, 157
մկրտության, 137-38
նոր և հավիտենական, 99
սահմանում, 95, 97
Ուխտյալ ժողովուրդ, 95-100
Ուսուցիչ, պաշտոն և պատասխանատվություն, 88
Ուսուցում
այս գրքից, 1-4
պարգևը, 149
Ուրախության լիություն, 13
Ուրացություն, Մեծ, 106-107

Պ

Պատերազմ Երկնքում, 17-18
Պատվիրաններ, պահելը, ապաշխարության մաս, 130-31
Պտուղ, 200

Ս

Սատանա
գայթակղեց Եվային, 33
գայթակղում է մեզ, 18
երկնքից դուրս գցվեց, 17-18
կապված Հազարամյակի ընթացքում, 312-13
կարճ ժամանակով ազատ է արձակվում Հազարամյակի վերջում, 314
կռվեց Հիսուսի դեմ երկնքում, 17
հակադրվում է բարուն, 24-25
ձգտում է վերցնել ընտրելու ազատությունը, 18, 19
նմանակում է Հոգու պարգևները, 152
ցանկանում է, որ մենք խախտենք մաքրաբարոյության օրենքը, 269-271
Սարկավագ, պաշտոն և պարտականություններ, 87-88
Սելեստիալ արքայություն
մկրտությունն անհրաժեշտ է այս արքայություն մտնելու համար, 134-35
վեհացում, 323, 324-29
Սերմ, 200
Սմիթ, Ջոզեֆ
վերականգնեց Եկեղեցին, 112-116
վերականգնեց ճշմարտությունը, 114-16
Սուրբ Հոգի, 36-39
առաքելությունը, 37-39
եկավ Ադամին և Եվային, 36-37
հատկանիշները, 37
մկրտությունը անհրաժեշտ է այդ պարգևը ստանալու համար, 136
սահմանումներ, Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կողմից, 37
Տես նաև Սուրբ Հոգու պարգևը

Սուրբ Հոգու պարգև, 141-144
Աստծո մեծագույն պարգևներից մեկը, 143
ընկալել Սուրբ Հոգու ազդեցությունը, 143
սահմանում, 141-142
ստանալը, 142-143
Սուրբ գրություններ, 53-58
ուսումնասիրելը, 57-58
չորս գրքերը, 53-57
Սուրճ, 199
Ստել, 215
Ստուգում, երկրային կյանք, 12-13

Վ

Վարագույրը ծածկում է երկնային տան մասին հիշողությունը, 13
Վարդապետություն և Ուխտեր, 55-56
Վեհացում, 323-29
արժանի դառնալ, 20
հավերժական ամուսնությունը կարևոր է, 257-58
սահմանում, Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կողմից, 325
Վերարտադրություն, զորությունը, 257
Վկայություն, սահմանում, Դեյվիդ Օ. Մակքեյի կողմից, 149

Տ

Տալ, 218
սահմանում, Ստեֆան Լ. Ռիչարդի կողմից, 218
Տաղանդներ
զարգացած նախամահկանացու կյանքում, 11-12
զարգացումը, 231-234
սահմանում զարգացնելու վերաբերյալ, Հեբեր Ջ. Գրանտի կողմից, 233
սահմանում զարգացնելու վերաբերյալ, Մերվին Ջ. Էշթոնի կողմից, 233
սահմանում պատասխանատվության վերաբերյալ, Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից, 234
Տաճարներ
աշխատանք է կատարվում, 275-83
աշխատանք է կատարվում, Հազարամյակի ընթացքում, 305, 311
հավերժական ամուսնություն է կատարվում, 259-60
Տասանորդ, 217-221
սահմանում, Գորդոն Բ. Հինքլիի կողմից, 220-21
սահմանում, Հեբեր Ջ. Գրանտի կողմից, 220
սահմանում, Ստեֆան Լ. Ռիչարդսի կողմից, 218
Տասներկու Առաքյալներ, դատաստան, 319
Տես նաև Առաքյալ
Տաք ըմպելիքներ, 199
Տիրոջ օրը, 161-163
Տես նաև Կիրակի
Տրտմել մեղքի համար, ապաշխարության մաս, 128

Ց

Ցից, 115
Ցորեն, 200

Փ

Փառք, թագավորություններ, 320-21
Փոխհատուցում, ապաշխարության մաս, 130
Փորձություններ, անհրաժեշտ են առաջընթացի համար, 13
Փրկիչ. *Տես* Հիսուս Քրիստոս
Փրկության ծրագիր, 12-14, 27

Ք

Քահանա, պաշտոն և պարտականություններ, 88
Քահանայապետ, պաշտոն և պարտականություններ, 90
Քահանայություն, 79-83
  բաժինները, 85-86
  բանալիները, 86-87
  ինչի համար է անհրաժեշտ, 79, 81
  ինչպես են տղամարդիկ ստանում, 81-82
  ինչպես է պատշաճ ձևով օգտագործվում, 82
  կազմակերպությունը, 85-94
  սահմանում, 79
  սահմանում, Ջոզեֆ Ֆ. Սմիթի կողմից, 86-87
  օրհնություններ պատշաճ ձևով օգտագործելու համար, 83
  Տես նաև Ահարոնյան Քահանայություն; Մելքիսեդեկյան Քահանայություն
Քավություն, 69-77
  Հարությունը արդյունք է, 72
  Քրիստոսը միայն կարող էր կատարել, 71
  Քրիստոսը տառապեց և մահացավ, որ իրականացնի, 65-66, 71
  անհրաժեշտություն փրկության համար, 66
  մեղքից փրկությունը արդյունք է, 72-77
  պատմություն Բոյդ Ք. Փաքերի մեկնաբանությամբ, 73-75
  սահմանում, Ջոզեֆ Ֆիլդինգ Սմիթի կողմից, 127
  Տես նաև Հիսուս Քրիստոս
Քրիստոս. *Տես* Հիսուս Քրիստոս

ՀԻՍՈՒՍ
ՔՐԻՍՏՈՍԻ
ՎԵՐՋԻՆ ՕՐԵՐԻ ՍՐԲԵՐԻ
ԵԿԵՂԵՑԻ

ARMENIAN
4 02061 95201 2
06195 201